Անտիկ աղբյուրներում հայտնի է իբրև Arzanenae և մեկ անգամ հիշատակվում է Եղիշեի մոտ՝ Արզնարզիւն ձևով։ Այս գավառը սկզբում կոչվել է *Արզինի՝ համանուն Արզան կենտրոնով, այժմ Խարզան կամ Ջոխ վայրը։ Մի այլ տեղ («Աշխարհացոյց», էջ 37) Աղձն գավառը կոչվում է «Աղձնիք Հայոց, որ է Արձն»: Այս գավառը հսկում էր հարավից դեպի Միջնաշխարհը տանող ճանապարհը Ջորապահակով (կամ Տաւրոյ-բերան, այժմ Բիթլիսի լեռնանցք)։ Աղձն գավառը Աղձնյաց բդեշխության կենտրոնն էր։

Աղձնիք նահանգ—Գ4—առաջացել է ասուրա-բաբելական և ուրարտական արձանագրություններում հայտնի Ալզինի անունից։ Աղձնիքը հանդիսանում էր Արշակունյաց Մեծ Հայքի չորս բդեշխություններից մեկը և ուներ 17,532 կմ² տարածություն։

Աղուան ամրոց—Բ7—Մեծ Իրանք գավառում։ Ըստ երևույթին այսպես էր կոչվում միջին դարերում հայտնի Գանձասար վանքի տեղը։ Այս վայրը եղել է Աղվանից թագավորների ամառանոց՝ «Ճովից տեղիք» IV—V դդ.։

Աղուան գետ—Բ7—այսպես էր կոչվում Ալազան գետը (համենայն դեպս ստորին հոսանքում), որը հոսում էր Աղվանքի միջով։ Հույն հեղինակները երկու անունով էլ կոչում են՝ 'Αλβάνα և 'Αλαζόνιος։ Ալազանը կոչվել է նաև Ղանուխ գետ։

Աղուան գետ (Աղուանոյ գ.)—Գ7—այժմ Հագարու գետ։ Արաբական աղբյուրներում այս գետը կոչվում է «Առան»:

Աղուան գետ—Բ8—այսպես պիտի կոչվեր այժմյան Աղ-սու գետը, որը Աղվանից թագավորության արևելյան սահմանն էր հանդիսանում։ Ըստ երևույթին, անտիկ աղբյուրների Albana անունով գետերից մեկը պիտի լինի։

Աղուանք աշխարհ—Բ6—Բ8—այն է՝ «փոքր աշխարհն Աղուանից, որ ընդ մէջս է գետոյն Կուրայ և Կովկաս լերինն» («Աշխարհացոյց», էջ 29), որ նկատի ունի Աղվանից թագավորության տերիտորիան մինչև 387 թվականը և որի մայրաքաղաքն էր Կապաղակը: Այս տերիտորիայի ընդհանուր տարածությունն էր շուրջ 23.002 կմ²։ 387 թվականից պաշտոնապես ճանաչվեց Ուտիք և Արցախ նահանգների միացումը Աղվանքին 22.843 կմ² տարածությամբ, որից հետո Աղվանքը պարունակում էր 45.845 կմ² տարածություն։ 510 թ. վերջնականապես վերացվեց Աղվանից թագավորության իշխանությունը և երկիրը սկսեց կառավարվել մարզպաններով, որոնց կենտրոնը դարձավ նոր հիմնված Պարտաւ քաղաքը։ Այնուհետև Աղվանից մարզպանությանը հետզհետե միացվեցին՝ Ռոտբստակ գավառը (Փայտակարանի Հռամոտ-Պերոժ գավառը), Բազկանը, Խսրուանը, Շրուանը, Ջողան, Ղեկաց և Թավասպարների ազգագավառները և վերջապես Դարբանդ քաղաքը իր ամրություններով։ Այս տերիտորիալ աճից հետո Աղվանից մարզպանությունը ընդգրկում էր 72.204 կմ² տարածություն։

Աղուէ ամրոց—Բ7—համանուն գավառի կենտրոնը պիտի լիներ։ Այս ամրոցի տեղը պիտի փնտրել հետագա Գյուլիստան մելիքանիստ գյուղի տեղը։

Աղուէ գաւառ—Բ7—պիտի գտնվեր այժմյան Գյուլիստան գավառի տեղում։ Աղուեն Ուտիք նահանգի 4-րդ գավառն էր և ընդգրկում էր շուրջ 590 կմ² տարածություն։

Աղուտականք ազգագաւառ—Բ7—Սամուր գետի վերին հոսանքում, այնտեղ, որտեղ միախառնվում է Ախտի-չայ գետը։ Այժմ էլ այստեղ ապրող ախտի ժողովրդի (Ахтинцы) հնագույն հիշատակությունն է։

Աղստև գետ—տես՝ Լոփնաս:

Աղտոյ ձոր լեռնանցք (2250)—Գ5—գտնվում էր Սուկավյան լեռներում (Հայկական պար) և կապում էր Այրարատն ու Երասխաձորը Բագրևանդի և առհասարակ Հարավային Հայաստանի հետ։ Հիշում է Ասողիկը (III, ԽԱ)։ Ռուսական քարտեզների վրա այս լեռնանցքը կոչվում է Ахтинский пер., որից հարավ գտնվում է Ахты գյուղը, որ հայերեն պիտի կոչվեր Աղտք կամ Աղտոձոր։ Այսպես պիտի կոչվեր նաև նրա մոտով անցնող վտակը, որը թափվում է Արածանի գետը։

Աճարա գաւառ—Բ5—բյուզ. 'Αζαρᾶ, Վրաց աշխարհում, ընդգրկում էր Նոսոե գետի (այժմ Աճարիս-ծղալի) հովիտը, որը կազմում է այժմյան Աճարական ԱՍՍՌ-ի հիմնական մասը։ Աճարա գավառի տարածությունն էր 1450 կմ²։

Ամադիա աւան—Դ5—այժմ էլ նույն անունով։

Ամանոս լեառն—Դ2—միջին դարերում հայերը կոչում էին Սեաւ լեառն, այժմյան Գյավուրդաղ լեռնաշղթան։

Ամասիա քաղաք—Բ1—Ելինոպոնտոսի կենտրոնը, այժմ էլ գոյություն ունի նույն անունով։

Ամարաս վանք—Գ7—այժմ էլ նույն անունով գյուղ Լեռնային Ղարաբաղում։ Այս վայրի հետ է կապում ավանդական պատմությունը քրիստոնեության մուտքը Աղվանից երկրում։

Ամարդոս գետ—Դ7—այժմ Սեֆիդ-ռուդ կամ Ղըզըլ-ուզեն գետը։

Ամիդ քաղաք—Դ4—Միջագետքի հնագույն կենտրոններից մեկը՝ ասուրա-բաբելական աղբյուրների Ամեդու քաղաքը. այժմ կոչվում է Դիարբեքիր։

Ամիսոս քաղաք—Բ2—Պոնտոսի մայրաքաղաքը. այժմ էլ գոյություն ունի Սամսուն անունով։

Ամիւկ ամրոց, տես՝ Ամիւկ ցամաքակղզի:

Ամիւկ ցամաքակղզի—Գ5—Լիմ կղզուց հարավ գտնվող անմատչելի հրվանդանը, որտեղ միջին դարերում հայտնի էր Ամիւկ ամրոցը, այժմ Համոկ կամ Ամիկ գյուղը։ Քարտեզի վրա ցույց է տրված միայն Ամիւկ ամրոցը։

Այգաոք գաւառ—Դ5—Կորճեից նահանգի 6-րդ գավառը՝ 302 կմ² տարածությամբ, այժմյան Ջուլամերկից հարավ։

Այլի, որ է Կուրճեան գաւառ—Դ6—Պարսկահայք նահանգի 1-ին գավառը՝ 1380 կմ² տարածությամբ. ընդգրկում էր Նազլու-չայ գետի հովիտը՝ Բարադոստ մահալը։ Միջին դարերում այս գավառը հայտնի էր Էլի կամ Էլոյ գաւառ անունով և ընդգրկում էր միայն Այլի գավառի արևմտյան բարձր լեռնային մասը։ Այս գավառումն էին՝ Էլի, Սուրէնապատ (այժմ՝ Սուրաբան), Կարենիս և Դաստակերտ (այժմ Դաստագիր) վայրերը։

Այլի վանք, տես՝ Էլի:

Այծպտկունք լեառն (3124)—Գ4—այժմ Փալանթոքեն-դաղ։

Այպալիս—Գ1—բյուզ. 'Αἴπολις, այժմ Պալաս գյուղ։

Այրարատ նահանգ—Բ5—Գ6—Մեծ Հայքի կենտրոնական նահանգը, որի տարածությունն էր՝ 40.105 կմ²։ Վերջին Արշակունիների ժամանակ Այրարատ նեղ իմաստով հասկացվում էր Արքունի ոստանը՝ Արարատյան դաշտավայրը շրջակա գավառներով, որը Մեծ Հայքի տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոնն էր։

Ա[յր]տրուանք գաւառ—Դ5—աղճատված ձևն է՝ Ատրուանք, Կորճեից նահանգի 5-րդ գավառը՝ շուրջ 325 կմ² տարածությամբ։ Այս գավառի անվան մեջ պահպանվել է Ուրուատրի երկրի անունը, ինչպես և Ստրաբոնի մոտ՝ 'Ερετριεῖς ձևով հայտնի երկիրը։ Գտնվում էր Մեծ Զաբ գետի միջին հոսանքում, այժմ՝ Տիարի:

Անալիւն (Անի Աղիւնոյ) ամրոց—Գ3—բյուզ. 'Αναλιβόζωρα (Անալիւնաձոր), այժմ Ղուռու-չայ գյուղ համանուն գետակով։

Անարզաբա քաղաք—Դ1—Կիլիկիայի մայրաքաղաքներից մեկը, բյուզ. 'Ανάβαρζα, այժմ Անավարզա գյուղ։

Անգեղ-տուն գաւառ—Գ3—Գ4—հուն. 'Ιγγιληνή, ասուրա-բաբելական աղբյուրների Purulumzi երկիրը և ուրարտական Arme երկրի կենտրոնական մասը՝ Ingalawa, հայերեն Անգղ գավառը համանուն քաղաքով։ 160 թ. մոտերքը Ծոփքի Արկաթիաս թագավորը խլեց այս գավառը Մեծ Հայքից և միացնելով Ծոփքին՝ դարձրեց իր թագավորության կենտրոնը։ Անգղը վերանվանվեց Արկաթիակերտ ('Αρκαθιόκερτα) և հռչակվեց իբրև մայրաքաղաք, իսկ գավառը կոչվեց նաև Մեծ Ծոփք: Ծոփքի թագավորության վերացումից հետո 93 թվին, երբ այն վերամիացվեց Մեծ Հայքին, Անգեղ-տունը մտավ Աղձնյաց բդեշխության կազմում։ Այնուամենայնիվ հայերը Անգեղ-տունը շարունակում էին կոչել նաև Մեծ Ծոփք, հուն. Σοφανηνὴ, լատ. Sophanenae։ «Աշխարհացոյց»-ում Անգեղ-տունը չի հիշատակվում իբրև առանձին գավառ։ Ինչպես ճիշտ դիտում է Հյուբշմանը (էջ 157)՝ VI դարում Նփռետ կամ Մեծ Ծոփքի հետ էր ձուլված։ Մենք վերականգնում ենք նախկին դրությունը, երբ գոյություն ուներ Անգեղ-տուն անունով գավառ Աղձնյաց բդեշխության կազմում։ Անգեղ-տուն գավառի տարածությունն է 2430 կմ²։ Թովմա Արծրունու (III, ԺԲ, էջ 309) մոտ հիշվող Անգեղ-տունը Ծաղկոտն գավառի Անգղ ավանն է և չպետք է շփոթել Անգեղ-տուն գավառի հետ։

Անգղ աւան—Գ4—Անգեղ-տուն գավառի կենտրոնը՝ հիշվում է դեռևս խեթական արձանագրություններում՝ Ingalawa ձևով։ Մ. թ. ա. 160 թ., երբ Անգեղ-տունը միացվեց Ծոփքին և կոչվեց Ծոփք Մեծ, Անգղը վերանվանվեց Արկաթիակերտ 'Αρκαθιόκερτα (սխալ ընթերցումն է՝ Καρκαθιόκερτα) և դարձավ Ծոփաց թագավորության մայրաքաղաք։ Հետագայում կորցնում է իր վաղեմի նշանակությունը և հիշվում է իբրև ավան Անգղ, 'Ingila անունով, այժմ Էգիլ գյուղը։

Անգղ գիւղաքաղաք—Գ5—Ծաղկոտն գավառում, առաջին անգամ հիշատակում է Եղիշեն (III, 1957, էջ 58)։ Թովմա Արծրունու (III, ԺԲ) մոտ հիշատակվում է Անգեղտուն ձևով։

Անի քաղաք—Գ3—կամ Անի Դարանաղեաց: Հին Հայաստանի հնագույն կենտրոններից մեկը, որը կոչվում էր նաև Կումախա: Վերջինս Խայասա երկրի կենտրոններից մեկն էր։ Այս Անին մ. թ. ա. IV—I դարերում Փոքր Հայքի քաղաքական կենտրոնն էր։ 66 թ. մ. թ. ա., երբ Փոքր Հայքի թագավորության հիմնական մասը կազմող Բարձր Հայք նահանգի տերիտորիան միացվեց Մեծ Հայքին, Անին մնաց իբրև

նրբավայր և արքայական դամբարան։ Անիի մոտ գտնվող Կամախումն էին թաղվում Արտաշիսյան և Արշակունի դինաստիաների հայ թագավորները։ Անիումն էր գտնվում գերագույն աստված Արամազդի գլխավոր մեհյանը։

Անթեմուսիա քաղաք—Դ3— Anthemusia քաղաք Ոսրոյենեի, այժմ Էսկի-Խարաբե գյուղ։

Անձախի ձոր գաւառ—Գ6—Վասպուրականի 18-րդ գավառը՝ 825 կմ² տարածությամբ։ Գտնվում էր Կոտոր (այժմ Կոտուր-չայ) գետի հովտում, հայտնի էր Կոտորոց ամրոցը։ Կոչվել է նաև Ձոր Ընծայից։

Անձեւացիք գաւառ—Դ5—Վասպուրականի 11-րդ գավառը՝ 2525 կմ² տարածությամբ, գրավում էր Արևելյան Տիգրիս (Ջերմ, Բոհտան-սու) գետի ակունքների բարձր, դժվարամատչելի լեռնային շրջանը։ Գավառս եղել է Անձևացեաց նախարարական տոհմի ժառանգական հայրենիքը։

Անձևացիք գավառը հնագույն ժամանակներում կոչվել է Ազգի, որի մասին վկայում է այժմ գոյություն ունեցող Ախսի (կամ Հուսեյին) գյուղը։ Ասուրա-բաբելական արձանագրություններում այս գավառը կոչվում է Alzi (որից «Ազգի») և Anzi կամ Enzi (որից՝ Անձ-աւ-ացի-ք, Անձ-եւ-ացիք)։

Այս գավառումն էին՝ Կանգուար ամրոցը (այժմ՝ Կենգևվար գյուղ), Ալաման (ասուրա-բաբելական Alamun) և Լէկ գյուղերը։ Այս գավառի հյուսիսային ծայրամասումն էր Պաշատ լեռը (ասուրա-բաբել. Պածատու)։ Ուրարտական Արուբանիա աստվածուհու և հայկական Անահիտի պաշտամունքի կենտրոններից մեկն էր Դարբնացքար կամ Ագռավաքար վայրը, որտեղ հետագայում հիմնվեց Հոգվոց վանքը (այժմ Դիր-Մարիամ-Քիլիսասի, տե՛ս Մ. Խորենացուն վերագրվող «Պատմութիւն պատկերի Տիրամօրն» երկը)։

Անձիտ բերդ—Գ3—միջին դարերում և այժմ Թիլէնզիտ գյուղ Խարբերդից հարավ-արևելք։

Անձիտ գաւառ—Գ3—ասուրա-բաբելական Enzitu հուն. Ἀνζιτηνή, բյուզ. Χανζίτ. լատ. Anzetenae, Չորրորդ Հայքի 6-րդ գավառը՝ 3,825 կմ² տարածությամբ։ Գրավում էր Խարբերդի դաշտի հիմնական մասը։ Այս գավառումն էին գտնվում Անձիտ, Հոռեբերդ, Ծովք և այլ ամրությունները։

Անտիոք քաղաք, տե՛ս Աւագն Անտիոք։

Անտիտաւրոս լեառն—Գ2—այժմ էլ նույն անունով։

Աշ-Դիզոր ագգագաւառ—Ա5—ըստ երևույթին, Դիգորից հյուսիս Ուրուխ գետահովտի միջին և ստորին մասերում։ Ալան(օվս) ժողովուրդը կազմող ցեղերից մեկը։

Աշիմուն լեառն (1919)—Դ3—«Աշխարհացոյցի» մեզ հասած բնագրում աղճատված «Ազիսուն» ձևով է, բյուզ. Ἀΐσουμᾶς ὄρος, ասոր. Tūra Ašuma, այժմ Ղարաչա-դաղ։

Աշոցք աւան—Բ5—այժմ Ղազանչի կամ Ղայղուլի գյուղ։ Աշոցք գավառի կենտրոնն էր։

Աշոցք գաւառ—Բ5—Այրարատ նահանգի 14-րդ գավառն է շուրջ 900 կմ² տարածությամբ, համապատասխանում է այժմյան Ղուկասյանի շրջանին։ Հետագայում կոչվում էր ყაიყულო Ղայղուլի։ Ուրարտական արձանագրություններում կոչվում է Iškigulu.

Աշոցքը կոչվել է նաև Աշոցան, որի արխայիկ ձևն է *Արշոցան, որ չի վկայված։ Վրացական աղբյուրներում Աշոցք գավառը կոչվում է აბოცი Աբոցի, որ սկզբնական აშოცი Աշոցի ձևի հետագա աղճատումն է հանդիսանում։ Այս գավառը մինչև 387 թ. պիտի մտներ Գուգարաց բդեշխության կազմում, ապա՝ Մարզպանական Հայաստանում։

Աշոցք գավառի կենտրոնը պիտի լիներ համանուն Աշոցք ավանը, որը հետագայում կոչվում էր Ղազանչի։ Այս գավառը Աշոցք նախարարական տոհմի ժառանգական սեփականությունն էր։

Աշտիշատ աւան—Գ4—Հնագույն ձևը պիտի լիներ Յաշտիշատ, այժմ Դերիկ գյուղ։ IV դ. Մեծ Հայքի խոշորագույն կրոնական կենտրոն էր։

Աչաբէթի գյուղ, տես՝ Աչէւէտիս-Խեւ։

Աչէւէտիս-Խեւ—(աղճատված ձևերն են՝ Խաչաւ, Աչայի) գաւառ—Ա5—Վրաց. აჭაბეთის ხევი Աչաբէթիս-Խեվի, այժմ էլ գոյություն ունի Աչաբէթի գյուղը, Հարավ-Օսեթիայի Ա. Մ. կենտրոն Ցխինվալից հյուսիս։ Այս գավառի ընդհանուր տարածությունն էր՝ 175 կմ²։

Ապահունիք գաւառ—Գ5—Տուրուբերան նահանգի 14-րդ գավառը՝ 2375 կմ² տարածությամբ։ Ապահունիք անվան նախնական ձևը պիտի լիներ *Ապարհունիք և կապվում է ապարհ ցեղանվան հետ, որը V դարում բնակվում էր կատիշներին հարևան այժմյան Թալիշի հյուսիսային մասում։ Ապահունիքը ընդգրկում էր այժմյան Մանազկերտի (Մելազգերդի) սանջակը։ Արաբները կոչում էին «Բաջունայիս»։ Այս գավառի կենտրոնն էր Մանազկերտ քաղաքը։

Ապամիա քաղաք—Դ2—Apameia, գտնվում է Եփրատի գետանցքի աջ կողմում, նշանավոր Զևգմայից հարավ։

Ապզուտ-կաւատ պարիսպ—Բ8—այն պարիսպն է, որը գտնվում էր Վելվելի-չայ և Շաբրան-չայ գետերի միջև։ Այս պարիսպը սկսվում էր Կովկասյան լեռնաշղթայից և անցնում էր Շապորան քաղաքից հյուսիս՝ մինչև Կասպից ծովը։ Տես՝ Բազկանք։

Առանգա կայան—Գ3—Arangas (Tab. Peut.)՝ Զիմարայից Մելիտինե տանող ճանապարհի կայաններից մեկը, գտնվում էր Կիակկաս-Ջերմուկից հյուսիս, Սոգյութլու գետի գետաբերանի մոտերքը։

Առանիս աւան—Գ2—բյուզ. Ἀρὰν, այժմ Ալաչախան գյուղը։

Առան-ռոտ գաւառ—Բ7—Ուտիք նահանգի առաջին գավառը Առան-ռոտ։ Այժմ Գերան-չայի գետի հովտում, շուրջ 2225 կմ² տարածությամբ։

Առան-ռոտ գետ—Բ7—այժմ Գերան-չայի։

Առաջին Հայք—Գ2—Armenia Prima պրովինցիան, որը կազմվեց Թեոդոս Մեծի ժամանակ 378—386 թթ. միջև։ Կենտրոնն էր Սեբաստիա քաղաքը։ Առաջին Հայքի տարածությունն էր 34200 կմ²։ Հուստինիանոս Ա-ին 536 թ. Նովելլայից հետո Առաջին Հայք էր անվանվում բոլորովին այլ տերիտորիա։ Տես՝ Բարձր Հայք։

Առբերանի գաւառ—Գ5—Վասպուրականի 7-րդ գավառը՝ 1025 կմ² տարածությամբ։ Գրավում էր Վանա լճի հյուսիս-արևելյան եզերքը ներառյալ Առեստ (Բանդիմահի) գետի միջին և ստորին հոսանքի հովիտը։ Այս գավառում հայտնի էին Բերկրի քաղաքը, Առեստ աւանը և Ամիւկ ամրոցը։

Առեստաւան կամ **Առեստ** աւան—Գ5—Վանա լճի տառեխը այս վայրումն էր որսվում, ուստի Փավստոս Բուզանդի մոտ կոչվում է «Ձկնատեանն արքունի»։ Առեստ ավանը գտնվում էր Առբերանի գավառում, Վանա լճի ափին, այժմյան Առնիստ գյուղից դեպի արևելք, Բանդիմահիի գետաբերանին։ Առեստի ձկնորսարանը ամենայն հավանականությամբ մեծ հռչակ է վայելել նաև անտիկ ժամանակաշրջանում, սակայն շփոթության մեջ է գցել Առեստ անունը։ Վերջինս անտիկ աշխարհագիրներն ու քարտեզագետները շփոթել են Ասորիքի Ἀριστία կամ Arist[o]n քաղաքի հետ, որը կոչվել է նաև Ἀρέθουσα և գտնվել է Որոնտես գետի վերին հոսանքում՝ Համա և Հոմս քաղաքների միջև, այժմյան Ռաստան գյուղի տեղում։ Առեստ անունը նույնացրել են Aristia (Ariston) անվան հետ, իսկ որովհետև վերջինս կոչվել է նաև Ἀρέθουσα, հայկական Առեստի երկրորդ անունը համարել են Arethusa։ Այս նույնացումը, իր հերթին, բերել է այն եզրակացության, որ Վանա լճի հյուսիսային մասը, որտեղ գտնվում էր Առեստ ավանը, կոչվում է Արեթուզայի լիճ—Lacus Arethusa (Տե՛ս Plinius, Nat. hist. VI, 31)։ Այս անգամ ևս նրանք ղեկավարվել են նրանով, որ Ասորիքի Aristia-Arethusa քաղաքից վերև, Հոմս քաղաքից հարավ գտնվող այժմյան Հոմըս-Բահրեյթ լճակը ևս կոչվել է Lacus Arethusa։ Այս եզրակացությունը բացատրում է, թե ինչու, օրինակ, 1653 թ. հրատարակված Հայաստանի քարտեզի վրա գտնվող Palus Thospitis (Տոսպայ լիճ, այժմ՝ Վանա լիճ) լճից հյուսիս նշված է Palus Arethusa[1], որ անշուշտ առաջ է եկել Առեստ, Aristia, Arethusa անունների նույնացման հետևանքով։ Վերջինս իր հերթին առաջ է եկել հին հունական ավանդությունից Արեթուզա դիցուհու մասին։

Առեստ գետ—Գ5—այժմ Բանդիմահի գետ։

Առիւծ գաւառ, տես՝ Աղիւն (Առիւծ) գաւառ։

Առնա գաւառ, տես՝ Ըռնայ գաւառ։

Առնա վանք—Գ6—Ըռնայ կամ Առնա գավառի կենտրոնը, այժմ Դերիկ գյուղ, հռչակված իր նշանավոր ուխտատեղիով։

Առնոյ-ոտն գաւառ—Դ5—Վասպուրական նահանգի 10-րդ գավառը 275 կմ² տարածությամբ։ Գրավում էր Առնոս լեռան արևելյան փեշերը մինչև Շատախ (Թաղ) ավանը։ Դեռևս XVIII դարում գոյություն ուներ «Առ-Նոյ-ոտն» սխալ ստուգաբանությունը, որի հետևանքով այն տեղադրվում էր Մասիս լեռան հարավային փեշերին, որ կոպիտ սխալ է։ Կոչվել է նաև Ոտն-Առնոյ։

Առնոս լեառն (3550)—Դ5—այժմ Առնոս-դաղ, Շատախի (Թաղի) շրջանում։

Առոս գյուղ—Գ8—այժմ Առուս գյուղ, Թալիշում։

Առոս-Պիժան գաւառ—Գ8—կոչվել է նաև Առոս, Առոս-Բիճան, Առոս-Պիճան. Փայտակարան նահանգի 4-րդ գավառն էր և գտնվում էր այժմյան Առուս գյուղի շրջակայքում՝ Վիլաշչայ գետի հովտում, շուրջ՝ 675 կմ² տարածությամբ։

Առուէճից Ձոր գաւառ—Գ5—Մոկաց նահանգի 4-րդ գավառը շուրջ 200 կմ² տարածությամբ, գտնվում էր Երեվարք և Ոշտունիք գավառների արանքում, ուստի Մոկաց աշխարհի ամենահյուսիսային գավառն էր։ Առուէճից ձոր կամ Առուաճից ձոր գավառը գտնվում էր նախա-

[1] Տես՝ Z. Khanzadian, Atlas de cartographie historique de l'Arménie, Corbevoie (Seine), 1960. 103-րդ քարտեզը, տես նաև E. Honigmann et A. Maricq, Recherches sur les Res Gestae Divi Saporis, Bruxelles, 1953, p. 153.

ռնոլյուցիոն շրջանի ռուսական քարտեզների Оранс-дараси կոչվող հովտում։ Կենտրոնն էր այժմ Ուռանց կոչվող գյուղը, որ Թովմա Արծրունու (IV, Գ) մոտ հիշվող Առուանից ձոր ամրոցը (թերևս կոչվում էր նաև Առուանց) պիտի լիներ։ Քարտեզի վրա սխալ է նշված։ Շփոթությունը առաջացել է այն պատճառով, որ Հյուբշմանը (էջ 307) այս գավառի տեղը ենթադրում է Մոկս ավանից դեպի հարավ-արևմուտք գտնվող Առվանց գյուղի շրջակայքում։

Առուն գետ—Գ5—այժմ Զուխուր գետ. հոսում էր Գայլատու լճից, ապա միանում Տղմուտին (այժմ Զանգիմար-չայ) և թափվում Երասխ։

Ասորեստան երկիր—Դ5—Դ6—հայերը այսպես էին կոչում Սասանյան Պարսկաստանի սահմաններում գտնվող Միջագետքը, հատկապես նրա միջին և ստորին մասերը։ Ասորեստանը Պարթևական, ապա Սասանյան, պետության տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոնն էր։ Այս երկիրը ասորական և պահլավական գրականության մեջ կոչվում է «Ասորեստան» կամ «Սուրիստան»:

Ասորիք երկիր—Դ2—Դ3—Դասական հեղինակների Syria-ն, այժմ էլ նույն անունով՝ Սիրիա։

Ասպական գետ—Գ4—այժմ Շատախ գետի խորաձորը, Քաղիրթ (Բաթման-սու) գետի ձախ վտակներից մեկը Սասունում։

Ասպականք գյուղ—Գ4—այժմ Սպականք գյուղ Տալվորիկի ձորում։ Ասպակունեաց գավառի կենտրոնը պիտի լիներ։

Ասպակունեաց ձոր գավառ—Գ4—գրվում է նաև **Ասպականունեաց ձոր**, Տավրուբերան նահանգի 2-րդ գավառն էր՝ 655 կմ² տարածությամբ։ Գտնվում էր Քաղիրթ (այժմ Բաթման-սու) գետի վտակ Շատախ գետի ձորահովտում և Սիմսարի լեռնանցքով ամենակարճ ճանապարհն էր Տիգրանակերտից դեպի Արտաշատ գնացող «արքունի պողոտայի» համար։ Գավառիս անունը պահպանել է այժմյան Սպականք (Ասպականք) գյուղը Տալվորիկի ձորում։ Ըստ մի աղբյուրի վկայության, այս գավառը կոչվել է նաև Գոգովիտ—«յԱզբագրնունեաց գաւառին որ կոչի Գոգովիտ, ի գեղն որ Բզրայրի Գոմ անուն կոչի» (տես՝ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 297), կամ մի այլ տեղ՝ «ի գաւառն Ասպագունեաց, ի Կոգովիտ, …ի գեղն որ կոչի Գոմ Բծրայրի» (անդ, էջ 299)։

Ասպահեն գետ, որ է **Խոզմաւր**—Բ6—ակունքները գտնվում էին Վաղարշապատի մոտ, որտեղից այս գետը հոսում էր հարավ և թափվում Մեծամոր գետի մեջ։ Քարտեզի վրա չի նշված։

Ատրպատական երկիր—Դ6—Դ8—կոչվում էր նաև՝ **Ատրպայական**: Հուն. Ἀτροπατηνή, լատ. Atropatenae, արաբ. պարսկ. **Ադրբադագան, Ազերբայջան, Ազրբեջան**. այժմյան Իրանական Ադրբեջանը։

Արաքիսոս (Եփեսոս) քաղաք—Գ2—այժմ Յարփուզ։

Արագած լեռն (4095)—Բ6—այժմ էլ նույն անունով հրաբխային զանգված։

Արագածոտն գավառ—Բ6—կոչվել է նաև **Ոտն Արագածու**: Այրարատ նահանգի 10-րդ գավառը, այժմյան Թալինի, Աշտարակի, Էջմիածնի և Հոկտեմբերյանի շրջանները, 3050 կմ² տարածությամբ։

Հայաստանի սիրտը, Արարատյան դաշտի կենտրոնական գավառը՝ Արագածոտնը հայկական պետականության կենտրոնական մասն էր։ Այստեղ էին գտնվում միացյալ Հայաստանի՝ Մեծ Հայքի մայրաքաղաքները՝ **Արմավիրը**, ապա **Վաղարշապատը**: Երվանդունիների ժամանակաշրջանում Արագածոտնը Այրարատյան թագավորության կենտրոնական գավառն էր և **Արմավիր** մայրաքաղաքի քաղաքային տերիտորիան պիտի լիներ։ Այս գավառում հիմնվեց **Վարդգէսաւանը**, որը ապա վերանվանվեց **Վաղարշապատ**:

Արագւ գետ—Ա6—Վրաց. არაგვი, არაგვი Արագվի այժմ էլ նույն անունով։

Արած գաւառ—Գ6—կոչվում էր նաև **Արածոյ կողմըն**, Այրարատ նահանգի 22-րդ գավառը, շուրջ 250 կմ² տարածությամբ. գրավում էր Գայլե-դրունքի և Եղեգնաձորի շրջանի միջև ընկած այժմյան Սադարակ գյուղի շրջակայքի տերիտորիան։

Արածանի գետ—Գ5—**Արևելյան Եփրատ** (Մուրադ-սու) ասուրա-բաբելական արձանագրություններում հայտնի է **Արսանիա** անունով։

Արայի լեռն (2614)—Բ6—այժմ էլ նույն անունով։

Արասխ որ է **Ովէա գաւառ** (բնագրում աղճատված՝ **Արիսի**)—Դ6—Պարսկահայքի 4-րդ գավառը՝ 1120 կմ² տարածությամբ, միջին դարերում կոչվում էր **Շնաւե** համանուն քաղաքով (այժմ Ուշնուե)։ Այս գավառի և ամբողջ նահանգի հարավային սահմանն էր Արասխ (այժմ Գետար-սու) գետը։

Արասխ գետ—Դ6—այժմ Գետառ-սու, հուն. Ἀρά[ξης], լատ. Araxes, ակունքները գտնվում են Զարասպ լեռան արևելյան լանջին։ Արասխ գետը թափվում է Կապուտան (Ուրմիա) լիճը, նրա հարավ-արևմտյան ծայրին։ Թերևս այս գետը կոչվել է նաև ***Գետ-Արասխ**, որից առաջացել է այժմյան թուրքացած ձևը՝ Գետառ-սու։

Արասխ գետը Մեծ Հայքի սահմանն էր Գանձակ Շահաստան քաղաքի քաղաքային տերիտորիայի կողմից, որը մտնում էր Ատրպատականի կազմում։ Որոշ անտիկ հեղինակներ այս **Արասխ-Արաքսը** շփոթում էին **Երասխ-Արաքսի** հետ։

Արասաքս կայան—Գ1— Arasaxe այժմ Զերեզեկ գյուղ, Կեսարիայից դեպի արևելք։

Արաւրակ բերդ—Գ3—հայ. **Արաւրակ**, որ չի վկայված, անտիկ հեղինակների Arauraka, բյուզ. Ἀράβρακα, ավելի ուշ կոչվում էր **Արզնգիք**, գտնվում էր Քյոմուր-չայի գետակի ակունքների շրջանում։

Արարադ լեռն (2089)—Դ5—ուրարտերեն Arartu, ասուրա-բաբելական՝ Nibur, հուն. Νίβαρος, արաբ. Gabal Ǧaūdī, այժմ՝ Ջուդի-դաղ։ Ըստ տեղական ավանդության՝ այդ լեռան վրա ջրհեղեղից հետո կանգ է առել Նոյի տապանը։

Արարատ լեռն, տե՛ս **Ազատ—Մասիս** լեռն:

Արգաուս քաղաք—Գ2—Ἀργαῦς, հայ. **Արգաւան**, որ անունն էլ պահպանել է այժմյան բնակավայրը։

***Արգաստ** գետ—Դ5—այսպես պիտի կոչվեր այժմյան Կերկանդիլ-սու վտակը, որը թափվում էր Արևելյան Տիգրիս՝ ձախ կողմից։

Արգաստովիտ կամ **Արգաստեայ** ոստ գավառ—Դ5—Մոկաց նահանգի 7-րդ գավառը, ենթադրաբար տեղադրում ենք Արևելյան Տիգրիսի (Բոհտան-սու) գետի ձախ վտակ՝ Կերկանդիլ-սու գետի հովտում։ Եթե մեր ենթադրությունը ճիշտ է՝ Արգաստովիտ գավառի ընդհանուր տարածությունը պիտի լիներ շուրջ 500 կմ²։

Արգէոս լեռն (3916)—Գ1—այժմյան Էրջիաս-դաղ գագաթը։

Արգիրոկաստրոն ամրոց—Բ3—այժմյան Գյումուշխանե ավանը։ Հայտնի էր իր արծաթի հանքերով։

Արգուել[ք], որ է **Մարգուլ[ք]** ազգագաւառ—Ա5—վրաց. არგუეთი, არგვეთი **Արգուէթի**, **Արգւէթի** կամ მარგუეთი **Մարգուէթի**: Այս «ազգագաւառը» գտնվում էր Ձվիրիլա գետի և Արգվեթի կամ Լիխի լեռնաշղթայի միջև։ V—VI դդ. իբրև առանձին **Արգուէթ գաւառ**, մտնում էր Վիրքի (Վրաց աշխարհի) կազմում։ Տարածությունն էր՝ 1450 կմ²։

Արգուէթ գաւառ, տե՛ս **Արգուել[ք]**, որ է **Մարգոյլ[ք]**։

Արգւէթու լերինք—Ա5—այսպես էր կոչվում Սուրամի կամ Լիխի լեռնաշղթան։

Արդոզ ազգագաւառ—Ա6—Արդոն գետի միջին և ստորին հովտում։ Ալան(օվս) ժողովրդի կազմում մտնող ցեղերից մեկն էր։

Ար-դոն գետ—Ա6—Թերեք գետի վտակներից մեկը, այժմ էլ նույն անունով։

Արեբանոս վայր—Գ6—ուրարտական Arubana սրբավայրի տեղում, ուր հետագայում գտնվում էր **Բարդուղիմեոսի վանքը**: Առաջին անգամ հիշատակում է Մովսես Խորենացին (II, ԼԴ) **Արեբանոս** **քաղաք** անունով։ Տե՛ս նաև Մ. Խորենացուն վերագրվող «Պատմութիւն պատկերի Տիրամօրն» երկը։ Թերևս Արուբանա աստվածուհուն փոխարինել է Անահիտը, որի անունով այս քաղաքը հելլենիստական ժամանակաշրջանում կոչվել է Ἀρτέμιτα, որը հիշատակում է Պտղոմեոսը (V, 12, § 10)։

Արեւելեան Խաբուր գետ—Դ5—այժմ էլ նույն անունով։

Արեփք գաւառ—Գ7—Սյունիքի 11-րդ գավառը՝ 625 կմ² տարածությամբ, համապատասխանում է այժմյան Մեղրիի շրջանին։

Արեւելեան Տիգրիս, տե՛ս **Ջերմ գետ**:

Արեւմտեան Տիգրիս գետ—Դ4—Տիգրիսի վերին հոսանքը։

Արզան գետ—Դ4—այժմ Խարզան-սու։

Արզան քաղաք, տե՛ս **Շուկառաքա**:

Արիարաթիա քաղաք—Գ2—Ἀριαράθεια, այժմ Ազիզիե գյուղ Ծամնդավ գետի ակունքների շրջանում։

Արծկէ աւան—Գ5—ուրարտական արձանագրություններում Ziukuni «քաղաքը», բյուզ. Ἀρτζικέ, արաբները կոչել են՝ Dat. al-Ǧauz. որտեղից առաջացել է այժմյան **Ալջավազ** կամ **Ադիլջեվազ** անունը։ Արծկէ ավանը գտնվում էր Բզնունիք գավառում։

Արծկէ կղզի—Գ5—այժմ գոյություն չունի, պիտի գտնվեր Արծկէ (Ադիլջեվազ) ավանի լճափից ոչ հեռու. հետագայում, երբ լճի մակերեսը բարձրացել է, հիշյալ կղզին մնացել է ջրի տակ։ Արծկէ կղզին գտնվում էր Բզնունիք գավառում։

Արճէշ քաղաք—Գ5—Տավրուբերանի Աղիովիտ գավառում. ուրարտական ժամանակաշրջանում այստեղ հայտնի էր Argištiuna քաղաքը, այժմ այս քաղաքի ավերակները մեծ մասամբ արդեն ջրի տակն են և ցամաքում մնացած ժայռը կոչվում է **Էրջիշ-կալա**: Արճեշ քաղաքի անունով Վանա լիճը երբեմն կոչվել է **Արճէշի ծով**, որի մասին վկայում է հիշյալ լճի հունարեն անունը՝ Ἀρσησσά λίμνη կամ՝ Ἀρση[ση]νή, որ գործ էր ածվում Θω[σ]πῖτις անվան հետ միասին։

Արճիշակ գետ—Գ5—այժմ Մահմեդիկ-չայ։

Արճիշակ լիճ—Գ5—այժմ **Արճակ լիճ**, ծովի մակերեսից բարձր է 1890 մ։ Լճից ոչ հեռու դե-

պի արևելք գտնվում էր Արճիշակ գյուղը, այժմյան Արճակը։

Արճիշակովիտ գավառ—Գ5—Վասպուրականի 4-րդ գավառը՝ 1075 կմ² տարածությամբ. գրավում էր Արճակ (կամ Արճիշակ) լճի ավազանը։

Արմաւիր քաղաք—Բ5—ուրարտական ժամանակաշրջանի Արգիշտիխինիլի քաղաքի հայկական անունը, հուն. Ἀρμαυῖρα (Ptol., V, 12, § 5), որը Երուանդունիների ժամանակ Այրարատյան թագավորության մայրաքաղաքն էր, այժմ ավերակներ Արմավիր գյուղի մոտ։ Ըստ երևույթին Արագածոտն գավառը հնագույն ժամանակներում Արմավիրի քաղաքային տերիտորիան էր։

Արմատան գիւղ—Գ3—այժմ Արմտաններ կոչված գավառակ՝ Մեծ Արմտան և Փոքր Արմտան գյուղերով. համապատասխանում է մ. թ. ա. XV—XIV դդ. խեթական արձանագրությունների Armatana տեղանվան հետ։ Այս վայրը մտնում էր Հայասա ցեղային միության կազմում (տես՝ Նշան Մարտիրոսյան, Պրպտումներ փոքրասիական անուններու մասին։ Պատմա-բանասիրական հանդես, 1961, գիրք 3, էջ 92—93)։ Հակոբ Կարնեցին հիշատակում է՝ «Արմտաններն, որ գնացեալ հասանէ մինչև ի Տիւրիկէ» (Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ. հատ. II, Երևան, 1956, էջ 552)։ Արմատան անվան մեջ պիտի պահպանված լինի Արմեն ցեղանվան նախնական ձևերից մեկը։

Արշամաշատ գաւառ—տե՛ս Բալահովիտ գաւառ:

Արշամաշատ քաղաք—Գ3 այժմ Խարաբա-Նաջարան ավերակների գյուղ։ Արշամաշատը (Ἀρσαμόσατα—(Ptol., V, 12) Ծոփաց թագավորության մայրաքաղաքներից մեկն էր, սակայն մ. թ. առաջին դարերում ավերվել է և միջին դարերում հայտնի էր իբրև ավան Աշմուշատ (բյուզ. Ἀσμόσατον, արաբ. Šimšat) անունով։ Մինչև վերջին կոտորածները տեղացիները այս քաղաքի շրջակայքը անվանում էին Աշմուշատ։ Իբրև այդ քաղաքի քաղաքային տերիտորիա, մինչև 387 թ.՝ ամբողջ Բալահովիտ գավառը պիտի կոչվեր Արշամաշատ: Տե՛ս Բալահովիտ գաւառ:

Արշամունիք գաւառ—Գ4—Տավրուբերան նահանգի 4-րդ գավառը՝ 2180 կմ² տարածությամբ, գրավում էր Բյուրակն (Բինգյոլ-սու) գետի հովիտը, ներառյալ Գինեկ գետի ակունքների շրջանը։ Այս գավառը Մանդակունի նախարարական տոհմի հայրենիքն էր։

Արշարունիք գաւառ—Բ5—Այրարատ նահանգի 5-րդ գավառը, միջին դարերում կոչվում էր Աշորնէք (վրաց. აშორნია Աշորնիա), գտնըվում էր Երասխ գետի ձախ ափին, Կաղզվանից հյուսիս։

Արշարունիք գավառը Գաբեղեանք գավառի հետ կազմում էր Երասխի խորաձոր կիրճը, ուստի երկուսը միասին կոչվում էին Երասխաձոր: Արշարունիք գավառի տարածությունն էր 1225 կմ²։ Արշարունիք անունը կապվում է Կամսարականների, իսկ նրանցից առաջ՝ Երուանդունիների տոհմական անուն Արշաւիր-ի հետ։ Այս գավառը ըստ երևույթին զատվել է Շիրակից իբրև Երուանդաշատի քաղաքային տերիտորիան։ IV դ. և հետո Կամսարականներին պատկանում էր Շիրակի հետ նաև Արշարունիքը։

Արշարունիքումն էր գտնվում Արտագերս հռչակավոր ամրոցը (այժմ Քերս)։

Արջոյ-Առիճ լեառն (2695)—Բ5—այժմ Ալաջադաղ լեռը Անիի ավերակների մոտ։

Արուաստան երկիր—Դ4—հուն. Միգդոնիա, ասոր. Bēth ʻArabāyē, բյուզ. Βεαρβαες։ Մինչև մ. թ. 37 թ. մտնում էր Մեծ Հայքի կազմում՝ 5850 կմ² տարածությամբ։ Կենտրոնն էր Մըծբին քաղաքը, որի քաղաքային տերիտորիան էր հանդիսանում Արուաստան երկիրը։

Արսեաց փոր կամ **Ասեաց փոր**—Բ4—վրաց. ასის-ფორა Ասիս-Փորա, Տայքի 8-րդ գավառը և պարունակում էր հետագայի Կիսկիմ, Խոտրջուր և Բերդագրակ վիճակները։

Այս գավառումն էր գտնվում հռչակավոր Ոսկեհանքը Φαραγγιων-ը, ըստ երևույթին, այժմյան Քարվանք գյուղի մոտերքը։ Արսեաց փորի տարածությունն էր 2250 կմ²։

Արսիս գյուղ—Բ4—այժմ Էրսիս, Ճորոխ գետի աջ ափին, Արսեաց փոր գավառի կենտրոնը պիտի լիներ։

Արտագերս ամրոց—Բ5—հուն. Ἀρτάγειρα, այժմյան Քերս գյուղը։

Արտազ գաւառ—Գ6—Վասպուրականի 15-րդ գավառը՝ 2225 կմ² տարածությամբ. ուրարտական արձանագրություններում կոչվում էր Ultuza։ Արտազի կենտրոնն էր Մակու բերդաքաղաքը։ Արտազ գավառը Ամատունի նախարարական տան ժառանգական հայրենիքն էր։

Արտալեսոն ամրոց—Գ4—բյուզ. Ἀρταλέσων ամրոցը, պիտի գտնվեր այժմյան Քղիից հարավ՝ Հանգստուն գյուղի մոտ։

Արտահան գաւառ—Բ5—վրաց. არტაჰანი. არტაანი Արտահանի, Արտաանի, 7-րդ գավառ Գուգարաց բդեշխության։ 387 թ. ամբողջ Գուգարքի հետ մտավ Վրաց աշխարհի կազմում։ Գրավում էր համանուն—այժմ Արդահան,—քաղաքի շրջանը, Կուր գետի ակունքներից հյուսիս։ Արտահան գավառի տարածությունն էր 2025 կմ²։

Արտահան քաղաք—Բ5—այժմ էլ նույն անունով՝ Արդահան քաղաք, սակայն հնում այս քաղաքը պիտի գտնվեր այժմյան Ուր գյուղի տեղում։ Վրաց. არტანი. ქალაქი არტანისა Արտանի, Քալաքի Արտանիսա: Տե՛ս Քաջաց քաղաք (Հուր)։ Պտղոմեոսի մոտ (V, 10, § 2) հիշվող Ἀρτάνισσα քաղաքի անունը կապ չունի Արտահանի հետ, պիտի ուղղել Ἀρβάνισσα, որ վրացական Ուրբնիսի քաղաքի անունն է, այժմ գյուղ նույն անունով։

Արտաշատ քաղաք—Գ6—հուն. Ἀρτάξατα, Ἀρταξίασατα, լատ. Artaxata. այժմյան Արտաշատ շրջանային կենտրոնից հարավ. Խոր Վիրապ վանքի և Գինոյ գետի (այժմ Կարասու-սու) ու Գինոյ բլուրի (այժմ Кырмызы тапа) միջև։ Արտաշատը հիմնվել է Արտաշես Ա-ի (189—160) կողմից և այնուհետև Մեծ Հայքի թագավորության մայրաքաղաքն էր մինչև Արշակունիների հարստության անկումը 428 թ. և նույնիսկ մինչև V դ. երկրորդ կեսը։ Արտաշատ քաղաքի քաղաքային տերիտորիան կոչվում էր Ոստան Հայոց:

Արտաշիսեան որ է **Արտաւանեան աւան**—Գ5— ուրարտական արձանագրությունների Tariria͟hini'i, այժմ Արտամետ։

Արտաշիսեան, որ է **Արտաւանեան գաւառ**—Գ5—Վասպուրական նահանգի 27-րդ գավառը՝ 150 կմ² տարածությամբ, հանդիսանում էր Արտաշիսեան կամ Արտավանեան ավանի տաճարական տերիտորիան, այժմ Արտամետի շրջակայքը։ Այս գավառը դեռևս ուրարտական ժամանակաշրջանում պիտի լիներ Taririaḫirili (այժմ Արտամետ) վայրի տաճարական երկիրը։

Արտաւազդական աւան—Բ6—կամ **Արտաւազդայ ապարանք**, այժմյան Արզական գյուղը։

Արտաւանեան գաւառ, տե՛ս **Արտաշիսեան** գաւառ։

Արտաւէտ քաղաք—Գ8—այժմ **Արդաբիլ** քաղաք։ Սասանյանների ժամանակ կոչվել է նաև Ռամ-Պերոզ։

Արտի կղզի—Գ5—այժմ **Արտեր**: Վանա լճի կղզիներից մեկը։ Արտի կղզին Ռշտունիք գավառումն էր համարվում։

Արտին լեառն (2047)—Բ5—այժմ էլ նույն անունով (**Արտենի**):

Արտոս լեառն (3475)—Գ5—այժմյան Արտոս դաղը, Ոստանից հարավ։

Արփանեալ գետ («Աշխարհացոյց»-ում՝, որի Արտօնկն, ճիշտ ընթերցումը պիտի լինի՝ *Արփօնկն, այսինքն՝ Արփաւանական)—Գ6—այժմ Արփա գետ։ Եղիշեի մոտ (III, 1957, էջ 69) պահպանվել է ճիշտ ձևը՝ Արփանեալ, իբրև ավանի անուն (այժմ Առենի)։

Արցախ նահանգ—Բ6—Գ7—Մեծ Հայքի 10-րդ նահանգը, 11,528 կմ² տարածությամբ։ Գրավում էր այժմյան Լեռնային Ղարաբաղը՝ Արաքս գետից սկսած մինչև Իջևանի շրջանը։ 387 թ. միացվեց Աղվանքին, սակայն, արդեն հայացած երկիր էր և հետագայում, երբ վերականգնվեց հայկական անկախ պետականությունը, Արցախը մտնում էր Հայաստանի կազմում։ Տեղական լեզուն համարվում էր հայերեն լեզվի բարբառներից մեկը՝ Արցախի բարբառը (այժմյան Ղարաբաղի բարբառը): Տե՛ս Ստեփաննոսի Սիւնեցւոյ (VIII դ. սկիզբ)՝ Մեկնութիւն Քերականին[1]։

Արփադ քաղաք—Դ2—Ազազ քաղաքից հարավ, այժմյան Թել-Ռիփադ գյուղը։

Արքայից գաւառ, տ. Մոկք Առանձնակ գավառ։

Արքէոպաւլիս քաղաք—Ա5— Ἀρχαιόπολις, եգերացիները (մեգրել-զաները) կոչել են ჯიხაჲ ქვიჯა Ջիխան-Քվիջա, իսկ վրացիները՝ ციხე გოჯი Ցիխէ-Գոջի, այժմ Նաքալաքեվի գյուղ։ Այս քաղաքը Եգրեւիկէ երկրի (Առանձնակ Եգերայ, որ Եգերաց աշխարհի կենտրոնական գավառն էր) կամ Լազիկայի թագավորության մայրաքաղաքն էր։

Աւագն Անտիոք քաղաք—Դ2 Ἀντιόχεια, Antiocheia primoris, երբեմնի Սելևկյան հզոր պետության մայրաքաղաքը, որը հելլենիստական աշխարհի երեք խոշորագույն կենտրոններից մեկն էր (Աղեքսանդրիա՝ Նեղոսի վրա, Սելևկիա՝ Տիգրիսի վրա և Անտիոքը Որոնտեսի վրա. այժմ Անտաքիա) և Անտիոք անունը կրող բազմաթիվ քաղաքների միջև ամենախոշորը—Աւագը: Այս քաղաքի քաղաքային տերիտորիան, իբրև Սելևկյան պետության կենտրոն, կոչվում էր Սելեւկիա:

Աւազով աշխարհ—Ա5—Բ6, հմմտ. Աբազ. Абазины ցեղը, այլ ձեն է հուն. Ἀβαζγοί, Ἀβασκοί, Abasges. Աւազ՝ տեղական –ով (հմմտ. «Փոգխով») վերջավորությամբ։ Աւազով Ափխազիայի անվան հնագույն ձևն է։

[1] «Եւ դարձեալ զքո լեզու իդ գիտելն զբովանդակ զբառսն զեղերականս, որպէս զԿորճայն եւ զՏայեցին եւ զԽութայինն եւ զՉորրորդ-Հայեցին եւ զՍպերացին եւ զՍիւնին եւ զԱրցախայինն, այլ մի միայն զՄիջերկրեայսն եւ զՈստանիկսդ, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան, այլեւ ազատակարք ի պատմութիւնսն...», Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 187.

Աւճիկ ամրոց—Գ4—բյուզ. ''Αβνιкоν, տաճիկ. Ջիվան-կալե, այժմ Ավնիկ գյուղ։

Ասոտք ազգագաւառ—Ա5—վրաց. მაღრან დვალეთი Մաղրան Դվալեթի, Լիախվի գետի ակունքների շրջանում, շուրջ 780 կմ² տարածությամբ, ըստ երևույթին ալան-օվս ցեղերից մեկը, որի անունով էլ վրացիները բոլոր ալանաց ցեղերին կոչում են օվս:

Ափխազք ազգագաւառ—Ա5—Ա—6—վրաց. აფხაზნი Ափխազնի: Այժմ էլ նույն անունով ժողովուրդը ապրում է նույն տեղում, գլխավորապես Բզիբի և Կոդոր գետերի միջև։

Ափշիլք (կա և Ափշեղք ձևը), ազգագաւառ—Ա4—վրաց. აფშილნი Ափշիլնի ցեղ և აფშილეთი Ափշիլեթի երկիր, հուն. 'Αψύλοι, ապրում էին Աբխազիայում, հետագայում Սամուրզաղանո կոչված գավառում։ Ենթադրվում է, որ Աբխազիայի անունը աբխազերեն լեզվով՝ Աիսնը Апсны առաջ է եկել ափշիլ ցեղանունից։

Բ

Բաբերդ տե՛ս Սմբատաւան:

Բագառիճ կամ Բագայառիճ գյուղ—Գ4—Ստրաբոնի մոտ աղճատված ձևով է՝ Βαρίζα, որի ճիշտ ընթերցումը պիտի լինի Βα[γα]ρίζα։ Այստեղ էր Միհրի հռչակավոր տաճարը, Կարինի և Արտաշատի վրայով դեպի Եկբատան (Համադան) տանող կարավանային ճանապարհին։

Բագաւան կամ Բագուան—Գ5—անվան ավելի հին ձևը պիտի լիներ *Բագարաւան, որը պահպանվել է Բագրաւանդ կամ Բագրեւանդ գավառի անվան մեջ։ Բագավանը գտնվում էր Նպատ լեռան ստորոտում և նախաքրիստոնեական և վաղ քրիստոնեական Հայաստանի խոշորագույն կրոնական կենտրոնն էր։ Մինչև այժմ էլ գոյություն ունի Բագավանի IV դ. բազիլիկ տաճարի մոնումենտալ շենքը, այժմ Ուչ-Քիլիսե կոչվող գյուղում։ Անտիկ հեղինակների մոտ Baguana անունը պահպանվել է Sacavana աղճատված ձևով։

Բագաւան կամ Աքշի-Բագուան, Աքշի-Բագաւան աւան—Գ8—արաբա-պարսկական աղբյուրներում՝ Բագարվան կամ Բաջարվան, կենտրոնն էր համանուն գավառի։ Այժմ էլ նույնանուն Բաջարվան գյուղ՝ Պրիշիբ շրջանային կենտրոնից հարավ։ Բագաւան անվան ավելի հին ձևը պիտի լիներ Բագարւան, որից էլ առաջացել է Բագաւան անունը։ Անվան առաջին՝ Աքշի մասնիկը ցույց է տալիս, որ այս վայրը եղել է զրադաշտական պաշտամունքի կենտրոններից մեկը։

Բագարվանը գտնվել է Բագարվան գետի մոտ, որ այժմյան Բազար-չայ գետակը պիտի լինի։ Հայերը և տեղի բնիկները՝ Թալիշները, պիտի այդ գետը կոչեին՝ Բագառու:

Բագարան աւան—Բ5—այժմ Բաքրան գյուղ։ Երվանդունիների թագավորության կրոնական կենտրոն։ Ըստ պատմական ավանդության, երբ Երվանդաշատը հայտարարվեց Այրարատյան թագավորության մայրաքաղաք, Բագարան փոխադրվեցին Արմավիրի տաճարում գտնվող կուռքերը։

Բագրեւանդ գաւառ—կամ Բագրաւանդ—Գ5—առաջացել է սկզբնական Բագարա-վանդ (որից՝ Բագար-վան, Բագաւան), Այրարատ նահանգի 6-րդ գավառը՝ 5275 կմ² տարածությամբ. համապատասխանում էր այժմյան Ալաշկերտի հովտին։

Բագրեւանդ գետ—Գ5—այժմ Շարիան-սու, Արածանի գետի վտակը։

Բազալէթ գաւառ—Բ6—վրաց. ბაზალეთი Բազալեթի: Այժմ էլ նույնանուն գյուղ և լիճ Դուշեթի քաղաքի շրջանում։

Բազալէթ գավառի ընդհանուր տարածությունն էր 525 կմ² և մտնում էր Վերին աշխարհ Վրաց երկրամասի կազմում։

Բազկանք կամ Բազկան ազգագաւառ։ Մեզ հասած գրչագրերում հիշատակվում է՝ Բաւանք, Բագանք, Բայզանք, Դաշտ ի Բազկան ձևերով և ճիշտը վերջինն է։ Բազկան-ը համապատասխանում է Զաքարիա Հռետորի Bazgun երկրին, որը բանասիրության մեջ համարվում է անբացատրելի։ Այս անունը սովորաբար նույնացնում են Balasagun—Բաղասական անվան հետ, իբրև վերջինիս աղճատված ձևը։ Մեր հարցի համար կարևոր է նշել, որ Բազկան երկրի արևմտյան մասը, իբրև առանձին գավառ՝ «Դաշտ-ի-Բազկան» անունով, հիշատակվում է բուն Աղվանքի գավառների շարքում։ Սակայն անվան այս ճիշտ ձևը պահպանվել է միայն վերջերս հրատարակված «Աշխարհացոյց»-ի գրչագրում (տես Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը։ Երևան, 1944, էջ 348), մնացյալ հրատարակված օրինակներում տեղի է ունեցել շփոթություն «Բաղասական» անվան հետ, ուստի գոյություն ունեն՝ Դաշտ-ի-Բաղասական, Դաշտ-ի-Բաղական, Իբաղական, Իբազական: Վերջինս էլ առաջ է եկել նրանից, որ Դաշտ-ի-Բազկան գավառին նախորդում է Քաղադաշտը: Հետագա արտագրողների մոտ Քաղադաշտ, Դաշտ-ի-Բազկան շարքը աղավաղվելով դարձել է՝ Քաղադաշտ, ի Բազկան, կամ՝ Քաղա, Դաշտ ի Բաղկան, ապա՝ Դաշտ ի Բաղական և Դաշտ ի Բաղասական: Այս սխալ ընթերցումները մեզ ևս գցեցին շփոթության մեջ և առաջ բերեցին ենթադրություն, որ Բաղական-Բայղական ձևը համապատասխանում է պարսկական աղբյուրների Baylakan-ին, որ Փայտակարան քաղաքի անունն է, ուստի քարտեզի վրա սխալմամբ նշված է՝ Բաղասական դաշտ (Դաշտ-ի Բաղական)՝ իբրև այժմյան Միլի դաշտի անուն։ Սակայն բացառված չէ, որ անկախ մեր խնդրից, Միլի դաշտը հիրավի կոչվում էր Բաղասական դաշտ. այդ են ապացուցում արաբական աղբյուրները, որոնք ևս գիտեն Balasakan դաշտը, որը պահլավերեն պիտի հնչեր Dašt-i-Balasakan, ուստի մեր քարտեզի վրա նշված Բաղասական դաշտը (տես) պիտի թողնել, միայն փակագծերում Դաշտ ի Բաղական-ը պիտի դարձնել՝ Դաշտ ի Բաղասական:

Բազկան երկիրը համապատասխանում է արաբա-պարսկական աղբյուրների El-Iran (կարդացվում է նաև՝ Liran) երկրին, որը տեղադրվում է այժմյան Ափշերոնի թերակղզուց մինչև Շամախի քաղաքը և Աղ-սու գետը ընկած դաշտավայրում, մոտավորապես 9980 կմ² տարածությամբ։ Զաքարիա Հռետորի մոտ հայտնի է Bazgun անունով և VI դարից հայտնի էր իբրև առանձին ֆեոդալական իշխանություն, որի կառավարիչը, ըստ վաղ շրջանի արաբական աղբյուրների, կրում էր «Իրան-շահ» տիտղոսը։ Այս իշխանությունը պիտի առաջ գար Մազքթաց թագավորության վերացումից հետո, մոտավորապես 510 թ.։ Կենտրոնը պիտի գտնվեր Շամախի քաղաքում։ Այս երկրանունը, ըստ երևույթին Եղիշեի մոտ պահպանվել է «Հէրան» ձևով, իբրև անձնանուն (Եղիշեի՝ Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Զ-երորդ եղանակ, Երևան, 1957, էջ 134), ուստի քարտեզի վրա նշված է [Հէրան] (Բ—Տ), սակայն ավելի ճիշտ կլինեք փոխել և դնել Բազկան անունը։ Բազկան երկիրը հյուսիսից եզերվում էր Կովկասյան լեռնաշղթայով, որտեղից (այժմյան Վել-վելիչայ գետի ակունքների շրջանից) սկսվում էր Ապզուտ-Կաւատ պարիսպը (տես) («Բազկանք, ուստի առնու պարիսպն երկայն՝ որ կոչի Ապզուտ-Կաւատ, մինչև ցԱլղմինոն մօրս և ցծով», «Աշխարհացոյց», էջ 27)։ Տե՛ս В. В. Бартольд, Место прикаспийских степей в истории мусульманского мира, Баку, стр. 37, 1925. Տե՛ս և Հէրան կամ Իրան:

Բասիլիկէ-Թերմէ (Βασιλικὰ θερμά) աւան—Գ1—այժմ Թերջիլի Համամ գյուղ։

Բալահովիտ գաւառ—Գ3—հուն. Βελαβιτηνή, լատ. Balabitenae։ Չորրորդ Հայքի 4-րդ գավառը 1750 կմ² տարածությամբ։ Բալահովիտ էր կոչվում իր կենտրոնը հանդիսացող Բալու քաղաքի անունից։ Այսպես պիտի կոչվեր գավառը 387 թվականից հետո, երբ բյուզանդական գերիշխանության ներքո անցնելով, կառավարվում էր Բալուում նստող հայ սատրապի՝ նախարարի կողմից։

387 թ. առաջ այս գավառը պիտի կոչվեր Արշամաշատ և հանդիսանալու էր Արշամաշատ քաղաքի քաղաքային տերիտորիան։

Այս գավառը հիշվում է դեռևս Պոլիբիոսի մոտ իբրև «Գեղեցիկ դաշտ» (Καλῶπεδίω), իսկ բյուզ. պատմիչ Միքայել Ատտալիատը կոչում է այն 'Ανθίας, որի անվան 'Ανθισηνή-ի աղճատված ձևն է Ստրաբոնի մոտ պահպանված 'Ακισηνή ընթերցումը։

Բալու բերդ—Գ3—այժմ էլ նույն անունով ավան։

Բակուրակերտ աւան—Գ6—կամ Բաւրան, գտնվում էր Մարանդ քաղաքի արվարձաններում՝ այժմյան Բաւրան գյուղի տեղը։ Բակուրակերտ (Մով. Խոր. II, Կ) պիտի կոչվեր ավանը ի հիշատակ Տրդատ Ա Արշակունու (62—80) եղբոր՝ Մարաստանի թագավոր Բակուրի, որի գերեզմանը պիտի գտնվեր այս վայրում։ Տրդատ «եղբայրասերը» (φιλάδελφος) իր եղբայր Բակուրի հիշատակին կառուցել է տաճար, որին սպասարկելու համար կցվել է մի ամբողջ գավառ, որը «Աշխարհացոյց»-ում կոչվում է Բաւրան: Tab. Peut.-ում կոչվում է Filadelfia։ Հետագայում (II—III դդ.), երբ բարձրացել է Մարանդ քաղաքը, գավառը ստացել է նրա անունը՝ Մարանդ:

Բաղաբերդ ամրոց—Գ7—Գեղի և Ողջի գետերի միախառնման տեղում։

Բաղան-ռոտ աւան—Գ8—պարսկ. Բալհաք, այժմ՝ Բոլղարու-քենդ գյուղ, որ թալիշերեն Բոլհառու կոչվող գետի անունից է առաջացել, իսկ վերջինս հոմանիշ է պահլավերեն Բաղանռոտին:

Բաղան-ռոտ, որ է Ռոտ ի Բաղա գաւառ—Գ8—Փայտակարան նահանգի 3-րդ գավառը՝ այժմյան Մուղանի դաշտում. գրավում էր Բաղան-ռոտ (այժմ Բուլղարու-չայ) գետի ներքին հոսանքի դաշտավայրը։ Այս գավառի

անվան նոր պարսկերեն ձևը պիտի լինի՝ Բալի-աբ:

Բաղան-ռոտ գետ (Ռոտ ի Բաղա)—Գ8—Նոր պարսկ. Բալի-աբ, թալիշերեն՝ Բոլի-առու, այժմ Բոլղարու-չայ:

Բաղասական դաշտ—Բ7—այժմյան Միլի դաշտը, ավելի վաղ շրջանում կոչվում էր «Գարգարացոց դաշտ»: Բաղասական դաշտի այն մասը, որը գտնվում էր Կուր և Երասխ գետերի միախառնման եռանկյունում, կոչվում էր Բեղամէջ (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլ. ԺԱ, Երևան, 1961, էջ 203)։

Բաղաղէշ բերդ—Գ5—Բաղէշ անվան հին ձևն է (հուն. Βαλαλείσων), որ՝ աղճատված ձևը պահպանվել է Փավստոս Բուզանդի մոտ՝ «Բառաէշ»: Այս ամրությունը հսկում էր հարավից Տաւրոյբերան կամ Ձորապահակ լեռնանցքին, որը ամենակարճ ճանապարհն էր Միջագետքից դեպի Հայաստանի Միջնաշխարհը։ Բաղէշ բերդի տեղում միջին դարերում աճեց մեծ քաղաք, որը արաբները կոչում էին Բիթլիս, այժմ էլ նույն անունով է կոչվում օտարների մոտ, իսկ հայերը շարունակում են անվանել Բաղէշ:

Բաղաղէշ գետ—Գ4—այժմ Բիթլիս-սու։

Բաղք գաւառ—Գ7—Սյունիքի 9-րդ գավառը՝ 925 կմ^2 տարածությամբ, համապատասխանում էր այժմյան Ղափանի շրջանի հիմնական մասին։

Բայտբերդ—Բ4—կամ Սմբատաւան, Սմբատայ բերդ, այժմ Բաբերդ, կամ Բայբուրթ, Ճորոխ գետի ձախ ափին։ Ըստ երևույթին՝ այստեղ է գտնվել Բագրատունիների սկզբնական կենտրոնը։

Բասեն աւան—Գ4—կոչվել է նաև Վաղարշաւան, այժմ Քյոփրի-քյոյի։

Բասեան գաւառ—Բ4—Այրարատ նահանգի 1-ին գավառը՝ 2525 կմ^2 տարածությամբ, այժմ էլ նույն անունով՝ Բասեն կամ Փասին, Փասինլեր ձևերով։

Բարբալիսոս քաղաք—Դ3—հուն. Βαρβαλισσός Բարբալիտիս երկրամասի (տե՛ս ստորև) կենտրոն, այժմ Քալաաթ Բալի գյուղը։ Պատմության մեջ այս քաղաքը նշանավոր է 249 թ. ճակատամարտով, որ տեղի ունեցավ հռոմեացիների և պարսիկների միջև։

Բարբալիտիս «փոքր աշխարհ Ասորիքի»—Դ2—«Աշխարհացոյց»-ում (էջ 36) վկայված է աղճատված «Բալբանիտիս» ձևով։ Վերոհիշյալ Բարբալիսոս քաղաքի քաղաքային տերիտորիան էր։

Բարդող լեառն (2562)—Բ5—այժմ Թաքալթու։

Բարդուղիմէոսի վանք, տե՛ս Արեբանոս։

Բառիզակովիտ գաւառ—Վասպուրականի գավառներից մեկը, որը հիշատակվում է միայն որոշ ցուցակներում։ Ենթադրաբար զետեղում ենք Ճուարշ-ռոտ գետի վերին հոսանքում։ Քարտեզում չի նշված։

Բարձր Հայք (Կողմն Կարնոյ)—Գ3—Գ4—Մեծ Հայքի 1-ին նահանգը, ընդգրկում էր 11 գավառ 23.760 կմ^2 տարածությամբ։ «Բարձր Հայք» անունը գիտե միայն «Աշխարհացոյցը», որը այսպես է անվանում 387 թվից հետո Բյուզանդիային անցած «Ներքին Հայք» (Armenia interior) կոչված տերիտորիան, որը Հուստինիանոս Ա-ի 536 թ. նովելլայից հետո Փոքր Հայքի և Պոնտոսի առանձին մասերից կազմեց Առաջին Հայք (Armenia Prima) պրովինցիան։

Բարսալա ամրոց—Դ3—Βαρζαλώ, Barzalo (Ptol. V, 6, 25), Եփրատի աջ ափին, ըստ երևույթին, այժմյան Բերենիկյան գյուղի մոտերքը։

Բաք[ր]աւն (Մարանդ) գաւառ—Գ6—«Աշխարհացոյց»-ում «Բաքան» աղճատված ձևով, ընդհանուր տարածությունն էր 4105 կմ^2։ Սկզբում Բաքրաւն կամ Բակուրակերտ ավանի տերիտորիան էր, հետագայում դարձավ Մարանդ քաղաքին ամրացված տերիտորիա։ Տե՛ս Բակուրակերտ աւան։

Բաքրաւն աւան, տե՛ս Բակուրակերտ:

Բեղ կամ Բեխ գաւառ—Բ7—Մուրղալ և Կարա-չայ գետերի միջև, այժմյան Կախի շրջանում։ Բեղ գավառի տարածությունն էր շուրջ 1600 կմ^2։ Գավառի անունը պիտի առնչություն ունենա «բեղ» բառի հետ։

Բեմադա լեառն (1520)—Դ3—ըստ երևույթին, այս գագաթն է, որ հնագույն ժամանակներում կոչվել է Իգալա, Իշալլա: Քարտեզների վրա նշված է միայն բարձրությունը, իսկ գագաթի այժմյան անունը չկա։

Բեռիա (Խալիբոն) քաղաք—Դ2, այժմ Հալեպ քաղաք։

Բերան Երասխայ—Գ8—այսպես էր կոչվում Երասխի հին հունի գետաբերանը, այժմյան Արմյանկա գետի գետաբերանի մոտ՝ Ղըզըլ-աղաջ ծովախորշում։

Բերդաձոր կամ Բերձոր գաւառ—Բ7—Արցախի 3-րդ գավառը, միջին դարերում կոչվում էր Վերին Խաչէն, այժմյան Քելբաջարի շրջանը. ընդգրկում էր 625 կմ^2 տարածություն։

Բերդաց փոր—Բ5—Տայքի 2-րդ գավառը, հետագա Բանակի (այժմ Փենեք) շրջանը։ Այստեղ էր գտնվում X դ. հայտնի Բանակի (վրաց. ბანა Բանա) վրացական տաճարը, կառուցված Զվարթնոցի ձևով։ Բերդաց-փոր գավառի տարածությունն էր 990 կմ^2։

Բերդկունք ամրոց—Բ7—գտնվում էր Բերդաձոր գավառում, Սոդքի լեռնանցքի մոտ։

Բերդիկ ամրոց—Բ5—այժմ էլ նույն անունով հայտնի գյուղ Բերդաց փոր (այժմ Փենեք) գավառում և վերջինիս կենտրոնը, որի անունով էլ կոչվում էր գավառը։

Բզաբդէ քաղաք—Դ5—հուն. Βηςαβδη, գտնվում էր Տիգրիս գետի աջ ափին, Ջեզիրե-Իբն Օմար քաղաքի դիմաց։

Բզնունեաց ծով—Գ5—հուն. Θώ[σ]πῖτις և Ἀρση[ση]νη կամ Ἀρσήσσα λίμνη։ Հայկական լեռնաշխարհի երկրորդ խոշորագույն լիճը՝ կոչվում էր նաև Ռշտունեաց ծով, Տոսպայ լիճ, Աղի ծով, Արճէշի ծով, և այժմ՝ Վանա լիճ: Վանա լճը ծովի մակերևույթից բարձր է 1662 մետր, լճի մակերեսը հավասար է 3733 կմ^2, միջին խորությունն է 16 մ, ամենախոր տեղը, հասնում է 25 մ։ Լճի ամենամեծ լայնությունն է 63 կմ։ Ըստ «Աշխարհացոյց»-ի Վանա լիճը ունեցել է յոթ կղզի՝ Լիմ, Ջքատան (այժմ Կտուց), Աղթամար, Արտի (այժմ Արտեր), Արծկէ, Ծիպան և Տոքեան: Ջուրը աղի է և պարունակում է բորակ։ Վանա լճում հայտնի է տառեխ ձուկը։

Բզնունիք գաւառ—Գ5—Տուրուբերան գավառի 11-րդ գավառը՝ 925 կմ^2 տարածությամբ։ Այս գավառի անունով Վանա լիճը կոչվում էր Բզնունեաց ծով: Այս գավառը համապատասխանում է ուրարտական և ասուրա-բաբելական արձանագրությունների Aiadu կամ Aiduni երկրին։

Բզնունիք գավառը համանուն՝ Բզնունեաց նախարարության հայրենիքն էր։ Այս տոհմի պարտականությունն էր հսկել հարավից Տաւրոյ-բերան կամ Ձորա-պահակ անցքին։

Բլանդոս գիւղ—Գ2—պիտի գտնվեր Գանդոս (այժմ Ուլաշ-դերեսի) գետակի ակունքների շրջանում, այժմյան Էսկի-քյոյ գյուղի տեղում)։

Բլուր գիւղ—Բ3—այժմ էլ նույն անունով։

Բղաթ (Թուք) քաղաքիկ—Դ5—արաբ. Բալադ, այժմյան Էսկի-Մոսուլ գյուղը։

Բնաբեղ ամրոց—Դ4, այժմ Բենաբիլ գյուղ։

Բոգունիք գաւառ—Գ5—Վասպուրական նահանգի 3-րդ գավառը՝ 275 կմ^2 տարածությամբ. գտնվում էր Մարմետ գետի ստորին հոսանքի ձորահովտում։ Միջին դարերում այստեղ հայտնի էր Անըստան գյուղը, որը ուրարտական ժամանակաշրջանի Aniaštania քաղաքն էր, այժմյան Աննավանք գյուղը։

Բողխա գավառ—Բ4—հետագայում Բոխա ձևով է հայտնի. գտնվում էր համանուն Բոխա գետի (այժմյան Օլթի-չայ) հովտում։ Բոխան Տայքի 5-րդ գավառն էր և ընդգրկում էր 2080 կմ^2 տարածություն։

Բողխա գետ—Բ4 այժմյան Օլթի-չայը։

Բողբերդ ամրոց—Բ4—այժմ Բուղա-կալա, Բոխա գետի ակունքներում։ Բողբերդը բյուզ. Βολῶν և միջնադարյան վրաց. ბუღათა ყური Բուղաթա-ղուրի ամրոցն է։ Անվան վրացերեն ձևը առաջ է եկել հայերեն հետագա արտասանությունից՝ Բուղա ձևից։

Բոլնիս, Բողնիս աւան—Բ6—այժմ Բոլնիս-Խաչեն գյուղ. այստեղ է գտնվում Բոլնիսի հոչակավոր բազիլիկ տաճարը V դ. վրացերեն արձանագրությամբ։

Բոլնիս, Բողնիս գետ—Բ6—այժմ էլ նույն անունով՝ Բոլնիսի գետ, վրաց. ბოლნისის წყალი Բոլնիսիս-ծղալի, Գաչենագետի (այժմյան Մաշավերա) վտակն է։

Բողնոփոր գաւառ—Բ6—Վրաց. ბოლნისის ხევი Բոլնիսիս-խևի: Գուգարաց բդեշխության 13-րդ գավառը, Գաչենագետի վտակ Բոլնիս գետի ձորահովտում. ընդգրկում էր 555 կմ^2 տարածություն։ Հավանաբար 363 թ. հետո անջատվել է Գուգարքից և միացվել է Վրաց աշխարհին։ Այս գավառի կենտրոնն էր Բոլնիս ավանը (այժմ Բոլնիս-Խաչեն գյուղ)։ Բողնոփորը, ըստ երևույթին, Գուգարաց բդեշխության կենտրոնական գավառն էր, որտեղ պիտի գտնվեր բդեշխների նստոց Ցուրտավ քաղաքը։ Ցուրտավը կոչվել է նաև Գաչենք, վրաց. გაჩიანი Գաչիանի, և գտնվում էր Գաչենագետի (Մաշավերայի) և Ցուրտագետի (վրաց. Քցիա) միախառնման կետում, այժմյան Արուխլո գյուղի մոտ։

Բուժունիք գաւառ—Գ5—Վասպուրական նահանգի 9-րդ գավառը շուրջ 400 կմ^2 տարածությամբ. գրավում էր Սուրբ Տիկին կամ Սև Տիկին գետակի ձորահովիտը՝ Շատախից հյուսիս։ Գավառիս տեղադրությունը պարզվում է Մ. Խորենացուն վերագրվող «Ճառ պատմութեան բանից ի սուրբն Հռիփսիմէ և յընկերսն» գրվածքով։

Բուն Մարդաստան գաւառ—Գ5—«Աշխարհացոյց»-ի մեզ հասած օրինակներում բացակայում է, որովհետև նրանից հետո գալիս է այլ գավառ Մարդաստան անունով. մենք վերականգնում ենք շնորհիվ Թովմա Արծրունու (III, ԻԹ, 1887, էջ 252)։

Բուն Մարդաստանը Վասպուրականի 13-րդ գավառն էր, շուրջ 1100 կմ^2 տարածու-

թյամբ, և ընդգրկում էր Հայոց ձոր գետի վերին հոսանքը։ Այս գավառը, ըստ երևույթին, մարդ ցեղի գլխավոր բնակատեղին էր, որը V—VI դդ. արդեն հայացած պիտի լիներ։

Բռնակապան լեռնանցք—Բ4—այժմ էլ նույն անունով (Փիռնեկապան)։ Այս լեռնանցքի մոտ պիտի գտնվեր Ստրաբոնի մոտ հիշվող Sinora սահմանամերձ ամրոցը։ Մինչև 66 թ. մ. թ. ա. այստեղով էր անցնում սահմանագիծը Մեծ Հայքի և Պոնտոսի թագավորությունների միջև։

Բռնակապան գյուղ—Գ4—այժմյան Փիռնեկապան գյուղը։

Գ

Գաբառու բագինք մեհեան—Գ3—Պտղոմեոսը հիշում է Γάβαροι βωμοί (աղճատված ընթերցումն է՝ Σαβαυδι βωμοί) անունով մեհյան։ Այս անունը պահպանել է սովետա-իրանական սահմանագծի մոտ գտնվող Кабирры կուրգանը։ Տե՛ս Եւթն փորակեան բագինք։

Գաբառու դաշտ—Գ8—այսպես պիտի կոչվեր Մուղանի դաշտի այն մասը, որը Համդալլահ Ղազվինին կոչում է Գավբարյան դաշտավայր։

Գաբեղեանք գաւառ—Գ5—Այրարատ նահանգի 2-րդ գավառը՝ 1275 կմ^2 տարածությամբ։ Ընդգրկում էր այժմյան Կաղզվանի շրջանը։ Հայտնի էր Գաբեղեանք նախարարական տոհմը։

Գաբիթեան գաւառ—Դ6—Վասպուրականի 29-րդ գավառը՝ 2270 կմ^2 տարածությամբ. տեղադրում ենք Կապուտան (Ուրմիա) լճի հյուսիսային եզերքին՝ մինչև Սոֆիան վայրը։

Գաբիթեան անունը Կապուտան անվան տեղական ձևը պիտի լինի։

Գաբուլա գյուղ—Դ2—Gabula, արաբ. Gabbūl.

Գագիուրա աւան—Բ2—գտնվում էր Ջելա քաղաքի մոտ։

Գազրիկ ամրոց—Գ6—Այստեղ պիտի գտնվեր Վասպուրականի Գազրիկեան գավառի կենտրոնը։ Ըստ երևույթին, այժմյան Կասրիկ գյուղն է։

Գազրիկեան կամ **Գազրիկան** գաւառ—Դ6—Վասպուրականի 30-րդ գավառը՝ 600 կմ^2 տարածությամբ. ենթադրաբար տեղադրում ենք Տարոնոյ գետի (այժմ Ջոլա-չայ) ակունքների շրջանում, որտեղ գտնվում է Կասրիկ գյուղը։

Գամիրք գյուղ—Գ2—այժմ Կեմերեկ գյուղ։

Գայլախազուտ լեռն, տե՛ս **Պախր**։

Գայլ գետ—Գ3—Եղի-դերեյար լեռնանցքի մոտից բխող վտակը, որը թափվում է Եփրատի մեջ, Երզնկա քաղաքի մոտ։

Գայլ գետ—Բ2—հուն. Λύκος, այժմյան Գելգիտ-չայ. անտիկ աղբյուրների Թերմոդոն գետը պիտի լինի։ Տե՛ս **Թերմոդոն** գետ։

Գայլատու լիճ—Գ5—այժմ Բալըխ-գյոլ, 2247 մ բարձր ծովի մակերեսից։ Լճից բխում է Առոմ գետը (այժմ կոչվում է Ջուխուր), որը միանում է Տղմուտ գետին (Զանգիմար-չայ) և թափվում Երասխ գետի մեջ։

Գանձակ գաւառ—Դ6—Գանձակ Շահաստանի քաղաքային տերիտորիան, որը Արասխ գետով Մեծ Հայքին անմիջական սահմանակից էր, ուստի Փավստոսը Մեծ Հայքի սահմանը համարում է Գանձակ քաղաքը, որ պիտի հասկանալ նրա քաղաքային տերիտորիայի իմաստով։

Գանձակ Շահաստան քաղաք—Դ7—հուն. Γάζακα, Γαζά, Ատրպատականի մայրաքաղաքը՝ արաբ. Ջանզա, գտնվելիս է եղել այժմյան Լեյլյան գյուղի տեղը, Մարաղայից հարավ։

Գաշենագետ—Բ6—այժմ Մաշավերա գետ։

Գառաձ գետ—Գ7—տե՛ս **Կամբիսեւ գետ**։

Գառնի բերդ—Բ6—հռչակավոր ամրոց, որ առաջին անգամ հիշում է Տակիտոսը Gorneae ձևով. այժմ էլ նույն անունով ավան։

Գառնի գաւառ—Գ5—Վասպուրական նահանգի 8-րդ գավառը՝ 1275 կմ^2 տարածությամբ։ Գրավում էր Առեստ (Բանդիմահի) գետի վերին հոսանքում և Թոնդրակ հրաբխային զանգվածի հարավային լանջերին փռված Աբաղա դաշտը։ Ըստ երևույթին, արդեն V դ., Գառնի գավառը Առբերանի գավառի հետ միասին կազմում էր մի գավառ՝ Քաջբերունիք կամ Քաջբերունեաց երկիր անունով։

Գառնի գյուղ—Գ3—այժմ էլ նույն անունով գյուղ։

Գառնիձոր լեռնանցք—Գ6—այժմ հայտնի է Գիրեսուր անվամբ։

Գարգար գետ—Գ7—այժմ Կարկար-չայ. Միլի դաշտում. սկիզբ է առնում Արցախի Դիզափայտ լեռներում։

Գարգարացւոց դաշտ—Գ7—այժմ Միլի դաշտ, Գարգար գետի հովտում։

Գարդման ամրոց—Բ6—վրաց. გარდაბანი Գարդաբանի, հետագայում այս ամրությունը կոչվում էր Աղջա-ղալա, Դեբեդ գետի ներքին հոսանքի աջ կողմում։

Գարդման գաւառ—Բ6—վրաց. გარდაბანი Գարդաբանի, Ուտիք նահանգի 6-րդ գավառը շուրջ 800կմ^2 տարածությամբ. համապատասխանում է այժմյան Ղազախի շրջանին։

Գարդմանը **Գարդմանացւոց իշխանութեան** կենտրոնական գավառն էր և դարձավ

Գարդմանի նախարարական տոհմի ժառանգական սեփականությունը։

Գարսանիս աւան—տե՛ս **Կերճանիս**։

Գարիսա աւան—Բ1—Զորումից դեպի հարավարևելք, Զորում-դերեսիի գետաբերանի մոտ։

Գաւրէնէ աւան—Գ2—Gaurenae, այժմյան Գյուրուն քաղաք։

Գաւրէք գաւառ—Գ3—ուրարտական արձանագրությունների Gaurahi, հուն. Γαριννῆ, Զորրորդ Հայքի 7-րդ գավառը՝ 1215 կմ^2 տարածությամբ։ Այստեղ Արածանիի գետաբերանից հարավ գտնվում էր Լուսաթառիճ քաղաքը։

Գեղ լեառն (3609)—Բ6—**Գեղմաղան** (այժմյան **Աղմաղան**) հրաբխային զանգվածի հիմնական գագաթներից մեկը։

Գեղայք ցեղ—Գ8—հուն. Γελοί —այժմյան գիլանցիները։

Գեղան երկիր—Գ8—այժմյան Գիլանը։

Գեղարքունեաց ծով—Բ6—այժմ **Սևանա լիճ**, Λυχνῖτις, Lychnitis (Ptol. V, 12, 3), վրաց. ზღუა გელაქუნისა **Զղուայ Գելաքունիսայ**։ Սևանա լիճը ծովի մակերեսից բարձր է 1916 մ, իսկ լճի մակերեսը հավասար է 1416 կմ^2, որից Փոքր Սևանը՝ 384 կմ^2։ Մեծ Սևանը՝ 1032 կմ^2։ Փոքր Սևանի խորությունն է՝ 45 մ և մաքսիմալ 95 մ. Մեծ Սևանի խորությունն է՝ 36 մ և մաքսիմալ 47 մ։ Սևանա լճում թափվում է 21 վտակ։ Սևանա լճի ջուրը անուշահամ է, որովհետև այնտեղից բխում է Հրազդան գետը։ Սևանա լճի ձկներն են՝ **կարմրախայտ իշխան, գեղարքունիք, բողդակ** և **կողակ**։ Ունի մեկ կղզի **Սևան** անունով։

Գեղարքունի աւան—Բ6—Այսպես էր կոչվում այժմյան **Կամո** քաղաքը։ **Գեղարքունի** անունը Welikuni կամ Welikuhi անունից է առաջացել. այսպես պիտի կոչվեր ոչ միայն գավառը, այլև նրա կենտրոնը, որը ուրարտացիների կողմից նվաճվելուց հետո կոչված է **«Խալդի աստուծո քաղաք»**։ Միջին դարերում **Գեղարքունի** ավանը կոչվել է **Գաւառ** կամ **Գաւառնի**, տեղական բարբառով՝ **Քեավառ**։

Գեղարքունի գաւառ—Բ6—վրաց. გელაქუნი Գելաքունի, Սյունյաց նահանգի 4-րդ գավառն էր և ընդգրկում էր այժմյան Կամոյի և Մարտունու շրջանները 1735 կմ^2 տարածությամբ։ Միջին դարերում իմաստավորվելով **Գեղաքունի** անունը դարձել է **Գեղարքունի**։

Գեղաւու գաւառ—Բ8—տեղը որոշվում է այժմյան **Քյալվա** կամ **Գելաբու** գյուղի անունով, որը գտնվում է այժմյան Աղ-սուի շրջանում։ Անունը առաջացել է **Գեղ** կամ **Գել** ցեղից, որ հիշատակում են հույն հեղինակները Γελοί Կեռավնյան լեռների հարավային փեշերին, որոնցից հյուսիս բնակվում էր Ληγοί այսինքն՝ **Լեկք—Լեզգի** ցեղը։ Գեղաւու գավառի տարածությունն էր՝ 975 կմ^2։

Գեղաւու գետ—Բ8—այժմյան Գըրդըման-չայ (Գարդման) գետի վերին հոսանքը։ Այս **Գարդման** գետը չպետք է շփոթել Գարդման գավառի տեղադրության հետ, որ բոլորովին այլ տեղ է որոշվում։

Գեղմանց լերինք—Գ8—այժմ՝ Գիլանի լեռներ։

Գեւղաբերդ ամրոց—Բ5—այժմ՝ Գյուլաբերդ գյուղ։

Գերմանիկէ (**Մարաշ**) քաղաք—Դ2 հուն. Γερμανίκεα, այժմյան Մարաշ քաղաքից դեպի արևելք 20 կմ հեռավորության վրա գտնվող խեթական ժամանակաշրջանի Մարքասու քաղաքի ավերակները։

Գէտառու գաւառ—Բ7—այժմյան Աջինոուրի—Էլդարի տափարակ տերիտորիան՝ Ագրի-չայ, Ալազան, Ալջիգան-չայ և Կուր գետերի միջև 1575 կմ^2 տարածությամբ։ Մեզ հասել է աղճատված ձևով՝ **«Դեղառու»**։ **Գէտառու** անվան հնագույն վկայությունն է Պտղոմեոսի Γαιτάρα (V, 11, 2), իբրև գետի և բնակավայրի անուն։

Գէտառու գետ—Բ7—Պտղոմեոսի մոտ հիշվում է՝ Γαιτάρα անունով, այժմ՝ Ագրի-չայ։

Գզեղխ գաւառ—Գ4—Աղձնյաց բդեշխության 8-րդ գավառը, 375 կմ^2 տարածությամբ. գրավում էր Բաղէշ գետի (այժմ Բիթլիս-սու) վերին հոսանքը։ Այժմ էլ այդտեղ գտնվում է **Գզեխ** գյուղը։ Այս գավառի հյուսիսային սահմանումն էր գտնվում Տաւրոյբերան լեռնանցքը (Ջորապահակ, այժմ Բիթլիսի կամ Ռահվա լեռնանցքը)։ Դեռևս ասուրա-բաբելական աղբյուրներում այս գավառը հիշվում է Gilzanu անունով և ուներ կարևոր ռազմա-ստրատեգիական նշանակություն։

Գզեղխ գյուղ—Գ4—այժմ՝ **Գզեխ** անունով։

Գրւգաւ քաղաք—Բ7—ըստ երևույթին, Ալազան գետի գետաբերանի մոտ («...և վայրքն անապատ մինչև ցԿուր գետ, յորոյ յելից կողմանէ Գրւգաւ քաղաք, առ Աղուան գետով...», տե՛ս «Աշխարհացոյց», էջ 29)։

Գինեկ գետ—Գ4—այժմ՝ Գինեկ-սու գետ։

Գինոյ բլուր, այժմ Ղրմզի-Թափա (ռուսական քարտեզների վրա՝ Кырмызы-тапа)։ Այստեղ էին հասնում Արտաշատ քաղաքի արևմտյան մատույցները, որտեղ բնական սահման էր **Գինոյ** կամ **Գինեգոյն** գետը (այժմ Կարա-սու)։ Այստեղ պիտի գտնվեր արաբական աղբյուրների al-Khirmiz քաղաքը (Արտաշատ քաղաքի մնացորդը), որը համարվում էր «որդան կարմիր» ներկի արտադրության ու ներկարա-

րությյան կենտրոն։ Khirmiz բառացի թարգմանություն է հայերեն «գինեգույն» բառի (տես ՆՀԲ, I, էջ 552)։

Գիշ գյուղ—Բ7—այժմ՝ Քիշ, Նուխիից հյուսիս։

Գիշ գյուղ—Գ7—այժմ էլ նույն անունով գյուղ։

Գղուարք ազգագաւառ—Բ6—վրաց. ყუარელნი Ղուարէլնի, այժմյան Ղվարելի գյուղի շրջակայքում։

Գողերձական լեռնանցք—Բ5—այժմ՝ Գողերձի լեռնանցք։

Գողթն գաւառ—Գ6—հուն. Γολθηνή. Վասպուրականի 33-րդ գավառը՝ 1375 կմ² տարածությամբ, ընդգրկում էր այժմյան Ապրակունիսի և Օրդուբադի շրջանները։ Այս գավառի կենտրոնն էր Գողթն ավանը (այժմ Քիլիթ)։

Գոռաթի գետ—Ա5—այժմ Գոռաթիս-Ծղալի վտակը։

Գոռաթիս-խեւ—(մեզ հասել են Գոռոթիս-Խեւ, Գորգովաթիսխ, Թորգովաթիսխ, ...Վաթիսխ աղճատված ընթերցումներով)—Ա5—վրաց. გორათის-ხევი Գոռաթիս-խեւի, տեղադրվում է այժմյան Գորաթի գյուղի և նույնանուն վտակի հովտում, այժմյան Խաշուրի շրջանում։ Վերին աշխարհ Վրաց նահանգի գավառներից մեկն էր և ընդգրկում էր շուրջ 400 կմ²։

Գուգարք—Բ5—Բ6—հուն. Γωγαρηνή—Մեծ Հայքի նահանգներից և Արշակունյաց Հայաստանի չորս բդեշխություններից մեկը։ Մինչև 338 թվականը Գուգարաց բդեշխությունը իր մեջ պարունակում էր 16 գավառ և նրա տերիտորիան ընդգրկում էր 16·765 կմ² տարածություն[1]։ 338—363 թթ. ընթացքում Գուգարքից անջատվեցին և մտան Վրաց աշխարհի կազմում՝ Ճաւշէթ, Ջաւախք Ներքին, Մանգլեացփոր, Քուիշափոր, Բողնոփոր, Խանցիխէ և Պարուար գավառները 5070 կմ² տարածությամբ։ Գուգարաց բդեշխության տերիտորիան այնուհետև (363—387 թթ.) ընդգրկում էր այն տերիտորիան, որ ցույց է տալիս «Աշխարհացույց»-ը։ 387 թվից Վրաց աշխարհին միացվեց Գուգարքի մնացյալ մասը, 11·695 կմ² տարածությամբ, բացի Աշոցք գավառից, որը մնաց Հայաստանի կազմում և «Աշխարհացույց»-ում նշված է իբրև Այրարատ նահանգի գավառներից մեկը։

Գուդամակարք ազգագաւառ—Ա6—վրաց. გუდამაყარნი Գուդամաղարնի, բնակվում էին Գուդամակարիս Արագվի վտակի կիրճում։

[1] Աշոցք գավառի և Վերին Տաշիրի հետ Գուգարաց բդեշխության տերիտորիան հասնում էր 18.740 կմ²։

Գու[է]րդ[ի]ս-ձիրի (Քորդիբիրի, Քուդիդ, Քօդիբ աղճատված ձևերի ճիշտ ընթերցումն է)—Ա6—վրաց. გუერდის-ძირი. Գուէրդիս-ձիրի, գտնվում էր Մեջուդա վտակի վերին հոսանքի խորաձորում։

Այս գավառը Վերին աշխարհ Վրաց երկրամասի կազմումն էր մտնում։ Գուերդիս-ձիրի գավառի ընդհանուր տարածությունն է շուրջ 225 կմ²։

Գուկանց աւան—Գ5—այժմ Գյուգանց գյուղ Հայոց ձորի ստորին մասում։ Գուկանք ավանը համանուն գավառի կենտրոնն էր լինելու։

Գուկանք գաւառ—Գ5—Վասպուրական նահանգի 24-րդ գավառը՝ 225 կմ² տարածությամբ. գտնվում էր Հայոց ձորի այժմյան Գյուգանց գյուղի շրջակայքում։

Գուլգուլա գետ—Բ6—այժմ էլ նույն անունով։

Գունդուսա գյուղ—Գ2—Gundusa (Itin. Ant.) կամ Պտղոմ. Godasa, այժմ Գյունդուզ գյուղը։

Գունիսա ավան—Բ3—Gunissa (Tab. Peut.) կայան, այժմյան Սուսուզ գյուղի մոտ։

Դ

Դագոնա ավան—Գ2 Պտղոմ. Dagona, այժմ Դեվեքյոսե գյուղ։

Դալառ գաւառ—Գ5—Տավրուբերանի 8-րդ գավառը՝ 1850 կմ² տարածությամբ այժմյան էլմալի-դերե հովիտը։

Դանդախենէ գյուղ—Գ2—Dandaxena կայան, Արկայի և Օսդարայի միջև։

«Դաշտ ի Բաղական»—Գ7—տե՛ս Բաղասական դաշտ և Բագկան։

Դաշտն Դուան—Ա5—վրաց. დუანის ველი Դուանիս-վելի, այժմ էլ գոյություն ունի համանուն Դվանի գյուղը Գորի քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք։ Դաշտն Դուանը Վերին աշխարհ Վրաց երկրամասի գավառներից մեկն էր և ընդգրկում էր շուրջ 820 կմ² տարածություն։

Դասկուսա ավան—Գ3—Dascusa (Itia. Ant.) կայան՝ Արաբկիր-չայ գետաբերանից արևմուտք, Կողբենիք գյուղից հյուսիս։

Դաստէյրա (Դաստարակ) բերդ—Գ3—այժմ Դոստալի գյուղ։ Այս բերդը, ըստ Ստրաբոնի (XI 12) գտնվում էր Փոքր Հայքում, Մեծ Հայքի Ակիլիսենե (Եկեղեաց) գավառի սահմանի մոտ։

Դարանդաշտ—Գ8—արաբ. Darnik, Վարդանյան դաշտից դեպի արևելք, այնտեղ, որտեղ մինչև օրս պահպանվել է Даранский անունով

պոստը, սովետա-պարսկական սահմանագծին։

Դարանաղի գաւառ—Գ3—Բարձր Հայքի 1-ին գավառը, 3400 կմ² տարածությամբ։ Գավառի կենտրոնն էր Անին՝ Եփրատ գետի աջ ափին և նրան կցված Կամախը՝ նույն գետի ձախ ափին, որտեղ գտնվում էին Արշակունի թագավորների տոհմական դամբարանները։ Անին նախաքրիստոնեական Հայաստանի կրոնական կենտրոնն էր. այնտեղ էր գտնվում Արամազդի մեհյանը։

Այս գավառումն էին գտնվում Թորդան, Մանեայ այրք վայրերը և Սեպուհ լեռը։

Դարբանդ գաւառ—Բ8—Դարբանդ քաղաքի քաղաքային տերիտորիան, մոտավորապես 650 կմ²։

Դարբանդ քաղաք—Ա8—այժմյան Դերբենդ քաղաքն է, տե՛ս և Պահակն Ճորայ։

Դարեւնից բերդ (Դարոյնք) ամրոց—Գ6—այժմ Հին Բայազեթ կամ Դողու-Բայազիդի։

Դարոյնք աւան—Գ4—այժմյան Հասան-ղալան։

Դասնաւորք գաւառ—Գ4—Տավրուբերանի 6-րդ գավառը՝ 725 կմ² տարածությամբ։ Ըստ երևույթին այժմյան Շուշարի շրջանն է՝ Թեքմանից արևելք։

Դասն-գաւառ—Դ5—այժմյան Ամադիեի շրջանը՝ 1075 կմ² տարածությամբ։ Դասնը հիշվում է ասուրա-բաբելական արձանագրություններում Tas ձևով իբրև լեռների անուն, որոնք սահման էին կազմում Ուրարտուի և Ասորեստանի միջև։ Ասոր. Bēθ Dāsen, իբրև Արբելայի եպարքիայի թեմերից մեկը։ Արաբ. Dāsin։

Դասն գավառը, որը մտնում էր Նոր-Շիրական բդեշխության կազմում, 363 թ. հետո անջատվում է Մեծ Հայքից և միացվում Սասանյան Պարսկաստանի Հեդայաբ (Ադիաբենե) նահանգին։

Դափնոս Անտիոքացւոց աւան—Դ2—Daphnae նախաքրիստոնեական ժամանակաշրջանի սրբավայր։

Դելումք ցեղ—Դ8—Հետագա դեյլեմիտները։

Դեկից[ի]խէ ամրոց—Բ6—այժմ էլ նույն անունով հայտնի բերդի ավերակներ՝ Թեձամի գետի ակունքների շրջանում։

Դերջան աւան—Գ4—այժմյան Թերջան կամ Մամախաթուն։

Դերջան գաւառ—Գ4—Բարձր Հայքի 6-րդ գավառը, հուն. Δερξήνη. այժմյան Թերջանը՝ Եփրատ գետի հովտում, որտեղ այն լայնանում է կազմելով դաշտավայր (այժմ կոչվում է Թերջանի օվասի)։ Այս գավառի տարածությունն է շուրջ՝ 2575 կմ²։ Այս գավառում հայտնի էր Բագառիճ ավանը Միհրի տաճարով։

Դիզիք գաւառ—Գ3—բյուզ. Τεχῆς, Διγισηνή—Չորրորդ Հայքի 8-րդ գավառը՝ 700 կմ² տարածությամբ, Եփրատ գետի և Ձմշկածագի միջև։ «Աշխարհացույց»-ը այս գավառում հիշատակում է երեք բերդ՝ Կոնի, Քրիկ և Սոկ։

Դիգոր ազգագաւառ—Ա5—Ուրուխ գետի ակունքների շրջանում։ Ալան-օվս ժողովուրդը կազմող ցեղերից մեկը։

Դիդոյք ազգագաւառ—Ա6—հուն. Διδοῦροι, վրաց. დიდონი Դիդոնի, և երկիրը՝ დიდოეთი Դիդոէթի: Այժմ էլ նույն տեղում՝ Անդիական Կոյսու գետի ակունքների շրջանում գոյություն ունի դիդոյեցիների ժողովուրդը։

Դիզափայտ լեառն (2480)—Գ7—այժմյան Զիարաթ լեռը։ Այս լեռան վրա էր կառուցված Կատարոյ վանքը, որը մինչև վերջերս սրբավայր՝ «զիարաթ» էր։ Տե՛ս Ղ. Ալիշան. Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 187։

Դկլաթ գետ, տես՝ Տիգրիս գետ։

Դոլիխէ աւան—Դ2—հայ մատենագիրների Տլուք, այժմյան Թել-Դյուլյուկը։

Դուան դաշտ, տես՝ Դաշտն Դուան գաւառ։

Դուին քաղաք—Գ6—հուն. Δούβιος, այժմ էլ նույն անունով պեղվող ավերակներ։ Դվինը հիմնվել է Խոսրով Գ Կոտակի (332—338) օրոք և դարձել է Հայաստանի մայրաքաղաք՝ 460-ական թվականներին։ V դ. ավերված Արտաշատը դարձավ Դվինի արվարձաններից մեկը, իսկ Ոստան Հայոց գավառը դարձավ Դվինի քաղաքային տերիտորիան և իբրև այդպիսին, այնուհետև կոչվում էր Ոստան Դրւնոյ:

Դուռն Փառիսոսի լեռնանցք—Բ6—Սևանի կամ Քաշաթաղի (Շահ-դաղի) լեռնաշղթայում, այժմ հայտնի Սատանի խաչ անունով, վկայված է միայն վրացական տարեգրություններում՝ კარი ფარისოსისა Կարի Փարիսոսիսա:

Դուրձլուկք ազգագաւառ—Ա6—վրաց. დურძუკნი Դուրձուկնի ցեղ և დურძუკეთი Դուրձուկէթի երկիր. այժմյան ինգուշների նախորդներն են և ապրում էին Ասսա գետի վերին հոսանքում։

Դռակոն որ է Վիշապ գետ—Ա4—վրաց. ეგური Էգուրի, կամ ენგური Էնգուրի գետը, հնում՝ ეგრისის წყალი Էգրիսիս-ծղալի, Էգր[իս]ոյ ջուր:

Դրակոնիս կայան—Բ3—Draconis (Tab. Peut.), գտնվում էր Գայլ գետի վերին հոսանքում։

Դրունք Ասուրւոց (Պլատանա)—Դ2—Πλάτανος. լեռնանցք Ամանոս լեռներում. այստեղ էր միջնադարյան Բագրաս բերդը։

Դրունք Կասպից, *տե՛ս* Կասպիական դրունք:

Դրունք Կիլիկիոյ (Մալիս)—*Դ2—այժմյան Արսլան-բողազ լեռնանցքը՝ Ցեվզի-փաշա կայարանի մոտ, որտեղ գտնվում են խեթական ժամանակաշրջանի Սամալ քաղաքի ավերակները (այժմ Զինջիրլի)։ Ըստ Միսաք Ճեվահիրճյանի այս լեռնանցքը նշանավոր* Մաոի *անցքն է։*

Դրունք Հայոց—*Գ7—* Ἀρμενίων πυλῶν (Strabo, II, 1, 25—26) *լեռնանցք այժմյան Ղարադաղի լեռներում, որոնք Ստրաբոնի (XI, 7, 1) մոտ կոչվում են* Հայկական լեռներ (Ἀρμένιο Ὄρη)*։ Այստեղ, այժմյան Ահարից հյուսիս գտնվող լեռնանցքը, որը տանում էր Երասխի հովիտը, կոչվում էր* Դրունք Հայոց: *Այդ լեռնանցքը ուշ շրջանում (XIII դ.) ապրող պարսից աշխարհագետ Զաքարիա Ղազվինին կոչում է* «Արմինիյան անցք» (Arminijan)*։*

Այս լեռնանցքից ճանապարհը գնում էր դեպի այժմյան Խուդափերինի կամուրջը, *որի հյուսիսային եզրին, Երասխի ձախ ափին, գտնվում էր Սյունիքի առևտրական կենտրոն* Նախճավան *քաղաքը։*

Ե

Եօթնփորակեան բագինք *գաւառ, տե՛ս* Եւթնփորակեան բագինք:

Եգրեւիկէ, *որ է* Առանձնակ Եգերայ—*Ա4-հուն.* Ἐκρηκτικὴν χώρον, *այսպես էր կոչվում Կողքիսի կամ Եգերաց աշխարհի կենտրոնական մասը, որ վրացիների մոտ մինչև այժմ էլ կոչվում է* სამეგრელო Սա-մ-Եգրել-ո, *այսինքն* Եգերաց *կամ* մեգրելների *երկիր։* Եգրեւ-իկէ *կազմված է* Ղազիիկէ-ի *նմանությամբ։ Իբրև ցեղանուն՝* Егерукой *ձևով պահպանվել է դեռևս XIX դարում, որպես չերքեզական ցեղերից մեկի անունը։*

Եգր *աշխարհ—Բ4—Ճորոխ գետի ներքին հոսանքի հովտում, վրաց.* ეგრი Էգրի. *այստեղով հոսող Ճորոխ գետը կոչվում էր* Էգրոյ ջուր, ეგრის წყალი Էգրիս ծղալի: *Այս Եգրը համապատասխանում է ուրարտական արձանագրությունների* Kulḫa *երկրին։ Մ. թ. ա. VII—VI դդ. շեմքին, սակայն հուն.* Κωλχίς, *վրաց.* Էգրիսի, *հայ.* Եգեր *է կոչվում այժմյան Արևմտյան Վրաստանի տերիտորիան, հատկապես Փասիս (Ռիոն) գետի հովիտը։*

Եգրը մտնում էր Վրաց աշխարհի կազմում։ Եգր աշխարհի տարածությունն էր՝ 1976 կմ²։ Այս Եգրը կազմում էր Ստրաբոնի (XI, 1, 18) Μοσχική *երկրի կողքիսյան (եգերական) մասը։*

Եդեսիա (Ուռհա) *քաղաք, տե՛ս* Ուռհա:

Ելեգարսինա, *տե՛ս* Եղեգաուին:

Եկեղեաց *գաւառ—Գ3—Բարձր Հայքի 4-րդ գավառը, այժմյան Երզնկայի շրջանը, հուն.* Ἀκιλισηνή, *լատ.* Acilisenae*։ Այս գավառը կոչվել է նաև* Անահտական՝ *(հուն.* ἡ Ἀναϊτις Χώρα*)* Երիզա *կամ* Երեզ *(այժմ* Երզնկա*) ավանում գտնվող Անահիտի հռչակավոր տաճարի անունով։ Անտիկ հեղինակների* Ակիլիսենեն *ընդգրկում էր նաև Դարանաղի գավառը։*

Այս գավառումն էին, բացի Երիզայից, Ծումինա (Չըմէս, Ճիմին) *քաղաքը և* Թիլ *ավանը։ Եկեղեաց գավառի տարածությունն է շուրջ 2250 կմ²։*

Եղեգաուին (Ելեգարսինա) *ավան—Գ3—*Elegarsina, *այժմյան Կամիշլի-դերե գյուղը։*

Եղիգի *լիճ—Գ5—Երեվարք գավառում։ Եղեգիս գյուղի մոտ շամբուտ, որը այժմ կոչվում է Գյոլլյու։ Այս շամբուտը, որը գտնվում է Վանա լճի հարավային ափից ընդամենը մեկ կիլոմետր տարածության վրա, սկիզբ է տալիս* Կեցան *(Քեսան-դերեսի) գետին, որը թափվում է Արևելյան Տիգրիս (Ջերմ, Բոհտանսու) գետում։ Այս հանգամանքը շփոթության մեջ է գցել անտիկ աշխարհագիրներին, որոնց մոտ այն կարծիքն էր տարածված, թե Տիգրիսը սկսվում է Վանա լճից, օրինակ, ըստ Պլինիոսի (*Nat. hist., *V, 31)՝* Elegosine *տեղից, որ* Եղեգիս *կամ* Եղիգի *անվան լատիներեն տառադարձությունն է։ Տե՛ս* Առեստաւան:

Եղնի (Խենի) *գաւառ—Բ7—Բուն Աղուանից երկրի գավառներից մեկը. ընդգրկում էր այժմյան Զաքաթալայի շրջանը՝ 1722 կմ² տարածությամբ։*

Երազգաւորս *աւան, տե՛ս* Շիրակաւան:

Երասխ *գետ—Գ4—այժմ պաշտոնապես կոչվում է Արաքս։*

Երեզաւան *կամ* Երիզայ *քաղաք—Գ3—Պտղոմեոսի մոտ (V, 12, 5) հիշատակվում է* Εὔρεσος *(աղճատված՝* Βρεσσός*)։ Մի այլ տեղ (V, 6, 19) Պտղոմեոսը հիշատակում է* Ἀριζίς *(աղճատված՝* Ἀζιρίς*) այժմյան Երզնկա քաղաքը Եկեղեաց գավառում, որտեղ գտնվում էր Անահիտի հռչակավոր տաճարը։*

Երեւան *բերդ—Բ6—հիմնվել է ուրարտական Արգիշտի Ա (786—764) թագավորի ժամանակ, մ. թ. ա. 782 թվին, այժմ՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաք։*

Երեւարք *գաւառ—Գ5—Տավրուբերան նահանգի 12-րդ գավառն էր՝ շուրջ 400 կմ² տարածությամբ, այժմ հայտնի է* Կարճկան *անունով՝ Վանա լճի հարավային ափին։*

Երխեթք *գաւառ—Գ5—Աղձնյաց բդեշխության 5-րդ գավառն էր 175 կմ² տարածությամբ. այժմ՝* Էրուն *շրջան, Խիզանից հարավ։*

Երծոյ *գաւառ (աղճատված ձևերն են՝* Երծւոյ, Երծայ*)—Բ6—վրաց.* ერწუ, ერწო Էրծու, Էրծոյ. *այսպես է կոչվում մինչև այժմ Իորի գետի ձորը Թիանեթից մինչև Գոմբորի՝ 345 կմ² տարածությամբ։ Երծոյ գավառում հայտնի էր* Ժալէթի *վայրը, որն ըստ Վախուշտու, համանիշ է* Չելէթի *կամ* Բերթա *վայրին։*

Երկրորդ Հայք—*Գ2—*Armenia Secunda *պրովինցիան, որը կազմվեց Թեոդոս Ա Մեծի ժամանակ 378—386 թթ. միջև. կենտրոնն էր* Մելիտինէ *քաղաքը։ Երկրորդ Հայքի տարածությունն էր 34500 կմ²։ Հուստինիանոսի 536 թ. նովելլայով Երկրորդ Հայքը վերանվանվում է* Երրորդ Հայք *(*Armenia Tertia*)։ Հուստինիանոս Ա-ի 536 թ. նովելլայից հետո* Երկրորդ Հայք *էր անվանվում բոլորովին այլ տերիտորիա։ Երկրորդ Հայքը հարավային սահմաններում ունեցել է «Դրունս երկու ելանելոյ յԱսորւոց» («Աշխարհացոյց» էջ 25)։ Այս երկու լեռնանցքները գտնվել են՝ ա) Պյուրամոս (Ջահան) գետի կիրճում—բյուզ.* Κύλινδρος, *արաբ.* Darb magharat-alKuhl, *այժմ Ալ-Քուսուկ. և բ) հուն.* Ἄδατθα (Ptol. V, 7, 25), *արաբ.* Qlīsūrā de-Hadatā *կամ* Darb as-Salāma, Darb al-Hadat, *գտնվում է այժմյան Հադաթա գյուղից հարավ-արևմուտք, Ինեքլու գյուղից արևմուտք։ Տե՛ս* Ernst Honigmann. Die Ostgrenze des bizantinischen Reiches von 363 bis 1071. Bruxelles, 1935, S. 85—87.

Երնջակ *ամրոց—Գ6—այժմյան* Ալինջա-կալա *ամրոցի ավերակները։*

Երնջակ *գաւառ—Գ6—Սյունիքի 1-ին գավառը՝ շուրջ 600 կմ² տարածությամբ. գրավում էր Երնջակ (այժմ՝ Ալինջա-չայ) գետի վերին հոսանքի շրջանը։*

Երնջակ *գետ—Գ6—այժմ Ալինջա-չայ։*

Երուանդաշատ *քաղաք—Բ5—կոչվել է նաև* Մարմետ, *այժմ՝ ավերակներ Բախչալար և Խերբեկլու գյուղերի միջև։ Արշարունիք գավառը Երուանդաշատի քաղաքային տերիտորիան էր։*

Այս քաղաքը երբեմն եղել է Այրարատի Երուանդունի թագավորության մայրաքաղաքը. IV դ. այս քաղաքը Կամսարական *նախարարական տոհմի կենտրոնն էր։*

Երուանդունիք *գաւառ—Գ5—Վասպուրականի 12-րդ գավառը՝ 675 կմ² տարածությամբ, Հայոց ձոր (Խոշաբ) գետի հովտում և* Արտաշիսեան *ու* Դուկանք *գավառների հետ միասին կոչվում էր* Հայոց ձոր: *Երուանդունիք անունն այս գավառը ստացել է հայկական արքայական հնագույն հարստության* Արուանդունիներից, *որոնք ուրարտական գահի վրա բարձրացան Տուշպա-Վանում, մոտավորապես 625 թ. մ. թ. ա.։ Այս գավառումն էր գտնվում* Հայք *ամրոցը, որը կապվում էր առասպելական Հայկ նահապետի հետ, որի գործունեությունը, ըստ ավանդության, անցել էր այս հովտում և որի անունով էլ այն կոչվում էր* Հայոց ձոր:

Եւդոյիքսատա *ավան—Գ2—* Εὐδοίξατα (Ptol. V, 6, 20) *պիտի այժմյան Իգդելի գյուղի մոտ գտնվեր։*

Եւմենիս *աւան—Գ2—Սեբաստիայից արևմուտք։*

Եւթնփորակեան բագինք—*Գ8—«Աշխարհացոյց»-ում սխալմամբ ցույց է տված իբրև առանձին գավառ, սակայն պիտի դիտել իբրև կրակապաշտների սրբավայր, որ նույն «Աշխարհացոյց»-ում մի այլ տեղ կոչվում է* Գաբառու բագինք: *Այս վայրը հիշում է Ագաթանգեղոսը (Ա, 22, էջ 18)՝* «Եօթն բագինս մեհենիցն», *որտեղ ուխտագնացություն էր կատարել Հայոց Խոսրով Ա. Մեծ (217—238) թագավորը։ Տե՛ս* Գաբառու բագինք:

Եւպատորիա (Մագնոպալիս) *քաղաք—Բ2—Իրիս և Գայլ գետի միախառնման տեղում։*

Եւսպոյենէ (Սպունիոն) *գյուղ—Գ2—այժմյան Դելիքլու-դաշ գյուղը։*

Եւրոպոս (Կարքեմիշ) *քաղաք—Դ3—այժմ Ջերաբլուս քաղաք, նշանավոր Կարքեմիշ քաղաքի ավերակներից արևմուտք։*

Եփեսոս *քաղաք, տե՛ս* Արաքիսոս:

Եփրատ *գետ—Բ4—Ասուրա-բաբելական աղբյուրների* Purattiu *գետը։*

Զ

Զարզապոն *գիւղ—Գ2—այժմ՝ Սարսապ գյուղ։*

Զարա *քաղաք—Գ2—այժմ էլ նույն անունով։*

Զարասպ *լեառն (3497)—Դ6—այժմ՝ Սիահ-կուհ։*

Զապետրա, *տե՛ս* Սոզոպետրա:

Զարեւանդ *գաւառ—Գ6—Պարսկահայքի 8-րդ գավառը՝ շուրջ 500 կմ² տարածությամբ, գրավում էր Կարմիր գետի ձախափնյա երկրամասը, այժմյան* Զեյրավանդա *գյուղի շրջակայքում։ Ուրարտական ժամանակաշրջանում՝*

Սարգոն Բ-ի արձանագրություններում հիշվող Զարանդա երկիրը պիտի ընդգրկեր, բացի Զարավանդից, նաև Հեր և Մարանդ գավառները։

Զարաւանդ *քաղաք—Գ6—այժմ՝ Զեյրավանդա գյուղ։*

Զարէհաւան *գաւառ—Գ6—Պարսկահայքի 7-րդ գավառը՝ 1100 կմ² տարածությամբ. համապատասխանում է այժմյան Սալմաստի մահալին։ Այս գավառը պիտի լիներ Նոր-Շիրական բդեշխության կենտրոնը հանդիսացող Զարեհավան քաղաքի քաղաքային տերիտորիան։ Ըստ երևույթին, այս գավառը Զարէհաւանեան նախարարական տոհմի ժառանգական հայրենիքն էր։ Այս տոհմից պիտի նշանակվեին Նոր-Շիրական երկրի բդեշխները։*

Զարէհաւան **քաղաք** **Պարսկահայոց**—*Գ6—այժմ՝ Քյոհնա-շահար, ավերակներ Սալմաստի մոտ։*

Զարէհաւան *գիւղ—Բ5—այժմ՝ Զարաֆխանե գյուղ։*

Զարէհաւան **քաղաք** **Ծաղկոտնի**—*Գ5—այժմ՝ Դիադինից հյուսիս։*

Զարիշատ **քաղաք** **Աղիովտի**—*Գ5—գտնվել է Վանա լճի հյուսիսային կողմը, այժմյան* Երիշատ *գյուղի տեղում։ Ըստ երևույթին, այս տեղում է գտնվել ուրարտական արձանագրություններում հիշվող* Ալի *կրոնական կենտրոնը, որի անունով էլ ամբողջ երկրամասը հայերի մոտ կոչվեց* Աղիովիտ: Ալի *անունը դարձավ* Զարիշատ, *հավանաբար, Արտաշես Ա-ի օրոք (189—161), որը այդպես կոչեց ի պատիվ իր հոր՝ Զարեհի։ Ստանալով «արքունի քաղաքի» իրավունք, Զարիշատը պիտի ստանար, իբրև քաղաքային տերիտորիա, Աղիովիտ գավառի արևմտյան մասը, որը և «Աշխարհացույց»-ում հիշատակվում է իբրև առանձին գավառ Տավրուբերան «աշխարհի» կազմում։*

Զարիշատ **Վանանդի** *աւան—Բ5—այժմ Զարուշադ գյուղ, վերջերս վերանվանվել է Արփաչայ։*

Զաւ[դ]է[ֆ] *գաւառ—Բ6—մեզ հասած ցուցակներում պահպանվել է* Զաւէ *ձևով, իբրև Արցախի գավառներից մեկը, տե՛ս* Սաւդֆ գաւառ:

Զաւդէֆ *աւան, տե՛ս* Սաւդֆ *աւան։*

Զաւէ *տես՝* Զաւդէֆ *գաւառ։*

Զելա *քաղաք—Բ1—այժմյան Զիլեն։*

Զեւգմա *քաղաք—Դ2—*Ζεῦγμα, *այժմյան Խալֆան գյուղի մոտ, նշանավոր գետանցք Եփրատի վրա։ Զեվգմայի գետանցքը հայտնի էր հնագույն ժամանակներից։ Այստեղ էր գտնվում* Խալպու *քաղաքը, որին տիրելու համար Ուրարտուի պետությունը կատաղի պայքար էր մղում Ասորեստանի դեմ։*

[Զ]իգան[էոն] *քաղաք—Ա5—մեզ հասել է աղճատված ձևով՝* Իգանի: *Այս վայրը եղել է Եգերաց աշխարհի հայտնի կենտրոններից մեկը, որի հիշատակությունը պահպանվել է շատ աղբյուրներում։* Σιγάνεον (Ptol. V, 9, 2), Sicanabis (Tab. Peut.), Siganium (Anon. Rav.), Ζιγανέιον (Georg. Cypr.) *տեղադրվում է այժմյան Սուջունա գյուղի մոտերքը։*

Զիգանա *ամրոց—Բ3—այժմ էլ նույն անունով գյուղ։*

Զիգանա *լեռնանցք (1960)—Բ3—այժմ էլ նույն անունով։*

Զիգոն **Բասիլիկոն** *կամ* **Զիգոն** **Բասիլեոն** *լեռն—*(Ζυγὸν Βασίλειον, ὄρος)—*Գ2—աղճատված ընթերցումներն են՝* Զիգոն Վասիթեոն, Իգոն Բասիլեոն. *բյուզ.* Ζυγός, *Անտիտավրոս լեռնաշղթայի արևելյան ճյուղավորությունը, որը Արաբկիրից հարավ հասնում է մինչև Եփրատ գետը և վերջանում Արածանիի գետաբերանի դիմաց։* Ζυγὸν Βασίλειον *պիտի նշանակի* «արքայական *գիծ»։ Այսպես պիտի կոչվեր այն հնագույն գիծը՝ լեռնաշղթան, որը պատնեշ էր հարավից, և քաղաքական կամ վարչական սահման էր՝ սկսած Ուրարտուի ժամանակներից։*

Զիմարա *աւան—Գ3—այժմ էլ նույն անունով գյուղ։*

Զինթա *ամրոց—Դ6—պիտի գտնվեր Շինակ լեռնանցքի (1785) արևելյան մատույցներին, Փոքր Զաբ գետի ակունքների շրջանում։* Zintha *հայերեն պիտի հնչեր* «Շինակ» *(ճիշտ ընթերցումը պիտի լինի* *Zinaca?). *Արշակունյաց Մեծ Հայքի ամենահարավ-արևելյան ծայրամասի սահմանումն էր գտնվում։*

Զիքուն—*Ա3—Առաջացել է հուն.* Ζιχῶν *ձևից* (Ζίγχοι—Ptol. V, 8, 12), *ցեղանուն, վրաց.* ჯიქნი Զիքնի *և երկիրը՝* ჯიქეთი Զիքեթի, *որը հայ մատենագրության մեջ պահպանել է Վարդան պատմիչը։*

Զոել (Զոայլ) *բերդ—Դ5—այժմ՝ Զոել-կալասի։*

Է

Էգեաս *ամրոց—Դ1—*Egeas, Ἀιγέαι—*ամրոց և նավահանգիստ, կոչվել է նաև* Ալեքսանդրուպոլիս *և* Մակրինոպոլիս: *XI—XIV դդ. Կիլիկյան Հայաստանի գլխավոր նավահանգիստը.* Այաս *անունով. այժմ* Այաս *գյուղաքաղաք։*

Էլեգիա (Ջերմուկ) *ավան—Գ4—հռմ.-հռոմ.* Elegeia: *Բոլոր ժամանակներում հայտնի էր իր բուժիչ ջերմուկներով. այժմ Իլիջա գյուղ։ Անվան* Elegeia *ձևը առաջացել է հայերեն* «Եղեգն» *բառից և կապվում է Հայկական լեռնաշխարհում հաճախ պատահող եղեգնուտների գոյության հետ։*

Ելեգիա **ամրոց**—*Գ3—պիտի գտնվեր այժմյան* Ենիջե *(սկզբնական ընթերցումը, ըստ երևույթին, եղել է* «Ելիջէ»*) գյուղի մոտ։ Անտիկ աղբյուրներում պատահող այս ամրոցը սովորաբար շփոթում են Կարինի մոտ գտնվող Ջերմուկ-Էլեգիայի հետ։*

Ելի *վանք—Դ6—այժմ էլ նույն անունով գյուղ։*

Երախանի *բերդ—Բ4—Մամիկոնյանների ոստանը Տայքում, այժմ Իրխան կամ Իրկնիս գյուղ Ճորոխ գետի աջ ափին,* Թուխարք *բերդից հարավ։*

Ը

Ըռնայ *գաւառ—Գ6—կոչվում էր նաև* Առնա. *Պարսկահայքի 5-րդ գավառը՝ շուրջ 250 կմ² տարածությամբ, գրավում էր Խանասորի լեռնանցքից հյուսիս ընկած լեռնային շրջանը, այժմյան Դերիկ վանքի շրջակայքում, կենտրոնն էր* Առնայ *վանք, այժմյան Դերիկ գյուղը։*

Թ

Թաւաապարան *ամրոց—Բ8—այժմ* Թաբասարան. *այստեղ էին վերջանում Դարբանդի պարիսպները։*

Թաւասպարք *ագգագաւառ—Բ7—Եղիշեի մոտ* Թաւասպարան, *արաբ.* Թաբասարան. *այսպես էր կոչվում այժմյան թաբասարանցիների տերիտորիան։* Թաբասարանցիների լեզուն *պատկանում է կովկասյան լեզվախմբի լեզգիական խմբին։*

Թաւր *ամրոց—Բ5—վրաց.* თორი Թորի, *հիշատակված նաև միջին դարերում, իբրև* Թորեli *իշխանական տոհմի կենտրոն։*

Թա[ւ]ր **գաւառ** (Թոր, *աղճատված ձևն է* Թուրգաւ. *նաև պահպանվել է* Թոր Գովաթիսխ *ձևով)—Բ5—վրաց.* თორი Թորի: *Գուջարեթիս-ծղալի հովտում։ Այս գավառի տերիտորիան ճշտիվ համընկնում է այժմյան Բորջոմի շրջանին. տարածությունն էր՝ 732 կմ²։*

Թաւրեզ *քաղաք—Գ7—այժմ* Թավրիզ: *Հայ մատենագրության մեջ առաջին հիշատակությունը պահպանվել է Փավստոս Բուզանդի մոտ։*

Թեմիսկիւրէ *աւան—Բ2—*Θεμισκυρή, *այժմ՝* Թերմե *գյուղաքաղաք։*

Թերմոդոն *գետ, տե՛ս* Գայլ գետ:

Թէոդուպաւլիս *(*Կարնոյ քաղաք). *տե՛ս* Կարին քաղաք:

Թիանեթ *ավան—Ա6—այժմ էլ նույն անունով համանուն շրջանի կենտրոն։*

Թիանեթ *գաւառ—Ա6—վրաց.* თიანეთი Թիանեթի *համանուն ավանով, այժմ էլ նույն անունով շրջան Իորի գետի ակունքների շրջանում։ Գավառի տարածությունն էր 200 կմ²։*

Թման *գյուղ—Դ5—Հոխիսիմյանց վարքում կոչվում է* Թըմնիս, *հուն.* Κώμη Θαμανῶν, *ասոր.* Θemānōn, *արաբ.* Θamānūn. *այժմ՝* Բեթմանին *կամ* Հեշտանե. *գտնվում էր այժմյան* Ջուդի-Դաղ *(հին* Արարատ, Արարտու, Նիբուր*) գագաթի հարավային փեշերին։ Ըստ տեղական ավանդության, Նոյի տապանը կանգ է առել այդ գագաթի վրա և Նոյը իր ազգով բնակություն է հաստատել Թմանում։ Այս վայրի անունով ամբողջ Կորդուք գավառը կոչվել է* Թամոնիտիս (Ταμωνῖτις—*Ստրաբոն,* XI, *14, 5)։*

Թմնիս *(*Տոմիսա) *բերդ—Գ3—ուրարտական արձանագրությունների* Տումեիշկի, *հուն.* Τόμισα, *այժմյան* Իզոլուն. *հին ժամանակները շատ հայտնի էր իբրև հիմնական գետանցք Մեծ Հայքից Փոքր Հայք և արևմուտք անցնելու համար։ Այս գետանցքի մոտ հիմնվեց* Մելիտինե *քաղաքը, որը իր կենտրոնական դիրքը պահպանում էր շնորհիվ հիշյալ գետանցքի։*

Թոնդրակ *լեռն (3548)—Գ5—այժմ Թանդուրեկ, մինչև այժմ գործող հրաբուխ։*

Թոնոզա *գյուղ—Գ2—այժմ Թոնուզ գյուղ, Կարա-Թոնուզ լեռնաշղթայի փեշերին։*

Թոռնաւան *ավան—Գ6—Թոռնավան գավառի կենտրոն, որը պիտի լինի Տավերնիե ճանապարհորդի մոտ հիշատակվող* Darnavin *վայրը. հարկավոր է փնտրել Մարմետ գետի վերին հոսանքում՝ Տաշ-Ռումի գյուղի մոտերքը։*

Թոռնաւան *գաւառ—Գ5—Գ6—Վասպուրականի 19-րդ գավառը՝ 1300 կմ² տարածությամբ։*

Թորդան *գյուղ—Գ3—այժմ էլ նույն անունով գյուղ։*

Թուխարք *կամ* **Թուխար[ի]ս**—*Բ4—վրաց.* თუხარისი Թուխարիսի, *բերդ Կղարջք գավառում, այժմ՝ Խերես գյուղ Տայքի սահմանին մոտ։*

Թուշք *ազգագաւառ—Ա6—վրաց.* თუშნი Թուշնի *և երկիրը՝* თუშეთი Թուշեթի, *շուրջ 730 կմ² տարածությամբ։ Պտղոմեոսի մոտ* (V, 8, 13) *հիշվում է* Τοῦσχοι *ձևով, որ պիտի առաջացած լինի հայերեն Թուշք-ից։*

Թռեղք գաւառ—Բ5—Բ6—«Երկիրն Թռեղեաց կամ Ծաղկայ» (Ջուանշէր, Դ), վրաց. თრიალეთი Թրիալեթի, Պլինիոսի մոտ կոչվում է Regio Thriare, այժմ՝ Թրիալեթի կամ Ծալկայի շրջանը՝ 2195 կմ² տարածությամբ: Թռեղքը Գուգարաց բդեշխության 5-րդ գավառն էր և 387 թ. մտնում էր Վրաց աշխարհի կազմում: Ըստ երևույթին այժմյան Ծալկա անունը, որը մատենագիրների Ծաղկայ-ն է, Թռեղք գավառի հետագա անունն է և իր ծագումով պիտի նույնը լինի, ինչ որ Ծաղկոտն, Ծաղկունք, Ծաղկի և այլ տեղանունները, որոնք սովորաբար գտնվում են գետերի ակունքների մոտ և կապ պետք է ունենան ջրի պաշտամունքի հետ:
Թրաբի գաւառ—Դ6—Պարսկահայքի 3-րդ գավառը՝ 1200 կմ² տարածությամբ, այժմ Թերգեվեռ՝ Բերդեսուր-չայ գետի հովտում: Այս գավառում հայտնի էին՝ Որմի (այժմյան Ուրմիա) և Նախճաւան (այժմ Նախիջևան-Թեփե) քաղաքները:
Թրաբի գետ—Դ6—այժմ Բերդեսուր-չայ:

Ի

Իշայր գաւառ—Գ6—Մոկաց նահանգի 1-ին գավառն էր 175 կմ² տարածությամբ, այժմ կոչվում է Շճիձոր՝ Մոկսի և Խիզանի միջև: Այս գավառում միջին դարերում հայտնի էր Սուրբ կանանց վանքը, որը հետագայում կոչվում էր Սուրբ Խաչ վանք՝ Կեցան գետի ձախ ափին:
Իշխանաց գեւղ—Բ4—Տայքի Ճակք գավառում: Հիշատակվում է կաթողիկոսական գավազանագրերից մեկում իբրև Ներսես Գ. Շինող կաթողիկոսի ծննդավայրը (տե՛ս Ղ. Ինճիճեան, Ստորագր. հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 373). այժմ կոչվում է Իշխան, հայտնի իր ճարտարապետական կոթողով՝ Իշխանի տաճարով, որ կառուցել է Հայոց կաթողիկոս Ներսես Գ. Շինողը VII դ.: Այս վայրը Մամիկոնյան տոհմի նստոցն էր, որի պատճառով էլ գյուղը պիտի կոչվեր Իշխանանիստ գեւղ, իսկ ամբողջ շրջակայքը՝ Իշխանանիստ ձոր (Յակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, տե՛ս Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., հտ. Բ, Երևան, 1956, էջ 553):
Իշխան գետ—Գ7—Ներքին հոսանքը այժմ կոչվում է Կուրու-չայ:
Իշխանձոր—Գ3—Գյուղ՝ Իշխանձոր գետի ակունքների մոտ:
Իշոց գաւառ—Դ5—Մոկաց նահանգի 3-րդ գավառն էր՝ շուրջ 302 կմ² տարածությամբ, այժմ կոչվում է Սպարկերտ:
Իսիկեան ծոց—Դ1—լատ. Sinus Issicus, միջին դարերում կոչվում էր Հայոց ծոց, Աղեքսանդրեկի ծոց. այժմ՝ Ալեքսանդրետի ծոց:
Իսոս քաղաք—տե՛ս Սիսոն:
Իռիս գետ—Բ5—այժմյան Եշիլ-ըրմաղ գետը:
Իւրայ (Կամբեճ) գետ («Աշխարհացոյց»-ում, էջ 29, հիշվում է աղճատված ձևով՝ Կուրաւ)—Բ6—կոչվել է նաև Կամբեճ, վրաց. მდინარე კამბეჩისა Մդինարե Կամբեճիսա, այժմ Իորա կամ Իորի գետը:
Իփսելէ աւան—Բ2—բյուզ. Ἰψηλή, այժմ՝ Իփսիլե գյուղ:

Լ

Լազիւիկէ երկիր—Բ4—կա նաև Ղազիկէ ձևը, որ համապատասխանում է հուն. Λαζική-ին: Այս անունով է կոչվում Լազիկա թագավորության հիմնական երկրամասը: Համապատասխանում է հետագա Գուրիային:
Լարիսա քաղաք—Գ2—հուն. Λάρισσα. ենթադրվում է այժմյան Մանջինըկ գյուղի տեղում:
Լեկք ազգագաւառ—Բ7 լատ. Leges, լեզգիների բնակության տերիտորիան:
Լեռնադաշտքն Ջաւախաց—Բ5—այսպես էր կոչվում Վերին Ջավախքի Աբուլ լեռան հրաբխային գագաթի շուրջը փռված ալպյան լճերով հարուստ լեռնադաշտը:
Լեխ գետ—Ա5—վրաց. ლიახვი Լիախվի, Կուր գետի վտակներից մեկը:
Լերինք Տաւրոսի—Գ5—այսպես է կոչվում «Աշխարհացոյց»-ում Հայկական Տավրոսի արևելյան մասը: Տե՛ս նաև Տաւրոս լեառն:
Լիմ կղզի—Գ5—Վանա լճի կղզիներից մեկը, այժմ էլ նույն անունով հայտնի վանքով: Լիմ կղզին համարվում էր Առբերանի գավառում:
Լուսաթառին քաղաք—Գ3—այժմ Կապան-Մադեն, Եփրատի ափին, Արածանիի գետաբերանից հարավ: Այժմ պահպանվել է Լուսաթառին կամ Լուսավորիչ գյուղ Ջարսանջակի Փերին գավառակում (տե՛ս Հ. Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան, հտ. Բ., Վենետիկ, 1907, էջ 11):
Լոփնաս գետ—Բ6—այժմ Աղստև գետ:
Լփնիք ազգագաւառ («Աշխարհացոյց»-ում աղճատված՝ Փւիք ձևով—Ա6—այսպես պիտի կոչվեր Անդրկովկասի Կախեթը (Գաղմա Կախեթի): Հայտնի էր Լփնաց քաղաքը (Λούβιον

χώμης, Ptol. V, 10, 2), որը պիտի գտնվեր այժմյան Լափանների գյուղի տեղը, Լոպոտա վտակի գետաբերանի մոտ:
Հավանաբար, լփինների անունը պահպանվել է Աղուան—Ալազան գետի երրորդ անվան մեջ՝ Лабань Լաբան (տե՛ս Книга Большому Чертежу, М.—Л., 1950, стр. 89):

Խ

Խաբուր գետ (Արևելյան Խաբուր)—Դ5—այժմ՝ Խաբուր-սու, Մեծ Հայքի սահմանն էր Տիգրիսի հովտում:
Խաբուր գետ—Դ4—այժմ էլ նույն անունով Եփրատի ձախ վտակը, Միջագետքի ներսում գտնվող ամենախոշոր ջրային ավազանը:
Խազիրք—Ա6—Խոշոր ցեղային միություն՝ «թագաւորութիւն»:
Խայզան ամրոց—Բ8—այժմ Խըզի գյուղ—այսպես էր կոչվում Խսրուան կամ Խուրսան երկրի կենտրոնը:
Խաղտոյ ձոր—Բ4—Ճորոխ գետի միջին հոսանքի հովիտը:
Խանցիխէ գաւառ կամ Հունարակերտ (աղճատված ձևերն են՝ Խանցիխ և Խանիցխ)—Բ6—վրաց. ხუნანი Խունանի, պետք է լիներ նաև ხანცოხე Խանցիխէ, որ չի վկայված: Խանցիխէ կամ Հունարակերտը Գուգարաց բդեշխության 16-րդ գավառն էր, որը 387 թ. հետո ամբողջ Գուգարաց բդեշխության տերիտորիայի հետ անջատվել է Մեծ Հայքից և միացվել Վրաց աշխարհին: Այս գավառը գրավում էր Կուր և Քցիա գետերի միջև գոյություն ունեցող եռանկյունին, ունենալով 275 կմ² տարածություն: Գավառի կենտրոնն էր Հունարակերտը կամ Խանցիխէ սահմանամերձ ամրոցը, որը համարվում էր քաղաք: Խան-ցիխէ վրացերեն բառացի նշանակում է Խան-բերդ, ուստի այս անվան հնագույն հիշատակությունը պիտի լինի Ստրաբոնի Χάνης-ը, որը այժմյան Խրամի գետի անունը պիտի լինի:
Խանցիխէ, տե՛ս Հունարակերտ ամրոց:
Խառան քաղաք—Դ3—այժմ էլ նույն անունով, աշխարհիս ամենահին քաղաքներից մեկն է:
Խարսիանա (Օրսա) աւան—Գ2—այժմյան Խորսանա գյուղը:
Խարսիանոն բերդ—Գ1—բյուզ. Χαρσιανόν κάστρον այժմյան Մուշալը գյուղը:
Խեբուրք ազգագաւառ—Ա7—ըստ երևույթին Ավարական-Կոյսու (Аварское—Койсу) ակունքների Ջուրմութ վտակի ձորում:
Խենաւք ազգագաւառ—Բ7—այսպես պիտի կոչվեին այժմյան Ախտի-չայ վտակի Խնով տալում ապրող բնակիչները, որոնք կազմում էին առանձին ցեղ:
Խենի գաւառ, տե՛ս Եղնի (Խենի) գաւառ:
Խերկ գաւառ—Բ6—վրաց. ხერკი Խերկի, գտնվում էր Արագվիի ձախափնյա վտակ Թեձամի գետակի ձորում 175 կմ² տարածություն ուներ: Թեձամի գետաբերանի մոտ էր գտնվում Զանաւի գյուղը:
Խերպա գյուղ—Գ2—գտնվում էր Արաբիսոսի (Եփեսոսի) մոտ:
Խիստք, տե՛ս Քուստք:
Խիրս ամրոց—Բ8—պիտի գտնվեր Գիլգիլ-չայի գետաբերանի մոտ: Սրա անունով ամբողջ գավառը կոչվում էր Խսրուան, Խսրվան կամ Խուրսան:
Խնունիս գետ—Գ4—այժմյան Խնուս-չայը:
Խոզան բերդ—Ե4—այժմ էլ նույն անունով, բյուզ. Χόζανον՝ Պաղնատուն գավառում. ուրարտացիների ժամանակ կոչվում էր Խուզանա:
Խոզմաւր, տե՛ս Ասպահեն գետ:
Խոլմադարա ամրոց—Դ3—Χολμαδάρα, Cholmadara (Ptol. V, 14, 8) կոչվել է նաև Սեբաստիա. գտնվում էր այժմ Կյախտա-չայ կոչվող վտակի գետաբերանի մոտ:
Խողմազ գաւառ—Բ7—այժմ՝ Խաչմազ, Վարդաշենի շրջանում: Ընդհանուր տարածությունն էր մոտավորապես 1330 կմ²:
Խոյթ գաւառ—Զ6 Տավրուբերան նահանգի 1-ին գավառը՝ շուրջ 1190 կմ² տարածությամբ: Այժմ հայտնի է Խութ անունով: Այստեղ էին ապրում քաջ լեռնցի խութեցիները՝ բյուզ. Χοθαΐται:
Խոռխոռունիք գաւառ—Գ5—Տավրուբերան նահանգի 16-րդ գավառը: Հայ մատենագիրների մոտ հիշվում է միայն Խոռխոռունյաց նախարարական տոհմը, իսկ իբրև գավառ չի հիշվում: Թվում է, թե «Աշխարհացոյց»-ի հետագա խմբագիրներն են ավելացրել, իմանալով, որ Խոռխոռունիների տոհմական գավառն է եղել նույն Բզնունիքը, համենայն դեպս Խոռխոռունյաց գավառը պիտի գտնվեր Բզնունյաց գավառից հյուսիս, Արծկեից արևելք ընկնող շրջանում, որը մոտավորապես 1000 կմ² տարածություն ունի:
Խորձեան գաւառ—Գ4—բյուզ. Χορζιανηνή—Չորրորդ Հայքի 1-ին գավառը, այժմյան Քղի՝ Մեւս Գայլ գետի վերին ու միջին հոսանքի ձորահովիտը շուրջ 3450 կմ² տարածությամբ: Կենտրոնն էր Կողոբերդ կամ Կեղի (այժմ Քըղի) ավանը: Այս գավառումն էր նաև Արտալեսոն ամրոցը (Հանգստուն գյուղի մոտ):

Խորձեան լեառն—Բ5—Կուր գետի ակունքներում, այժմ՝ Խորձիան:

Խորսվեմ պարիսպ—Բ8—արաբ. Խուրսանի պատվար—այսպես էր կոչվում այն պարիսպը, որը կառուցվել էր Գիլգիլ-չայի ձախ ափին և բաժանում էր Շարուան ազգագաւառը Խսրուանից:

Խունձք ազգագաւառ—Ա7—«Աշխարհացոյց»-ում այս անվան աղճատված ձևը պիտի լինի Խուժք ցեղանունը: Խունձերը (վրաց. ხუნძნი Խունձնի) բնակվում են մինչև այժմ Խունձախ անունով հայտնի շրջանում, Ավարական-Կոյսու գետի կիրճում: Նրանց այլ անունն է ավար, որը և ընդհանրացած է այժմ:

Խսրուան ազգագաւառ—Բ8—արաբ. Խուրսան կամ Խայզան. այսպես էր կոչվում Գիլգիլ-չայի և Սումգայիթ գետերի միջև գտնվող երկրամասը, որի տարածությունն էր մոտավորապես 1750 կմ²: VI դ. հայտնի էր իբրև առանձին ֆեոդալական իշխանություն, որի կառավարիչը կրում էր «Խուրսան-շահ» տիտղոսը: Այս իշխանությունը պիտի առաջ գար Սազքթաց թագավորության վերացումից հետո, մոտավորապես 510 թ.: Կենտրոնը պիտի գտնվեր Խայզան ամրոցում:

Ծ

Ծաղկաւէտ լեառն—Բ4—այժմ Դումլու-դաղ լեռներ, որտեղ գտնվում են Եփրատ (Արևմտյան Եփրատ կամ Կարասու) գետի ակունքները (տե՛ս Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ. հատ. Բ, Երևան, 1956, էջ 577):

Ծաղկոտն գաւառ—Գ5—Այրարատ նահանգի 7-րդ գավառը 675 կմ² տարածությամբ: Ուրարտական ժամանակաշրջանում կոչվել է Luša, որից մնացել է Ծաղկոտն գավառի ու շրջանի իշխանական տան ներկայացուցիչների «Ալուզ» անունը (թե՞ տիտղոսը):

Ծաղկոտն գավառը Արշակունիների ամառանոցն էր («ձովոց տեղիք»), այստեղ էին գումարվում (Նաճապիվան աւանում), աշխարհաժողովները և կատարվում Նավասարդյան տոնը:

Ծամանդոս (Ծամնդաւ) ամրոց—Գ2—Մելիք-դագի գյուղի գլխին գտնվող Զամանտի-կալեսի ամրոցը (ըստ Մ. Ճեվահիրճյանի):

Ծամանդաւ գետ—Գ2—այժմ Զամանտի-սու:

Ծանախոյ ձոր գետ—Բ3—այժմյան Խարշիտ գետի վերին հոսանքը (տե՛ս Վ. Ա. Հակոբյան, նույն աշխատությունը, էջ 552):

Ծանարք ազգագաւառ—Ա6—վրաց. წანარნი Ծանարնի, Σαναραῖοι, Σάναροι (Ptol. V, 8, 13) Թերեք գետի ակունքների շրջանում, որը վրացիները կոչում էին ხევი-წანარეთისა, ხევი, Խեվի Ծանարեթիսա, Խեվի, այժմյան Ղազբեգի շրջանը, մոտավորապես 945 կմ² տարածությամբ:

Ծեւքան դուռն—Ա6—այսպես էր կոչվում, ըստ երևույթին, այն անցքը, որը գտնվում էր այժմյան ռազմավիրական ճանապարհի վրա, Փասանաուրի գյուղից վերև, որտեղ միախառնըվում են Սպիտակ Արագվին և Սև (կամ Գուդամակար) Արագվին, կազմելով Արագվի գետը:

Ծելքանք ազգագաւառ—Ա6—վրաց. წალკანელნი Ծալկանելնի, բնակվում էին Արագվի գետի վերին հոսանքում, որը կոչվում էր Սպիտակ Արագվի: Սրանց տերիտորիան ընդգրկում էր շուրջ 525 կմ²:

Ծիպան կղզի—Գ5—այս կղզին պիտի գտնվեր այժմյան Աղաբաղ հրվանդանի մոտ: Միջին դարերում այստեղ հայտնի էր «Ծիպնայ անապատը»: Ծիպան կղզին գտնվում էր Բզնունիք գավառում:

Ծիրանեաց լեռ (3133)—Բ4—այժմ Կանդիլ, Բասեն և Կարին գավառների սահմանում:

Ծղուկ գաւառ—Գ6—Սիւնիքի 7-րդ գավառը՝ 1950 կմ² տարածությամբ, համապատասխանում է այժմյան Սիսիանի շրջանին: Ծղուկ գավառը կոչվել է նաև Սիւնիք կամ Սիսական՝ նեղ իմաստով:

Ծոբ կամ Ծոփ ամրոց—Բ6—վրաց. წოფა Ծոփա, որի ավերակները գտնվում են նույնանուն Ծոփա գյուղի մոտ, Սադախլու երկաթուղային կայարանից ոչ հեռու:

Ծոբէն գյուղ—Բ6—այժմ էլ նույն անունով:

Ծոբէնոր գաւառ (աղճատված ձևն է Ծափան)—Բ6—վրաց. წობენორი Ծոբէնորի, համանուն Ծոբէն. գյուղով Արագվի գետի ձախ ափին, ընդհանուր տարածությունն էր շուրջ 400 կմ³:

Ծոբոփոր կամ Ծոփոփոր գաւառ—Բ6—Գուգարաց բդեշխության 2-րդ գավառը՝ 450 կմ² տարածությամբ. ընդգրկում էր Նուլավեր գետի հովիտը մինչև Ջորագետը (այժմ՝ Դեբեդ): Կենտրոնն էր Ծոբ ամրոցը, Ծոփա վտակի վրա: 387 թ. մտնում էր Վրաց աշխարհի կազմում:

Ծովակ Հիւսիսոյ, տե՛ս Ցելի լիճ:

Ծովք բերդ և կղզի—Գ3—այժմ Գյոլջուկ կղզի համանուն երկաթուղային կայարանի մոտ: Այս Ծովք ամրոցը չպետք է շփոթել միջին դարերում հայտնի կաթողիկոսանիստ Ծովք դղյակի

հետ, որը գտնվում էր Կիլիկյան Հայաստանի և Ասորիքի սահմանում, Այնթապից հյուսիս-արևմուտք, այժմյան Սոֆ-Քեոյ բնակավայրի տեղում (ըստ Ճեվահիրճյանի):

Ծովք լիճ—Գ3—այժմ Գյոլջուկ: Այստեղից էր սկսվում Արևմտյան Տիգրիսի արևմտյան բազուկը: Այս լիճը ուրարտական արձանագրություններում հիշվում է Ծուա անունով:

Ծովք կղզի, տե՛ս Ծովք բերդ:

Ծոփա գետ—Բ6—փոքրիկ վտակ, որի ափին գտնվում էր Ծոփա կամ Ծոբ ամրոցը, այժմյան նույնանուն գյուղի մոտ:

Ծոփաց կողմն (Չորրորդ Հայք)—Գ3—Գ4—Մեծ Հայքի 2-րդ նահանգը, որը բաժանված էր 8 գավառների և ուներ 15890 կմ² տարածություն: Այս նահանգը ընդգրկում էր հելլենիստական ժամանակաշրջանի Ծոփաց թագավորության տերիտորիան, ուստի կոչվում էր Ծոփաց կողմն: 387 թ. հետո հիշյալ նահանգի տերիտորիան բաղկացած էր հինգ նախարարական տերություններից—սատրապիաներից, որոնք բյուզանդական օրենսդրական աղբյուրներում անվանվում են gens, այսինքն՝ «ազգեր»: Հուստինիանոս Ա-ի 536 թ. նովելլայով Ծոփաց կողմը դառնում է առանձին պրովինցիա՝ Չորրորդ Հայք (Armenia Quarta) անունով:

Ծոփք Շահունեաց գաւառ—Գ3—կոչվել է նաև Ծոփք Շահեի, Ծոփք Շահունի, հուն. Σοφηνή, լատ. Sophenae, ուրարտական արձանագրություններում՝ Ծուպանի, Չորրորդ Հայքի 5-րդ գավառն է՝ 2460 կմ² տարածությամբ: Այս գավառը Ծոփքի թագավորության կենտրոնական երկրամասն էր, որտեղ գտնվում էր Ծոփքի կենտրոնական սրբավայրը՝ Հեռապալիսը (այժմ Չմշկածագ): Այս գավառը կոչվում էր Շահունի՝ տիրող թագավորական հարստության անունով:

Ծումինա (Չրմէս, Ճիմին) քաղաք,—Գ3—այժմ Ջիմին գյուղ:

Ծունդա քաղաք, տե՛ս Քաջատուն:

Ծուքեթ գաւառ («Աշխարհացոյց»-ում հասել է աղճատված Քեթ ձևով, ճիշտ ընթերցումը պահպանվել է Ղևոնդի մոտ)—Բ6—վրաց. წუქეთი Ծուքեթի, Իորի գետի հովտում, Երծոյի և Կուխեթի մեջտեղում: Այս գավառումն էր Կածարեթի վայրը, որը «Գիրք թղթոց»-ը պահպանել է այս անվան մի այլ՝ Կասր ձևով: Այստեղ էր նստում գավառի եպիսկոպոսը. այժմ այս գյուղը կոչվում է Սամեբա: Ծուքեթ գավառի տարածությունն է շուրջ 250 կմ²:

Կ

Կաբիրա քաղաք, տե՛ս Նեոկեսարիա:

Կազբք ազգագաւառ—Բ8—այսպես պիտի կոչվեր Սումգայիթ գետի օժանդակ Կոզլու-չայ ձորահովիտը, որը Բազկան երկրի մասն էր կազմում: Կազբ կամ Կասպ ցեղը վաղուց գոյություն չուներ, Կասպերի Kaspianae երկիրը վաղուց այլ անուն էր կրում՝ Բաղասական կամ Փայտակարան, և միայն այս մոռացված կիսաանապատ լերկ ժայռերի շրջանն էր, որ շարունակում էր կոչվել «Կազբք»:

Կակամար, տե՛ս Պոնտոս ծով:

Կանկաքար լեռ—Դ6—այժմ Կաչքար գագաթ (3937) Պարխարյան լեռներում:

Կաղզուան աւան—Բ5—այժմ էլ նույն անունով գյուղ, վրաց. აღზევანი Աղզեվանի, ռուս. Кагызман.

Կամախ աւան—Գ3—այժմ էլ նույն անունով Քեմախ, տե՛ս Անի:

Կամբեճ գետ, տե՛ս Իւրայ գետ:

Կամբեճան գաւառ—Բ6—Բ7—այժմյան Շիրակի կիսաանապատային անջրդի դաշտավայրը, որի միջով հոսում էր միայն ամառվա շոգին հազիվ գոյությունը պահպանող Կամբեճ կամ Իւրայ (այժմ՝ Իորա կամ Իորի) գետը: Կամբեճան գավառի ընդհանուր տարածությունն էր շուրջ 7510 կմ²:

Կամբիւսեւս գետ—ըստ երևույթին, այսպես էր կոչվում այժմյան Ղարա-սու գետը: Արաբական աղբյուրներից կարելի է հետևցնել, որ Ղարա-սու գետը կոչվել է՝ Զառան, որ պարթևական Գա-ռան ձևից պիտի առաջացած լինի: Քարտեզի վրա նշված է Գառ-ռան ձևով—Գ7—:

Կամուլիանա գիւղ—Գ1—այժմյան Կեմեր գյուղը:

Կամիսա աւան—Գ2—այժմյան Կեմիս գյուղը:

Կանգարք գաւառ—Բ6—վրաց. კანგარი, ქუეყანა კანგარისა Կանգարի, Քուեղանայ Կանգարիայ: Գուգարաց բդեշխության 6-րդ գավառը. ենթադրաբար տեղադրում ենք Ոսկեպար գետի ձորահովտում: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, այս գավառի մակերեսի տարածությունը մոտավորապես 305 կմ² էր: Կանգարք գավառը 387 թ. մտնում էր Վրաց աշխարհի կազմում մինչև IX դ.: Գագայ Սուրբ Սարգիսը (այժմյան Կոթի գյուղի մոտ) համարվում էր Կանգարք գավառում[1]: Կան-

[1] Տե՛ս Л. М. Меликсет-беков, Грузинский извод сказания о посте „араджавор", Христ. Восток, т. V, вып. 2, Петроград, 1917, стр. 73—111.

զարուց կամ Մթին լեռների անունը պահպանվել է այժմյան Մթնաձոր կամ Խավարաձոր անվան մեջ։

Կանգուար կամ Կանգավար, ամրոց—Գ5—Անձևացիք գավառի կենտրոնը, այժմ Կենգեվեր գյուղ։

Կապաղակ քաղաք—Բ7—այժմ Կաբալա գյուղը, Նիժ գյուղի մոտերքը։ Առաջին անգամ հիշվում է Պլինիոսի մոտ Cabalaca ձևով, ապա Պտղոմեոսի մոտ (V, 11, 5) երկու ընթերցմամբ՝ Καβαλάκα (մեզ հասել է աղճատված՝ Θαβιλάκα ձևով) և Χαβάλα։

Կապ-կոհ լեռն—Ա6—Բ8—այսպես էր կոչվում Գլխավոր Կովկասյան լեռնաշղթան։

Կապուտան ծով—Դ6—այժմ Ուրմիա կամ Ռեզայե՝ Հայկական լեռնաշխարհի ամենամեծ լիճը, 5775 կմ² մակերեսով. երկայնությունը՝ 135 կմ, լայնությունը՝ 45 կմ, խորությունը՝ 15 մ, աղիությունը հասնում է 150—230%։ Կապուտան ծովը բարձր է ծովի մակերեսից՝ 1330 մ։ Այս լճի այլ անունն է Գաբիթեան, որ Կապուտան անվան տեղական ձևը պիտի լինի։ Ստրաբոնը (XI, 13, 2) այս լիճը հիշում է երկու անունով՝ Μαντιανή և Καπαῦτα (աղճատված ձևն է՝ Σπαῦτα) և նկատի ունենալով այս վերջին անունը՝ տալիս է նրա ստուգաբանությունը՝ Κυανῆ ἑρμηνευθεῖσα—«ճույժ կապույտ», այսինքն՝ Կապուտան, որ լճի հայ-պարթևական անունն է։

Կառամինոն գետ—Գ3—Փոքր Հայքում, Եփրատի աջ օժանդակը, որը թափվում էր Եփրատում Համարա ամրոցի (այժմ՝ Ամբարչիկ գյուղ) մոտ։

Կառոմոսոս գետ—Գ1—Caromosos, Սարոս գետի աջ վտակը, որի վրա գտնվում էին Կոռոմոզոլ (այժմ Կյուրումզե) և Վահկա (այժմ՝ Ֆեկե) ամրոցները։

Կասե գյուղ—Գ1—բյուզ. Κασή. ենթադրաբար տեղադրվում է այժմյան Գեսի գյուղի տեղը։

Կասպի (Ուփլիս-ցիխե) բերդ—Բ6—վրաց. უფლის ციხე კასპისა Ուփլիս-ցիխե Կասպիսա, այժմ Ուփլիս-ցիխե գյուղը, հռչակված իր վիմափոր հուշարձանով։

Կասպիական դրունք—Գ7—այժմ Սալավաթի լեռնանցք։ Կեղծ Կալիսթենեսի «Վարք Աղեքսանդրի» երկում կարդում ենք. «Ի Կասպիական դրունս մերձ յաշխարհն Թալիշ ի գաւառն Գիլանայ»։ Կասպիական դրունքի մասին հաղորդում են նաև Ամմիանոս Մարկելլինոսը (XXIII, 6, 13) և Եվսեբիոս Կեսարացին (p. 190)։

Կասպից ծով, որ է Վրկանաց ծով—Ա8—Գ8։

Կատարա գյուղ—Դ2—Մարաշից դեպի արևմուտք։

Կատարոյ լեռն—Գ4—այժմ Կատարին-թափա լեռ (2950)։

Կատիշք ազգագաւառ—Գ7—հուն. Καδούσιοι ցեղը բնակվում էր Արդաբիլից Ահար ձգվող Ղարասու գետի հովտի վերին մասում։

Կարթունիք գաւառ—Դ6—Կորճեից նահանգի 9-րդ գավառը՝ շուրջ 550 կմ² տարածությամբ։ Այժմ այս գավառի անունը հիշեցնում է Շեմդինանի Կատունի գյուղը։

Կարին գաւառ—Գ4—Բարձր Հայքի 9-րդ գավառը՝ այժմյան Էրզերումի սանջակը, Ստրաբոնի մոտ (XI, 14, 5) կոչվում է Καρηνῖτις։ Այսպես էր կոչվում Կարին ավանի, ապա քաղաքի անունով։

Կարին գավառը գրավում էր Կարնոյ դաշտը և մակերեսը հավասար էր 2275 կմ²։ Այս գավառումն էին գտնվում Եփրատ գետի ակունքները։

Կարին քաղաք կամ Կարնոյ քաղաք—Գ4—այժմյան Էրզրումը։ Թեոդոս Բ Փոքրը (408—450) կառուցեց մեծ ամրություններ, դարձնելով քաղաքը Բյուզանդական Հայաստանի ռազմական ու վարչական կենտրոն և կոչեց այն Թէոդոսուպաւլիս, կոչվում էր նաև Թեոդուպաւլիս (տես)։

Միջին դարերում կոչվում էր Կարնոյ քաղաք, վրաց. კარნუ ქალაქი Կարնու քալաքի, իսկ արաբները՝ Kali-Kala։ XI դ. վերջից, Արծն քաղաքի՝ սելջուկների կողմից կործանումից հետո, Կարինը կոչվում էր նաև Arzan-ar-Rum, որից՝ Արզրում և այժմյան Էրզրում։

Կարմիր գետ—Գ6—այժմ՝ Ղըզըլ-չայ. վերին հոսանքը կոչվում է Կոտորոց գետ, այժմ՝ Կոտուր-չայ։

Կարմիր փորակ լեռն—Բ5—այժմ Ղըզըլ-գյադուկ (3022)։

Կարնոյ քաղաք, տե՛ս Կարին քաղաք։

Կարուց բերդ—Բ5—Կարս քաղաքի հնագույն ամրությունը, որը թերևս կառուցվել է ուրարտական ժամանակաշրջանում։

Կարքեմիշ քաղաք, տե՛ս Եւրոպոս։

Կեղի, տե՛ս Կողոբերդ։

Կեսիոս գետ—Բ7—պետք է լինի այժմյան Գեոքչայ (Գըրդըման-չայ—Գարդման) գետը։

Կեսարիա Կապադովկիոյ (Մաժակ) քաղաք—21—Կապադովկիայի հռչակավոր մայրաքաղաքը, որն այժմ կոչվում է Ղայսերի։

Կերասունտ, տե՛ս Փառնակիա։

Կերսագիս (Գարսանիս) աւան—Գ3—Gersagis (Itin. Ant.) (ճիշտ ընթերցումը պիտի լինի Garsanis), այժմ՝ Գերջանիս գյուղ, վերջերս վերանվանվել է Ռեֆահիե։

Կեցան գետ—Գ5—այժմ Քեսան գետ։

Կեթիկ գաւառ—Գ5—Աղձնյաց բդեշխության 4-րդ գավառը տեղադրվում է այժմյան Շիրվանի շրջանում, Մադեն-սու գետակի ձորում, 352 կմ² տարածությամբ։

Կիակկաս գետակ—Գ3—Փոքր Հայքում՝ Եփրատի աջ օժանդակը, համանուն վայրի մոտ։

Կիակկաս կայան—Գ3—«Աշխարհացոյց»-ում աղճատված Կաւկաս, Փոքր Հայքում, Եփրատի աջ ափին, հայտնի իր ջերմուկներով և այժմ էլ կոչվում է Ջերմուկ (տաճկերեն Չերմիկ)։ Հռոմեական մղոնաչափերում կոչվում է Ciaccas, ասուրա-բաբելական արձանագրություններում՝ Kia[kka]։

Կիթ-ջուր գետ—Գ4—ըստ երևույթին այսպես է կոչվել ռուսերեն լեզվով հրատարակված 200000-անոց քարտեզի վրա Гид-су վտակը, որ թափվում է Գինեկ (այժմյան Գինեկ-սու) գետում։ Այս գետի ափին պիտի գտնվեր Կիթառին ամրոցը։

Կիթառին ամրոց—Գ4—բյուզ. Κιθαρίζων. ըստ երևույթին, հետագայում կոչվել է Ճապաղջուր։

Կիլիզա աւան—Դ2—արաբ. Killiz, այժմ՝ Քիլիս քաղաք։

Կիւռեստիկե «փոքր աշխարհ» Ասորիքի—Դ2—Κυρρηστική (Ptol. V, 14, 10). մի ժամանակ եղել է Կիւռոս քաղաքի քաղաքային տերիտորիան, ապա վերջինս ընդարձակվել է և նրա մեջ մտել են Հերապաւլիս (Մամբուկ Մաբուկ), Բեռիա (Խալիւբոն) և Ազազ (Խազազ) քաղաքները։

Կիւռոս աւան—Դ2—Κύρρος, Cÿrrhus (Ptol. V, 14, 10), այժմ՝ Քուրուս գյուղ։

Կխոէթ գաւառ (մեզ հասել է Խուէթ, Կռուէթ ընթերցումներով—Բ6—վրաց. კხოეთი Կխոէթի (որից՝ კხოელნი Կխոէլնի ցեղանուն), კუხეთი Կուխէթի համապատասխանում է այժմյան Սագարեջոյի շրջանին։ Կխոեթը կամ Կուխեթը Վրաց աշխարհի գավառներից մեկն է։ Կուխեթումն էր Բոդիսի (այժմ՝ Նինո Ծմինդա գյուղ) ավանը և Ուժարմա (այժմ՝ Ուջարմո գյուղ) բերդաքաղաքը։ Կուխեթի գավառի տարածությունն էր 550 կմ²։

Կղաւդիաս ամրոց—Գ3—հուն. Κλαυδιάς, Claudias, (Ptol. V, 6, 24), բյուզ. Καλούδια, արաբ. Hisn Qalaudia, այժմյան Կեֆերդիս գյուղից հյուսիս, Եփրատի ափին։

Կղարջք—Բ4—վրաց. კლარჯეთი Կլարջեթի, հուն. Καταρζηνή, Calarzene (Ptol. V, 12, 4)։ Գուգարաց բդեշխության 9-րդ գավառը։ 387 թվականից ամբողջ Գուգարքի հետ մտավ Վրաց աշխարհի կազմում։ Այնուհետև այս գավառը ժառանգական իշխանություն էր տեղական ֆեոդալական տոհմի, որի ավագը ժառանգաբար կրում էր «Տանուտէր Կղարջքի» տիտղոսը և Կղարջք գավառն ըստ այդմ կոչվում էր «Տանուտիրութիւն Կղարջից» ტანუტრობა კლარჯეთისა—«Տանուտրոբա Կլարջեթիսայ»։ Գրավում էր Ճավշուրի (այժմ՝ Իմերխեվի) գետի ներքին հոսանքը։ Միջին դարերում այստեղ հայտնի էր Արտանուջ քաղաքը (այժմ՝ Ադա-կալե)։ Կղարջք գավառի տարածությունն էր 1280 կմ²։ Կղարջքը Շաւշէթի, Ներքին Ջաւախքի և Արտահան գավառների հետ միասին կազմում էր Ստրաբոնի (XI, 1, 18) Μοσχική երկրի հայկական մասը, որը մի այլ տեղ Ստրաբոնը (XI, 14, 4 անվանում է Χορζηνή։

Կղէսուրք լեռնանցք—Գ4—Κλεισοῦραι. Տիգրիս (Զեբենե-սու) գետի ակունքների դեպի Արածանի գետի հովիտը տանող լեռնանցքը, որտեղ գտնվում էր համանուն Կղէսուրք ամրոցը։

Կղէսուրք ամրոց, տե՛ս Կղէսուրք լեռնանցք։

Կղէսուր ամրոց—Դ4—բյուզ. Κλεισοῦρα ամրոց և լեռնանցք Քեսունից հյուսիս։

Կոգովիտ գաւառ—Գ5—Այրարատ նահանգի 13-րդ գավառը՝ 2460 կմ² տարածությամբ, ուրարտական ժամանակաշրջանի Katarzae երկրին է համապատասխանում։ Կենտրոնն էր Դարոյնք ամրոցը (այժմ՝ Հին Բայազեթ կամ Դողու-Բայազիդ)։

Կոկիսոն (Կուկուսա) քաղաք—Գ2—բյուզ. Κουκουσός, այժմյան Գյոքսուն։

Կոհ ի Շնգար լերինք—Դ4—այժմ՝ Ջեբել Սինջար։

Կոհ ի Նիհորական լերինք—Դ6—Զագրոս լեռնաշղթան՝ Կորդվաց լեռներից մինչև Զարասպ լեռը։ Այս լեռնաշղթան հանդիսանում էր Պարսկահայք կամ Նոր-Շիրական աշխարհի արևմտյան սահմանը։

Կող—Բ5—վրաց. კოლა Կոլա, Տայքի առաջին գավառը, այժմ Գյոլե, Կուր գետի ակունքների շրջանում։ Կող գավառի տարածությունն էր 1175 կմ²։ Ուրարտական արձանագրություններում հայտնի էր Kulḫa կամ Kolḫa ձևով։

Կող լեռն—Բ5—այժմ՝ Գյոլե լեռ։

Կողբաքար բերդ կամ Կողբ բերդավան—Բ6—այժմյան Կողբ գյուղը Նոյեմբերյանի շրջանում։ IX դ. վրացերեն «Սուրբ Գոբրոնի վարքում» Կողբը հիշատակվում է კოლფაქარი Կոլփաքարի ձևով, որ առաջ է եկել հայերեն Կողբաքար ձևից։

Կողբ աւան—Բ5—այժմ էլ նույն անունով հնուց հայտնի իր աղահանքերով, այժմ վերանվանվել է Տուզլուջա։

Կողբայ գետ—Բ6—այժմ Ինջա-սու։

Կողբոփոր գաւառ—Բ6—Գուգարաց բդեշխության 3-րդ գավառը՝ 250 կմ² տարածությամբ. ընդգրկում էր Կողբայ գետի ձորահովիտը և համապատասխանում էր այժմյան Նոյեմբերյանի շրջանին։ Կենտրոնն էր Կողբ կամ Կողբաքար բերդավանը։ 387 թ. մտավ Վրաց աշխարհի կազմում մինչև IX դ.։

Կողթ գաւառ—Բ7—Արցախի նահանգի 14-րդ գավառը։ Այս գավառումն էին մշակվում «քարախունկի» այսինքն շիբի հանքերը, որ այժմ էլ հայտնի են Զագլիկ կամ Փիփ գյուղի մոտ։ Այս գավառի տեղը որոշվում է այժմյան Դաստափուրի շրջանում և ընդգրկում է շուրջ 1100 կմ² տարածություն։ Մեր տեղադրությունը ճշտվում է Մխիթար Գոշի ժամանակագրության վկայությամբ. «Ստեփաննոս եպիսկոպոս Կողթ գաւառին և քաղաքին Շամքորոյ» (Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 385)։ Կողթ գավառի և Շամքոր քաղաքի եպիսկոպոսի նստոցը պիտի գտնվեր այժմյան Խաչակապ գյուղում գտնվող Թարգմանչաց վանքում։

Կողմն Կարնոյ—տե՛ս Բարձր Հայք։

Կողորբերդ (Կեղի) ամրոց—Գ4—այժմ Քղի գյուղ։

Կողոնիա քաղաք—Բ2—անտիկ Koloneia, այժմ Կոյլի-հիսար գյուղը։

Կոմագենե—«Փոքր աշխարհ»—Դ2—ասուրա-բաբելական և ուրարտական աղբյուրների Kummaḫa, հուն. Κομμαγηνή, լատ. Kommagenae։ Հելլենիստական ժամանակաշրջանում առանձին թագավորություն՝ Շամուշատ (Σαμόσατα) մայրաքաղաքով, որտեղ գահակալում էին Երուանդունի հարստության շառավիղները։

Կոլխ (Կասպի) գաւառ—Ա6—Վերին աշխարհ Վրաց երկրամասի գավառներից մեկը, վրաց. კასპი Կասպի[1], ընդգրկում էր Ռեխուլա գետի հովիտը Ուփլիս-ցիխե Կասպիսա կամ Կասպի ժայռափոր բերդաքաղաք կենտրոնով (այժմ Ուփլիսցիխե)։ Ընդհանուր տարածությունն էր 575 կմ²։

Կոռոմոզոլ բերդ—Դ1—այժմյան Կյուրումզե գյուղը։

Կովկաս կամ Կաւկաս—Ա6—Գլխավոր Կովկասյան լեռնաշղթան։

Կովկաս լերինք—Ա6—այսպես է կոչվում «Աշխարհացոյց»-ում Գլխավոր Կովկասյան լեռնաշղթայի այն մասը, որը Թերեք և Արագվի գետերի ջրբաժանն է հանդիսանում. վրացիներն անվանում էին «Խադիս մթա»։

Կովսական գաւառ—Գ7—Սյունիքի 12-րդ գավառը՝ 625 կմ² տարածությամբ, համապատասխանում է այժմյան Զանգելանի շրջանին։

Կոտա քաղաք—Ա5—լազերը անվանում են Քոթայիս, վրաց. ქუთათისი Քութաթիսի կամ ქუთაისი Քութայիսի քաղաքը։ Միջին դարերում Վիրա-աբխազական պետության մայրաքաղաք։

Կոտայք գաւառ—Բ6—Այրարատ նահանգի 16-րդ գաւառը։ Կոտայքը միակ գավառն է, որ պահպանել է իր անունը իբրև շրջան։ Այժմյան Կոտայքի շրջանը համարյա նույն տերիտորիան է ընդգրկում, շուրջ 860 կմ²։

Կոտիորա քաղաք—Բ2—այժմյան Օրդու նավահանգիստը։

Կոտոր կամ Կոտորոց ամրոց—այժմ՝ Կոտուր։ Կոտոր անունը, ինչպես և վերոհիշյալ Kotiora-ն, առնչություն պիտի ունենան աքքադերեն kudurru բառի հետ, որ նշանակում է «սահման»։

Կոտորոյ գետ—Գ6—այժմ՝ Կոտուր-չայ։

Կորդուք գաւառ—Դ5—Կորճայք նահանգի 1-ին գավառը՝ 5825 կմ² տարածությամբ, լեռնային երկիր՝ Ջերմ և Փոքր Խաբուր գետերի միջև։ Այս գավառը Քսենոփոնի մոտ հիշվող կարդուխների (Καρδοῦχοι) երկիրն է, հուն. Κορδυηνή, Γορδιηνή, լատ. Corduenae. առանձին թագավորություն էր՝ Փինակա մայրաքաղաքով (այժմ՝ Փինիկ գյուղ), որը նվաճեց Տիգրան Մեծը և այնուհետև դարձավ Մեծ Հայքի անբաժանելի մասը։ Ասուրա-բաբելական աղբ. Kurti, որ սովորաբար կարդում են Ḫabḫi կամ Babḫi։ Կորդվաց գավառումն էր Արարադ սարը (ասուրա-բաբել. Arartu), որի հարավային ստորոտում գտնվում էր Թման (Թմնիս) վայրը։ Ստրաբոնը վերջինիս անունով Կորդուքը կոչում է նաև Ταμονῖτις, որ ասորա-բաբելական արձանագրությունների Tumni երկիրն է։ Տե՛ս Թման գիւղ։

Կորճայք նահանգ—Դ5—հնագույն ձևն է՝ *Կորտիճայք. Մեծ Հայքի 6-րդ նահանգն էր՝ 14707 կմ² տարածությամբ։ Այս նահանգը Արշակունիների ժամանակ Մեծ Հայքի չորս բդեշխություններից մեկն էր և կոչվում էր «Կորդուաց (կամ Կորճէից) բդեշխութիւն»։ Կորդուաց բդեշխը համարվում էր՝ «Երկրորդ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն»։

Կորդրիք Վերին գաւառ—Դ5—Կորճայք նահանգի 2-րդ գավառը՝ 1075 կմ² տարածությամբ, Արևելյան Խաբուր գետի վերին հոսանքում, որտեղ հայտնի է Ալկի ամրոցը։

[1] Տե՛ս Н. Марр, История передвижения яфетических народов с юга на север Кавказа, Изв. Акад. наук, 1916, стр. 1392—93; Л. Меликсет-Бек, Введение в историю государственных образований Юго-Кавказа, Тифлис, 1924, стр. 91.

Կորդրիք Միջին գաւառ—Դ5—Կորճայք նահանգի 3-րդ գավառը՝ 1025 կմ² տարածությամբ. Արևելյան Խաբուրի միջին հոսանքի շրջանում։

Կորդրիք Ներքին գաւառ—Դ5—Կորճայք նահանգի 4-րդ գավառը՝ 625 կմ² տարածությամբ. Արևելյան Խաբուրի ստորին հոսանքի շրջանում։

Կորի գավառ—Գ5—Տուրուբերան նահանգի 15-րդ գաւառը, 548 կմ² տարածությամբ. կոչվել է նաև «Կորոյ ձոր», բյուզ. Κορή ընդգրկում էր Կորոյ ձոր գետի (այժմ՝ Քյոռ-սու դերեսի) հովիտը՝ Խաչլու լճի շրջանը ներառյալ։

Կորոյ ձոր գետ—Գ5—այժմյան Քյոռ-սու-դերեսի գետակը, որը բխում է Խաչլու լճից։

Կոռնե ամրոց—Գ3—Κόρνη, Corne (Ptol. V, 6, 24), պիտի գտնվեր Եփրատի աջ ափին, Շիրեմոյ գետի (ռուսական քարտեզներում՝ Ширемой) խառնուրդի մոտ։

Կուառս աւան—Գ4—այժմյան Կիրավի գյուղ՝ Մշո դաշտում։

Կուգրաթ գեւղաքաղաք—Բ6—այժմյան Կաճրեթի գյուղը Կախեթում։

Կուկուսա, տե՛ս Կոկիսոն քաղաք։

Կուղանովիտ գաւառ—Գ5—պետք է ենթադրել, որ հնագույն ձևն է *Կուղխանովիտ, որի հետ կապվում է Պտղոմեոսի մոտ այս տեղերում հիշվող Κολχίς վայրը։ Կուղանովիտը Վասպուրականի 6-րդ գավառն է՝ 370 կմ² տարածությամբ. գրավում էր Կուղան գետակի (այժմ՝ Կելան-դարասի) ձորը։

Կուղան գետ—Գ5—այժմ Կելան-դարասի։

Կումայրի ամրոց—Բ5—հետագայում Գյումրի և Գումբրի, այժմ՝ Լենինական քաղաք։

Կուռաքսի որ է Ագռաւ գետ—Ա5—առաջացել է հուն. Κόραξ ποταμός (Ptol. V, 8, 14), որ թարգմանաբար նշանակում է Ագռաւ գետ. պիտի լինի այժմյան Բզիբի գետը։

Կ[ու]ռաքս լեառն—Ա4—Κόραξ ὄρος, Corax mons (Ptol. V, 8, 8,), այժմ՝ Բզիբի լեռնաշղթա։

Կուտեմռան, տե՛ս Քղիմար (Կուտեմռան) քաղաք։

Կուր գետ—Բ5—Գ8—վրաց. მტკვარი Մտկուարի, անտիկ հեղինակների Cyrus-ը։

Կռնի բերդ—Գ5—Դեգիք գավառում, ենթադրաբար զետեղում ենք այժմյան Քարասարի տեղում։

Կսանի գետ—Ա6—այժմ՝ Քսանի գետ։

Կսնիս-խեւ—(վկայված է աղճատված ձևերով՝ Խառնիս-խեւ, Կանիսխ)—Ա6—վրաց. კსნის ხევი, ქსნის ხევი Կսնիս խեւի, Քսնիս խեւի. գրավում էր Քսանի գետի միջին հոսանքի ձորահովիտը։ Այս գավառը մտնում էր Վերին աշխարհ Վրաց երկրամասի կազմում՝ ունենալով շուրջ 300 կմ² տարածություն։ Քսանի գետի ստորին հոսանքի շրջանը կազմում էր առանձին գավառ Մուխնարի (მოხნარი, მუხნარი) անունով, այժմ՝ Մուխրանի հովիտ։ Բալազորին այս գավառը կոչում է Քսովրիս, որի անունով այժմ էլ գյուղ գոյություն ունի։ Այս գավառը «Աշխարհացոյց»-ը չի հիշում և համարվում է Բազալեթ գավառի կազմում (տես)։

Կրիակունք գյուղ—Բ5—Կող գավառում, Կուր գետի ակունքների շրջանում։

Կրերեաց լեռնանցք—Դ5—Կալումերիկ-դաղ լեռան (2250) արևմտյան փեշերին գտնվող լեռնանցքը, որտեղով անցնում է Ջուլամերկից դեպի Նորդուզ (այժմ՝ Մամուրեթյուրեսաթ) տանող ճանապարհը։ Կրերեաց լեռնանցքը գտնվել է Թովմա Արծրունու (III, ԻԹ, էջ 260) մոտ հիշվող Կրերեաց գավառում, որ համապատասխանում է ասուրա-բաբելական արձանագրությունների Kirruri երկրին և համապատասխանում է «Պատմութիւն սրբոյ Հռիփսիմեանց» վարքի «Բերկրացւոց գաւառ»-ին (ճիշտ ընթերցումը պիտի լինի՝ Բերկր[երե]ացւոց գաւառ)։ Կրերեաց—Կիրրուրի գավառը տեղադրվում է Լեվին-սու գետի հովտում։

Կրիս-խեւ (մեզ հասել է Կրիզխ աղճատված ձևով), կարող էր լինել [Մտ]կ[ու]րիս խեւ—Բ6—վրացերեն պիտի լիներ მტკვრის ხევი Մտկուրիս-խեւի, որ չի վկայված։ Այս գավառը Վերին աշխարհ Վրաց երկրամասի կազմումն էր մտնում և ընդհանուր տարածությունն էր 550 կմ²։ Այս գավառը պիտի լիներ Վրաց աշխարհի մայրաքաղաք Մցխեթա-Արմազի քաղաքային տերիտորիան։ Քարտեզի վրա ցույց է տված [Մտ]կուրիս խեւ ձևով։

Կրճունիք գաւառ—Գ6—հնագույն ձևն է՝ *Կորտիճունիք, Վասպուրականի 21-րդ գավառը՝ շուրջ 800 կմ² տարածությամբ. գտնվում էր Կոտոր գետի ակունքների շրջանում։ Այս գավառի անունը պահպանվել է Նախահեղափոխական շրջանի ռուսական քարտեզներում հիշատակվող Гюрджевик և Курджан գյուղերի անուններում։

Հ

Հաբանդ գավառ—Գ7—Սյունիքի 8-րդ գավառը՝ 1325 կմ² տարածությամբ. համապատասխանում է այժմյան Գորիսի շրջանին։

Հաբանդ գաւառ—Բ8—պիտի տարբերել Սյունիքի Հաբանդ և Արցախի Մեւս Հաբանդ գավառներից։ Այս գավառը հիշատակում է միայն Վարդան պատմիչը։ Պիտի գտնվեր Շամախի քաղաքի շրջանում, որտեղ այժմ գտնվում է Մարազի գյուղը, որ հնագույն Ամարաս անունից պիտի առաջ եկած լինի։ Այստեղ էր Սաղքաւ կրոնական կենտրոնը, հետագայում՝ Սաղիանու վանք անունով հայտնի։ Ըստ այսմ, Հաբանդ գավառը մտնում էր Բազկան երկրամասում։

Հաբանդ Մեւս, տես Մեւս Հաբանդ։

Հադամակերտ աւան—Գ5—այժմ Բաշ-կալե. Արծրունի նախարարական տոհմի ոստանն էր։

Հալիս գետ—Բ1—Գ2—այժս Ղըզըլ-Ըրմաղ գետը, որի վերին հոսանքը գտնվում էր Փոքր Հայքում։ Խեթական ժամանակաշրջանում կոչվում էր Մարաստանտիա։

Հայոց ձոր գետ—Գ5—այժմ կոչվում է՝ ըստ ռուսերեն հրատարակված տաճկական քարտեզի՝ Хавасур-Нахрияси—այսպես էր կոչվում Խոշաբ գետի միջին և ստորին հոսանքը։

Հայք ամրոց—Գ5—այժմ Խեք գյուղ Հայոց ձորում։ Ավանդությունը այս տեղի հետ է կապում հայ ժողովրդի առասպելական նախահայր Հայկի գործունեությունը։ Խէք գյուղի մոտ գտնվում է Բել-սար լեռը, որի վրա իբր թե տեղի է ունեցել մենամարտը Հայկի և Բելի միջև։ Տես Հայոց ձոր։

Հայոց ձոր երկրամաս—Գ5—այսպես էր կոչվում Հայոց ձորի հովիտը, որը ընդգրկում էր Երուանդունիք, Արտաշիսեան (կամ Արտաւանեան) և Գուկանք գավառները։ Կենտրոնն էր Հայք ամրոցը, որի անունով, ըստ երևույթին, հայերի կողմից կոչվեց ամբողջ Հայաստանը Ուրարտուի պետության անկումից հետո։

Համարա ամրոց—Գ3—ասուրա-բաբելական արձանագրությունների Amurru, բյուզ. ʼΑμαρα, այժմյան Ամբարչիկ գյուղը։

Համբասի գաւառ—Բ8—այս գավառը ենթադրաբար տեղադրվում է Գարդման-չայ և Կոկիսոն (Գեոք-չայ) գետերի ակունքների շրջանում։ Ընդհանուր տարածությունը պիտի լիներ մոտավորապես 700 կմ²։

Հանի գավառ—Գ8—Փայտակարանի 5-րդ գավառը, 1620 կմ² տարածությամբ, այժմյան Թալիշում՝ Աստարա և Աղան-ռոտ (այժմ՝ Ալանիա-չայ) գետերի միջև։

Հաշտասար լեառն, տե՛ս Յաշտասար։

Հաշտեանք գաւառ—Գ4—հնագույն ձևը պիտի լիներ *Յաշտեանք, հուն. ʼΑσθιανηνή. Չորրորդ Հայքի 2-րդ գավառն էր՝ 3750 կմ² տարածությամբ։ Այս գավառը ընդգրկում էր Արածանիի հովտի այն մասը, որտեղ թափվում էր Գինեկ գետը (այժմ՝ Գինեկ-սու), ներառյալ Հայկական Տավրոսի հարավային փեշերին գտնվող Արևմտյան Տիգրիսի արևելյան ակունքների շրջանը իր հոչակավոր լեռնանցքով։ Այս գավառը ուներ կարևոր ռազմաստրատեգիական նշանակություն և մինչև 387 թ. կազմում էր արքունի տան սեփականությունը։

Հարճլանք գաւառ—Գ7—արաբական աղբյուրներում Խերխիլյան. Արցախի 6-րդ գավառն էր՝ շուրջ 325 կմ² տարածությամբ, գրավում էր Քյոնդալան-չայ գետի հարավային եզրի տարածությունը։

Հարք գաւառ—Գ5—բյուզ. Χαρκά, արաբ. Al-Hark, Տուրուբերան նահանգի 9-րդ գավառը՝ 2245 կմ² տարածությամբ. համապատասխանում է այժմյան Բուլանըխ շրջանին։

Հացիւն գյուղ—Գ6—այժմյան Հայսուն գյուղը Արտազում։

Հաւռեանք աւան—Գ4—այժմ Ավրան գյուղ Մշո դաշտում։

Հաւնունիք գաւառ—Գ3—Այրարատ նահանգի 4-րդ գավառը, շուրջ 1400 կմ² տարածությամբ, ուներ համանուն Հաւնիկ (*Յաւնիկ կամ Ավնիկ) ավանը և բերդը։ Հաւնունիք անունը պիտի կապ ունենա Դիոդորոս Սիկիլիացու մոտ հիշվող Χαοί ցեղի անվան հետ, որ պիտի նույն «խայ» կամ «ճայ» էթնիկական անունը լինի (հմմտ. ճայր—ճաւ, իբրև «ճախնիք» և հայ—ճայոց—ճաւուց)։ Հայտնի էր Հաւնունի նախարարական տոհմը։

Հացեկ կամ Հացեկաց գիւղ—Գ4—այժմ Հացիկ, Մեսրոպ Մաշտոցի (361—440) ծննդավայրը։

Հենմատակք ագգագաւառ—Ա7—տեղադրում ենք ենթադրաբար Դերբենդից հյուսիս։

Հեջերի գաւառ—Բ7—անունը պահպանել է այժմ Ուջարի անունով հայտնի երկաթուղային կայարանը։ Այս գավառը գրավում էր Շիրվանի տափարակի հիմնական մասը, 4900 կմ² տարածությամբ։ Հավանաբար, այս գավառը կոչվել է նաև Դաշտ ի Բազկան (տես)։

Հերակլայ հրուանդան, տես Հրուանդան Հերակլայ։

Հերակլուպաւլիս աւան—Բ2—ʼΗρακλειούπολις, Πηδαχθοή, տեղադրվում է այժմյան Բուղուշտուն գյուղի տեղը։

Հերապաւլիս աւան—Գ5—Ծոփք Շահունի գավառում. Ծոփաց աշխարհի հնագույն կենտրոնն է, թերևս ուրարտական արձանագրություններում իբրև բնակավայր հիշվող «Ծուպանի» վայրն է։

Հերապաւլիս քաղաք (Մամբուկ, Մաբուկ)—Դ2—Ասորիքի խոշորագույն կենտրոններից մեկը, հայտնի իր մեհյանով։ Այժմ Մեմբիճ։

Հէր գաւառ—Գ6—Պարսկահայքի 9-րդ գավառը՝ 1125 կմ² տարածությամբ, Հէր քաղաքի (այժմ Խոյ) քաղաքային տերիտորիան պիտի լիներ։ Միջին դարերում Հէր և Զարաւանդ գավառները կազմում էին մեկ գաւառ՝ Ռոտկաց գաւառ անունով։

Հէր քաղաք—Գ6—այժմ՝ Խոյ. ուրարտական ժամանակաշրջանում այս քաղաքի տեղում պիտի գտնվեր Սարգոն Բ-ի արձանագրություններում հիշված Ulḫu քաղաքը (հայերեն՝ «Ուղխ»)։ Դարեհ Ա-ի Բիսիթունի արձանագրության մեջ հիշվում է էլամական վերսիայում՝ Hujâwa, որ Խոյ քաղաքի արաբական անվան՝ Huweja ձևին է մոտենում։ Ըստ Մարկվարտի՝ հայերեն «Հէր» և «Խէր» ձևերը առաջացել են մեդական Hêδ կամ Xeδ ձևից։ Հէր քաղաքի դաշտավայրը կոչվում էր «Խէրական դաշտ»։

Հէրան կամ Իրան—Բ8—արաբ. Էլ-Իրան և աղճատված Լիրան։ Տե՛ս Բազկան։

Հիսպա աւան—Գ3—Hispa (Tab. Peut.) կայարանը Zimara-Melentenis (Melitene) ճանապարհի վրա, այժմյան Սարաչիկ գյուղի տեղում (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, стр. 80)։

Հոռեբերդ—Գ3—այժմ Խարբերդ, Խարփութ քաղաք, անտիկ Ziata, արաբ. Hisn Ziad։

Հունարակերտ ամրոց և քաղաք—Բ6—Խունան կամ Քունանակերտ, վրաց. ხუნანი Խունանի և მტკურისციხე Մտկուրիս-ցիխե. կոչվել է նաև ხანციხე Խանցիխե, որ չի ավանդված։ Խան-ցիխե առաջացել է Խան գետի անունից, որ պահպանել է Սարաբոնը՝ Χάνης, հավանաբար հետագա Քցիա (Խրամ), որի գետաբերանի մոտ, այժմյան Ղզզլալլի և «Կոտրած կամուրջի» մոտ՝ գտնվում էր հիշյալ ամրոցը։ Հունարակերտը գտնվում էր Մեծ Հայքի, Վիրքի և Աղվանքի սահմանների հատման կետում։

Հունարակերտը եպիսկոպոսանիստ էր, որի հոգևոր պետը մասնակցել է Դվինի 502 թ. հակաքաղկեդոնական ժողովին։

Հուր, տե՛ս Քաջաց-քաղաք։

Հրազդան գետ—Բ6—այժմ էլ նույն անունով։ ուրարտական արձանագրություններում հիշատակվում է Ildaruni ձևով։

Հրաքոտ-Պերոժ գաւառ—Բ7—Փայտակարան նահանգի 1-ին գավառը՝ 3650 կմ² տարածությամբ գրավում էր այժմյան Միլի դաշտը, և Փայտակարան քաղաքի քաղաքային տերիտորիան պիտի լիներ։ Այս գավառը կոչվել է նաև Ռոտբստակ։

Հրուանդան Հերակլայ—Բ4—այժմ Էրեգլի-Բուրուն։

Հրուանդան Յասովնի—Բ2—այժմ Յասուն-Բուրուն։

Ձ

Ձել[է]թ գաւառ—Բ6—վրաց. ძელეთი Ձելեթի, կոչվել է նաև სკუირეთი Սկուիրեթի (հայերեն Սակուրեթ, տե՛ս Ասողիկ, III, ԻԸ, այստեղ գտնվող Սակուրեթ բերդը 986 թ. Սմբատ Բ Տիեզերակալի ավատն էր)։ Այս գավառը ընդգրկում էր Սկվիրեթիս-Վերե (այժմ՝ Վերա) գետի հովիտը, որի գետաբերանում, Թբիլիսիի այժմյան տերիտորիայի վրա, Լուրջ մոնաստերի տեղում գտնվում էր Ձելեթի ամրոցը, որը Պտղոմեոսի մոտ (V, 10, 2) հիշվող Ζάλισσα-ն պիտի լինի[1]։ Այս գավառի տերիտորիան 250 կմ² էր։

Ձիթաճանից սար լեռ—Բ6—ըստ երևույթին, այսպես էր կոչվում ձիթահանքի համար լավագույն քար արտադրելու պատճառով։ Պիտի լինի Մեծ Մայմեխը (3082)։

Ձիւնկերտ քաղաք—Գ4—կոչվում էր նաև Պորպես, այժմ՝ Խարաբա-Բարբաս, Բոհտան գետակի հովտում։

Ձորագետ—Բ6—այժմյան Դեբեդը։ Այժմ սխալմամբ Ձորագետ են կոչում Տաշրայ ջուր գետը։

Ձորապահակ (Տաւրոյ բերան) լեռնանցք—Գ4—բյուզ. Κλεισοῦρα Βαλαλείσων, այժմ Բիթլիսի կամ Ռահվա լեռնանցք, Բաղեշից հյուսիս։ Հայկական Տավրոսի գլխավոր անցքերից մեկը, որի անունով, ըստ երևույթին, կոչվել է մի ամբողջ նահանգ՝ Տաւրուբերան։

Ձոր ընծայից, տե՛ս Անձախի ձոր գաւառ։

Ձորոփոր գաւառ—Բ6—Ձորագետի (այժմ Դեբեդ) խորաձորի հովիտը 475 կմ² տարածությամբ. ընդգրկում էր այժմյան Ալավերդու շրջանի մեծ մասը։ 387 թ. մտնում էր Վրաց աշխարհի կազմում մինչև IX դ.։ Ձորափոր գավառը Գուգարաց բդեշխության 1-ին գավառն

[1] Տե՛ս С. Н. Какабадзе, К истории названия города Тифлиса, „Исторический сборник", изд. Центрархива Грузии, кн. 2, Тифлис. 1928, стр. 60—67.

էր: Այս գավառը միջին դարերում կոչվում էր Զորագետ, վրաց. ძოროკეტი Զորոկերտի:

Զորք գաւառ—Գ7—Սյունիքի 10-րդ գավառը՝ 525 կմ² տարածությամբ. գրավում էր Ողջի գետի ակունքների շրջանը:

Ղ

Ղազիւ, տե՛ս Ղազիւիկէ:

Ղազիւիկէ, տե՛ս Լազիւիկէ:

Ղեկք ազգագաւառ—Բ7, այժմյան լեզգիների բնակության հիմնական տերիտորիան:

Ճ

Ճակատք գաւառ—Գ5—Այրարատ նահանգի 11-րդ գավառն էր՝ շուրջ 825 կմ² տարածությամբ: Գտնվում էր Վարդամարգ և Ագարակ վտակների հովտում: Կենտրոնն էր Կողբ աւանը, հայտնի իր աղահանքերով:

Ճակք—Բ5—Տայքի 4-րդ գավառը, վրաց. ჭაკეთი, ჯავნი Ճակիէթի, Ջաղնի, գտնվում էր Բոխա գետի (այժմ՝ Օլթի-չայ) և Ճորոխ գետի եռանկյունում: Այս գավառումն էին գտնվում Մամիկոնյան նախարարական տան կենտրոնները Էրախանի, Տայոց-քար ամրոցները և Իշխանաց գյուղը: Ճակք գավառի տարածությունն էր 1172 կմ²: Հետագայում այս գավառը կոչվում էր Իշխանանիստ ձոր:

Ճահուկ ամրոց—Գ6—այժմ Ջահրի գյուղ:

Ճահուկ ամրոց. տե՛ս Ագարակ (Ճահուկ) ամրոցը:

Ճահուկ գաւառ—Դ5—Կորճեից նահանգի 10-րդ գավառը՝ 2450 կմ² տարածությամբ, գտնվում էր Զավ գետի վերին հոսանքում, այժմյան Ջուլամերկի շրջանում: Այստեղ հայտնի էր Ջլմար ամրոցը (այժմ Ջուլամերկ):

Ճահուկ գաւառ—Գ6—Ճահուկ (այժմ՝ Ջահրի) և Շահապոնս (այժմ՝ Շահբուզ) գետերի հովիտների շրջանը: Սյունիքի 2-րդ գավառը՝ 1130 կմ² տարածությամբ:

Ճահուկ գետ—Գ6—այժմ՝ Ջահրի-չայ:

Ճանիւ (խաղտիք)—Բ4—կա և Ճանիկ ձևը, Ճանիւկ (*Ճանիւիկէ), որ գալիս է հուն. Σανυκή-ից, վրաց. ჭანეთი Ճանէթի, այժմ Լազիստան:

Ճիղբք ազգագաւառ—Ա6—հուն. Σιλβιοί, լատ. Silvii: Այս ցեղի տերիտորիան գտնվում էր Պիրիքիթելի-Ալազանի խորաձորում (տե՛ս Записки Ин-та востоковед. АН СССР, вып. VII, М.—Л., 1939, стр. 148—149).

Ճորայ պահակ, տե՛ս Ձողայ քաղաք:

Ճորոխ գետ, տե՛ս Ակամսիս:

Ճուարշ-ռոտ (Ճուաշ-ռոտ) գաւառ—Գ6—Վասպուրականի 20-րդ գավառը՝ 3650 կմ²., գրավում էր Ճուարշ-ռոտ (այժմ՝ Աղ-չայ) գետի ընդարձակ հովիտը:

Ճուարշ-ռոտ գետ—Գ6—այժմ՝ Աղ-չայ գետ:

Մ

Մաբուկ կամ Մամբուկ, տե՛ս Հերապաւլիս քաղաք:

Մագնուպաւլիս, տե՛ս Եւպատորիա քաղաք:

Մազազ գաւառ—Բ6—Այրարատ նահանգի 17-րդ գավառն էր, այժմյան Հրազդանի և Սևանի շրջանների այն մասը, որը պարփակված էր Հրազդան գետի և Գեղմաղան (այժմ՝ Աղմաղան) հրաբխային զանգվածի միջև: Ընդհանուր տարածությունն էր 680 կմ²:

Մազքութք ազգագաւառ—Բ8—արաբ. Մասքաթ, հետագայում՝ Մուսկուր, Մուշկուր. այսպես էր կոչվում Զողա երկրի ծովեզրյա մասը, որ Մազքթաց Արշակունիների թագավորության կենտրոնական երկրամասն էր: Մազքութները պատկանում էին սկյութա-սարմատական-իրանական ցեղերի խմբին:

Մազքութք բնակավայր—Բ8—արաբ. Մասքաթ, այժմ Մախսուդ-քենդ գյուղը՝ Ադրբեջանական ՍՍՌ Խուդաթի շրջանում:

Մաժակ, տե՛ս Կեսարիա Կապադովկիոյ:

Մաժանկերտ բերդ—Բ5—այժմ Մժնկերտ գյուղ:

Մակու բերդ—Գ6—այժմ էլ նույն անունով՝ Արտազ գավառի կենտրոնն էր:

Մահարձ—գետ—Դ6—այժմ՝ Մարջան-սու:

Մահկերտ-տուն (Մարձին) գաւառ—Դ6—այժմ Ռեվանդուզ, Մեծ Հայքի ամենահարավային ծայրամասը, որի արևելյան սահմանին գտնվում էր Zintha սահմանամերձ պարսկական ամրոցը: Մահկերտ-տունը կոչվում էր նաև Մարձին և գտնվում էր այժմյան Ռեվանդուզից հյուսիս, ունենալով 2002 կմ² տարածություն: Մինչև 363 թ. մտնում էր Նոր-Շիրականի բդեշխության կազմում:

Մաղխազան աւան—Գ6—այժմ Մահլա գյուղ Հեր (Խոյ) քաղաքի մոտ: Հեր քաղաքի վերակացու—«շահապի». մաղխազի իրավասության ներքո գտնվող վայր էր, ուստի կոչվում էր Մաղխազան:

Մանազկերտ, տե՛ս Մանաւազակերտ քաղաք:

Մանակերտ ցամաքակղզի, քարտեզի վրա չի նշված, տե՛ս Բանն Մանակերտի:

Մանանաղի գաւառ—Գ4—Բարձր Հայքի 5-րդ գավառը: Ուշ շրջանում կոչվել է Լակզոյ ձոր ապա Վերին Դերջան, այժմ Տուզլու: Գավառի ընդհանուր տարածությունն է՝ 2775 կմ²: Այս գավառում հայտնի էր Վժան քաղաքը: Միջին դարերում այս գավառը հայտնի էր իբրև պավլիկյանների կենտրոն:

Մանանաղի գետ—Գ4—այժմ Թուզլու-չայ:

Մանաւազակերտ քաղաք—Գ5—հետագայում կոչվում էր Մանազկերտ: Ուրարտական արձանագրություններում հիշվում է Menizaiani ձևով: Բյուզանդական աղբյուրներում կոչվում է՝ Μαντζικίερτε, այժմ՝ Մելազգերդ:

Մանգլեաց Սուրբ Խաչ—Բ6—այսպես էր հայտնի Հայաստանում Մանգլիս ավանը իր հռչակավոր Սուրբ Խաչ տաճարի պատճառով: Այստեղ էր նստում «Մանգլէլի» տիտղոսը կրող եպիսկոպոսը («Գիրք Թղթոցը» կոչում է «Մանգղեաց»), որը մասնակցել է 506 թ. Վաղարշապատի հակաքաղկեդոնական ժողովին: Մանգլիսը հայերեն Անգլ—Անգղ անվան վրացական ձևն է:

Մանգլեաց փոր գաւառ—Բ6—վրաց. მანგლისის ხევი Մանգլիսիս-խեվի, Գուգարաց բդեշխության 14-րդ գավառը Ալ գետի (Ալգէթի) ձորահովտում, 925 կմ² տարածությամբ: Հավանաբար, 363 թ. հետո, անջատվելով Գուգարքից միացվել է Վրաց աշխարհին:

Մանդա գիւղ—Գ1—բյուզ. Μάνδα կամ 'Αραγένα, այժմ՝ Ագրնաս գյուղը:

Մանռիլք—Ա5—երկրանուն՝ Μάνραλοι, Manrali (Ptol. V, 9, 4): Թերևս այս անունը պահպանվել է Մարելիսի գյուղի անվան մեջ: «Աշխարհացոյց»-ի հեղինակը այս անունը վերցրել է Պտղոմեոսից, սակայն իրեն համար պարզ չէ, թե իր ժամանակվա որ երկրամասին է համապատասխանում: Մենք քարտեզի վրա նշում ենք ենթադրաբար:

Մասեաց ոտն գաւառ—Գ6—Այրարատ նահանգի 12-րդ գավառը, գրավում էր Մեծ և Փոքր Մասիս գագաթների հյուսիսային ու արևելյան փեշերը՝ Սուրմալուի դաշտը՝ 2800 կմ² տարածությամբ. համապատասխանում էր Ուրարտական ժամանակաշրջանի Էրիկուախի կամ Իրկուա երկրին:

Մասիս լեառն, տե՛ս Փոքր Մասիս լեառն:

Մասիոն լերինք—Դ4—հուն. Μάσιος, կամ ''Ιζαλα ὄρος=Μάσιον ὄρος, Masius mons (Ptol. V, 17, 2), ասուրա-բաբելական աղբյուրների Kaššiari լեռները: Ասորիները կոչում էին tūrā de Sala.

Մարակերտ աւան—Գ6—այժմյան Մարաքենդ գյուղը:

Մաւրիկապաւլիս (Շիրակաշատ) աւան—Բ5—այժմ Մավրակ գյուղ: Այսպես է կոչվել Շիրակաշատ ավանն ի պատիվ Մավրիկիոս կայսեր (578—602): Հավանաբար, 591 թվականից հետո Թեոդոսուպոլիս-Կարինից փոխադրվեց այստեղ բյուզանդական ռազմական կենտրոնը, որը հսկում էր Հայաստանին ու Վրաց աշխարհին:

Մարանդ գաւառ—տե՛ս Բաքրան (Մարանդ) գաւառ:

Մարանդ գետ—Գ6—այժմ Զիլբիր-չայ:

Մարանդ քաղաք—Գ6—այժմ էլ նույն անունով:

Մարաշ քաղաք, տե՛ս Գերմանիկէ (Մարաշ):

Մարաւան աւան—Գ6—ըստ երևույթին, պետք փնտրել այժմյան Նորաշենի տեղում:

Մարաց ամուր աշխարհ—այսպես պիտի կոչվեր Նիխորական, Մահկերտ-տուն և Դասն գավառների տերիտորիան 7327 կմ² ընդհանուր տարածությամբ: Քարտեզի վրա չի նշված:

Մարդաստան գաւառ—Գ6—Սևբեոսի մոտ կոչվում է Մարդուցայք, Վասպուրականի 14-րդ գավառն է՝ 1265 կմ² տարածությամբ: Գտնվում էր Մակու քաղաքից դեպի արևմուտք, Վասպուրականի (Կոտուրի) լեռների արևելյան փեշերին:

Մարդաղի գաւառ—Գ4—Տուրուբերան նահանգի 5-րդ գավառը, այժմ՝ Թեքման, շուրջ 2900 կմ² տարածությամբ: Այստեղից՝ Սերմանց (Բյուրակն) լեռան հյուսիս-արևմտյան փեշերից, սկիզբ էր առնում Եգր (այժմ՝ Էգրի-չայ) գետը, որ Երասխ գետի սկիզբն էր: Ըստ երևույթին՝ Մարդաղի անունը առաջացել է «Մարդ» ցեղի անունից, իսկ «աղի» վերջավորությունը պիտի ծագած լինի ուրարտական alḫi «աղխի» բառից:

Մարդէ բերդ—Դ4—այժմ Մարդին քաղաք:

Մարդուցայք, տե՛ս Մարդաստան գաւառ:

Մարի գաւառ—Դ6—Պարսկահայքի 2-րդ գավառը՝ 1855 կմ² տարածությամբ, այժմ Մերգեվեռ՝ Բարանդուզ-չայ հովտում: Այս գավառումն էր Շիրական գյուղը (տե՛ս):

Մարի գետ—Դ6—այժմ՝ Բարանդուզ-չայ:

Մարմետ գետ—Գ5—այժմ՝ Կարա-սու:

Մարտիրուպաւլիս քաղաք, տե՛ս Նփռետ կամ Նփրկերտ քաղաք:

Մեգալասսու աւան—Բ2—Megalasso(s) (Tab. Peut.)—տեղադրվում է Իռիս գետի ակունքների մոտ:

Մեգաղոս պոտամոս գետ—Բ4—հուն. Μεγάλος ποταμός, այժմ՝ Բյույուք-դերե:

Մեդաց աշխարհ (Մարք)—Դ6—Դ8—ընդարձակ առումով կոչվում էր ամբողջ Ատրպատականը և հին Մարաստանի (Մեդիայի) տերիտորիան:

Մելաս գետ—Գ2—Գ3—Ուրարտական արձանագրությունների Melia գետը, անտիկ շրջանի Melas, այժմ Թոխմա-սու։

Մելիտինե քաղաք—Գ3—ասուրա-բաբելական և ուրարտական աղբյուրների Melidu, Melita քաղաքը, հուն. Μελιτηνή, Melitenae, այժմ Էսքի-Մալաթիա։ Այս քաղաքը միշտ էլ եղել է խոշոր կենտրոն և այդ նշանակությունը շարունակում էր պահպանել նրանից ոչ հեռու միջին դարերում հիմնված Մալաթիա քաղաքը։

Մեծամաւր գետ—Բ6—այժմ Սև ջուր, հնում Մեծամոր գետը հոսում էր երկար տեղ Արաքսին զուգընթաց և նրա մեջն էին թափվում Արարատյան դաշտը ոռոգող հիմնական գետերը՝ Քասաղը, Հրազդանը, Ազատը և թերևս նաև Վեդին։

Մեծ Առանք, կամ Մեծ Իրանք գաւառ—Բ7—Արցախ նահանգի 5-րդ գավառը, արաբական աղբյուրներում՝ «Մեսրան», միջին դարերում կոչվում էր Խաչեն՝ համանուն ամրոցով։ Տեղադրվում է Խաչենագետի վերին հոսանքում և ընդհանուր տարածությունն է շուրջ 550 կմ²։

Մեծ Զաւ (Մեծ Զաբ) գետ—Դ5—այժմ էլ նույն անունով։

Մեծ Կուենք (Մեծ Կուանք) գաւառ—Բ7—Արցախ նահանգի 4-րդ գավառը, արաբ. «Մեսկվան», վրաց. მეწეკევნელნი Մեծեկեվնելնի. տեղադրվում է այժմյան Իջևանի շրջանում՝ շուրջ 975 կմ² տարածությամբ։ Այս գավառում հայտնի էր Լալ ավանը, որը հիշատակում է Պտղոմեոսը (V, 12, 5) Λαλὰ և վրացական աղբյուրները՝ ლალი (այժմ՝ Լալի գյուղ), և Տաղձանք վանքը (այժմ՝ Դեղձնուտ վանքի ավերակներ)։

Մեծ Հայք երկիր—սկզբում, ի տարբերություն Եփրատից այն կողմը գտնվող Փոքր Հայքի թագավորության, Մեծ Հայք էր կոչվում բուն Հայաստանում առաջացած Հայկական թագավորությունը։ Հետագայում, երբ մ. թ. ա. 112 թ. Փոքր Հայքի թագավորությունը վերացվեց, իսկ նրա տերիտորիան միացվեց Պոնտոսի թագավորությանը, Մեծ Հայք անունը մնաց իբրև Արտաշիսյանների (189—1 մ. թ. ա. և խառնակ շրջան 37—62 թթ.) և Արշակունիների (62—387) ժամանակաշրջանների Հայկական կենտրոնացված ստրկատիրական միապետական թագավորության պաշտոնական անունը։ Այս ժամանակաշրջանի հունական և հռոմեական աղբյուրներում Մեծ Հայքի թագավորությունը անվանվում է՝ Μεγάλη 'Αρμενία և Armenia Maior, իսկ V—VII դդ. հայկական աղբյուրներում, որոնք խոսում են Հայոց թագավորության մասին մինչև նրա բաժանումը, միշտ գործ են ածում Մեծ Հայք անունը։ Սրանց հետ նույնանիշ է մ. թ. առաջին դարերի պարթևական արձանագրություններում պատահող Vazurg Armenān հորջորջումը[1]։ 387 թ. հետո, երբ Հայկական թագավորությունը բաժանվեց և Մեծ Հայքը դադարեց գոյություն ունենալ, իբրև միաձույլ պետություն, այս անվան փոխարեն գործ են ածվում Հայք, Armenia տերմինները, իսկ Եփրատից այն կողմը գտնվող հայկական երկիրը շարունակում էր կոչվել Փոքր Հայք 'Αρμενία Μικρά, Armenia Minor։ Սակայն հետագայում ևս տրադիցիայի ուժով երբեմն գործ էր ածվում նաև Մեծ Հայք տերմինը բուն Հայաստանի իմաստով։ Հայկական աղբյուրների այդ հորջորջումը պահպանել են միջնադարյան պատմաբանները արաբերեն և պարսկերեն աղբյուրները՝ Buzurg Armenia ձևով, վրացական დიდი სომხეთი[2] Դիդի Սոմխեթի և նույնիսկ ռուսերեն՝ Арменья Великая[3]։

Մեծ Հայքի տերիտորիան 66 թ. մ. թ. ա. 37 թ. մ. թ. սահմաններում պարունակում է 311206 կմ²։ Մ. թ. ա. 37 թ. Հռոմեական կայսրության և Պարթևական թագավորության միջև կայացած դաշնագրի համաձայն, Մեծ Հայքի տերիտորիայից անջատվեց և կցվեց Պարթևական թագավորության տերիտորիային «Միջագետք Հայոց»-ը՝ Տուռ-Աբդին (Տաւդեք) և Արուաստանի գավառների հետ միասին 27600 կմ² տարածությամբ, որից հետո Մեծ Հայքի տերիտորիան ընդգրկում էր 283606 կմ²։ Այդ սահմաններում Մեծ Հայքի տերիտորիան գոյություն ուներ մինչև 387 թ.։ Քարտեզի վրա Մեծ Հայքը ցույց է տրված 37—387 թթ. սահմաններում։

[1] Այսպես՝ Շապուհ Ա-ի որդի Ներսեհը, որը ավագ եղբոր՝ Որմիզդ-Արտաշիրի Սասանյան Իրանի գահը բարձրանալուց հետո համարվում էր Հայաստանի թագավոր, Պայկուլիի արձանագրության մեջ կրում է Vazurg Armenān sāh, այսինքն՝ «Թագաւոր Հայոց Մեծաց» տիտղոսը։ Տես՝ W. B. Henning. A. Farewell to the Khagan of the Aq-Aqatärän, Bull. of the Brit. School of Oriental and African Studies, vol. XIV, p. 3, 1952, էջ 517, ծան. 4։ Այս տեղեկության համար պարտական եմ Անահիտ Փերիխանյանին։

[2] Քարթլիս Ցխովրեբա (ქართლის ცხოვრება), հրատ. ձեռագրերի համեմատությամբ Սիմոն Ղաուխչիշվիլին, հատ. I, Թբիլիսի, 1955, էջ 337։

[3] Повесть временных лет, под ред. Б. П. Адриановой-Перетц, М.—Л., 1950, стр, 9.

Մեծ Հայքի տերիտորիալ ծավալի մասին մանրամասն տեղեկություններ են պահպանվել սկսած մ. թ. ա. 66 թ. դաշնագրից, երբ պաշտոնապես ճանաչվեցին Մեծ Հայքի քաղաքական սահմանները, մինչև մ. թ. 387 թ., երբ այս պետության տերիտորիան բաժանվեց Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության (395 թ. Արևելյան Հռոմեական կամ Բյուզանդական կայսրության) միջև։ Ստրաբոնը (63 թ. մ. թ. ա.—21 թ. մ. թ.), որ համարյա ժամանակակից է մ. թ. ա. 66 թվականի դաշնագրին, ունի այնպիսի ստույգ աղբյուր, ինչպիսին է Պոմպեոսի մ. թ. ա. 66—65 թթ. Հայաստանում և Անդրկովկասում կատարված արշավանքի մասնակից Թեոփանես Միտիլենացու տեղեկությունները։ Ստրաբոնը լավ պատկերացում ունի մ. թ. ա. 66 թ. դաշնագրով վավերացված Մեծ Հայքի պետության սահմանների մասին։ Մեծ Հայքի սահմանները, ըստ Ստրաբոնի, հյուսիսում սկսվում էին արևմտյան ծայրամասում գտնվող Դաստեյրա (Δάστειρα) ամրոցից (XII, 3, 38) (տե՛ս Դաստեյրա, Դաստաբակ) դեպի արևելք Սկյուդիսես (Σκυδίσης) լեռներով (այժմ Սուրբ Գրիգոր կամ Սիպկորդաղ), որոնք Ակիլիսենե (տե՛ս Եկեղեաց գավառ) երկիրը բաժանում էին Փոքր Հայքից (XI, 14, 1)։ Սահմանը այնուհետև շարունակվում էր Պարիադրես (Պոնտական) լեռներով և նրա շարունակությունը կազմող՝ Մոսխիկայի լեռներով (վրաց. Մեսխեթի լեռներ, այժմ՝ Կարչխալի և Անճարայի լեռները, XI, 14, 1)։ Այնուհետև Մեծ Հայքը սահմանակից է Իբերիային (Վիրք)՝ Խորձենե (Մոսխիկայի այն մասը, որը մտնում էր Մեծ Հայքի սահմաններում, XI, 11, 18) և Գոգարենե (տե՛ս Գուգարք) երկրամասերով (XI, 14, 5), ներառյալ Կամբիսենեի այն մասը, որը մտնում էր Մեծ Հայքի կազմում (XI, 4, 1) և պիտի կոչվեր Կոմիսենե (XI, 14, 4) (նկատի ունի «Վրաց դաշտի» կամ Քվեմո-Քարթլիի դաշտավայրը)։ Կամբիսենեի հայկական մասը—Կոմիսենեն, Կուր գետով բաժանվում էր Իբերիայի (Վիրքի) և Ալբանիայի (Աղվանքի) կազմում մտնող այս երկրի մասերից։ Ապա սահմանագիծը անցնում էր Կուր գետով, մինչև նրա Կասպից ծովը թափվելը (XI, 3, 2), թողնելով Մեծ Հայքի կազմում Կուր գետի ամբողջ աջափնյա տարածությունը Սակասենե (Σακασηνή, II, 11, 14; XI, 8, 4; XI, 14, 4) (տե՛ս Շակաշեն) և Ուտիա (Οὐιτια, XI, 14, 14) (տե՛ս Ուտիք Առանձնակ) երկրամասերով։ Կուրի գետաբերանից հարավ ձգվող Կասպից ծովի ափերը, մինչև այն մասը, որտեղ Պարախոաթրաս (այժմ Թալիշի և Գիլանի լեռնաշղթան) մոտենում է ծովափին (մոտավորապես՝ այժմյան Աստարայի մոտ), Կասպիանե երկրի (Κασπιανή—Կազբք, տե՛ս Փայտակարան նահանգ) արևելյան սահմանն էր, իսկ Կասպիանեն Մեծ Հայքի սահմաններումն էր։ Մի այլ տեղ (XI, 7, 1) Ստրաբոնը հաղորդում է, որ Կասպից ծովի ափերին ալբաններից (աղվաններից) հետո ապրում են արմենները (հայերը), որ ասել է թե ծովափի այդ մասը մտնում է (գոնե քաղաքականապես) Մեծ Հայքի սահմաններում։ Այժմյան Աստարայի մոտերքից սկսվում էին Մեծ Հայքի հարավային սահմանները։ Լինելով միևնույն ժամանակ Կասպիանե երկրի սահմանը, Պարախոաթրաս լեռները այս մասում կոչվում էին Կասպից լեռներ (Κασπίων ὄρη), իսկ նրա միջով անցնող լեռնանցքը՝ Կասպից դռներ (Κάσπιαι πύλαι, տես Կասպիական դրունք)[1], որոնցից հարավ ապրում էին կադուսիները (Καδούσιοι, XI, 7, 1; XI, 13, 3—4)։ Այնուհետև սահմանագիծը անցնում էր Հայկական լեռներով ('Αρμενίων ὄρη, այժմ Ղարա-դաղ)[2], որից հարավ գտնվում էր Ատրոպատյան Մարաստանը ('Ατροπατίαν Μηδίαν, XI, 5, 6) կամ Ատրոպատենեն ('Ατροπατηνή, XI, 13, 1—3, տես՝ Ատրպատական)։

Մեծ Հայքին հարավ-արևելքից սահմանակից էր Կապուտան լիճը (Κ[α]παῦταν կամ Μαντιανή, XI, 13 2) և նրա մոտ գտնվող Սիգրիակե (Συγριακή մեզ հասել է Συμβάκη, աղճատված ձևով, XI, 13, 3), հայ. Նոր-Շի[ք]րական, Նոր-Շիրական, (տե՛ս Պարսկահայք նահանգ), սահմանակից լինելով Մատիենե (Ματιηνή, Ματιανή) երկրին (XI, 13, 7; XI, 14, 13)։ Այնուհետև սահմանագիծը անցնում էր դեպի արևմուտք, թողնելով հարավում Ադիաբենե ('Αδιαβηνή, XI, 14—12; XVI, 1, 8; XVI, 1, 19), իսկ հյուսիսում՝ Մեծ

[1] Կային մի քանի «Կասպից դռներ», ուստի այս «Կասպից դռները» հույն և հռոմեական հեղինակները սովորաբար շփոթում են, հատկապես Ռագայի (միջնադարյան Հռեւ, Ռեյ քաղաքը) մոտ գտնվող «Կասպից դռների» հետ։

[2] 'Αρμενιακῶν καὶ Μηδικῶν ὀρῶν (II, 1, 17); 'Αρμενίων ὄρεσι (XI, 2, 15).

[3] Մարկվարտի ուղղումը 'Αλβάκη սխալ է։ Տես՝ J. Marquart, Eranšähr, S. 109. Συμβακή-ի ճիշտ ընթերցումը պետք է լինի՝ *Συγριακή.

Հայքի կազմում մտնող Կորդվաց երկիրը (Γορδυηνή, XVI, 1, 24—25, տես Կորդուք) և նրա երկրամասերը՝ Տամոնիտիս (Ταμωνῖτις, XI, 14, 5, տե՛ս Թման) և «Երետրիացւոց» ('Ερετριεῖς, XVI, 1, 25, տե՛ս Այրարուանք) երկրները: Սահմանագիծը Միջագետքում անցնում էր Միգդոնիայի (Μυγδονία, XI, 142; XVI, 1, 23, տե՛ս Արուաստան) և «Միջագետք Հայոց»-ի սահմաններով մինչև Եփրատ, որը Մեծ Հայքը բաժանում էր արևմուտքի կողմից Փոքր Հայքից, Կապադովկիայից և Կոմմագենեից:

Ստրաբոնը տալիս է նաև նշված սահմաններում Մեծ Հայքի տերիտորիայի մակերեսի տարածությունը: «Երկրի մեծությունը,—ասում է նա,— Թեոփանես [Միտիլենացին] դնում է լայնքը՝ հարյուր սքոյնոս, իսկ երկարությունը կրկնակի, դնելով մեկ սքոյնոսը 40 ստադիոն»: Ստրաբոնը այս հաշիվներին թերահավատությամբ է վերաբերվում. Նրա կարծիքով «Սա չափազանցությամբ է ասված: Ավելի մոտ է ճշմարտության երկարությունը դնել ինչ որ ասել է լայնության համար, իսկ լայնությունը նրա կեսը կամ մի քիչ ավելի»: Ստադիոնը հունական երկարության չափ է և հավասար է 185 մ (ավելի ճիշտ՝ 184,97 մ), ըստ այսմ մեկ սքոյնոսը տվյալ դեպքում՝ 185×40=7400 մ կամ 74 կմ: Ուրեմն Մեծ Հայքի լայնությունը, այսինքն՝ նրա երկարությունը հյուսիսից հարավ, հավասար է 740,000 մ կամ 740 կմ, իսկ երկարությունը արևմուտքից դեպի արևելք, կրկնակի, այսինքն՝ 1480000 մ կամ 1480 կմ:

Եթե հետևենք Ստրաբոնին, այդ դեպքում երկրի լայնքը պիտի հավասար լինի 50 սքոյնոսին կամ 370 կմ, իսկ երկարությունը 100 սքոյնոս, այսինքն՝ 740 կմ: Երբ մենք չափում ենք քարտեզի վրա, տեսնում ենք, որ Թեոփանես Միտիլենացին ավելի ճիշտ է:

Մեր թվարկության 7 թվականի մոտերքը գրած Պոմպեոս Տրոգոսի «Historiae Philippicae» պատմական երկում (XLII, 2, 8) կարդում ենք, որ «Չի կարելի լռությամբ անցնել այնպիսի մեծ թագավորության մասին (ինչպիսին է Հայաստանը), քանի որ նրա սահմանները, Պարթևաստանից հետո, իր մեծությամբ գերազանցում են բոլոր մյուս թագավորությունների սահմաններին, ընդ որում, Հայաստանը Կապադովկիայից մինչև Կասպից ծովը տասնմեկ հարյուր հազար քայլ տարածություն ունի, իսկ լայնքով, նրա երկարությունն է՝ յոթ հարյուր հազար քայլ» (XLII, 2, 7—9)[1]:

Մեկ քայլը համապատասխանում է հունական ὀργυιά-ին և հռոմեական passus-ին և հավասար է 1,85 մ: Տվյալ դեպքում գործ է ածվում Հռոմեական կայսրության մեջ ընդունված հազար քայլը—mille passus, այն է՝ հռոմեական մղոնը, որը հավասար է 1,5 կմ: Ուրեմն՝ Մեծ Հայքի երկարությունը արևմուտքից դեպի արևելք՝ Եփրատ գետից, որ սահմանագիծ էր Կապադովկիայի կողմից, մինչև Կասպից ծովը հավասար էր 1100000 քայլի կամ 1100 հռոմեական մղոնի, այսինքն՝ 1650 կմ: Լայնությունը, այսինքն՝ հարավից դեպի հյուսիս ձգվող տարածությունը, հավասար էր 700000 քայլի կամ 700 հռոմեական մղոնի, այսինքն՝ 1050 կմ:

Մեր թվարկության I դ. ապրող Պլինիոսը (23—79), անդրադառնալով Մեծ Հայքի սահմաններին, հաղորդում է՝ «Ավֆիդիոսի (Aufidius) կարծիքով ամբողջ Հայաստանի տարածությունը 5000000 քայլ է, Կլավդիոս կայսրը նրա երկարությունը Դասկուսայից մինչև Կասպից ծովի ափը հաշվում է 1300000 քայլ, իսկ լայնությունը՝ (այդ թվի) կեսը, Տիգրանակերտից մինչև Իբերիա»[2]: Ինչպես տեսնում ենք, Պլինիոսը ավելի կոնկրետ տեղեկություններ է հաղորդում Մեծ Հայքի սահմանների մասին: Այդ սահմանագիծը արևմուտքում անցնում էր Եփրատ գետով, որից դեպի արևմուտք գտնվում էր Դասկուսա վայրը (տես), իսկ արևելքում սահմանն էր Կասպից ծովը: Հարավից հյուսիս Մեծ Հայքի տերիտորիան տարածվում էր սկսած Տիգրանակերտից (նկատի ունի Տիգրանակերտի քաղաքային տերիտորիան) մինչև Իբերիա (Վիրք): Պլինիոսի այս տեղեկությունը նկատի ունի Մեծ Հայքի նոր սահմանագիծը հարավում մ. թ. 37 թ. հետո, երբ իբրև սահման որոշվեց Տիգրիս գետը, որից հյուսիս սկսվում

[1] Sed quoniam in Armeniam transitum facimus, origo eius paulo altius repetenda est. Neque enim silentio regnum tantum praeteriti fas est, cum fines post Parthiam omnium regnorum magnitudinem seperent, siquidem Armenia a Cappadocia usque mare Caspium undecies centum milia patet, sed in latitudinem milia pasuum septingenta porrigitur. Justini Epitoma Pomp. Trogi, XLII, 2.

[2] Universae magnitndinem Aufidius quinquagies centena mill. prodidit. Claudis Caesar longitudinem a Dascusa ad confinium Caspii maris, XIII mill. passuum: Latitudinem dimidium ejus, a Tigranocerta ad Iberiam, Plinius, Nat. hi[illegible]., VI, 10.

էր Տիգրանակերտ գավառը (ավելի ուշ՝ Նըփռետ կամ Նփրկերտ, տես): Պլինիոսի մոտ ցույց տված սահմանները ճշտիվ համապատասխանում են Մեծ Հայքի սահմաններին ըստ «Աշխարհացոյց»-ի: Եթե Պլինիոսի մոտ բերված թվական տվյալները Մեծ Հայքի տարածության մասին վերածենք այժմյան չափերի՝ ստացվում է հետևյալը:

Երկարությունը արևմուտքից դեպի արևելք, այսինքն՝ Դասկուսայից մինչև Կասպից ծով, հավասար էր 1300000 քայլ՝ այսինքն 1300 հռոմեական մղոն, որը համապատասխանում է 1950 կիլոմետրին: Լայնությունը՝ հարավից հյուսիս, այսինքն Տիգրանակերտից մինչև Իբերիա (Վիրք)՝ 650000 քայլ կամ 650 հռոմեական մղոն, որ հավասար է 975 կիլոմետրի: Բերված թվերի ճշտությունը ստուգվում է քարտեզով: Մեծ Հայքի լայնությունը Դասկուսայից մինչև Կասպից ծով հավասար է 870 կիլոմետրի, իսկ Տիգրանակերտ գավառից մինչև Իբերիա (Վիրք)՝ 550 կիլոմետր:

Ավելի կոնկրետ տվյալներ է տալիս Մեծ Հայքի սահմանների մասին Պլինիոսից հետո հանդես եկող հռչակավոր Կղավդիոս Պտղոմեոսը: Վերջինս իր «Աշխարհագրական ձեռնարկում», որը հրապարակվել է մ. թ. 150-ական թթ. (V, 12, 1—9), Ասիայի III քարտեզում ցույց է տալիս Մեծ Հայքը 37—387 թթ. սահմաններում:

Ըստ Պտղոմեոսի (Գիրք 5, գլուխ 12, § 1), Մեծ Հայքի սահմանը հյուսիսից կազմում է Կողքիսի մի մասը (նկատի ունի Ճորոխի ներքին հոսանքին գտնվող Եգր «փոքր աշխարհը»), ապա Վիրքը և Աղվանքը՝ Կուր գետով: Արևմուտքից սահմանագիծը անցնում էր Եփրատ գետով, որը բաժանում էր Մեծ Հայքը Կապադովկիայից (այսինքն՝ վերջինիս կազմում մտնող Փոքր Հայքից), ապա Եփրատից հյուսիս-արևելք ձգվող Մոսխական լեռներով, մինչև Կողքիս: Արևելքից Մեծ Հայքի սահմանն էր Վրկանից (Կասպից) ծովի մասը՝ Կուր գետի գետաբերանից մինչև 79°45′—43°20′ վրա գտնվող կետը (մոտավորապես պիտի համապատասխան լինի այժմյան Աստարայի վայրին): Այնուհետև սահմանը անցնում էր հիշյալ կետից դեպի արևմուտք Կասպիական լեռներով, որոնք բաժանում էին Մեծ Հայքը Մեդիայից: Հարավից Մեծ Հայքը սահմանակից էր Միջագետքին, սկսած Եփրատ գետից, Տավրոս լեռներով և Տիգրիս գետով: Ապա սահմանագիծը անցնում էր Նիփատես (Նպատ) լեռներով, բաժանելով Մեծ Հայքը հարավում գտնվող Ասորեստանից, մինչև Կասպիական լեռները:

Ինչպես տեսնում ենք, Պտղոմեոսի տեղեկությունները ավելի ևս համընկնում են «Աշխարհացոյց»-ի տվյալներին: Պտղոմեոսից հետո Մեծ Հայքի տերիտորիայի մասին նույն տվյալներն են տալիս V դարում ապրող հայ պատմիչներ՝ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին, որոնք խոսում են IV դարի Հայաստանի մասին:

Մեծ Հայքը նշված սահմաններում առաջին անգամ պաշտոնապես վավերացվել է մ. թ. ա. 66 թվականին, Տիգրան Բ-ի և հռոմեական զորավար Պոմպեոսի միջև կնքված դաշնագրով: Ըստ այդ դաշնագրի, Մեծ Հայքի պետության տերիտորիան ընդգրկում էր 312.795 կմ^2 տարածություն: Հետագայում Մեծ Հայքի տերիտորիան ենթարկվեց մասնակի փոփոխման: Հռոմեական կայսրության և Պարթևական թագավորության միջև մ. թ. 37 թ. կայացած համաձայնագրի համաձայն Մեծ Հայքից անջատվեց և կցվեց Պարթևների պետության «Միջագետք Հայոց» տերիտորիան (ներառյալ՝ Տուր-Աբդին (Ծաւդեք) և Արուաստան գավառները) 27.600 կմ^2 տարածությամբ Մծբին քաղաքով: Այնուհետև Մեծ Հայքի պետության տերիտորիան ընդգրկում էր 285.195 կմ^2 տարածություն: Հետագայում ամեն անգամ, երբ հարց էր բարձրանում Մեծ Հայքի թագավորության տերիտորիայի մասին, իբրև պաշտոնական հիմք հանդիսանում էր 37 թ. համաձայնագիրը: Վերջին անգամ այն պաշտոնապես ընդունվեց 298 թվականի Մծբինի 40-ամյա դաշնագիրը կնքելու ժամանակ:

III դարի երկրորդ կեսին, Սասանյան Իրանի հզորության ժամանակաշրջանում, խախտվել էր 37 թվականի համաձայնագիրը, սակայն, երբ Սասանյանները պարտվեցին Միջագետքում հռոմեա-հայկական միացյալ ուժերից, 298 թ. Մծբինում կնքված 40-ամյա դաշնագրի համաձայն, նորից ճանաչվեցին պաշտոնապես Մեծ Հայքի թագավորության տերիտորիայի սահմանները ըստ 37 թվականի համաձայնագրի: Այնուհետև այդ սահմանները գոյություն ունեին պաշտոնապես մինչև Մեծ Հայքի տերիտորիայի բաժանումը հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի թագավորության միջև 387 թվականին: Արդեն Մծբինի 40-ամյա դաշնագրի պաշտոնական

ավարտից հետո 338 թվականին, Մեծ Հայքից անջատվեցին ծայրամասերը՝ Մարաց ամուր աշխարհը (Նիխորական, Մահկերտ-տուն և Դասն գավառներով)՝ 7.327 կմ² տարածությամբ։ Մեծ Հայքի տերիտորիան ավելի փոքրացավ 363 թ. Հովիանոսի «ամոթալի» դաշնագրից հետո, երբ անջատվեցին Արցախը և Ուտիքը (տե՛ս Աղվանք) և Գուգարքի հյուսիսային գավառները (տե՛ս Վիրք)։ Այդ փոփոխությունները պաշտոնապես ճանաչվեցին 387 թվականի համաձայնագրով։ Մեծ Հայքից այդ ժամանակ արդեն անջատվել էին ծայրամաս նահանգները 103.857 կմ² տարածությամբ, մնացել էր Միջնաշխարհը 174.011 կմ² տարածությամբ։ Նշված տերիտորիան իր հերթին բաժանվեց երկու մասի։ Արևմտյան մասը՝ 39.650 կմ² տարածությամբ ենթարկվեց Հռոմեական (395 թ.՝ Բյուզանդական) կայսրության, հյուսիսային մասը՝ Բարձր Հայքը մինչև 391 թվականը կառավարվում էր հայ Արշակունիների ձևական իշխանության ներքո, ապա՝ բյուզանդական պաշտոնյաների՝ «կոմես»-ների կողմից։ Հարավային մասը՝ Ծոփաց աշխարհը՝ մնում էր իբրև հինգ նախարարությունների — սատրապությունների միջև բաժանված երկրամաս, մինչև Հուստինիանոս Ա-ի ռեֆորմները VI դարում։ Արևելյան մասը 134.361 կմ² տարածությամբ, որ Հայաստանի հիմնական մասն էր կազմում, մինչև 428 թվականը կառավարվում էր հայ Արշակունիների կողմից, իսկ այս հարստության վերացումից հետո, կառավարվում էր մարզպանների միջոցով։

Այսպիսով դադարեց գոյություն ունենալ Մեծ Հայքը, նրա հետ նաև այդ տերմինի գործածությունը։ Հետագայում «Մեծ Հայք» անունը գործ էր ածվում հազվագյուտ դեպքում բուն Հայաստանի իմաստով։ Չնայած նրան, որ դադարեց Մեծ Հայքը իբրև քաղաքական հասկացություն, շարունակում էր գոյություն ունենալ Մեծ Հայքը իբրև էթնիկական հասկացություն։ Մինչև առաջին իմպերիալիստական պատերազմի տարիները, Մեծ Հայքի տերիտորիայի վրա շարունակում էր իր գոյությունը հայ ժողովուրդը, որը չնայած սիստեմատիկորեն տարվող հալածանքներին ու կոտորածներին, այնուամենայնիվ գերիշխող ազգություն էր։

Մեծնունիք գավառ—Գ5—Վասպուրականի 22-րդ գավառը՝ 475 կմ² տարածությամբ, գրավում էր Մարմետ գետի միջին հոսանքի ձորահովիտը։

Մեծրաց լեռն—Բ5—այժմ՝ Մազրա-դաղ. (2517)։

Մեծագետ—Բ5—այժմ՝ Զըլդըր գետ։

Մեղգետ—Գ4—հետագայում իմաստավորվել է իբրև Մեղրագետ, այժմ՝ Կարա-սու, Քսենոփոնի մոտ հիշվում է Τηλεβόας անունով։

Մեղդի աւան—Գ4—հիշվում է դեռևս ասուրա-բաբելական արձանագրություններում Melidu, Melidia (?) անվամբ և շատ անգամ շփոթվում նույնանուն այլ վայրի՝ խոշոր կենտրոն Մելիտինե-Մալաթիայի հետ։ Այժմ Մեխդի գյուղ։ Այս վայրի անունով ամբողջ Տարաւնը—Մշոյ դաշտը կոչվել է Melidu։

Մեղեդուղխ լերինք—Գ4—Փալանթոքյան-դաղից հարավ գտնվող ջրբաժան լեռնաշղթան։

Մերեթի լեառն—Բ5—այժմ էլ նույն անունով (2372)։

Մեսորոմէ աւան—Բ2—Mesoromae (Tab. Peut.). գտնվում էր Իռիս գետի ակունքների շրջանում։

Մետիտա ամրոց—Գ3—Μέτειτα, Metita (Ptol. V, 6, 24), Եփրատի աջ ափին, այժմյան Միդիե գյուղը։

Մեւս Գայլ գետ—Գ4—կոչվում էր նաև Կեղի, այժմ՝ Քըղի-սու։

Մեւս Իշայր գաւառ—Գ5—Մոկաց նահանգի 2-րդ գավառը՝ 250 կմ² տարածությամբ, այժմ կոչվում է Խիզան և ընդգրկում է Կեցան գավառակի մեծ մասը։

Մեւս Հարանդ (Սիսական-ի-Ոստան, Սիսական-ի-Կոտակ) գաւառ—Գ7—Արցախի կենտրոնական գավառը, շուրջ 2550 կմ² տարածությամբ. գրավում էր հետագա Դիզակի և Վարանդայի շրջանների տերիտորիան։

571 թ., երբ ամբողջ Արցախը միացվեց Սյունիքին և Մեւս Հաբանդը դարձավ Սյունյաց նախարարության կենտրոն, այս գավառը կոչվում էր նաև Սիսական-ի-Ոստան կամ Սիսական-ի-Կոտակ։ Վերջինս հոմանիշ է Փոքր Սիւնիք անվան։ Ավելի ուշ Մեւս Հաբանդ գավառը կոչվում էր Ամարաս։ Մեւս Հաբանդ գավառի կենտրոնն էր Քթիշ ամրոցը, որը հետագայում հայտնի Տող ավանն էր՝ Դիզակի մելիքների կենտրոնը։ Քթիշի մոտ հիմնվեց Գտիչ վանքը։ Քթիշ ամրոցից դեպի արևմուտք գտնվում էր Գոռոզու բերդը, այժմյան Տումի գյուղը։ Այս գավառումն էր նաև հռչակավոր Ամարասի վանքը։

Միգդոն գետ—Դ4—այժմ՝ Նահր-Ջագ-Ջագ։

Միջա գաւառ—Դ5—Մոկաց նահանգի 5-րդ գավառը՝ շուրջ 250 կմ² տարածությամբ, այժմ՝ Մամռտանք շրջանը, որտեղ այժմ էլ գտնվում է Միջա անունով գյուղը։

Միջա գյուղ—Դ5—այժմ էլ նույն անունով գյուղ՝ Մամռտանք շրջանում։

Միջագետք—Դ3—Դ4—Եփրատի և Տիգրիսի միջև պարփակված երկիրը, հուն. Μεσοποταμία, որը և ընդունված է բոլոր եվրոպական լեզուներում՝ Mesopotamia։

Միջագետք Ասորւոց—Դ3—Դ4—Միջին Միջագետքի տերիտորիան։

Միջագետք Հայոց—Դ3—Դ4—Վերին Միջագետքի տերիտորիան, մինչև մ. թ. 37 թ. կազմում էր Մեծ Հայքի մասը, ունենալով՝ 17.775 կմ² տարածություն։ Այս երկրի խոշոր քաղաքն էր Ամիդը (այժմ՝ Դիարբեքիր)։ Հայտնի էին Բնաբեղ (այժմ Բենաբիլ) և Մարդէ բերդ (այժմ Մարդին) ամրոցները։ Միջագետք Հայոց ընդարձակ իմաստով պիտի ընդգրկեր նաև Տուր-Աբդին (Ծաւդէք) և Արուաստան գավառները Մծբին կենտրոնով և ուներ 27.600 կմ² ընդհանուր տարածություն։ Հիշյալ տերիտորիան մ. թ. 37 թ. ընդմիշտ անջատվեց Մեծ Հայքից և հետագայում կռվախնձոր դարձավ Հռոմի և Իրանի միջև։

Միջնաշխարհ—այսպես էր կոչվում Մեծ Հայքի տերիտորիայի հիմնական մասը, որ ընդգրկում էր՝ Այրարատ, Տա ք, Սիւնիք, Վասպուրական, Մոկք, Տաւրուբերան, Ծոփաց կողմն և Բարձր Հայք նահանգները, 174.011 կմ² տարածությամբ։ 377 թվին, երբ Մեծ Հայքի ծայրամաս նահանգները՝ Աղձնիքը, Կորճայքը, Պարսկահայքը, Արցախը, Փայտակարանը, Ուտիքը, Գուգարքը անջատվեցին, մնաց միայն Միջնաշխարհը, որը իր հերթին բաժանվեց երկու մասի՝ Հռոմեական կայսրությանն անցան Բարձր Հայքը և Ծոփաց կողմը՝ 39.650 կմ² տարածությամբ, մնացյալ մասը կազմեց Մարզպանական Հայաստանը 134.361 կմ² տարածությամբ։

Մուզուր (Մընձուր) գաւառ—Գ3—բյուզ. Μούζουρον, այժմ էլ նույն անունով՝ Մընձուր, Բարձր Հայքի 3-րդ գավառը 2775 կմ² տարածությամբ։

Մուզուր (Մընձուր) գետ—Գ3—այժմ՝ Մոնզուր-սու։

Մուզուր (Մընձուր) լեառն (3188)—Գ3—այժմ՝ Մոնզուր-դաղ։

Միջերկրական ծով—Դ1—այժմ էլ նույն անունով։

Մծբին քաղաք—Դ4—հուն. Νίσιβις, այժմ՝ Նուսայբին. Մծբինի քաղաքային տերիտորիան էր Արուաստան երկիրը։

Մոթողանք գաւառ—Դ6—Կորճեից նահանգի 7-րդ գավառը՝ 875 կմ² տարածությամբ, այժմյան Օրամարի շրջակայքում։

Մոկս աւան—Գ5—այժմ՝ Մոկուս գյուղ։

Մոկք առանձնակ, որ է Արքայից գաւառ—Գ5—Մոկաց նահանգի 6-րդ գավառը Որբ (այժմ՝ Մոկս-սու) գետի հովտում։ Մոկաց նախարարական տան կենտրոնական գավառն էր, ուստի կոչվում էր Արքայից գաւառ և հետագայում հայտնի էր Արքունական երկիր անվանումով։ Կենտրոնը պիտի գտնվեր համանուն Մոկս ավանում։ Պիտի ենթադրել, որ այս գավառը «արքունական» է եղել դեռևս IX—VIII դդ. մ. թ. ա., երբ այն Խուբուշկիա փոքրիկ թագավորության կենտրոնն էր։

Մոկք նահանգ—Գ5—Դ5—Մեծ Հայքի 5-րդ նահանգը, իր տարածությամբ շուրջ 2962 կմ², բոլոր նահանգների փոքրագույնն էր և Մոկաց նախարարական տոհմի ժառանգական սեփականությունն էր։ Կոչվում էր Մոկաց աշխարհ։ Լատ. Moxoene, բյուզ. Μῶξ, ասոր. Bēt Moksaijē։

Մովկան դաշտ—Գ8—այժմ՝ Մուղան դաշտ։

Մուխանք գաւառ—Գ7—Գարգար գետից հարավ, որոշվում է Մուխուր-ովասի վայրով։ Մուխանք գավառը Արցախի 7-րդ գավառն էր՝ շուրջ 1250 կմ² տարածությամբ։

Մուծլ քաղաք—Դ5—արաբ. Մոսուլ, այժմ՝ Էսկի-Մոսուլ։

Մուշ քաղաք—Գ4—այժմ էլ նույն անունով քաղաք Մշո դաշտում։ Միջին դարերում Մուշը Տարաւն (Տարօն) գավառի կենտրոնն էր։

Մուրցամաւր կամ Մուրց գետ—Գ4—այժմ՝ Հասան-Ղալա-սու։

Մրեն աւան—Բ5—Տեկորի գետաբերանի մոտ, իր IV դ. հռչակավոր տաճարով։

Մրիտ—Բ4—վրաց. მერეთი Մերեթի, Եգր աշխարհի երեք գավառներից մեկը Մաճախելիսծղալի գետակի ձորում, որը հոսում է Մերեթի սարից։ Մրիտ գավառի տարածությունն էր 476 կմ²։ Ըստ երևույթին՝ Պլինիոսի մոտ հիշվող Ampreutae-ն է։

Մրուղ—Բ4—բյուզ. Μουργούλη, վրաց. მურღული Մուրղուլի, Մուրղուլ-սու գետակի ձորում։ Եգր աշխարհի երեք գավառներից մեկը։ Մրուղ գավառի տարածությունն էր 550 կմ²։

Մրուղ գետ—Բ4—այժմ Մուրղուլ-սու գետ։

[Մտ]Կ[ու]րիս-խեւ գաւառ—տե՛ս Կրիս-խեւ։

Մցխիթայ քաղաք—Գ9—վրաց. მცხეთა Մցխեթայ, Վրաց աշխարհի հնագույն մայրաքաղաքը, որ հիշատակում է դեռևս Պտղոմեոսը՝ Μηστλῆτα, Mescheta (Ptol. V, 10, 2), այժմ փոքրիկ քաղաք, հռչակված իր հնություններով։ Վերջին 25 տարվա ընթացքում տեղի ունեցած Մցխեթա-Արմազիի պեղում-

ները հնարավորություն տվեցին պարզելու Վրաց աշխարհի վաղեմի մայրաքաղաքի ներքին կյանքը և ստրկատիրական ժամանակաշրջանի վրացական քաղաքի կառուցվածքը ու քաղաքի դերը երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքում: Տե՛ս Мцхета. Итоги археологических исследований. I, Тбилиси, 1958.

Յ

*Յաշտասար լեռն (2939)—Գ7—այժմ՝ Հաշտասար:

*Յաշտեանք գաւառ, տե՛ս Հաշտեանք գաւառ:

Յաշտիշատ աւան, տե՛ս Աշտիշատ աւան:

Յասովնի հրուանդան, տես Հրուանդան Յասովնի:

Յոհ գետ, տե՛ս Վոհ գետ:

Յուլիոպալիս ամրոց—Գ3—'Ιουλιόπολις, Iuliopolis (Ptol., V, 6, 25), գտնվում էր Եփրատի աջ ափին, Բարսալայից հյուսիս, այժմյան Տարաքսու գյուղի մոտ:

Ն

Նախճաւան գաւառ—Գ6—Նախճաւան քաղաքի քաղաքային տերիտորիան, Վասպուրականի 34-րդ գավառը՝ 1220 կմ² տարածությամբ, այժմյան Նախիջևանի շրջանը:

Նախճաւան քաղաք—Գ6—Ναξουάνα, Naxuana (Ptol., V, 12, 5), արաբ. Našava, այժմյան Նախիջևան քաղաքը:

Նախճաւան քաղաք—Դ6—այժմ՝ Նախիջևան-թեփե, Ուրմիա քաղաքից դեպի հյուսիս-արևելք՝ Կապուտան լճի ափին: Հիշատակում է Սեբեոսը:

Նախճամատեանք ազգագաւառ—Ա6—այսպես պիտի կոչվեին այժմյան չեչենների նախորդները, որոնց ինքնանունն է Նախճուո, Պտղոմեոսի մոտ (V, 8, 12) հիշվում են 'Ιαξαματοι ձևով (պիտի ուղղել՝ Ναξαματοί): Պիտի տեղադրել Ասսա և Արգուն գետերի միջև:

Նակորզան քաղաք—Գ7—պիտի գտնվեր Երասխ գետի ձախ ափին Խուդափերինի կամուրջի մոտ: Այս կամուրջի վրայով ճանապարհը տանում էր լեռնային դժվարին տեղանքով (Համդալլահ Ղազվինին կոչում է Arminijan), իջնում՝ դեպի Ահար քաղաք, այնտեղից դեպի Թավրիզ և Արդաբիլ:

Նեխ-Մասիք լեռն—Գ5—այժմ Սիփան կամ Սուփհան (4434), Մասիսից հետո Հայկական լեռնաշխարհի բարձրագույն գագաթը, որի հրաբխային զանգվածը փռված է Վանա լճի հյուսիսային ափին:

Նեռկեսարիա (Կարեյրա) քաղաք—Բ2—այժմ՝ Նիկսար քաղաք:

Նիգ գաւառ կամ Նիգատուն գաւառ—Բ6—Այրարատ նահանգի 15-րդ գավառը, համապատասխանում է այժմյան Ապարանի շրջանի տերիտորիային շուրջ 1000 կմ²: Նիգ գավառը Գնթունի նախարարական տոհմի ժառանգական սեփականությունն էր. կենտրոնն էր Քասաղ ավանը (այժմ Ապարան գյուղ):

Նիգատուն գիւղ—Բ6—այժմ Ղալաջուխ կամ Ղալաչա գյուղ, որ նորից վերանվանվել է Նիգատուն Մատենադարանի գրչագրի հիման վրա. տե՛ս Մատենադարան, ժողովածու, № 2180, ՌՂ—1641 թ., գրիչ Սահակ. կարդում ենք՝ «Նիգատունն Ղալարջուղ ասի»:

Նիգալ—Բ4—վրաց. ნიგალი, ხევი ნიგალისა Նիգալի, խեվի Նիգալիսա, հետագայում՝ ლიგანი Լիգանի, այժմ՝ Արդվին քաղաքի շրջանը: Նիգալը Եգր աշխարհի երեք գավառներից մեկն էր: Նիգալ գավառի տարածությունն էր 950 կմ²:

Նիխորական գաւառ—Դ5—Դ6—պիտի գտնվեր Կոհ-ի-Նիհորական լեռների արևմտյան փեշերին, Կորճայքի սահմաններից հարավ և Մահկերտ-տունից հյուսիս. տեղադրվում է Շեմդինան-սու գետի հովտում և ընդգրկում էր 4250 կմ² տարածություն: Նիխորականը մտնում էր Նոր-Շիրական բդեշխության կազմում, սակայն 363 թ. հետո անջատվեց Մեծ Հայքից և միացվեց պարսկական Հեդայար (Ադիաբենե) նահանգին:

Նիկոպալիս աւան—Դ2—այժմ՝ Իսլահիե ավան:

Նիկոպալիս քաղաք—Բ3—այժմ Բուրգ (Պյուրկ):

Նիկորիա քաղաք, տե՛ս Քալկիս:

Նինուէ ավերակ քաղաք—Դ5—այժմ՝ Նինվախարաբե: Ասորեստանի հռչակավոր մայրաքաղաքը, որի ավերակները հայտնի էին բոլոր ժամանակները, այդ քաղաքի ավերումից հետո 612 թ. մ. թ. ա.:

Նոստէ գետ—Բ5—այժմ՝ Անարիս-ծղալի գետ:

Նոստիս-թաւի լեռն (2506)—Բ5—այժմ՝ Զանչախի գագաթ, որտեղից հոսում է Նոստէ կամ Անարիս-ծղալի գետը:

Նուարսակ գիւղ—Գ6—այժմ՝ Նիսսակ գյուղ, Մարզպանական Հայաստանի սահմանամերձ գյուղը:

Նպատական կամ Նպատ լեառն (2832)—Գ5—հուն. Νιφάτης, լատ. Niphates, այժմ՝ Թափա-Շեյդ: Նպատ լեռան հյուսիս-արևելյան ստորոտին, Արածանի գետի ձախ ափին գտնվում էր Բագաւան ավանը իր հռչակավոր Սուրբ Հովհաննեսի գմբեթավոր բազիլիկ տաճարով: Անտիկ հեղինակների Νιφάτης ὄρος (Ptol. V, 12, 1) լեռնապարը պիտի լինի այժմյան Ջելու լեռները Ջուլամերկի շրջանում:

Նփռետ կամ Նփրկերտ (Տիգրանակերտ) գաւառ—Գ4—համանուն քաղաքի (հնում Տիգրանակերտի) քաղաքային տերիտորիան, Աղձնյաց բդեշխության 2-րդ գավառը՝ 5395 կմ² տարածությամբ: Տե՛ս Տիգրանակերտ գաւառ:

Նփռետ քաղաք, տե՛ս Նփրկերտ (Տիգրանակերտ) քաղաք:

Նփրկերտ (Տիգրանակերտ կամ Մարտիրոպալիս) քաղաք—Գ4—Միջին դարերում կոչվում էր Մարտիրոպալիս, Մարտիրոսաց քաղաք, Նփռետ, Մայֆերկատ, Մայաֆարիկին, Մուֆարղին և այժմ Փարկին կամ Սիլվան: Շուրջ 77 թ. մ. թ. ա.: Տիգրան Մեծի կողմից հիմնված քաղաք, որը տարբեր անուններով գոյություն ունի մինչև հիմա: Տե՛ս Տիգրանակերտ:

Շ

Շակաշէն գաւառ—Բ6—Բ7—հուն. Σακασηνή, լատ. Sacasenae, Ուտիք նահանգի 7-րդ գավառը, որն ընդգրկում էր 2900 կմ² Զակամ (Ջեգամ) գետից մինչև Կուրակ (Քյուրակչայ) գետը, փռված Կուր գետի հովտի աջակողմյան մասում:

Շահապունք կամ Շահապունս ամրոց—Գ6—այժմ Շահբուզ շրջանային կենտրոն: Այս շրջանը, հավանաբար 387 թ. հետո, մինչև վերջերս, կոչվում էր Շահապունիք:

Շաղագոմք—Բ4—Բարձր Հայքի 8-րդ գավառը, գտնվում էր Սարչամա գետի վերին հոսանքում—այժմյան Օվաճըխ վիճակը: Ըստ երևույթին, հնագույն անունն է եղել *Շատալագոմ-ք, որից առաջացել են Շաղագոմք և Շատգոմք ձևերը: Շաղագոմք գավառի տարածությունն էր 500 կմ²:

Շամախի քաղաք—Բ8—հայտնի է VI դ. և գտնվում էր Հին Շամախիի տեղում:

Շամբ Կոզովտի—Գ6—այժմ՝ Շեյխլի-գյոլ՝ Հին-Բայազետից հյուսիս:

Շամբ Կարնոյ—Գ4—Կարին քաղաքից հյուսիս՝ Եփրատ գետի ակունքներից հարավ գտնվող շամբուտները:

Շամուշատ (Սամոսատ) քաղաք—Դ3—Σαμόσατα, Samosata (Ptol. V, 14, 8)—Կոմագենե թագավորության կենտրոնը, այժմ Սումեյսատ, ասուրա-բաբելական արձանագրություններում կոչվում է Kummaḫa և անտիկ շրջանում պիտի կոչվեր Commagenae, որի անունով կոչվել է ամբողջ երկիրը: Շամուշատ անունն այս քաղաքը ստացել է ի պատիվ Շամէս Ա. թագավորի (Σάμος I 240 թ. մոտերքը), Երուանդունի դինաստիայից:

Շանթային լերինք—բառացի թարգմանություն է Պտղոմեոսի մոտ (V, 8, 9) հիշվող Κεραυνίων 'ορέων անվան, որ տրվում էր Գլխավոր Կովկասյան լեռնաշղթայի այն մասին, որը հյուսիսից եզերում էր Աղվանքը և «Աշխարհացոյց»-ը կոչում է «Կապ-կոհ լերինք»: Շանթային լերինք քարտեզի վրա չի նշված, տե՛ս Կապ-կոհ լերինք:

Շանճան երկիր—Դ8—տեղադրվում է այժմյան, Զենջանի շրջակայքում:

Շանճան քաղաք—Դ8—այժմ՝ Զենջան քաղաք:

Շապորան գետ—Բ8—այժմ՝ Շաբրան-չայ:

Շապորան քաղաք—Բ8—այժմ՝ Շաբրան գյուղ՝ Շաբրան-չայ գետի աջ ափին:

Շատալագոմ գաւառ, տե՛ս Շաղագոմ գաւառ:

Շատբերդ ամրոց—Բ5—հիշվում է միայն վրաց աղբյուրներում შატბერდი Շատբերդի, այժմ՝ Փորթա գյուղ: Տե՛ս Н. Марр, Георгий Мерчул, житие св. Григория Хандзтийского, грузинский текст и перевод, СПб., 1911:

Շարուր դաշտ—Գ6—Այրարատ նահանգի 20-րդ գավառը՝ շուրջ 450 կմ² տարածությամբ. համապատասխանում էր նախկին Երևանի խանության Շարուր մահալին, իսկ այժմ՝ Նորաշենի շրջանին, Արփանեալ (այժմ Արփա) գետի ստորին հոսանքում:

Շաւշէթ—Բ5—վրաց. შავშეთი Շաւշէթի գավառը և բնակիչները՝ შავშნი Շաւշնի—Շաւշք. Գուգարաց բդեշխության 10-րդ գավառը. 338 թ. հետո անջատվելով Գուգարքից մտավ Վրաց աշխարհի կազմում: Գրավում էր Շավշուրի (այժմ՝ Իմերխևի) գետի վերին հոսանքը: Շաւշէթ գավառի տարածությունն էր՝ 1045 կմ²:

Շաւշուրի գետ—Բ5—այժմ՝ Իմերխևի գետ:

Շաքէ գավառ—Բ7—այժմյան Նուխիի շրջան՝ 870 կմ² ընդհանուր տարածությամբ:

Շաքէ քաղաք—Բ7—վրաց մատենագրության մեջ հայտնի է ნუხპატო Նուխպատո անունով, այժմ Նուխի քաղաք:

Շիթիթմա, տե՛ս Քաղիրթ որ է Շիթիթմա գետ:

Շիղպք ազգագավառ—Բ6—այժմյան Շիլդա գյուղի շրջակայքը Հայնկույս Կախեթում (Գաղմա Կախեթի):

Շիրակ գաւառ—Բ5—Այրարատ նահանգի 8-րդ գավառն էր, հուն. Σιρακηνή. գրավում էր

Ախուրյան գետի միջին և ստորին հոսանքի հովիտը: Տարածությունն էր 3730 կմ^{2}: Շիրակ անունը առաջացել է Հյուսիսային Կովկասից այստեղ բնակություն հաստատած Շիրակ կամ Սիրակ (Σιρακοί) ցեղից: Նրանցից առաջ, ըստ ուրարտական արձանագրությունների վկայության, այս տերիտորիան կոչվել է Eriaḫi. այսպես էր կոչվում ինչ որ սկյութական ծագում ունեցող ցեղից: Երիախի ցեղի անունից է առաջացել Արաքս, Արախս կամ Էրախս, Երախս (վրաց. რახსი, არეზი) գետի անունը: Շիրակը Կամսարական նախարարական տոհմի ժառանգական սեփականությունն էր:

Շիրական գյուղ—Դ6—հիշում է Թեոփիլակտոս Սիմոկատտան (5, 8, 9)՝ Σιραγανῶν κώμη՝ հավանաբար, այժմյան Շերեբենդի գյուղն է:

Շիրակաշատ աւան, տե՛ս Մավրիկապաւլիս:

Շիրակաւան (Երազգաւորս) աւան—Բ5—այժմ Բաշ-Շորագյալ գյուղ: Երազգաւորս անունը պիտի առաջ եկած լինի Երուազ անունից, որ Երուանդունիների տոհմական անունն է և ինչպես ենթադրում են (Գ. Ա. Ղափանցյան), կապ ունի ուրարտական Rusa անվան հետ:

Շնաւճ քաղաք—Դ6—այժմ՝ Աշնուէ քաղաք:

Շնգար (Սենգարոս) լեռն—Դ4 - այժմ՝ Սինջար կամ Շեյմիրա (1457) գագաթը:

Շնգար (Սինգարա) քաղաք—Դ4—հուն. Σίγγαρα այժմ՝ Բելեդ-Սինջար քաղաքը:

Շուկառաբա (Արզան) քաղաք—Գ4—Արզան քաղաքի ասորերեն անունն է, որ նշանակում է «մեծ շուկա», «գլխավոր շուկա». այժմ՝ Խարզան կամ Զոխ ավան:

Շուչք գավառ—Բ6—«Աշխարհացոյց»-ում մեզ հասել է աղճատված ձևով՝ Շալք, Ղևոնդի մոտ հիշվում է Շուչք ձևով, վրաց. სუჯეთი Սուջեթի, որից՝ სუჯნი, სოჯნი Սուջնի, Սոջնի ցեղանունը: Այս գավառը տեղադրվում է Իորի գետի հովտում՝ Նինո-Ծմինդա գյուղից դեպի արևելք, ընդգրկելով շուրջ 425 կմ^{2} տարածություն:

Շրուան աշխարհ—Բ8—այսպես էր կոչվում Շաբրան-չայ և Գիլգիլ-չայի միջև գտնվող երկրամասը (մոտավորապես 1550 կմ^{2} տարածությամբ): VI դ. հայտնի էր իբրև առանձին ֆեոդալական իշխանություն, որի կառավարիչը կրում էր «Շարվանշահ» տիտղոսը: Այս իշխանությունը պիտի առաջ գար Մազքթաց թագավորության վերացումից հետո մոտավորապես 510 թ.: Հետագայում՝ XI դ. Շիրվանը լայնանում է ի հաշիվ Աղվանքի արևելյան մասերի և մայրաքաղաքը դառնում է Շամախին, որից հետո Շիրվան հասկացողությունը ընդգրկում է Շիրվանշահերի պետության ամբողջ տերիտորիան:

Շրուան քաղաք—Բ8—այժմ՝ Շարվան գյուղ, Շաբրանի մոտերքը: Այս քաղաքը Շարվանի ֆեոդալական իշխանության կենտրոնն էր:

Ո

Ողական ամրոց—Գ4—Ստրաբոնի (XI, 14, 6) մոտ Ὀλανή, որ աղավաղումն է ուղիղ՝ Ὀλα[κα]νή ձևի: Մամիկոնյան տան կենտրոնն էր Տարաւն գավառում, այժմ Ախկան գյուղ:

Ոսկեանց լեռ—Բ4—այս լեռան հարավ-արևմտյան փեշերին էին գտնվում Եփրատ գետի ակունքները՝ Ծաղկի գյուղի մոտ, որը գտնվում էր Ծաղկաւէտ լեռների ստորոտում: Ըստ երևույթին, Եփրատ գետի ակունքների շրջանը ևս կոչվել է Ոսկիք: «Ոսկեան» ձևը կարող է առաջացած լինի ուրարտերեն uškiani տեղանունից, որ սովորաբար տեղադրվում է գետերի ակունքների շրջանում:

Ոսդարա գիւղ—Գ2—Osdara, այժմյան Արսլանդաշ գյուղը:

Ոսկիողայ աւան—Գ6—հիշատակվում է Մովսես Խորենացու կողմից (I, Լ) իբրև Գողթան գավառի դաստակերտներից մեկը: Ոսկիողայ-ն տեղադրելու համար հարկավոր է հիշել, որ հայերենի գողերեն բարբառում Ագուլիսի ձորը կոչվում է «Ասկազուր», որ նշանակում է «Ոսկէ ձոր». մենք կարծում ենք, որ այժմյան «Ագուլիս» անունը պիտի առաջացած լինի Oskiola-ից, ուստի այս վայրը տեղադրում ենք այժմյան Ագուլիսի տեղում:

Ոսկիք տեղ—Գ5—Ծաղկանց լեռների հյուսիսային փեշերին, որտեղից բխում է Արածանի գետակը, որը կոչվել է «Ոսկեան» գետ. (Նախաոնոլյուցիոն շրջանի ռուսական քարտեզների վրա Усканы):

Ոստան Հայոց գաւառ—Բ6—Գ6—Այրարատ նահանգի 19-րդ գավառն էր՝ 750 կմ^{2} տարածությամբ: Այս գավառը այսպես էր կոչվում իբրև Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատի քաղաքային տերիտորիա. հետագայում, երբ Մեծ Հայքը այլևս չկար և մարզպանական Հայաստանի մայրաքաղաքն էր Դվինը, այս գավառը սկսեց կոչվել Ոստան Դըւնոյ: Այս գավառն Արտաշիսյանների և Արշակունիների ժամանակաշրջանում Մեծ Հայքի քաղաքական տնտեսական ու մշակութային կենտրոնն էր:

Ոստան [Վրաց] գաւառ—Բ6—վրացերեն, հավանաբար, պիտի կոչվեր *საბოსტანო *Սաբոստանո: Պիտի ենթադրել, որ 363 թ. հետո, երբ պարսիկներն ամրացրին իրենց քաղաքական դիրքերը Վրաստանի այս մասում, և երբ դեռ Տփղիսը աննշան վայր էր, Ռուսթավի բնակավայրը իր ձմեռային արոտավայրերով դառնում է Սասանյան բանակի կենտրոն, որտեղից նրանք հսկում էին ռազմավիրական ճանապարհին և Ալանաց դռանը (Դարիալի կիրճը): Այս գավառը Ռուսթաւի քաղաքային տերիտորիան էր: Տե՛ս Ոստան քաղաք (Ռուսթաւ):

Ոստան ի մարզպան գաւառ—Բ7—այսպես էր կոչվում Աղվանքի մայրաքաղաք Կապաղակի քաղաքային տերիտորիան 387 թ. հետո, երբ այս վայրը դարձավ Սասանյան փոխարքայի նստոցը, իսկ Փայտակարան քաղաքում շարունակում էին թագավորել Աղվանքի Արշակունի թագավորները: Ոստան ի մարզպան գավառի ընդհանուր տարածությունն էր մոտավորապես 1550 կմ^{2}:

Ոստան քաղաք (Ռուսթաւ)—Բ6—վրաց. ბოსტან ქალაქი Բոստան-քալաքի, կոչվել է նաև Ռուսթաւի («Գիրք թղթոց»-ում և Ուխտանեսի մոտ՝ Ուսթաւի, Ռուզթաւի), որի հոգևոր պետը կրում էր Ռուսթաւէլի տիտղոսը: Ռուսթավի եպիսկոպոսը մասնակցել է Վաղարշապատի 506 թ. հակաքաղկեդոնական ժողովին: Հիշյալ վայրը այժմ խոշոր արդյունաբերական կենտրոն Ռուսթավի քաղաքն է:

Որբ գետ—Դ5—այժմ Մոկս-սու:

Որդոք գյուղ—Գ5—Հայոց ձորի կամ Երուանդունիք գավառի և Բուն Մարդաստան գավառի սահմանում գտնվող գյուղը, այժմ՝ Օրտուք:

Որկովի գիւղ—Գ6—այժմ էլ նույն անունով գյուղ Հայկական Պարի հյուսիսային փեշերին: Չպետք է շփոթել Արագածոտն գավառի Օրկովի գյուղի հետ:

Որմի քաղաք—Դ6—այժմ՝ Ուրմիա (վերանվանված է՝ Ռեզայէ), Կապուտան (Ուրմիա) լճից ոչ հեռու:

Որմիզդ-Պերոժ գաւառ—Գ7—Փայտակարանի 8-րդ գավառը՝ շուրջ 1100 կմ^{2} տարածությամբ: Արաբական աղբյուրներում պահպանվել է Urm ձևով, այժմյան Յաֆթ մահալն է:

Որոմանդոն գետ—Գ2—այժմ՝ Հուրման-դերեսի վտակը:

Որոմանդոն լեառն—Գ2—Անտիտավրոսի կենտրոնական մասը, որտեղից բխում է Որոմանդոն գետը:

Որոնաէս գետ—Ե2—այժմ էլ նույն անունով:

Որոտան գետ—Գ7—այժմ էլ նույն անունով:

Որսիրանք գաւառ—Դ6—Կորճեից նահանգի 8-րդ գավառը՝ 1250 կմ^{2} տարածությամբ, գրավում էր այժմյան Գավառ նահրեն՝ Գավառսու կամ Նեհիլ-չայ հովիտը:

Ուարդանէս գետ—Ա5—«Աշխարհացոյց»-ում սխալ ընթերցմամբ՝ Վալդանիս, վերցրած է Պտղոմեոսից (V, 8, 2)—Οὐαρδάνης, Vardanae, որ այժմյան Կուբան գետի անունն է:

Ուղեոյ բերդ (Օլեոբերդա) ամրոց—Բ2—Oleoberda (Tab. Peut.), Գայլ գետի աջ ափին, Շաբին-Կարա-հիսարից հարավ:

Ուղեոյ գեւղ—Գ6—պիտի փնտրել այժմ Իլանդարասի կոչվող վտակի հովտում գտնվող Իլան-դարա գյուղի տեղում: Այս փոքրիկ հովիտը պիտի կոչվեր Ուղեոյ գաւառ: Ղևոնդ պատմիչը, խոսելով 703 թ. Վարդանակերտի ճակատամարտի մասին, ասում է, որ հայկական զորքը շարժվելով դեպի Այրարատ, «ընդ եզր գետոյն Երասխայ՝ անցանէին ընդ սահմանս Ուղայոյ և հասանէին ի մեծ աւանն Ակոռի»:

Ուջարմա քաղաք—Բ6—այժմ էլ նույն անունով գյուղ:

Ուռհա (Եդեսիա) քաղաք—Է3—Ասորիքի՝ Օսրոյենէ թագավորության մայրաքաղաքը՝ հուն. Ἔδεσσα, արաբ. ar-Ruḫai. Մինչև 1141 թ. այս քաղաքումն էր գտնվում քրիստոնեական աշխարհի մեծագույն սրբությունը՝ «անձեռագործ դաստարակը»:

Ուտի Առանձնակ (Ուտ-ռոստակ) գաւառ—Բ7—Ուտիք նահանգի 8-րդ գավառը՝ 2800 կմ^{2} տարածությամբ: Այստեղ էր ապրում սկզբնական շրջանում ուտիացի ցեղը, որի կենտրոնը Պարտաւ քաղաքն էր (այժմ Բարդա), և որը ուտիերեն լեզվով էր խոսում (արաբական աղբյուրները կոչում են «առաներեն»): Այս գավառը հիշվում է անտիկ հեղինակների մոտ՝ Ὠτηνή, Otenae: Այս գավառի անունով էլ կոչվեց ամբողջ նահանգը Ուտիք: Ուտի Առանձնակ գավառում, բացի Պարտավից, միջին դարերում հայտնի էին Կաղանկատույք, Բերդակուր և այլ վայրերը:

Ուտիք—Բ6—Բ7—Մեծ Հայքի 12-րդ նահանգն է և ընդգրկում էր 8 գավառ՝ շուրջ 11315 կմ^{2} տարածությամբ: Կենտրոնն էր Պարտաւ քաղաքը: «Աշխարհացոյցի» Ուտիք նահանգը համապատասխանում է Գարդմանաց նախարարական տոհմի՝ «Միհրական»-ների ժառանգական կալվածների տերիտորիային 591 թ. հետո, երբ Աղվանքի առաջին իշխան

ճանաչվեց սասանյան արքունիքի կողմից Վարազ Գրիգոր Միհրականը (591—636), Ջուանշերի (636—685) հայրը:

Ուտռուտակ, տե՛ս Ուտի Առանձնակ գաւառ:

Ուրիմա աւան—Դ2—Οὔριμα, արաբ. Rūm-Qale, հայ. Հռոմկլայ, այժմ՝ Ուրում-կալե գյուղ:

Ուրծաձոր գետ—Գ6—այժմ՝ Վեդի գետ:

Ուրծաձոր գյուղ—Գ6—այժմ՝ Ղարաբաղլար գյուղ Վեդիի շրջանում:

Ուրծ գաւառ—Գ6—Այրարատ նահանգի 21-րդ գավառը, համանուն Ուրծաձոր գետի (այժմ՝ Վեդի) հովտում՝ 1175 կմ² տարածությամբ:

Ոքաղէ բերդ—Բ4—այսպես պիտի կոչվեին Ոքաղե գավառի Ազորդ (այժմ Թորթում) գետի վտակի Կազարենս գետակի ակունքներում և այժմյան Նիխախ գյուղի մոտ գտնըվող ամրոցի ավերակները:

Ոքաղէ գաւառ—Բ4—Տայքի 6-րդ գավառը, ուրարտական արձանագրությունների Kali երկիրն է, ընդգրկում էր Ազորդ (այժմ Թորթում) գետի վերին և միջին հոսանքը. Ոքաղէ գավառի տարածությունն էր 1450 կմ²:

Չ

Չողա երկիր—Բ8—այսպես էր կոչվում Մազքթաց թագավորության հիմնական տերիտորիան, որ համապատասխանում է այժմյան Ադրբեջանական ՍՍՌ Կուսարի, Խուդաթի, Խաչմազի, Ղուբայի և Ղոնաղ-քենդի շրջաններին: Չողա երկրի տարածությունն էր 4578 կմ²:

Չողա (Չոլայ, Չորայ, Ճորայ) քաղաք—Բ8—Մազքթաց Արշակունիների թագավորության մայրաքաղաքը. գտնվում էր Սամուր գետի դելտայի շրջանում, այժմյան Բիլիջի երկաթուղային կայարանից ոչ հեռու Թոփրաղ-կալեի ավերակների տեղում: Այս քաղաքի անունով Մազքթաց թագավորության հիմնական տերիտորիան կոչվում էր Չողա: Ըստ երևույթին, Չողա քաղաքը համապատասխանում է արաբական հեղինակների «Ջասար Սամուր»-ին:

Չորայ, տե՛ս Չողա քաղաք:

Չորմայրի գետ—Բ4—Ճորոխ գետի վերին հոսանքի՝ Մաստարա գետի (այժմ Մասատ-դարա) շարունակությունը կազմող Ջարմալի-սու գետակը, 1911—1912 թթ. 200000-անոց (տաճկական քարտեզի ռուսական հրատարակության մեջ կոչվում է Чармак-дараси), որը թափվում է Մաստարա գետում՝ Чармалу Юнус գյուղի մոտ: Ջարմալի-սու գետակի ակունքները նույն Ճորոխ գետի ակունքներն են, որոնց մոտ գտնվում է Խորտիկ-դաղ գագաթը (3183): Վերջինս պիտի լինի Չորմայրի լեռը: Չորմայրի գետի ձորը միջին դարերում կազմում էր առանձին գավառ Չորմայրի անունով (բյուզ. Τζούρμερη):

Չորմայրի լեառն—Բ4—այժմ՝ Խորտիկ-դաղ (3183):

Չորրորդ Հայք, տե՛ս Ծոփաց կողմն:

Չունդառ—Ա7—Սավիրների քաղաքներից մեկը, հետագայում կոչվում էր Էնդերի, այժմ՝ Անդրեյ աուլ գյուղը:

Չքատան կղզի—Գ5—այժմ կոչվում է Կտուց. Վանա լճի կղզիներից մեկը, հայտնի իր սըրբավայրով՝ Կտուց անապատով: Չքատան կղզին համարվում էր Առբերանի գավառում:

Պ

Պալունիք գաւառ—Գ5—Վասպուրականի 23-րդ գավառը՝ շուրջ 200 կմ² տարածությամբ՝ Մարմետ գետի միջին հոսանքի ձորահովտում, այնտեղ, որտեղ գտնվում է Պղուանք ավանը (այժմ Պողանց գյուղ):

Պալունիք գաւառ Տուրուբերանի—Գ4—այս գավառը Տառաւն գավառի մասն էր կազմում՝ 475 կմ² տարածությամբ և ընդգրկում էր Բողլան գետակի հովիտը, որտեղ այժմյան Խարաբա-Բաբբաս վայրի տեղում գտնվում էր Ձիւնկերտ կամ Պորպես քաղաքը: Այս գավառը «Աշխարհացոյց»-ում չի հիշվում, բայց այլ մատենագիրների մոտ հիշատակվում է իբրև Պալունի նախարարական տոհմի գավառ:

Պախր (Գայլախազուտ) լեառն (3238)—Գ4—այժմ Բաղըր-փաշա-դաղ:

Պահակն ճորայ—Բ8—այսպես են կոչվում հայ մատենագիրների մոտ Դերբենդի արհեստական ամրությունները: Սակայն սկզբում Պահակն Ճորայ պիտի կոչվեր Մազքթաց Արշակունիների թագավորության կենտրոնը հանդիսացող Չողա կամ Ճորայ մայրաքաղաքը պաշտպանող պարիսպը: Տե՛ս Չողա:

Պաղին բերդ—Գ3—այժմ Բաղին գյուղ, Չորրորդ Հայքի Պաղնատուն գավառում:

Պաղին գետ—Գ3—այժմ Փերի-սու, այս գետի վերին հոսանքը կոչվում էր Մեւս-Գայլ, այժմ Քըղի-սու:

Պաղնատուն գաւառ—Գ3—բյուզ. Παλινή—Չորրորդ Հայքի 3-րդ գավառն է՝ 1740 կմ² տարածությամբ. ուներ համանուն Պաղին բերդը, այժմ Բաղին գյուղ: Ուներ նաև Խոզան բերդ, որի անունով ամբողջ գավառը կոչվել է նաև «Խոզան»—ուրարտական արձանագրություններում՝ Xuzana:

Պաշատ լեառն (3250)—Գ5—հիշվում է ասորաբաբելական աղբյուրներում Պաձատու ձևով, այժմ Բաշեթ-դաղ: Մովսես Խորենացուն վերագրվող Հռիփսիմեանց վարքի Պաղատ ձևը, հետևանք է սխալ գրության: Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 76, ծան. 2:

Պառատիս գետ—Դ2—բյուզ. Παράδεισος ποταμός: Անունը առաջ է եկել հուն. Παράδεισος բառից, որ նույն իմաստն ունի ինչ գրաբար «սիւս» բառը, որ, ըստ Հ. Աճառյանի («Արմատական բառարան», հատ. VI, էջ 259), նշանակում է՝ «չորս կողմը պատ քաշած արհեստական մեծ որսատեղ»: Վերոհիշյալ հունարեն բառը հոմանիշ է հայերեն «պարտեզ» բառին և երկուսն էլ փոխառություն են իրանական (մարական? պարսկական?) լեզուներից: Հայերենում Պարատիսը պիտի լիներ «Պարտեզ», սակայն միջին դարերում Կիլիկիայում ապրող հայերը այն ըմբռնել են «բերդ» իմաստով, ուստի այս գետախառնուրդի դիմաց գոյություն ուներ Բերդուս ամրոցը, որի անունով գետը այժմ կոչվում է Բերդիզ-չայ: Տե՛ս Սմբատայ սպարապետի Պատմութիւն, Մոսկուա, 1856, էջ 77:

Պարխար լերինք—Բ4—վրաց. პარხალი Պարխալի, այժմ Բարխալ-դաղ:

Պարիսպն Դարբանդայ—Ա7—Ա8—Դերբենդի հռչակավոր պարիսպը՝ հիմնված Խոսրով Ա Անուշիրվանի ժամանակ: Այս պարիսպները մեծ մասամբ այժմ էլ կանգուն են:

Պարուար գաւառ—Բ6—վրացական աղբյուրներում այս գավառը կոչվում է «Տփիլիսի» (և թերևս՝ ფანავარი Փանաւարի)—Գուգարաց բդեշխության 15-րդ գավառը՝ Կուր և Ալ-գետ գետերի միջև ընկնող տափարակ տարածությունը Կումիսի լճով, մինչև Յաղլուջայի բարձունքները, 375 կմ² մակերեսով: Հավանաբար 363 թ. հետո, այս գավառը, անջատվելով Գուգարքից, միացվել է Վրաց աշխարհին: Միայն սրանից հետո Պարուարի սահմանամերձ ամրոց Տփղիսը կարող էր նախադրյալներ ստեղծել աճելու մեծ կենտրոնի և V դ. վերջին դառնալու քաղաք, որի պատճառով Ցուրտավը հետզհետե կորցնում է իր նախկին նշանակությունը:

Պարսականք գաւառ—Գ7—աղավաղված ընթերցումն է «Պաձկանք»: Արցախի նահանգի 9-րդ գավառը՝ 650 կմ² տարածությամբ. համապատասխանում է հետագա Վարանդայի շրջանին:

Պարսկահայք նահանգ—Գ6—Դ6—Մեծ Հայքի 7-րդ նահանգը՝ 11301 կմ² տարածությամբ: Սույն նահանգը տվյալ տերիտորիալ առումով տալիս է միայն «Աշխարհացոյց»-ը, հասկանալով Պարսկահայք անվան տակ Նոր-Շիրական բդեշխության տերիտորիան և նրան միացնում Հեր և Զարաւանդ գավառները: Պարսկահայք անվան առաջին մասը «Պարսկա» (իմաստավորված՝ պարսիկ բառով), անշուշտ կապ ունի ուրարտական ժամանակաշրջանի Parsua, Barsua երկրի անվան հետ, որը այն ժամանակ գտնվում էր Կապուտան (Ուրմիա) լճից հարավ: Նոր-Շիրական կամ Նոշիրական բդեշխությունը համարվում է «առաջին սահմանակալն ի Նոշիրակոն կողմանէն» (Ագաթանգեղոս, 873, ԾԻՁ, էջ 459) և պիտի հսկեր Մեծ Հայքի սահմաններին Ատրպատականի կողմից:

Պարսպատունիք գաւառ—Գ7—Վասպուրականի 26-րդ գավառը՝ 5550 կմ² տարածությամբ, ընդգրկում էր այժմյան Ղարադաղը:

Պարսք գեւղ—Գ7—ըստ Հ. Մանանդյանի Tab. Peut.-ի Paresaca կայանն է, որը պիտի գտնըվեր Մեծ Հայքի սահմանում, Թավրիզի մոտ:

Պարտաւ քաղաք—Բ7—վրաց. ბარდავი Բարդավի, արաբ. Բարդաա, այժմ Բարդա: Ուտիք նահանգի և ամբողջ Աղվանքի մայրաքաղաքն էր 462 թվից: Սկզբում կոչվում էր Պերոզապատ կամ Պերոզ-Կաւատ:

Պարտեզ գետ—Բ5—այժմ՝ Բարդիզ-չայ:

Պարտեզ աւան—Բ5—այժմ՝ Բարդիզ, Տայքի Պարտիզաց փոր գավառի կենտրոնն էր:

Պարտիզաց փոր—Բ5—Տայքի 3-րդ գավառի Պարտեզ (այժմ Բարդիզ) գետի հովտում: Կենտրոնն էր Պարտեզ գյուղը (այժմ Բարդիզ): Պարտիզաց փոր գավառի տարածությունն էր 662 կմ²:

Պեմոլիսէ աւան—Բ1—այժմ Օսմանջիկ գյուղ:

Պերոզ-Շապուհ քաղաք—Դ8—պարթևական Pērōz-Šāpūr, այժմ՝ Փեյզ-Խաբուր գյուղ:

Պիանք գաւառ—Բ7—Արցախ նահանգի 8-րդ գավառն է Խաչենագետի և Գարգար գետերի միջև, Բայան գյուղի շրջակայքում, շուրջ 148 կմ² տարածությամբ:

Պիտիունտ (աղճատված ձևով՝ Պիսինուն)—Ա4—հուն. Πιτυοῦς. այսպես էին կոչում հույները վրաց. աղբյուրների ბიჭვინთა Բիճվինթա, այժմ՝ Պիցունդա վայրը Աբխազիայում:

Պիւռոս աւան—Դ2—այժմ՝ Բիրեջիկ գյուղ:

Պլասթա քաղաք—Ձ—այժմ՝ Ալբիստան քաղաք։

Պողեմոնիոն քաղաք—Բ2—Polemonion, այժմ՝ Բուլաման։

Պոնտոս ծով (Ակամսիս, Կակամար)—Բ2—Բ4—«Պոնտոս ծով, զոր եգերացիք կոչեն Ակամսիս և խաղտիք՝ Կակամար». այսպես է կոչվում «Աշխարհացոյց»-ում Սև ծովը։

Պոնտոս Կապադովկիոյ—Բ3—Pontus Cappadocus, հռոմեական պրովինցիա, որը հետագայում Պոնտոս Պոլեմոնական (Pontus Polemoniacus) պրովինցիայի մասն էր կազմում, իսկ 536 թ. մարտի 18-ի Հուստինիանոս Ա-ի նովելլայի համաձայն կազմեց Առաջին Հայք (Armenia Prima) պրովինցիայի մասը։

Պոնտոս Պոլեմոնական—Բ2—Pontus Polemoniacus, հռոմեական պրովինցիա, 536 թ. հետո միացվեց Առաջին Հայքին։

Պտանդարիս գյուղ—Գ2—Ptandaris կայան, Պտղոմեոսը պահպանել է Tanadaris ձևով, այժմ Տանիր գյուղը։

Պրետորիում բերդ—Դ2—կոչվել է նաև Cabassos (Cabissos), այժմյան Թափան գյուղը։

Ջ

Ջավախք Ներքին—Բ5—6-րդ գավառը Գուգարաց բդեշխության։ 338 թ. հետո անջատվելով Գուգարքից՝ մտավ Վրաց աշխարհի կազմում և այնուհետև կոչվում էր ერუშნეთი, ერუშეთი Էրուշնեթի կամ Էրուշեթի։ Գրավում էր այժմյան Արդահան գավառի հյուսիսային մասը։ Ջավախք Ներքին գավառի տարածությունն էր 1400 կմ՛ ։ Ջավախք Ներքին գավառը աղբյուրներում չի հիշատակվում, սակայն պահպանվել է անուղղակի ցուցմունք Մ. Խորենացու մոտ (II, Ը)։ Նրա ասելով, Շարայի որդի Գուշարը «ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, և զկես մասինն Ջավախաց»։ Ջավախքի այս «կես մասն» համապատասխանում է «Աշխարհացոյց»-ի Ջավախք Վերին գավառը (տես)։ Բնականաբար, երկրորդ Ջավախքը պիտի կոչվեր «Ներքին» իր դիրքի համաձայն և ակադ. Իվ. Ջավախիշվիլին իր Վրաստանի պատմական քարտեզի վրա նշում «Քվեմո Ջավախեթի», այսինքն՝ «Ջավախք Ներքին», և հոմանիշ է համարում «Էրուշեթի» գավառին։

Ջավախք Վերի(ն) գավառ—Բ5—վրաց. ჯავახეთი Ջավախեթի՝ 2675 կմ² տարածությամբ, այժմյան Ախալքալաքի շրջանը։ 387 թ. գտնվում էր Վրաց աշխարհի կազմում։ Ջավախք Վերինը Գուգարաց բդեշխության 8-րդ գավառն էր։

Ջավախքի հնագույն կենտրոնն էր Թաչատուն քաղաքը, որը կոչվում էր նաև Ծունդա։ Միջին դարերում հայտնի էր Թմոգվի բերդաքաղաքը, որ հայերը կոչում էին Թմկաբերդ։ Այս վայրի մոտ Կումուրդոյի վանքից դեպի արևելք նախաուսումնասիրության շրջանի ռուսական քարտեզի վրա նշված է Р. Д. Зрес և Զրես լիճը։ Այստեղ պիտի տեղադրել Ստեփ. Օրբելյանի (ԼԴ) մոտ հիշվող IX դ. կառուցված «Սուրբ ուխտն Զրեսկ»։ Ջավախքի ազգաբնաչությունը կոչվում էր ჯავახურნი Ջավախուրնի, Ջավախուրք (Ստեփ. Օրբ. ԿՁ).

Ջերմ (Արևել. Տիգրիս) գետ—Է7—այսպես էր կոչվում հայերի մոտ Արևելյան Տիգրիս (այժմ Բոհտան-սու) գետը, Քսենոֆոնի մոտ կոչվում է՝ Κεντρίτης, Պլինիոսի մոտ՝ Zerbis, բյուզ. Ζίρμας, արաբ. Wadi az-Zarm։

Ջերմաձոր գավառ—Դ5—Մոկաց նահանգի 8-րդ գավառը՝ 835 կմ² տարածությամբ և այժմ կոչվում է Բարվարի։ Այս գավառը գտնվում էր Ջերմ (Արևելյան Տիգրիս, այժմ Բոհտան-սու) գետի հովտում Ջոել, բերդից սկսած մինչև Կեծան գետի թափվելը այդ գետում։ Այս գավառի դիրքը ավելի պարզ է դարձնում Մեսրոպ երեցի մոտ պահպանված հատվածը, որտեղ պատմվում է, որ Մուշեղ Մամիկոնյանը, հետապնդելով թշնամուն, «ճեպով ընթացեալ ընդ գաւառն Ջերմաձորոյ, առ ոտս ամրոցացն Տմորից և բերդին Ալկոյ» (տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 136)։

Ջերմուկ, տե՛ս Էլեգիա (Ջերմուկ)։

Ջլմար ամրոց—Դ5—այժմյան Ջուլամերկ ավանը։

Ռ

Ռահ գետ—Բ5—Արփա լճից հոսող, նախկինում Արփա-չայ կոչվող գետը մինչև Կարս-չայի գետաբերանը։ Այժմ գետի այս մասը սխալմամբ կոչվում է Ախուրյան, այնինչ Ախուրյան է կոչվել Կարս-չայը և նրա շարունակությունը կազմող՝ նախկինում Արփա-չայ կոչվող և այժմ Կարս-չայի գետախառնուրդից սկսած Ախուրյան կոչվող գետը։ Ռահ գետի անունը առնչվում է հին. հուն. Pã անվան, որը տրվում էր Վոլգա գետին և ցույց է տալիս այդ անվան սկյութական ծագումը։

Ռաճանք (բնագրում աղճատված Դաճանք)—Ա5—վրաց. რაჭა, რაჭანნი Ռաճա, Ռաճաննի՝ Ռիոն գետի վերին հոսանքում։

Ռաշ-Այն քաղաք—Դ4—ասոր. Rēsainā, բյուզ. Θεοδοσιούπολις, այժմ Ռաս-էլ-Այն քաղաք Խաբուր գետի ձախ ափին։

Ռեխա ավան—Ա6—այժմ էլ նույն անունով գյուղ։ Տե՛ս Ռեխա կամ Ռեխիս-խեւ գավառ։

Ռեխա կամ Ռեխիս-խեւ գավառ—Ա6—«Աշխարհացոյց»-ում տրված է Երիսխք, Էտիմխ աղճատված ձևերով։ Այժմ էլ հայտնի է Ռեխա անունով գյուղ, Գորի քաղաքից դեպի հյուսիս-արևելք։ Ռեխան հիշվում է «Աբիբոս Նեկրեսելու» վարքում իբրև Վրաց աշխարհի մարզպանի ու սպասպետի (սպարապետի) բանակատեղի։ Ռեխա կամ Ռեխիս-խեւի գավառը գտնվում էր Մեջուդա գետի ստորին հոսանքում և մտնում էր Վերին աշխարհ Վրաց երկրամասի կազմում, ընդգրկելով 250 կմ² տարածություն։

Ռիզոն էմպորիոն—Բ4— այժմ Ռիզե նավահանգիստ։

Ռշտունեաց ծով, տ. Բզնունեաց ծով։

Ռշտունիք գավառ—Գ5—Վասպուրական նահանգի 1-ին գավառը՝ 875 կմ² տարածությամբ։ Գրըվում է նաև Ըռշըտունիք, որ ենթադրել է տալիս, թե այս անունը կապ ունի Ուրարտուի անվան բաբելական ձևի՝ Uraštu-ի հետ։ Վաղ միջնադարում Ռշտունիքի հետ միասին Ռըշտունյաց նախարարական տոհմին էր պատկանում նաև Տոսպ (ուրարտական Tušpa) գավառը իր Վան քաղաքով, ուստի երկուսը միասին կոչվում էին Տոսպ-Ռշտունիք։ Վերջինս պիտի լիներ Ուրարտուի կենտրոնական գավառ Բիաինա երկիրը նեղ առումով, որը բաբելացիները կարող էին կոչել Ուրաշտու։

Ռուսթավի, տե՛ս Ռստան քաղաք։

Ռոտ-ի-Բաղա, տե՛ս Բաղան-ռոտ։

Ռոտ-Պարսեան գավառ—Բ6—Ուտիք նահանգի 3-րդ գավառը, որի անունը վկայված է աղճատված «Ռոտպացեան» ձևով և ենթադրաբար տեղադրում ենք Խաչեն և Թարթառ գետերի միջև 770 կմ² տարածությամբ։

Ռոտ-Պարսեան գետ—Բ7—այսպես պիտի կոչվեր հնագույն շրջանում Խաչենագետի միջին և ստորին հոսանքը։

Ռոդիւպաւլիս քաղաք—Ա5—հուն. Ῥοδόπολις (բառացի Վարդաքաղաք, Վարդաշեն), թարգմ. վրաց. ვარდციხე, ვარციხე Վարդցիխե, Վարցիխե (բառացի՝ Վարդաբերդ)։

Ս

Սաբալան լեառն (4821)—Գ7—Ատրպատականի բարձրագույն գագաթը։

Սաբուս ավան—Գ3—Sabus (Itin. Ant.),—տեղադըրվում է այժմյան Շեփիկ գյուղի տեղը, Արաբկիրից հյուսիս։

Սալնայ լերինք—Գ4—Սալնոյ ձոր գավառը Սանասուն գավառից բաժանող Հայկական Տավրոսի լեռնաբազուկը։

Սալնայ ջուր գետ—Գ4—այժմ Ռո-սու, Քաղիրթ (Բաթման-սու) գետի վտակներից մեկը։

Սալնոյ ձոր գավառ—Գ4—Աղձնյաց բդեշխության 9-րդ գավառը՝ շուրջ 930 կմ² տարածությամբ։

Սալքորա գեւղ—Բ5—Բասեն գավառի արևելյան սահմանում գտնվող այն բնակավայրը, որից հետո սկսվում էին Հավնունիք և Արեղեանք գավառները։ Պիտի գտնվեր այնտեղ, որտեղ Ջիվին-չայ վտակը թափվում է Երասխ գետը։

Սախուրակ վայր—Բ6—այժմ Աժդահա-յուրտ, այստեղ են գտնվում Ազատ գետի ակունքների շրջանում, ջրի պաշտամունքի կոթողներ՝ վիշապները։ Ըստ երևույթին, այս նույն տեղըն է, որ Մովսես Խորենացու մոտ կոչվում է Աժդանական։

Սամուր գետ—Բ8—այժմ էլ նույն անունով։

Սամցխե գավառ—Բ5—վրաց. სამცხე Սամցխե, այժմ Ախալցիխեի շրջանը։ Սամցխէ գավառի տարածությունն էր 2650 կմ²։ Սամցխեն մեսխերի հիմնական երկիրն էր։ Ասողիկը (III, ԽԱ, էջ 273) պահպանել է Մեսխեթի վրացական ազգաբնակչության անունը՝ Մեսխուրնիք, որ առաջ է եկել վրաց. მესხურნი Մեսխուրնի ձևից։ Սամցխէ, Թաւր և Աճարա գավառները միասին կազմում էին Ստրաբոնի (XI, 1, 18) Μοσχική երկրի իբերական (վրացական) մասը, որը ճաները կոչում էին՝ «Մոցխիւ» (այստեղից՝ Փոցխով, որ այժմ գետի անուն է), իսկ եգերացիք (մեգրելները)՝ «Օձրխէ»։

Սանասուն բերդ—Գ4—այժմ՝ Սասուն գյուղ կամ Քյաղքիկ գյուղ։

Սանասունք գավառ—Գ4—բյուզ. Σανασουνιταί Աղձնեաց բդեշխության 10-րդ գավառը՝ շուրջ 2400 կմ² տարածությամբ. հետագայում և այժմ կոչվում է Սասուն։

Սանասնոյ լերինք—Գ4—այժմյան Սասունի լեռները։

Սանասնոյ-ջուր գետ—Գ4—այժմ Սասուն-դերե՝ Քաղիրթ (Բաթման-սու) գետի վտակներից մեկը։

Սանի գետ—Բ7—այժմ՝ Ալչիգան-չայ:

Սատաղ քաղաքիկն—Բ3—հուն. Σάταλα, լատ. Satala, ուրարտական արձանագրություններում՝ Šadaali, այժմ Սադաղ գյուղ Գայլ-գետի ակունքների շրջանում. գտնվում էր Փոքր Հայքում, Մեծ Հայքի սահմանի մոտ:

Սարակն լեառն (2910)—Գ5—այսպես պիտի կոչվեր Նեմրութ հրաբխային զանգվածի վիթխարի կլոր սկավառակը իր լուսնաձև լճակով: Իբրև «սար» և «ակն» (վերջինս ակն, ակունք, աչք իմաստով):

Սարապանա աւան—Ա5—հուն. Σαραπανά, վրաց. შორაპანი Շորապանի, այժմ էլ նույն անունով քաղաք:

Սարոս գետ—Դ1—այժմ Սեյխան գետը:

Սացխումեթ—Ա6—Փոքր Լիախվի վտակի վերին հոսանքում, այժմ այնտեղ է Սացխենեթի գյուղը, որը Սացխումեթ անվան իմաստավորված ձևն է: Ընդհանուր տարածությունն էր՝ 445 կմ²: Այս գավառը մտնում էր Վերին աշխարհ Վրաց երկրամասի կազմում: Սացխում-եթ անվան արմատն է «ցխում»-ը, որից Ցխոյմք (տես), որ վրացական ձևն է մեգրելա-զանական «չխումի»-ի, Լե-չխում-ի, որի այլ ձևն է «Սկիւմիք» (տես):

Սաւդք (Ձաւդեք) աւան—Բ6—կոչվել է նաև Սօդք, Սոթք, և Ձաւդեք կամ Ծաւդեք, այժմյան Զոդ գյուղը: Հնում հայտնի է եղել իր ոսկու հանքերով:

Սաւդք կամ Սոդք գաւառ—Բ6—կոչվել է նաև Ձաւ[դ]ե[ք], Ծաւդեք, հուն. Σοδουκηνή (Ptol. V, 12, 4) համապատասխանում է այժմյան Բասարգեչարի շրջանին, ընդգրկում էր 2045 կմ²: Արշակունիների ժամանակ այս գավառը կազմում էր առանձին վարչական միավորի՝ «Ծաւդեացւոց իշխանութեան» կենտրոնը՝ համանուն Սաւդք աւանով (այժմ Զոդ գյուղ): «Ծաւդէցւոց իշխանութեան» մեջ էր մտնում ամբողջ Արցախը:

Սաւդից գետ—Բ6—այժմ՝ Մազրա գետ:

Սաւդք լեռնանցք—Բ6—այժմ՝ Զոդի լեռնանցք:

Սաւիրք (Թագաւորութիւն Հոնաց)—Ա7—խոշոր ցեղային միություն, որը ենթարկվում էր խազիրներին: Հայ մատենագիրները հաճախ նախկինի պես կոչում էին «Հոնք», ուստի «Աշխարհացոյց»-ում գոյություն ունի նաև նրանց համանիշ «Թագաւորութիւն Հոնաց» անունը:

Սեբաստիա քաղաք—Գ2—այժմ՝ Սըվազ քաղաք:

Սեբաստուպալիս քաղաք—Ա4—հնում կոչվել է Դիոսկուրիա, իսկ I դարից, երբ հռոմեացիները կառուցեցին նոր ամրություններ, այժմյան Իսկուրիա վայրում, այն կոչվեց Սեբաստուպոլիս, վրաց. ცხუმი Ցխումի, որի տաճկերեն ձևն է այժմ քաղաքացիական իրավունք ստացած Սուխումի անունը: Աբխազները կոչում են Աղվա:

Սեբաստուպալիս քաղաք—Գ2—Σεβαστόπολις այժմյան Սուլուսերայ գյուղը:

Սեբոյ (Քալանոր)—Բ7—այժմ Դուրիան-չայ: Տե՛ս Քաղադաշտ գաւառ:

Սելեւկիա «Փոքր աշխարհ»—Դ2—Աւագն Անտիոք քաղաքի քաղաքային տերիտորիան, կամ, ինչպես ասում է «Աշխարհացոյց»-ը, «Աւագն Անտիոք իւր գաւուցեալ աշխարհաւն, որ կոչի Սելեւկիա» («Աշխարհացոյց», էջ 35): Այս տերիտորիան Սելևկյան Ասորիքի տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոնն էր և այդ նշանակությունը պահպանեց նաև հետագայում:

Սելեւկիա Պիերեան քաղաք—Դ1—այժմ Սուեդիա քաղաք:

Սեպուհ լեառն (3030)—Գ3—Դարանաղի և Եկեղեաց գավառների սահմանի վրա գտնվող գագաթ, որը կոչվել է նաև Գոհանամ. այժմ՝ Ղարադաղ:

Սեւան կղզի—Բ6—այժմ էլ նույն անունով:

Սերմանց (Կատար երկրի) լեառն (3189)—Գ4—բյուզ. Σερμάντζου, այժմ՝ Բիւրակն կամ Բինգյոլ գագաթ իր հսկայական հրաբխային զանգվածով:

Սիահ-կուհ լերինք—այժմ Ղարա-դաղ լեռներ: Ըստ Ստրաբոնի (XI, 7,1) այս լեռները կոչվել են Հայկական լեռներ—'Αρμενίων 'όρη, որ ապացուցվում է նրանով, որ հետագայում Համդալլահ Ղազվինին Ահարից դեպի Արաքսի հովիտը տանող լեռնանցքը կոչում է Arminijan. տե՛ս Դրունք Հայոց:

Սիմսար լեառն (2689)—Գ4—այժմ Կուրտիկ-դաղ:

Սինգարա քաղաք, տե՛ս Շնգար քաղաք:

Սինոռ գեւղ—Բ3—Գայլ գետի (Լիկոսի) ակունքների մոտ՝ Մեծ Հայքի և Փոքր Հայքի սահմանագծի վրա:

Սիսական գաւառ, տե՛ս Ծղուկ գաւառ:

Սիսոն (Իսոս) քաղաք—Դ2—'Ισσός, Issus (Ptol. V, 7, 4). ավերակները գտնվում են Դերթիոլ ավանից հյուսիս-արևմուտք: Այստեղ 334 թ. մ. թ. ա. ճակատամարտում Ալեքսանդր Մակեդոնացին հաղթեց Աքեմենյան Դարեհ Գ-ին:

Սիւնիք աւան—Գ7—այժմ Սիսիան շրջանային կենտրոն: Ըստ երևույթին, այս վայրի անունով ամբողջ գավառը և նահանգը կոչվել է Սիւնիք:

Սիւնիք գաւառ, տե՛ս: Ծղուկ գաւառ:

Սիւնիք նահանգ—Բ6—Գ7—կոչվում էր նաև Սիսական. Մեծ Հայքի 11-րդ նահանգը՝ 15237 կմ² տարածությամբ. Սյունյաց նախարարական տան ժառանգական հայրենիքն էր:

Սիրիխա գիւղ—Գ2—Σιριχά, այժմ՝ Գոմեր (Սարըզ) գյուղ:

Սկիւլաքս գետ—Բ2—Σκύλαξ, այժմ՝ Չեքերեք գետ:

Սկիւմիք, Սկիւմ[ն]իք (Թակոյր) ազգագաւառ—Ա5—Σκυμνῖται (Ptol. V, 8, 13) ցեղը և Σκυμνία (Procop. B. G. 4, 2) ազգագավառը, որ համապատասխանում է վրաց. თაკუერი Թակուերի գավառին, որը հայտնի էր նաև ლეჩხუმი Լեչխումի անվամբ: Վերջինս («Լե-Ձխումի» սվաներեն ձևավորմամբ նույն Սկիւմիք (=Ձխումի)-ն է հունական տառադարձությամբ: Տե՛ս նաև Սացխումեթ և Ցխոյմք: «Աշխարհացոյց»-ը Սկումիք և Թակոյր անունները միմյանցից առանձին է հիշատակում, սակայն, լինելով միևնույն ցեղի և գավառի տարբեր անունները, մենք երկրորդը դնում ենք փակագծում:

Սմբատաւան, տե՛ս Բայտբերդ:

Սըմընդր քաղաք—Ա7—աղավաղված ընթերցումն է՝ Մըսընդըր—Սավիրների նավահանգիստը՝ Կասպից ծովի ափին: Ըստ երևույթին Ղևոնդի կողմից հիշվող Թարգու վայրը նույն Սմընդըրն է, ուստի այն պիտի գտնվեր հետագայում Թարքի կոչվող վայրի տեղում, այժմ էլ նույն անունով գյուղ Մախաչ-կալայի մոտ:

Սոդքի լեռնանցք, տե՛ս Սաւդքի լ-ա:

Սոդից գետ, տե՛ս Սաւդից գետ:

Սոզոպետրա (Զապետրա) ամրոց—Գ2—Σωζόπετρα, Zubatrā, այժմ՝ Վիրանշեհիր գյուղը:

Սոկ բերդ—Գ3—Դեգիք գավառում, այժմյան Սովուկ գյուղի տեղում:

Սոհունդ լեառն (3722)—Դ7—այժմ էլ նույն անունով, կոչվում է նաև Հարամ-դաղ:

Սոնդաս գետ—Ա7—Պտղոմեոսի մոտ (V, 8, 13) հիշվող *Τσόνδαι (մեզ հասել է աղճատված ձևով 'Ισόνδαι) գետի անունն է, որ առաջ եկած պիտի լինի Ծունտա ցեղանունից, որ դիդոյցիների անունն է նրանց հարևան ժողովուրդ անդիացիների մոտ (տե՛ս Н. Марр, Кавказские племенные названия и их местные параллели, Петроград, 1922, стр. 33), ուստի Սոնդաս (ավելի ճիշտ՝ Ծունտա) պիտի կոչվեր այժմյան Ավարական-Կոյսու գետը:

Սուանք ցեղ և ազգագաւառ—Ա5—հուն. Σουανοί, վրաց. სუანნი, სვანნი Սուաննի, Սվաննի երկիրը՝ სუანეთი, სვანეთი, այժմ էլ Սվանեթ անունով երկրամաս Վրաստանում:

Սուկաւէտ լեառն (3424)—Գ5—այժմ Քյոսե-դաղ:

Սուրբ խաչ լեառն—(2904)—Բ5—այժմ Սուփխան:

Սուրբ խաչ վանք, կոչվում է նաև Բարդուղիմէոսի վանք, տե՛ս Արեբանոս:

Սուրբ Խաչ (Ջուարի) վանք—Բ6—վրաց. ჯუარი Ջուարի կամ ჯაჭუი Ջաճուի, Մցխեթայի դիմաց՝ Արագվիի գետախառնուրդի ձախ ափին բարձրացող բլուրի վրա: Այժմ կանգուն VI դ. վերջին, կամ VII դ. սկզբին կառուցված հոյակավոր Ջվարի կենտրոնագմբեթ տաճարը: Ջուարին եպիսկոպոսանիստ աթոռ էր:

Սպանդարան աւան—Գ8—ենթադրաբար զետեղում ենք Բալհ-աբ գետի ձախ ափին: Տե՛ս Սպանդարան Պերոժ գաւառ:

Սպանդարան Պերոժ գաւառ—Գ7—Գ8—Ղևոնդի մոտ՝ Սպատար Փերոզ. Փայտակարանի 7-րդ գավառը՝ 1275 կմ² տարածությամբ: Արաբական աղբ. Sadarasp և Satrudan: Միջին դարերում այս գավառում հայտնի էր Բարզանդ քաղաքը, որի անունով էլ այնուհետև կոչվեց գավառը: Բարզանդից ճանապարհը Սալավաթի լեռնանցքով Մեծ Հայքից տանում էր դեպի Կասպիցների երկիրը, ուստի այս լեռնանցքը կոչվում էր «Կասպիական դրունք»: Այս մասով անցնող Ղարա-դաղի լեռնաշղթան ձուլվում է Թալիշի—Գիլանի լեռնաշղթայի հետ և Ստրաբոնի (XI, 7, 1) մոտ կոչվում է 'Αρμενίων 'όρη: Տե՛ս Կասպիական դրունք և Դրունք Հայոց:

Սպեր աւան—Բ4—այժմ՝ Իսպիր ավան, Ճորոխ գետի հովտում. Սպեր գավառի կենտրոնն էր:

Սպեր—Բ4—Բարձր Հայքի 7-րդ գավառը, այժմ կոչվում է Իսպիր. գրավում էր Ճորոխ գետի վերին հոսանքը: Սպեր գավառի տարածությունն էր 6360 կմ²:

Սպունիոն գիւղ, տե՛ս Եւսպոյենէ:

Ս[տ]աուռովր գետ—Գ7—ասուրա-բաբելական արձանագրությունների Ištaraura գետ, այժմ Զաղաթու կամ Ջեղինեք:

Ստրոբիլուս լեառն—Ա5—Strobilus, այժմ Էլբրուս (5633): Հայ մատենագիրներն այս լեռան անունը չեն պահպանել:

Վ

Վաղարշակերտ քաղաք—Գ5—Ուրարտական ժամանակաշրջանի Anaše քաղաքը, վրաց. ვალაშკერტი Վալաշկերտի, այժմ Ալաշկերտ:

Վաղարշապատ քաղաք—Բ6—այժմ Էջմիածին քաղաք։ Հիմնվել է Վաղարշ Ա-ի (114—146) կողմից հին Վարդգեսաւանի տեղում, ապա դարձել է հռոմեական կայազորի կենտրոն և կոչվել է Καινήπολις—Նոր քաղաք, կոչվում էր նաև Արտիմեդ։ Վաղարշապատը հայ Արշակունիների մայրաքաղաքն էր Տրդատ Գ Մեծի (287—332) ժամանակ, նրա քաղաքային տերիտորիան կոչվում էր Քաղաքուդաշտ։ Վաղարշապատի հետ է կապվում քրիստոնեության տարածումը Հայաստանում։ «Աշխարհացույց»-ը նշում է, որ Վաղարշապատումն էր՝ «Մայր եկեղեցեացն Կաթուղիկէ, և մարտիրուհեացն մատրունքն», որոնց տակ հասկանում է Հռիփսիմեի ու Գայանեի հիշատակին կառուցված մատուռները։ Այս տեղեկությունը ևս գալիս է ասելու, որ «Աշխարհացույց»-ը կազմվել է այն ժամանակ, երբ դեռ չէին կառուցվել Հռիփսիմեի (կառուցվել է 618 թ.) և Գայանեի (կառուցվել է 630 թ.) կենտրոնագմբեթ տաճարները։

Վաղարշաւան աւան, տե՛ս Բասեան (Վաղարշաւան) աւան։

Վայկունիք գաւառ—Բ7—Արցախ նահանգի 2-րդ գավառը, այնտեղ հայտնի էին «Բաղանիք արքունականք», այժմյան Իստի-սուի ջերմուկները Ծար ավանի մոտ՝ Թարթառ գետի ակունքներում։ Միջին դարերում այս գավառը կոչվում էր «Ծար» կամ «Ծարայ երկիր». ընդհանուր տարածությունն էր շուրջ 1070 կմ²։

Վայկունիք ջերմուկք (Բաղանիք արքունականք)—Գ6—այժմյան Իստի-սուն Քելբաջարի շրջանում։

Վայոց ձոր գաւառ—Գ6—Սյունիք նահանգի 3-րդ գավառը՝ 2350 կմ² տարածությամբ. համապատասխանում է այժմյան Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններին։

Վանանդ գաւառ—Բ5—Այրարատ նահանգի 9-րդ գավառն էր, Ախուրյան գետի հովտում։ Միջին դարերում այստեղ էր գտնվում հռչակավոր Կարս քաղաքը իր անառիկ միջնաբերդով։ Վանանդ գավառի տարածությունն էր 4725 կմ²։ Կարս քաղաքը դառնալով խոշոր կենտրոն, մոռացնել տվեց Վանանդ անունը, և այնուհետև (XI դ.) գավառը կոչվում էր Կարս։

Վան քաղաք—Գ5—Հայաստանի հնագույն քաղաքը, հիմնված մ. թ. ա. XI դ. Tušpa անունով, իբրև Ուրարտու պետության մայրաքաղաք։ Իրենք ուրարտացիներն իրենց պետությունը անվանում էին Biaina կամ Biainili, որը մնաց Տուշպա քաղաքի հայկական անվան մեջ «Վան» (առաջին անգամ վկայված է Պտղոմեոսի կողմից Βουάνα, Buana (Ptol. V, 12, 10), իսկ Տուշպա անունը Տոսպ ձևով հայերը պահպանեցին իբրև Վանի քաղաքային տերիտորիայի՝ գաւառի անուն։ Սակայն Պտղոմեոսի մոտ նույն Վանը մի այլ տեղ (V, 12, 8) կոչվում է Θωσπία, Thospia, իսկ Վանա լիճը Thospitis («Տոսպայ ծով»)։ Այնուհետև Վանը դառնում է Վասպուրական նահանգի կենտրոն։

Վառաչան—Ա7—Խազիրներին ենթակա ավիրների թագավորության մայրաքաղաքը, ըստ երևույթին այժմյան Կաֆիր-Կումուխ վայրը՝ Բույնակսկ քաղաքի մոտ։

Վասպուրական նահանգ—Գ5—Գ6—Մեծ Հայքի 8-րդ նահանգը, շուրջ 40870 կմ² տարածությամբ։ Վասպուրականը, «Աշխարհացույց»-ի տերիտորիալ ըմբռնումով, առաջ է եկել Հայաստանի երկրորդ բաժանումից հետո 591 թ.։ Վասպուրականը Մեծ Հայքի ամենաընդարձակ նահանգն էր։

Վատնեան դաշտ, տե՛ս Վարդանեան դաշտ։

Վարագ լեառն (3194)—Գ5—այժմ էլ նույն անունով (վերջերս թուրքերը անվանում են Իրք), որի արևելյան ստորոտին գտնվում է հռչակավոր Վարագայ վանքը, այժմ ավերակ։

Վարազմանաւան բերդ—Բ6—այժմ Մանաւի գյուղը։

Վարաժնունիք գաւառ (Այրարատի)—Բ6—Այրարատ նահանգի 18 րդ գավառը, շուրջ 1900 կմ² տարածությամբ. ընդգրկում էր այժմյան Հրազդանի, Սևանի, Դիլիջանի և Կարմիրի շրջանների մեծ մասը։ Արշակունիների ժամանակ այս գավառը եղել է արքունի որսատեղի. ժամանակի ընթացքում դարձել է Վարաժնունի նախարարական տան ժառանգական սեփականություն։

Վարաժնունիք գաւառ (Վասպուրականի)—Գ5—Վասպուրականի 32-րդ գավառն էր՝ 130 կմ² տարածությամբ. ենթադրաբար տեղադրում ենք Սարխալան գետակի (Զոլա-չայի վտակը) ձորում, որտեղից ճանապարհը տանում է դեպի Խանասորի լեռնանցքը և Վասպուրականի ներքին գավառները։

Վարաժնունիք գաւառ (Տուրուբերանի)—Գ4—Տավրուբերան նահանգի 10-րդ գավառը՝ շուրջ 2000 կմ² տարածաթյամբ. ընդգրկում էր Խնունիս (այժմ Խնուս) գետի հովիտը։

Վարառատ գետ—Գ7—այժմ՝ Հաջի-չայ գետ։

Վարդամարգ գետ—Գ5—այժմ՝ նույն անունով, կոչվում է նաև Ղըրխ-բուլաղ-չայ, Ծակատք գավառի գլխավոր գետակն էր, որ Կողբի մոտից անցնելով թափվում է Երասխ։

Վարդանակերտ գաւառ—Գ7—Փայտակարան նահանգի 2-րդ գավառը՝ շուրջ 8900 կմ² տարածությամբ. ընդգրկում էր այժմյան Մուղանի դաշտի մեծ մասը։ Այս գավառը Վարդանակերտ քաղաքի քաղաքային տերիտորիան էր։

Վարդանակերտ քաղաք—Գ7—արաբ. Vardan, Varsan, այժմ Ալտան բերդի ավերակների տեղը։

Վարդանեան դաշտ—Գ7—Վարդանակերտ քաղաքի շրջակա դաշտավայրը. կոչվում էր նաև Վատնեան դաշտ։

Վելիս-ցիխե ամրոց—Բ6—այժմ էլ նույն անունով գյուղ։

Վելիսցիխե գաւառ (աղճատված Վելիցխե, Ղևոնդի մոտ Վելիսցխե)—Գ6—այժմ էլ նույն անունով գյուղի շրջանի տերիտորիան՝ շուրջ 725 կմ²—Վելիսցիխե գյուղից մինչև Թուրդոխևի գետակը։ Այս գավառումն էր Ճերեմի քաղաքը և ամրոցը։

Վերին աշխարհ Վրաց—Բ5—Ա6—վրաց. ზენა სოფელი ქართლისა Զենա սոփելի Քարթլիսայ, որի բառացի թարգմանությունն է «Վերին աշխարհ Վրաց». կոչվում է նաև შიდა ქართლი Շիդա Քարթլի (Ներքին Քարթլի), բյուզ. Βεριασάχ[1], որ առաջացել է հայերեն «Վերին աշխարհ Վրաց»-ից[2]։ Վրաց աշխարհի կենտրոնական մասը, Վրաց պետականության օրորանը, Վիրքի, այժմ Արևելյան Վրաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոնը։ Վերին աշխարհ Վրաց երկրամասի ընդհանուր տարածությունն էր՝ 6485 կմ²։ Մայրաքաղաքն էր Մցխեթա-ն։

«Զենա սոփելի Քարթլիսա»—«Վերին աշխարհ Վրաց» երկրանունը վրացագետների կողմից հասկացվել է իբրև հակադրություն «Ստորին Քարթլիի»։ Սակայն հնում այդպիսի հասկացողություն չի եղել։ Եվ այդ հասկանալի է, չէ որ աշխարհագրական տեսակետից իր դիրքով «Վերին աշխարհ» էր Մեսխեթը. Տաշիս-Կարիից մինչև Ճորոխ գետի գետաբերանը ձգվող երկրամասը։ Մեսխէթից ներքև՝ Քարթլիի հովիտը, բնականաբար կոչվում է «Շիդա Քարթլի», այսինքն՝ «Ներքին Քարթլի», «Կենտրոնական Քարթլի»։ Վերջինս ճշտիվ համապատասխանում է «Աշխարհացույց»-ի «Վերին աշխարհ Վրաց» երկրամասին և ձգվում էր Տաշիս-Կարիից մինչև Թբիլիսի։ Քարթլիի երրորդ մասը՝ Ալգետ և Խրամ գետերի դաշտավայրը, որը տարածվում էր Թբիլիսիից հարավ՝ վերջին դարերում կոչվում էր «Քվեմո Քարթլի», այսինքն, «Ստորին Քարթլի»։ Ահա Քարթլիի—Վիրքի այս բաժանման սիստեմին է հետևում ակադ. Ի. Ա. Ջավախիշվիլին իր հրատարակած Վրաստանի պատմական Քարտեզում։ Քվեմո քարթլին սակայն, վրաց տարեգրություններում հիշատակվում է միայն մեկ անգամ, այն էլ XV դարի սկզբի համար (ქართლის ცხოვრება, ტომი II, თბილისი, 1959, გვ. 469) և միայն Վախուշտին է, որ XVIII դարում, հաճախ է հիշատակում «Քվեմո Քարթլին», իբրև Թբիլիսիից հարավ գտնվող Վրաստանի տերիտորիայի անուն։

Ինչպես տեսնում ենք, Վրաց աշխարհի այս բաժանումը վերին, միջին և ստորին մասերի հնում գոյություն չի ունեցել և այս երկրի կենտրոնական մասն է միայն կոչվել «Վերին աշխարհ Վրաց»։ Եթե այդպես է, ապա այս անունը պիտի նշանակեր Վրաց աշխարհի կենտրոնական մասը ինչպես և անվանվում էր միջին դարերում՝ «Շիդա Քարթլի», բոլորից բարձր դասվող «Վերին» երկրամաս։ Միայն այսպես կարելի է բացատրել մեզ հետաքրքրող անունը։

Վերիսա քաղաք—Բ2—հուն. Βηρίσσα, այժմյան Արտովա գյուղի մոտ։

Վերջնբակ լեառն—Բ4—այժմ Վերշեմբեկ կամ Վերջենիկ գագաթ (3711) Պարխարյան լեռներում։

Վիժան (Բիզանա) քաղաք—Գ4—բյուզ. Βίζανα, այժմ՝ Միզան գյուղ։

Վիրք երկիր—Բ5—Բ6—կոչվել է նաև Վրկան, պարսկ. Gurgan, ասոր. Gurzan, արաբ. Ջուրզան, հուն. Ἰβηρία, լատ. Hiberia, վրաց. ქართლი Քարթլի։ Վրացական պետության վաղ շրջանի տերիտորիան՝ 17913 կմ² տարածությամբ։ Մայրաքաղաքն էր Մցխեթան։ 363 թվից հետո Վրաց աշխարհին անցան Գուգարաց բդեշխության կենտրոնական գավառները՝ Պարուար, Մանգլեաց-փոր, Խանցիխե, Քուիշափոր, Բողնոփոր, Ծոբոփոր և Ճաւշեթ ու Ջաւախք Ներքին գավառները՝ 5070 կմ² տարածությամբ։ Այս միացումից հետո Վրաց աշխարհի տարածությունը դարձավ 22987 կմ²։ 387 թ. միացվեցին Գուգարաց բդեշխության մնացյալ մասերը, որից հետո Վրաց

[1] Konst. Porph. De adm. imp., P. 197, ed. Bonn. Տե՛ս E. Honigmann, Die Ostgrenze des bizantinischen Reiches von 363 bis 1071, Bruxelles, 1935, էջ 148, ծան. 2։

[2] Markwart, Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien. Das Itinerar von Artaxata nach Armastica auf der römischen Weltkarte, Wien, 1928; E. Honigmann, նույն տեղ։

աշխարհի տերիտորիան ընդարձակվեց, պարունակելով 34682 կմ² տարածություն: Մինչև V դարի վերջերը մայրաքաղաքը մնում էր Մցխեթայում, սակայն Սասանյան Պարսկաստանը իր ռազմական ուժերի կենտրոն էր դարձրել այժմյան Ռուսթավի քաղաքի վայրում, որը մեր կարծիքով պիտի կոչվեր «Ոստան քաղաք», ինչպես վկայում է այդ վայրի վրացական պատմագրության մեջ պահպանված «Բոստան-քալաքի» անունը (համապատասխան դրան, նրան շրջապատող տերիտորիան պիտի կոչվեր «Ոստան»): Միայն V դարի վերջերից է, որ Թբիլիսին — Տփղիսը դառնում է Վրաց աշխարհի մայրաքաղաք: Տե՛ս Ոստան (Վրաց) գաւառ, Ոստան քաղաք և Ռուսթաւ քաղաք: 527 թ. վերացվեց թագավորական իշխանությունը և Վիրքը նշված տերիտորիայի սահմաններում դարձավ առանձին մարզպանություն: Այս փոփոխությունները վավերացվեցին 532 թ. «հավերժական» դաշնագրով: Սասանյանները հատուկ ուշադրություն դարձրին Ալանաց դռների անցքին, որտեղ հիմնվեց ռազմական կայանների մի ամբողջ սիստեմ: Այդ տերիտորիան ընդգրկում էր՝ Ծանարք, Ցխաւատք, Գուդա-մակարք, Ծխլքանք և Փոխք (Փուխք) ազգագավառները՝ 2325 կմ² տարածությամբ: Այս տերիտորիայի հետ միասին Վրաց աշխարհի մարզպանությունը ընդգրկում էր 37007 կմ² տարածություն: Վիրքը ավելի ընդարձակվեց, VII դարի վերջին, երբ նրան միացավ Եգրը իր երեք գավառներով՝ 1976 կմ² տարածությամբ և Վրաց աշխարհը այս ժամանակ արդեն ընդգրկում էր 38.981 կմ²: Վիրքի գավառների լրիվ ցուցակը ըստ «Աշխարհացոյց»-ի, պահպանվել է Սեն-Մարտենի հրատարակած օրինակում[1]: Վիրքի գավառների տեղադրության համար տե՛ս Ս. Կակաբաձեի ուսումնասիրությունը «Վրացական պետականության առաջացման հարցի շուրջը» (ს. კაკაბაძე, ქართული სახელმწიფოებრიობის გენეზისის საკითხები. Bulletin historique, livre I, Թբիլիսի, 1924, էջ 1—120):

Վոճ գետ—Բ4—Ճորոխ գետի անուններից մեկը: Տե՛ս Ակամսիս գետ:

Վրկանից ծով, տե՛ս Կասպից ծով:

[1] Տես՝ Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. II, Paris, 1819.

Տ

Տամբատ գյուղ—Գ6—Փոքր Մասիս գագաթի հարավ-արևմտյան փեշերի շարունակությունը հանդիսացող Ալիբեկ-Դոմբատ լեռնաճյուղից սկսվող անանուն գետակի վրա պիտի փնտրել Տամբատ գյուղը, որի անունով այս գետակի հովիտը պիտի կոչվեր Տամբատ, իբրև առանձին գավառակ:

Տամբեր գաւառ—Դ6—Պարսկահայքի 6-րդ գավառը՝ 1870 կմ² տարածությամբ. ընդգրկում էր Սոմայի և Ազիզելի մահալները: Վերջինիս մեջ այժմ էլ կա Տեմեր, կամ Տամեր գյուղը, որ պիտի «Տամբեր» անվան այլ ձևը լինի:

Տամբեր գյուղ—Դ6—տե՛ս Տամբեր գաւառ:

Տայգրեան գաւառ—Գ6—գոյություն ունի նաև Տանկրիայն ընթերցումը. Վասպուրականի 31-րդ գավառն էր՝ շուրջ 375 կմ² տարածությամբ: Խանասորի լեռնանցքի և Աղբակ գետի միջև, որտեղ այս գավառի անունը հիշեցնում է Դեյգր վայրը. Թվում է, թե Դարեհ Ա-ի Բեհիսթունի արձանագրության Tigre վայրը պիտի զետեղել այժմյան Խանասորի լեռնանցքի մոտերքում և վերջինս պիտի պարունակի իր մեջ Տայգրեան անունը:

Տայոց քար—Բ4—ամրոց, այժմ՝ Տավուսքյար գյուղ, վրաց. ტაოსკარი Տաոս-կարի: Տայք նահանգի հնագույն կենտրոնը պիտի լիներ:

Տայք—Բ4—Բ5—Մեծ Հայքի 14-րդ նահանգը, վրաց. ტაო Տաո: Տայքը կոչվել է նաև «Խորագոյն Հայք» (Armenia Profunda) և մինչև VIII դ. Մամիկոնյանների կալվածքն էր: IX դ. Բագրատունիների Տայքի ճյուղին էր պատկանում, իսկ 1001 թվականից քաղաքականապես Վրաց Բագրատունիների պետության կազմումն էր մնում, սակայն ազգաբնակչությունը միշտ էլ եղել է հայկական՝ ամբողջ միջնադարում, չնայած նրան, որ Տայքի հյուսիսային գավառները XII դ. վրացադավան էին: XV—XVI դդ. Տայքի վրացադավան ազգաբնակչությունը ընդունեց մահմեդականություն և թուրքացավ: Մնաց հայադավան ազգաբնակչությունը, որը իրեն համարում էր հայ և գոյություն ուներ մինչև վերջին 1921 թ. գաղթը:

Տանա գետ—Բ5—այժմ էլ նույն անունով, որի աջ ափին գտնվում է մինչև այժմ կանգուն VII դ. կենտրոնագմբեթ վրացական Ատենի տաճարի հոյակապ շենքը:

Տանիս-խեւ գաւառ—Բ5—Մեզ հասել է՝ Տունիս-խեւ, Տոռնիս-խևի, Տառնեսխ աղճատված ձևերով: Տանիս-խևը Վերին աշխարհ Վրաց երկրամասի գավառներից մեկն էր և գրավում էր Կուր գետի աջափնյա՝ Տանա, Թեձամի և Ջամա վտակների ձորահովիտները: Թեձամի գետի ակունքների շրջանումն էր գտնվում Դեկիցիխե ամրոցը: Տանիս-խևի գավառի տարածությունն էր 1420 կմ²: Այս գավառի կենտրոնը պիտի գտնվեր Ատենի ավանում, որտեղ VII դ. կառուցվեց հոչակավոր տաճարը:

Տաշիր գաւառ—Բ6—ընդգրկում էր Տաշրատափ լեռնադաշտը, որի միջով հոսում է Տաշրայ ջուր գետակը (նախկին Կամենկա, այժմ սխալմամբ կոչվում է Ձորագետ, որ Դեբեդ գետի հին անունն է). Տաշիր գավառը ընդգրկում էր 2050 կմ² և համապատասխանում էր այժմյան Ստեփանավանի, Կալինինոյի շրջաններին և Ալավերդու շրջանի հարավային մասին: Տաշիրը Գուգարաց բդեշխության 4-րդ գավառն էր և 387 թ. հետո մտավ Վրաց աշխարհի կազմում մինչև IX դ. Հավանաբար, այս գավառի մասն էր կազմում Բամբակաձորը՝ Փամբակ գետի հովիտը, որը կոչվում էր Վերին Տաշիր և մնաց մարզպանական Հայաստանի կազմում:

Տաշիր գավառը Գուգարաց բդեշխների տոհմի կրտսեր ճյուղի՝ սեպուհների ժառանգությունն էր, ուստի կոչվում էր «Սեպհականութիւն Տաշրայ»—საზეპურო ტაშირისა: Կենտրոնը պիտի գտնվեր Օձուն գյուղում, որտեղ մինչև այժմ էլ կանգուն է VII դ. կենտրոնագմբեթ տաճարը: Հետագայում Տաշիրի կենտրոնն էր Լաւռե կամ Լոռի քաղաքը (այժմյան Ստեփանավանի մոտ), որի անունով էլ ամբողջ գավառը այնուհետև կոչվեց Լոռի:

Տաշիր Վերին գաւառ—Բ6—ընդգրկում էր այժմյան Փամբակ գետի հովիտը՝ Բամբակաձորը, 1075 կմ² տարածությամբ: Կենտրոնը պիտի գտնվեր Տանձուտ վայրում, այժմյան Կիրովականի մոտ: 387 թ., երբ Գուգարաց բդեշխությունը միացվեց Վրաց աշխարհին, Տաշիր գավառի այս մասը, որը միջնադարյան մատենագիրների մոտ կոչվում է «Տաշիր Վերին», մնաց մարզպանական Հայաստանի կազմում և Այրարատ նահանգի գավառներից մեկը պիտի համարել:

Տաշրատափ դաշտ—Բ6—այժմ Լոռվա դաշտավայրը Ստեփանավանի շրջանում:

Տաշրաջուր գետ—Բ6—նախկին Կամենկա. այժմ սխալմամբ անվանվում է Ձորագետ:

Տատեոն աւան—Գ5—այժմ՝ Դիադին. սրա արվարձաններումն էին գտնվում Վարշակի ջերմուկները: Սրանց մոտ է գտնվել Շահապիվանը և մրտենիների անտառը, որի մասին վկայում է Փավստոս Բուզանդը (IV, ԺԵ), «Իսկ զպատանեակն Գնէլ առնուին գնային մօտ ի Սիւսն արքունի, և անդէն կառափէին ի սարակ լերինն. որում տեղւոյն Լսին անուանեալ է, մօտ յորմածս արգելոցացն որսոյն էրեոցն, ընդդէմ մուրտաստանին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բանակետղ բնին»:

Տատիկ գաւառ—Գ5—Աղձնյաց բդեշխության 7-րդ գավառն էր՝ 350 կմ² տարածությամբ. գրավում էր Տատիկ գետի վերին հոսանքի անտառապատ ձորահովիտը և այժմ էլ կոչվում է Տատիկ: Ուրարտական արձանագրություններում կոչվում է Dadi երկիր:

Տատիկ գետ—Դ4—այժմ Տատիկ-սու:

Տարանտե աւան—Գ2—այժմ՝ Դարենդե ավան:

Տարաւն գաւառ—Գ4—Տավրուբերան նահանգի 3-րդ գավառը, 3195 կմ² տարածությամբ, հուն. Ταρῶν, Ταραννῶν κλίμα. գրավում էր Մեղ գետի (Մեղրագետի) բարեբեր հովիտը: Մինչև IX դարը Մամիկոնյան նախարարական տան հայրենիքն էր, որից հետո դառնում է Բագրատունիների Տարոնի ճյուղի ժառանգական կալվածքը:

Տարաւնոյ գետ—Գ6—այժմ՝ Զոլա-չայ Զարեհավան գավառում: Այստեղ պիտի գտնվեր ուրարտական արձանագրությունների Tarauna երկիրը:

Տաւրոյ-բերան լեռնանցք, տե՛ս Զորայ պահակ:

Տաւրոս լեառն—Գ3—այսպես է կոչվում «Աշխարհացոյց»-ում Հայկական Տավրոսի արևմտյան բազուկը:

Տաւրոս լեառն—Դ1—Գ3—այսպես է կոչում «Աշխարհացոյց»-ը Տավրոս լեռնաշղթան՝ Փոքր Հայքի և Կիլիկիայի միջև: Տե՛ս նաև՝ Լերինք Տաւրոսի:

Տաւրուբերան (Կողմն Տարաւնոյ)—Գ4—Գ5—Մեծ Հայքի 4-րդ նահանգն էր, ուներ շուրջ՝ 25000 կմ² տարածություն: Այս նահանգի տերիտորիան առաջացել է 591 թ. բաժանման հետևանքով, սակայն գոյություն է ունեցել շատ կարճ ժամանակվա ընթացքում և այլ աղբյուրներում Տաւրուբերան, կամ ինչպես ընդունված է՝ Տուրուբերան, անունը հայտնի չէ: Այս անունը, ըստ երևույթին, առաջացել է Տաւրոյ բերան լեռնանցքի անունից, որը մեծ կարևորություն ուներ Միջնաշխարհի համար:

Տեւրիկէ (Տապուրա) աւան—Գ3—Τάπουρα, Tapura (Ptol. V, 6, 20), հետագայում Tephrike, այժմ՝ Դիվրիգի քաղաք։

Տիգրանակերտ գաւառ—Գ4—այսպես պիտի կոչվեր Տիգրանակերտ քաղաքի քաղաքային տերիտորիան։ Շապուհ Բ-ի ավերիչ արշավանքներից հետո 356 թ., երբ Տիգրանակերտը ավերվեց, քաղաքը վերականգնվեց իբրև սահմանամերձ բերդաքաղաք Մարտիրոպոլիս կամ Նփրկերտ անունով՝ միայն Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո։ Պլինիոսը (Nat. hist., VI, 25), խոսելով Մեծ Հայքի լայնության մասին հարավից հյուսիս, նշում է, որ այն ձգվում էր Տիգրանակերտից մինչև Իբերիա։ Տվյալ դեպքում նա նկատի ունի ոչ թե Տիգրանակերտ քաղաքը, այլ մեր կողմից նշված Տիգրանակերտ քաղաքային տերիտորիան՝ Տիգրանակերտ գավառը, որը «Աշխարհացոյց»-ում հայտնի է Նփռետ կամ Նփրկերտ անունով։

Տիգրանակերտ, տե՛ս Նփրկերտ (Տիգրանակերտ կամ Մարտիրոպաւլիս) քաղաք։

Տիգրիս գետ—Գ4—այսպես է կոչում «Աշխարհացոյց»-ը Տիգրիս գետի արևելյան (այժմ՝ Զեբենե-սու) և արևմտյան (այժմ՝ Արղանա-սու) վտակները։ Քարտեզի վրա վերջինս նշված է այժմյան անունով՝ «Արևմտ. Տիգրիս» (Գ3)։

Տիգրիս (Դկլաթ) գետ—Դ5—Տիգրիս գետը Արևմտյան և Արևելյան Տիգրիս (Ջերմ) գետերի միացումից հետո։

Տղմուտ գետ—Գ6—այժմ՝ Զանգիմար-չայ։

Տմորիք երկիր—Դ5—ընդգրկում էր Արևելյան Խաբուրի ամբողջ ավազանը իր երեք գավառներով՝ Կորդրիք Վերին, Կորդրիք Միջին և Կորդրիք Ներքին։ Ասուրա-բաբելական աղբյուրներում Tumurru։ Տմորիք երկրի ընդհանուր տարածությունն էր՝ 2725 կմ²։ Ասուրական աղբյուրներն այստեղ հիշում են Tumurray ցեղը։

Տոսպ գաւառ—Գ5—Վասպուրական նահանգի 2-րդ գավառը՝ 475 կմ² տարածությամբ։ «Տոսպ» էին անվանում հայերը Ուրարտուի մայրաքաղաք Տուշպա (Վան) քաղաքային տերիտորիան։ Այս անունն էր կրում հին հայերի մոտ նաև Վանա լիճը՝ «Տոսպայ ծով»․ անտիկ հեղինակների՝ Θωσπίτις, Thospitis (Ptol. V, 12, 3)։

Տուարածատափ գաւառ—Գ4—Գ5—Տավրուբերան նահանգի 7-րդ գավառը 760 կմ² տարածությամբ. այժմ Ղարայազի դաշտ՝ Գյոք-սու գետակով։ Ուրարտական արձանագրություններում այս գավառը կոչվում է՝ Տուարածինիխուքի։

Տուռ-Աբդին (Ծաւդէք) գաւառ—Դ4—Միջագետքի երկրներից, 3975 կմ² տարածությամբ. մինչև մ. թ. 37 թ. մտնում էր Մեծ Հայքի կազմում։ Այս նահանգը հայերի մոտ կոչվում էր Ծաւդէք, հռոմեացիների մոտ Zabdicenae, ասուրա-բաբելական աղբյուրներում՝ Կատմուխի կամ Կադմուխի, Մովսես Խորենացու մոտ ավանդական ձևով՝ Տուն Կադմոսի։

Տուռ-Աբդին լեռինք—Դ4—այժմ՝ Միդիադ-դաղ։

Տուս գետ—Բ6—այսպես պիտի կոչվեր այժմյան Տավուշ—Թովուզ-չայ գետի ստորին հոսանքը, որտեղ պիտի գտնվեր Տուս-Քուստակ գավառը։

Տուս-Քուստակ գաւառ—Բ6—մեզ հասել է «Տուչքատակ» աղճատված ընթերցումով։ Ենթադրաբար տեղադրում ենք Տաւուշ կամ Տուս (Թովուզ) գետի ստորին հոսանքում։ Ուտիք նահանգի 5-րդ գավառն էր, և մոտավորապես 700 կմ² տարածություն ուներ։

Տոքեան կղզի—Գ5—տեղը որոշելը դժվար է, հավանաբար գտնվում էր Ծիպան կղզուց հարավ, Դատվանից ոչ հեռու։ Տոքեան կղզին գտնվում էր Բզնունիք գավառում։

Տոի գաւառ—Բ7—Ուտիք նահանգի 2-րդ գավառը, շուրջ 530 կմ² տարածությամբ։ Գտնվում էր Տրտու (այժմ Թարթար) գետի միջին հոսանքում, հետագա Ջրաբերդ գավառի տեղում։ Միջին դարերում այստեղ հայտնի էին Հաթերք և Չարաբերդ կամ Ջրաբերդ ամրոցները։

Տրապիզոն էմպորիոն (ἐμπόρια)—Բ7—այժմ էլ նույն անունով համանուն վիլայեթի կենտրոն և Հայկական լեռնաշխարհի նավահանգիստ։

Տրպատունիք—Դ5—Վասպուրականի 12-րդ գավառը, ընդհանուր տարածությամբ 450 կմ²։ Գրավում էր Ջերմ (Արևել. Տիգրիս) գետի վտակ Շահբուր-սուի հովիտը։

Տրտու գետ—Բ7—կոչվում էր նաև Տրտուական, այժմ՝ Թարթար։

Տփղիս քաղաք—Բ6—վրաց. ტფილისი, თბილისი Տփիլիսի, Թբիլիսի, բյուզ. Τιφλίς. սկզբում Գուգարաց բդեշխության սահմանամերձ ամրությունն պիտի լիներ, միայն 363 թ. հետո, երբ իր Պարուար գավառը և բդեշխի ամբողջ ոստանը (վրաց. საპიტიაშხო Սապիտիաշխո) միացվում է Վրաց աշխարհին, այնուհետև Տփղիսը սահմանամերձ վայրից դառնում է Վրաց դաշտի կենտրոն։ Վրաց աշխարհի մայրաքաղաք Մցխեթան և Գուգարքի վաղեմի կենտրոն Ցուրտավը կորցնում են իրենց նախկին նշանակությունը, զիջելով այն Տփղիսին, որը V դ. վերջից դարձավ Վրաց աշխարհի մայրաքաղաք։ Տփղիսը այնուհետև եպիսկոպոսանիստ էր, որի հոգևոր պետը կրում էր ტფილელი «Տփիլէլի» տիտղոսը («Գիրք թղթոցը» կոչում է «Տփղեաց»)։ Վերջինս մասնակցել է Վաղարշապատի 506 թ. հակաքաղկեդոնական ժողովին։

Ց

Ցլի լիճ—Բ5—Մովսես Խորենացու մոտ (II, 2) կոչվում է՝ Ծովակ Հիւսիսոյ, իսկ Վրաց աղբյուրներում հայտնի է ცელი Ցելի անունով, այժմ Չըլդըր լիճ (ծովի մակերևույթից 1959 մետր բարձր)։ Միջին դարերում այս լիճը կոչվում էր Պաղակացիս, პალაკაციო Պալակացիո անունով։ Կարելի է ենթադրել, որ այս անունը առաջացել է «Պայղակացիք» ձևից, որով հայտնի էին պավլիկյան ուսմունքի հետևորդները։ Հայաստանում հալածվող պավլիկյանները կարող էին ապաստան գտնել նաև Չըլդըր լճի ափերին։

Ցխաւատք ազգագաւառ—Ա6—վրաց. ცხავატნი Ցխավատնի ցեղը, որը ապրում էր Արագվի գետի վտակ՝ Սպիտակ Արագվիի ակունքների շրջանում։

Ցխոյմք ազգագաւառ (աղճատված Ծըխոյք), պիտի նույն Սացխումեթ գաւառը լինի (տես)։ Ցխոյմքը քարտեզի վրա չի նշված։

Ցխրազմայ գաւառ (աղճատված ձևերն են՝ Ցխրաձմայա, Ցխնասձմայա)—Ա6—վրաց. ცხრაზმა Ցխրազմա. ընդգրկում էր Քսանի գետի վերին հոսանքը և նրա օժանդակ՝ Ցխրազմուլա վտակի խորաձորը։ Այս գավառը մտնում էր Վերին աշխարհ Վրաց երկրամասի կազմում և ընդհանուր տարածությունն էր՝ 550 կմ²։

Ցուրտաւ քաղաք—Բ6—կոչվում էր նաև Գաչէնք, վրաց. ცურტავი, წორტავი, გაჩიანი Ցուրտաւի, Ծորտաւի, Գաչիանի։ Գտնվում էր Ցուրտագետի (այժմ Խրամի) և Մաշավերա գետերի միախառնման կետում[1]։ Ցուրտաւը Գուգարաց բդեշխների կենտրոնն էր և 363 թ. հետո իր բդեշխության ոստանով (վրաց. საპიტიაშხო «Սապիտիաշխո»), որը ընդգրկում էր Բողնոփոր, Քուիշափոր, Մանգլեաց փոր, Պարուար և Խանցիխէ գավառները, անջատվում է Գուգարքի մնացյալ մասից և միանում Վրաց աշխարհին։ VI—VII դդ. հայտնի էր Ցուրտավում գտնվող սուրբ Շուշանիկի մատուռը, որտեղ ժամասացությունը կատարվում էր հայերեն և վրացերեն լեզուներով։ Շուշանիկի մատուռը դարձավ եպիսկոպոսանիստ աթոռ, որի հոգևոր պետը վրացերեն կոչվում էր «Ցուրտաւէլի» («Գիրք թղթոցը» և Ուխտանեսը, պահպանել են՝ «Ուրտաւի» և «Սրդաւի» ձևերը, որ «Ցուրտաւ»-ի աղճատված ձևերն են) և պետք է տիրապետեր վրացերեն և հայերեն լեզուներին[1]։ Վերջինս մասնակցել է Վաղարշապատի 506 թ. հակաքաղկեդոնական ժողովին։ Հետագայում, երբ Տփղիսը դարձավ Վրաց աշխարհի մայրաքաղաք և Ցուրտաւը դադարեց Վրաց դաշտի կենտրոն լինելուց։ Շուշանիկի տապանը, իբրև սրբություն, փոխադրվում է Տփղիս, որտեղ և գոյություն ուներ մինչև վերջերս Մետեխի եկեղեցում։ Ցուրտաւ քաղաքի փոխարեն հետագայում բարձրանում է նրանից ոչ հեռու գտնվող Սամշվիլդե քաղաքի, իբրև Վրաց դաշտի կենտրոն։

Ցուրտագետ—Բ6—Վախուշտու մոտ կոչվում է ზურტაკეტი Զուրտակետի, որ հայկական անվան թուրքական արտասանությունից է առաջ եկել։ Այժմ այս գետը կոչվում է Ղարաբուլախ-չայ և թափվում է Խրամ գետում, որը հանդիսանում է Ցուրտագետի շարունակությունը և պետք է կրեր այդ անունը։ Հետագայում նրա մեջ թափվող Քցիա գետը, որը այս տեղերում հոսում է խորը ձորում, կոչվեց Քցիա Խրամի, որ բառացի նշանակում է «Քցիայի խորաձոր», այժմ կոչվում է Խրամի։ Քարտեզի վրա Ցուրտագետ անվան փոխարեն նշված է Քցիա, իսկ Գաչենագետը, ըստ երևույթին, Մաշավերա գետի այլ անունն է։

Ցոի քաղաք—Գ7—այժմ Ցոր գյուղ։

Ցրոլի լեառն (3616)—Ա6—վրաց. მთა ცროლისა. Գլխավոր Կովկասյան լեռնաշղթայի գագաթներից մեկը, որը ըստ «Մոքցեվայի Քարթլիսայի», Քարթլի-Վրաց աշխարհի, հյուսիսային ծայրագույն սահմանն էր հանդիսանում, իսկ հարավ-արևմուտքում այդպիսի սահման էր Էգրիս-ծղալի գետը (այսպես էին կոչում վրացիները Ճորոխի ստորին հոսանքը)։ Այս գետի անունը՝ Էգրիս-ծղալի, չպետք է շփոթել Էգրիսխ-ծղալիի հետ, որ այժմյան Ինգուրի գետն է։

[1] Տես მელიქსეთ-ბეგი, თრიალეთ-წალკის მატერიალური კულტურის ნაშთებისა და ტოპონიმიკის შესწავლისათვის (ხრამჰესის მშენებლობის გამო) მარქსისტული ენათმეცნიერებისათვის. ტფილისი, 1934, გვ. 41—43.

[1] Ուխտանէս, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վաղարշապատ, ԾՀ, 1871, էջ 34։

Փ

Փագեմոն աւան—Բ1—այժմ՝ Մերզիֆոն ավան։

Փալակրու Կաստրոն ամրոց—Գ1—Φαλακροῦ κάστρον. ենթադրվում է, որ գտնվել է Fraktin (այժմ Ֆրակտին գյուղ) ավանից դեպի հյուսիս-արևմուտք։

Փայտակարան նահանգ—Գ7—Գ8—Մեծ Հայքի 11-րդ նահանգը՝ շուրջ 21000 կմ² տարածությամբ։ Այս նահանգը հույն-հռոմեական աղբյուրներում հայտնի է՝ Κασπιανή, Kaspianae, Patria Caspia անվան տակ։ Հայկական աղբյուրներում միայն «Աշխարհացոյց»-ն է ու նրան հետևող Ղևոնդը, որ գործ են ածում «Փայտակարան» անունը։ Այլ աղբյուրներում այս երկիրը կոչվում է՝ Կասպք, Կազբք, Աշխարհն Կասպից, Աշխարհն Պարսից, Պարսք, ապա՝ Բաղասական։ Վերջինս՝ Balasakan, Balasaḓan ձևերով պահպանվել է արաբական աղբյուրներում։

Մեծ Հայքի այս ծայրամասային երկիրը, որ նվաճվել է Արտաշես Ա-ի (189—161) ժամանակ, համարվում էր Փայտակարան քաղաքի քաղաքային տերիտորիան։ Այս դրությունը փոխվում է 338 թ. հետո, երբ պարսիկների սադրանքով մասքութներն իրենց թագավոր Սանատրուկ Արշակունու գլխավորությամբ ներխուժեցին Մեծ Հայք, տիրեցին Փայտակարան նահանգին և սկիզբ դրին Աղվանից երկրի Արշակունյաց հարստությանը։

Փայտակարան քաղաք—Գ7—համանուն նահանգի կենտրոնը, այժմյան Օրեն-Կալայի մոտ, Միլի դաշտում։ Փայտակարան քաղաքը 338 թ. դառնում է Աղվանից թագավորության ժամանակավոր կենտրոնը։ 338 թ. սկսած այս քաղաքում էին նստում մասքթաց Արշակունի թագավորները։

Փանասկերտ ամրոց—Բ5—վրաց. ფანასკერტი Փանասկերտի, բյուզ. Πανάσκερ, այժմ Փանասկերտ գյուղ։ Ենթադրվում է, որ այս անունը առաջացել է *Փառնուազկերտ ձևից։

Փառանգիոն ամրոց—Բ4—ըստ երևույթին այժմյան Քարվանքի տեղում, կամ մոտերքում։ Փառանգիոնը հայտնի էր իր ոսկե հանքերով։

Փառիսոս ամրոց—Բ6—այժմ՝ Կալաքենդ գյուղը. միջին դարերում Փառիսոսի թագավորության մայրաքաղաքն էր։

Փառնակիա (Կերասունտ) քաղաք—Բ3—այժմ Գիրեսուն նավահանգիստ։

Փառնես գավառ—Բ6—Շամքոր գետի ակունքների շրջանում, որտեղ միջին դարերում գտնվում էր Փառիսոս քաղաքը (այժմ Կալաքենդ)։ Արցախ նահանգի 12-րդ գավառն էր՝ շուրջ 775 կմ² տարածությամբ։

Փասիս գետ—Ա4—այժմ Ռիոն գետ։ Հնում Փասիս էր կոչվում Ղվիրիլա գետը և նրա շարունակությունը կազմող Ռիոն գետի ներքին հոսանքը, սկսած Ղվիրիլայի գետաբերանից։

Փասիս քաղաք—Ա4—այժմ՝ Փոթի (Ղևոնդի մոտ՝ Փոյթ). սակայն Փասիսը գտնվում էր Փոթիից արևելք, Ռիոն գետի և Պալեոստոմի լճի միջև։

Փասխ ազգագաւառ—Ա6—այսպես էր կոչվում, ըստ երևույթին, Բացք կամ Ծովա-Թուշ ցեղը։

Փեռոտակ գյուղ—Ա6—այժմ՝ Փեռե գյուղ. Խոյ քաղաքից հյուսիս-արևմուտք։

Փիլադելփիա աւան, տե՛ս Բաքրան աւան։

Փոխք (Փուսխք) ազգագաւառ—Ա6—վրաց. ფხოველნი, ფხოვნი Փխովելնի, Փխովնի։ «Աշխարհացոյց»-ում կա նաև այս անվան երկրորդ ձևը՝ Փուսխք, որ մենք դնում ենք փակագծում։

Փոսադուռն լեռնանցք—Բ3—ըստ VII դ. «Մղոնաչափք»-ի վկայության, այս վայրը գտնվում է Կարինից դեպի Կողոնիա տանող ճանապարհի վրա, Մեծ Հայքի և Փոքր Հայքի սահմանագծի վրա, Գայլ գետի (Լյուկոս) ակունքների մոտ։ Փոսադուռն պիտի լինի Պրոկոպիոս Կեսարացու մոտ հիշվող Γερμανοῦ φοσσᾶτον ամրությունը, որ հայերը իմաստավորել են, կապելով «փոս-խրամատ» բառի հետ։ Փոսադուռն լեռնանցքը համապատասխանում է այժմյան Վավուկի լեռնանցքին (1660)։

Փուսխք—տե՛ս Փոխք։

Փոքր Զաւ գետ—Դ6—այժմ էլ նույն անունով՝ Փոքր Զաբ։

Փոքր Հայք երկիր—Գ2—Բ3—հուն. Μικρὰ Ἀρμενία, լատ. Armenia Minor, Եփրատի և Անտիտավրոսի միջև ընկած երկրամասը, որը հանդիսանում էր առանձին թագավորություն (321—112 թթ. մ. թ. ա.), ապա միացվեց Պոնտոսին, իսկ 65 թ. մ. թ. ա. Փոքր Հայքի արևմտյան մասը դարձավ հռոմեական պրովինցիա, իսկ արևելյան մասը, որը «Աշխարհացոյց»-ում կոչվում է Բարձր Հայք, ընդմիշտ միացվեց Մեծ Հայքին։ Թեոդոս Ա. Մեծի ժամանակ 378—386 թթ. միջև Փոքր Հայքը բաժանվել է երկու պրովինցիաների՝ Առաջին Հայք և Երկրորդ Հայք։ Այս ժամանակաշրջանի Փոքր Հայքի տերիտորիան ընդգրկում էր 68700 կմ²։ «Աշխարհացոյց»-ը տվյալ դեպքում նկատի

ունի Փոքր Հայքի վարչական բաժանումը մինչև Հուստինիանոս Ա-ի 536 թ. նովելլան։

Փոքր Մասիս լեառն (3925)—Գ6—ի տարբերություն Մեծ Մասիսի, որը կոչվում էր Ազատ-Մասիս, Փոքր Մասիսը պիտի կոչվեր սոսկ Մասիս անունով, կամ ավելի ճիշտ՝ Սիս։

Ք

Քալկիս (Նիկորիա) քաղաք—Դ2—Χαλκίς, Kinnasrin. Հալեպից հարավ, նշանավոր քաղաք։

Քող (Քեղ) գաւառ—Գ4—Աղձնյաց բդեշխության 3-րդ գավառը՝ 350 կմ² տարածությամբ։ Ասուրա-բաբելական արձանագրություններում կոչվում է Gal։ Քող կամ Քեղ անունը, ըստ երևույթին, կապ ունի Քղիմար անվան հետ։

Քաղաբերդ ամրոց—Բ7—տե՛ս Քաղադաշտ (Քալաձոր) գաւառ։

Քաղաբերդ գավառ—Բ7—տե՛ս Քաղադաշտ (Քալաձոր) գաւառ։

Քաղադաշտ (Քալաձոր) գաւառ—Բ7—այսպես է կոչվել Դուրիան-չայ և Ալչիգան-չայ գետերի ստորին հոսանքների տափարակային տերիտորիան, մոտավորապես 1270 կմ² տարածությամբ, այժմյան Աղդաշի և Մինգեչաուրի շրջանները։ Կենտրոնը պիտի գտնվեր Քաղբերդ ամրոցում, որը հետագայում հայտնի էր Աղբերդ անունով, ապա դարձել է Աղդաշ, որ այժմյան անունն է։

Քաղաբերդը վրացական տարեգրություններում կոչվում է ქალაძორი Քալաձորի, (ქართლის ცხოვრება, ტომი I, თბილისი, 1955, გვ. 334, 366)։ Քալաձորը միևնույն ժամանակ Դուրիանչայ գետի անունը պիտի լիներ։

Քաղաձոր գաւառ, տե՛ս Քաղադաշտ գաւառ։

Քաղաձոր գետ. կոչվել է նաև Սեբոջ—Բ7—այժմ Դուրիան-չայ։

Քաղիրթ (Ծիթիրմա) գետ—Դ4—Գ4—այժմ Բաթման-սու, ըստ երևույթին, այս գետը ուրարտական արձանագրությունների Kallama-ն է։

Քաղկիդիկե «Փոքր աշխարհ» Ասորիքի—Դ2—Χαλκιδικῆς, Chalcidices (Ptol. V, 14, 14), Քալկիս (Նիկորիա) քաղաքի քաղաքային տերիտորիան պիտի լիներ։

Քաջատուն (Ծունդա)—Բ2—վրաց. ქაჯატუნი. ქალაქი წუნდა Քաջատունի, Քալաքի Ծունդա, այժմ էլ Ծունդա անունով գյուղ, բայց քաղաքատեղին գտնվում է նրանից ոչ հեռու գտնվող Նաքալաքեվի գյուղի տեղում։ Այս քաղաքը հիշվում է միայն վրացական տարեգրություններում և նրանց հայկական համառոտ թարգմանության մեջ։

Քաջաց-Քաղաք (Հուր)—Բ5—վրաց. ქაჯთა ქალაქი, ჰური Քաջթա-Քալաքի, Հուրի, այժմյան Ուրի գյուղը։ Հիշվում է միայն վրաց տարեգրություններում, և նրանց հայկական վերսիայում։ Ըստ երևույթին, այստեղ է գտնըվել Արտահան գավառի հնագույն կենտրոնը և նրա անունով էլ կոչվել է նաև Արտահան։

Քաջբերունիք գաւառ, տե՛ս Գառնի գաւառ։

Քառն Մանակերտ ամրոց և ցամաքակղզին Մանակերտ—Գ5—այսպես էր կոչվում այժմյան Քարա-դաշ հրվանդանը Վանա լճի հարավային ափին՝ Աղթամար կղզու դիմաց։ Քառն Մանակերտ ամրոցը կառուցվել է դեռևս Մենուայի (810—786) ժամանակ և կոչվել է Menuaḫinili, որին համանիշ է Մանակերտ անունը։ Քառն Մանակերտը գտնվում էր Ռշտունիք գավառում։

Քասաղ աւան—Բ6—այժմ Ապարանի շրջանային կենտրոն։ Քասաղը Գնթունի նախարարական տոհմի կենտրոնն էր. այստեղ հայտնի էր V դ. կառուցված բազիլիկ տաճարի շենքը։

Քաւազինք ազգագաւառ—տե՛ս Գաւազք ազգագավառ։

Քթիշ ամրոց—Գ7—Մեւս Հաբանդի կամ Սիսական Ոստանի կենտրոնը Իշխանի ձորում, հետագայում կոչվում էր Տող, որն այժմ էլ հայտնի գյուղ է։ Վերջինիս մոտ է գտնվում Գտիչ վանքը։

Քիշ քաղաք—Գ4—Ենթադրաբար տեղադրում ենք այժմյան Բամառ-Կուշ գյուղի տեղում։ Ըստ երևույթին, Քիշը ասուրա-բաբելական արձանագրությունների Աշշուրիկկիշա-ն է։

Քղիմար (Կուտեմռան) քաղաք—Գ4—այժմյան Մալիգիր գյուղի մոտ։ Քղիմարը հիշվում է ասուրա-բաբելական և ուրարտական արձանագրություններում՝ Kullimeri, Kalmer, Kutta ձևերով։

Քուդեսք—Ա5—ազգագաւառ, վրաց. კუდარო Կուդարո, Ռիոն գետի ակունքների շրջանում։ Ալան-օվս ժողովուրդը կազմող ցեղերից մեկը։

Քուել-դաբա աւան—Ա6—վրաց. ქუელ-დაბა Քուել-դաբա, այժմ Զվել-դաբա գյուղը Թիանէթ ավանից դեպի արևելք. հանդիսացել է Մեծ Կախեթի (დიდი კახეთი) կենտրոնը և իր անունով է կոչվել ամբողջ գավառը։

Քուել-դաբա գաւառ—Ա6—Բ6—«Աշխարհացոյց»-ում պահպանվել է Քուշեդա, Քուելդա աղճատված ձևերով, վրաց. ქუელ-დაბა Քուել-դաբա ավան, որի անունով էլ կոչվել է գավառը։ Այս գավառը համապատասխանում է

կախէթին նեղ իմաստով, ուստի վրաց աղբյուրներում կոչվում է დიდი კახეთი Դիդի Կախեթի (Մեծ Կախեթ)։ Հիշյալ գավառը ընկրկվում էր Տղետրա կամ Գուլգուլա գյուղից և Թուրդոս-խևի վտակից մինչև Ալազան գետի ակունքների շրջանը, ընդգրկելով 522 կմ² տարածություն։

Քուեշի ամրոց—Բ6—վրաց. ქუეში Քուեշի, այժմ Ձվելի-Քվեշի անունով համանուն վտակի վրա։

Քուիշա գետ—Բ6—վրաց. ქუეშის წყალი Քուեշիս-ծղալի, Մաշավերա գետի ձախ վտակը։

Քուիշափոր գաւառ—Բ6—վրաց. ქუეშის ხევი Քուեշիս-խևի—Գուգարաց բդեշխության 12-րդ գավառը Մաշավերա գետի վերին հոսանքում, համանուն Քուեշի ամրոցով։ Քուիշափոր գավառը ընդգրկում էր 495 կմ² տարածություն։ Այս գավառը, հավանաբար 363 թ. հետո, անջատվելով Գուգարքից՝ միացվել է Վրաց աշխարհին։

Քուստի գաւառ—Բ6—Արցախ նահանգի 11-րդ գավառը, արաբ. Քուսթասջի, մոտավորապես այժմյան Շամշադինի շրջանը՝ 1505 կմ² տարածությամբ։

Քուսաք (Խիսաք) ազգագաւառ—Ա6—այսպես են կոչվում «Աշխարհացոյց»-ում այժմյան Քիստերը, որոնք ապրում են Արղուն գետի ակունքների շրջանում։ Նույն «Աշխարհացոյց»-ում մի այլ տեղ կոչվում են «Խիսաք», որը բերում ենք փակագծում։

Քրվիկ բերդ—Գ3—Դեգիք գավառում, ենթադրաբար տեղադրում ենք այժմյան Ռաբաթ գյուղի տեղում։

Քցիա գետ—Բ6—վրաց. ქციის ხრამი, Քցիիսխրամի, այժմյան Խրամ գետը։

ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ, ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի

Ակն բիւրեղ—Գ3—Βήρυλλος', βηρύλλιον, Beryllus, горный хрусталь, горный кристалл. «Ակն ինչ պատուական, որոյ լաւն առ հնդիկս՝ է կապուտակ ծովագոյն կամ երկնագոյն, և յետ նորա դեղնագոյն՝ խառն ընդ երակս ոսկւոյ, և այլն. վարի և ի պէտս դեղոց» (ՆՀԲ, I, 491)։ Ըստ «Աշխարհացոյց»-ի ցուցման Եփրատ գետը, Արածանի գետի հետ միախառնվելուց հետո, «դնայ ընդ հարաւ, հատանէ զլեառն Տաւրոս. յորում տեղւոջ գտանի ակն Բիւրեղ» (Soukry, էջ 30)։ Այս վկայության հիման վրա բյուրեղի հանքերը տեղադրում ենք այնտեղ, որտեղ Հայկական Տավրոսը ձգվում է դեպի հարավ-արևմուտք և հատվում է Եփրատ գետով։ Այդ է ապացուցում նաև ուշ շրջանի (XIII դ.) վկայությունը. «Բիւրեղն՝ խաժագոյն է (կամ ծովագոյն) օդանման. և լինի սա ի սպառուած լերին՝ որ կոչի Տաւրոս, և ի յանցս Եփրատ գետոյ», Ոսկեփոր. և Վարդան. Եւ. (ՆՀԲ, I, 491)։ Բյուրեղի հանքերը նշված տեղում հայտնի էին հնագույն ժամանակներից։

Աղտոր—Բ4—Կոծոխուր, սմաղ, кожевенное дерево, кожевник, сумах—куст или деревцо Rhus cotinus, желтник, желтинник, рай-дерево, шевское дерево, кожевенное дерево—Rhus coriaria (Даль[1], IV, 360). «Աշխարհացոյց»-ը հիշատակում է Տայքում, որտեղ և տեղադրում ենք։ Ըստ Մխիթար աբբայի՝ «Բառգիրք Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1749, հատ. Ա, էջ 19) «Աղտոր... է պտուղ ինչ կարմիր և մանր, ոսպնաձև, և համով թթուաշ՝ և զովացուցիչ սրտի, ունի ի մէջ իւր գկորիզ փոքրիկ, որով և կերեալ լինի. զսա յաճախ ի կիր արկանեն ի հանդերձանս կերակրոց. մանաւանդ արկանեն ի վերայ դամասկեան պաղակուտի... լինի սա յաճախ ի Հայաստան ի յաշխարհն Տայոց, զոր պարսիկք կոչեն թառրի. և արաբացիք և տաճիկք սումախ, կամ սօմախ (ԲՀԼ, I, 19)։

Աղտք—Գ4—'Αλκός, Salsus, հանք աղի (ՆՀԲ, I, 44), соляные копи. Հիշվում է Բարձր Հայքում։ Մենք տեղադրում ենք Մանանաղի գավառում, Մանանաղի (այժմ Թուզլու-չայ) գետի ձախ ափին, վերին հոսանքում, որտեղ նախառևոլյուցիոն շրջանի ռուսական 10-վերստանոց քարտեզի վրա նշված է „сол. зав.", այսինքն՝ „соляный завод"։

Այծեամն—Բ4 և Դ6—Δόρκάς, δόρκων, Caprea, dorcas և Capreolis parva capra, серна—род горной антилопы, дикая коза; серна—антилопа, сугак (от сайга, сайгак), родовое название животного между козы и оленя (более 50-ти видов), с неветвистыми рогами, Antilopa ruricapra на Кавказе, джейран—Antilopa subgutturosa. за Кавказом (Даль, I, 178). «Այծ վայրի՝ արագոտըն և սրատես, բազմաճղի և տկար եղջե-

[1] Այստեղ և ստորև՝ Даль—Владимир Даль, Толковый словарь живого великорусского языка, тт. I, II, III, IV, М., 1956։

բօք» (ՆՀԲ, I, 90)։ «Աշխարհացոյց»-ում հիշվում է Բարձր Հայքում և Պարսկահայքում։

Անալուք—*Բ5—Հնում այս բառը հասկացել են իբրև* Καμηλοπάρδαλις, жираф։ *Այսպես է հասկացել նաև ՆՀԲ (I, 102), որը «Աշխարհացոյց»-ի ցուցմունքը այն մասին, թե անալութը գտնվում է Գուգարքում, ավելացնում է՝ «որպէս և յԵթէովպիա և ի Հնդիկս»։ Առաջին անգամ այս բառը ճիշտ մեկնաբանեց մեծանուն ուսուցիչ Հ. Աճառյանը. «…անալութ նշանակում է ոչ թէ «ընձուղտ», այլ, ինչպես ցույց է տալիս Համշէնի բարբառը, «եղնիկ» (Արմատական բառարան, I, 281)։ Անալութ—եղն, եղնիկ,* ''Ελαφος. Cervus elaphus, олень благородный։ *«Աշխարհացոյց»-ում «անալութ»—հիշատակվում է Գուգարքում, սակայն այս բառով եղջերու պիտի նշանակեր այժմյան Համշենի բարբառի ոլորտում ընկնող տերիտորիայում, որ Գուգարքի համար կարող էր լինել Ճորոխ գետի ավազանը, մոտավորապես Կղարջք (վրաց. Կլարջէթ) գավառում։*

Անիդ—*Բ4—տե՛ս Հաւք ճարակաւորք։*

Առեւծ, առիւծ—*Դ3*—Λέων, Felis, Leo, лев, *«Աշխարհացոյց»-ը առյուծը հիշում է Չորրորդ Հայքում, որ տարակուսելի է, սակայն չի բացառված, որ դեռևս* VI—VII *դդ. Հյուսիսային Միջագետքում կամ Հայոց Միջագետքում առյուծը պահպանվել էր։ Ասուրա-բաբելական աղբյուրներից և ասորեստանյան բարձրաքանդակներից երևում է, որ առյուծը շատ տարածված է եղել Տիգրիս և Եփրատ գետերի միջև ընկած անապատային վայրերում։ Մենք առյուծը տեղադրում ենք Հայկական Միջագետքում, որ հավանական է այդ ժամանակաշրջանի համար։*

Առն և արտիկ—*Բ3—Առն,* 'Αρνοιός, ''αρς, άρνος—*«ազգ արու ոչխարի. թերևս ոչխար կամ գառն վայրի» (ՆՀԲ, I, 307)։ Առն—շիկերէ, վայրենի արու ոչխար*—дикий баран, каменный баран—самец этого животного, Ovis argali։

Արտիկ, արտի—*վայրի ոչխարի էգը,* дикая овца, *«Ոչխար արտի, այսինքն վայրի» (ՆՀԲ, I, 382), «Արտիկք բազում անգամ երկաւորեակս ծնանին». Վեցօրեայ, Թ։ «Աշխարհացոյց»-ը նշում է Բարձր Հայքում, մենք տեղադրում ենք մոտավորապես։*

Արօս—*Բ4—տե՛ս* Հաւք ճարակաւորք։

Արտիկ, *տե՛ս* Առն և արտիկ։

Բամբակ—*Գ7*—Ξύλον, πάμβαξ, Gossypium L.—*«Բերք բուսոյ ի գոգակէ ելեալ՝ սպիտակ փափուկ, նիւթ հանդերձի ի ջերմ պահել զմարմինս» (ՆՀԲ, I, 430)։ Բամբակի սերմից յուղ են հանում, մնացած քուսպը անասունների ընտիր կեր է։* Eriophorum *(Ստ. Մալխ.,*[1] I, *321—2)։ Մեզ մոտ աճող բամբակը Վրկանի կամ Կովկասյան բամբակն է։ «Աշխարհացոյց»-ը բամբակը հիշում է Փայտակարան նահանգում. «Փայտակարան, լինի ի նմա բամբակ անբաւ»* (Патканов, *էջ 19)։ Մենք տեղադրում ենք Գարգարացւոց (այժմ Միլի) դաշտում, որտեղ բամբակը կարող էր բուսնել վայրի վիճակում, այսինքն՝ լինել «ինքնաբոյս»։ «Բամբակ անբաւ» Աղվանքում հիշատակում է նաև Մովսես Կաղանկատվացին (I, Ե) և, անշուշտ, նկատի ունի նույն Գարգարացւոց դաշտը։*

Գազպէ—*Գ4—Գազպէն, գազապէն,* 'Ρητίνη, Resina. Μάννα, 'αιρμελη, Manna, Манна—сахаристый, сгущенный сок ясени итальянской (круглолистной)—Fraxinus roi undifolia։ *Գազպեն արտադրում են ծառերի հացիի տեսակները և կաղնիների շատ տեսակներ։ Փավստոս Բուզանդը (III, ԺԴ) Տարոնում, Հացեկաց գյուղի մոտ հիշատակում է «Հացեաց դրախտ» անտառը, որտեղ և տեղադրում ենք «Աշխարհացոյց»-ում Տավրուբերան նահանգում հիշատակվող գազպեն։ Ըստ ՆՀԲ (I, 522) գազպէն է՝ «Ռետին քաղցր որպէս զմանանայ թանձրացեալ ի ցօղոյ երկնից ի վերայ տերևոց տնկոց և բուսոց»։ Ավելի պարզ է վկայում Զենոբ Գլակը. «Որպէս մանանայն սառ իջանէ ի վերայ անտառացն, զոր գազապէն կոչեմք»։*

Գարի—*Գ7*—Κριθή, Hordeum vulgare, ячмень—*«Ազգ արմտեաց ցորենանման, կուր երկվարաց, և հաց նորա կերակուր աղքատաց» (ՆՀԲ, I, 531)։ «Աշխարհացոյց»-ը նշում է «գարի ինքնաբոյս» Փայտակարան նահանգում, որտեղ և տեղադրում ենք մոտավորապես։*

Գերերի—*Գ7—Գետնասունկ, դոմբալա,* Tuber melanosporum, *«Աշխարհացոյց»-ը հիշատակում է Սյունիքում, որտեղ և տեղադրում ենք, նրա հարավային, բուսականությամբ հարուստ տեղում։*

Գինի—*Գ6*—Οῖνος, Vinum, ღვინო, вино—*«Աշխարհացոյց»-ը հիշատակում է «Գողթն գինեւէտ»-ը, որտեղ և տեղադրում ենք։*

[1] *Այստեղ և ստորև՝ Ստ. Մալխ.-Ստեփաննոս Մալխասեանց. Հայերէն բացատրական բառարան։*

Գղթոր—*Գ4*—Κηκίς, Galla, чернильный, дубовый орешек—*«Բերք վայրի կաղնեաց, զոր վարեն խաղախորդք, ներկարարք, և դեղավաճառք» (ՆՀԲ, I, 563), «Գղթորից ստացվում է ընտիր և սև ներկ, որը գործ է ածվում թանաք շինելու համար» (Մալխ. I, 451)։ «Աշխարհացոյց»-ում գղթորը հիշատակվում է Աղձնիքում, ուստի մենք տեղադրում ենք վայրի կաղնիների* (дуб чернильноорешниковый, Quercus infectoria) *անտառներով հարուստ Սանասունք գավառում։*

Դեզհուկ—*Գ4—«Հաւ դեզհուկ»—անհայտ թռչուն, որ հիշվում է միայն «Աշխարհացոյց»-ում մեկ անգամ Աղձնիք նահանգում։ Այլ տեղեկություն չունենալով, մենք հնարավորություն չունենք որոշելու, թե թռչունների որ տեսակին էր պատկանում և քարտեզի վրա նշված է հարցական նշանով։*

Եղջերու—*Բ4*—''Ελαφος, Cervus, cervus elaphus—*ազնիվ եղջերու։ Եղջերու էր կոչվում արուն, որ գլխի վրա կրում էր եղջյուրներ։ Եղջերուի էգը կոչվում էր եղնիկ*—лань։ *Եղն կամ եղնիկ նշանակում է նաև եղջերու ընդհանրապես։*

Եղն—*«Էրէ գեղեցիկ՝ թաթահերձ, երագոտն, սատակիչ օձից, բազմաճղի եղջերօք. յորմէ կոչի և եղջերու» (ՆՀԲ, I, 656)։ Պատմական Հայաստանում եղջերուն գոյություն ուներ բոլոր բարձր լեռնային գոտիներում, որտեղ անտառ կար։ Այժմ այս կենդանին Հայաստանում համարյա վերացել է։*

«Աշխարհացոյց»-ը եղնիկը հիշատակում է Բարձր Հայքում. մենք զետեղում ենք անտառներով հարուստ Ճորոխ գետի վերին հոսանքի՝ Զորմայրի շրջանում։

Եղեգունք—*Գ7—Եղէգն,* Κάλαμος, Arundo, calamus, камыш. *Այս բույսը պատահում է ճահճուտ տեղերում և պատահական չէ, որ «Աշխարհացոյց»-ը հիշատակում է Փայտակարանի նահանգում։ Մենք զետեղում ենք Բաղասական (այժմ Միլի) դաշտում՝ Կուր գետի եզերքին։*

Երկաթ—*Գ3 և Գ5* Σίδηρος, Ferrum, რკინა, железо—*Հայաստանում երկաթահանքերը հայտնի էին շատ տեղերում, հատկապես Հայկական Տավրոս լեռներում. «Աշխարհացոյց»-ը տեղեկություն է պահպանել միայն երկու տեղ՝ ա) Աղձնիքում՝ «ունի երկաթ քաջ» կամ «ունի նաւթ և երկաթ առավել», որը մենք զետեղում ենք Անգեղ-տուն գավառում, որտեղ շահագործում էին երկաթահանքերը՝ այժմյան Արղանա-Մադենի հանքերում, բ) Տավրուբերանում։ մենք զետեղում ենք Նրևարք գավառում, որին հարավից եզերող Հայկական Տավրոս լեռնաշղթայի այս մասը հին հայերը կոչում էին «Լեառն երկաթահատացն և կապարահատացն» (Փաւստոս, III, Ժ)։*

Երէ—*Բ4, Գ3*—Θηριον, δήρα, Ferus, fera, ნადირი, дичь—*«Վայրի կենդանի չորքոտանի՝ որսալի և ուտելի» (ՆՀԲ, I, 682)։ «Աշխարհացոյց»-ը այս հավաքական բառով է նշում որսի կենդանիները Բարձր Հայքում և Ծոփաց Կողմում, որ և ցույց ենք տալիս համապատասխան տեղերում։*

Զառիկ—*Դ5—ինչպես մեկնաբանում է Հ. Աճառյանը (Արմ. բառ., II, 900—901), «զառիկ» նշանակում է «մկնդեղ,* arsenicum». *լինելով իրանյան փոխառություն, նշանակում է «ոսկեգույն դեղին»։ Նույն իմաստով է բերված նաև Ստ. Մալխասյանի «Հայերէն բացատրական բառարանում» (II, 9)։ Սակայն ուշադրություն չի դարձված, որ սույն բառի այս բացատրության կողքին գոյություն ունի ավելի բազմիմաստ մեկնություն, որը տալիս է Ա. Խուդաբաշյանը. «Զառիկ. . .* Опермент, самородный желтый арсеник, мышьяк, сандарак, можжевеловая смола» (Александр Худобашев, Армяно-русский словарь, Москва, 1838, ч: I, стр. 381)։ *Վերջինիս իմաստը ավելի մանրամասն տալիս է Վ. Դալը.* *Сандараковая* смолка, *сандарак*, добывается из вида можевела; писцы протирают ею скоблюшки, чтобы письмо не растекалось. Сандарак, реальгар или красный мышьяк» (Даль, IV, 137). *Այս բացատրությունից պարզվում է, որ «զառիկ» բառն ունեցել է նաև այլ իմաստ, այն է «շնարակ»,* Σανδαράκη,[1] Sandaracha, qummi. *«Բոյս ինչ և հիւթ նորա՝ ախորժելի մեղուաց, ուստի լինի ներկ կարմիր փայլուն որպես վերնիչ՝ ըստ իտալ.* սենտերուս, սենտելուս» *(ՆՀԲ, II, 674)։ Շնարակ 1) Մի քանի կոնաբեր ծառերից ծորող ռետինային խեժ, սպիտակ դեղնորակ, անհոտ և անհամ, արտասուքի կաթիլների նման, որ վառում է, պայծառ բոցով և ախորժելի հոտով։*

2) Շնարակից պատրաստված ջրդեղ, վերնիճ, որով ծեփում են կավե ամանները ներսի կողմից, փայլունություն տալու և ծակոտիները խցելու համար։

[1] *Սանդարակը հիշատակում է Վիտրուվիոսը Պոնտոսում։*

3) Քիմիական նյութ, կարմիր ծծմբուկ զառիկի (AsS), բյուրեղային, ապակենման, դյուրահալ, ցնդական, անհոտ, անհամ և սաստիկ թունավոր, որ գործ է ածվում նկարչության մեջ, նաև հրախաղության մեջ՝ սպիտակ բոց ստանալու համար, չնարեկ» (Ստ. Մալխ., IV, 141)։

«Զառիկ» բառի իմաստը տվյալ կոնտեքստում դեռևս կարիք ունի լուսաբանման նոր տվյալների հիման վրա։ «Աշխարհացոյց»-ը հիշատակում է Կորճայք նահանգում, որտեղ և դրել ենք ենթադրաբար։

Թուզ—Բ4—Թզենի ծառի պտուղը. Հայաստանում աճում էր հատկապես անտառապատ տեղերում, բարեխառն կլիմա ունեցող հովիտներում։ «Աշխարհացոյց»-ում վկայված է Տայքում։ Պայմանականորեն ցույց ենք տալիս Ազորդ (այժմ Թորթում) գետի ձորում։

Ինձ—Դ5—Leopardus, барс, пантера, леопард. «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է «Ինձ գեղեցկախայտ» Մոկք նահանգում, որտեղ և ցույց ենք տալիս։

Խոզ—Բ4—Sus, Porcus, վարազ, կինճ, свинья, боров, кабан—свиной самец; вепрь—дикий кабан, дикий свиной самец; веприца—дикая свиная самка. «Աշխարհացոյց»-ում հիշվում է Բարձր Հայքում. մենք տեղադրում ենք «Շամբ Կարնոյ» կոչված ճահճուտներում։

Կաստանենոն (մաշկամիրգ)—Դ4—Fagus castanea, Կաստանայ—«Պտուղ յայտնի. և ծառ նորա, որ և շագանակ՝... և Շահպալուտ (իբր արքայական կաղին)» (ՆՀԲ, I, 1060)։ Կաստանայի (շագանակի) ծառը կոչվել է «կասկենի» (տե՛ս անդ, էջ 1059)։ Կաստանայ—շագանակը մաշկով պատած լինելու պատճառով կոչվել է նաև «մաշկամիրգ» (Ստ. Մալխ., III, 259)։ «Մաշմրգի է կոչվել Շագանակի ծառը և նրա փայտը» (անդ)։ Մաշկամիրգ էր կոչվում հատկապես վայրի շագանակենին—Aesculus hippocastanum, каштан дикий, որ և տարբերվում է ընտանի շագանակենից—Castanea sativa կամ vesca։ «Աշխարհացոյց»-ը Տավրուբերան նահանգում հիշատակում է «կաստանենոն որ է մաշկամիրգ». զետեղում ենք Արածանիի հովտում։

Կատակ—Բ7—այս բառի իսկական իմաստը մնում է անորոշ։ ՆՀԲ (I, 1060) բացատրում է իբրև՝ «Ազգ թռչնոյ, թերևս նոյն ընդ Կատար (պարսկ. Քեսեք, որ է անծեղ, արաբ. ագագ; թուրք. սաղսըղան)»։ Կատարը նույնացվում է արաբ. gudaf կամ gadaf, իբրև «մի տեսակ ագռավ կամ մի ուրիշ թռչուն։ Անորոշ տեսակի խոտաճարակ թռչուն։ Ըստ Քաջ[բերունու] լորամարգի նման թռչուն, բաձրասրունք, երկայն կտուցով, երկայն մատներով ու կարճ պոչով, որ բնակվում է մացառներում (Rallus)» (Ստ. Մալխ., II, 396—397)։ Լորամարգին հայտնի է իբրև «հատկապես մարգերի մեջ վազվզող լորի պարարտ ձագ» (անդ, II, 209), իսկ լորը՝ «կաքավների ընտանիքին պատկանող փոքրիկ չվող թռչուն» է (անդ)։

Այս ցուցմունքներից հատկապես հետաքրքիր է այն փաստը, որ կատակը նույնացվում է անծեղին։ Ըստ ՆՀԲ (I, 166), անծեղ կամ անձեղը է «Թռչուն նման կկուի, կամ կաչաղակի, ի չափ աղաւնոյ, սպիտակափետուր սևախառն, երկայն տտամբ»։ Նույն կարգին է պատկանում նաև կասկամ թռչունը։ Ըստ ՆՀԲ (I, 1059), կասկամ է «Ազգ բուոյ, բուիճակ, պայղուշ, յոր հայի ասելն Մխ. առակ. «Բուիճակ աղաղակէ կաս, և միւսն ասէ կամ. սակայն ոչ կայ, այլ թըռուցեալ այլուր երթայ»։ Նշանակալից է, որ այս անծեղ, կասկամ և կատակ թռչունները նույնացվում են կաչաղակին։ Ըստ ՆՀԲ (I, 1053) «կաչաղակ—Κίττα, Pica, տես և ԱՆԾԵՂ, ԿԱՍԿԱՄ, ԿԱՏԱԿ։ Անուն թռչնոյ, որ ի բժշկարանին գրի «կեչեղակ, սաղսըղան, յաղաղ»։

Այս տվյալները ցույց են տալիս, որ կատակ է կոչվել կաչաղակի խմբին պատկանող թռչունը։ Կարելի է ենթադրել, որ կատակը հեթանոսական Հայաստանում սրբազան թռչուն էր, նվիրված Միհր աստծուն և ընդհանրապես կոչվել է ագռաւ։ Օրինակ Միհրի պաշտամունքի գլխավոր կենտրոնները, հոչակված իրենց սրբազան քարայրներով, որտեղ կատարվում էին միհրական ծիսակատարությունները, կոչվում էին Ագռաւաքար։ Մեկը սրանցից գտնվում էր Վան քաղաքի արվարձաններում և ժողովուրդը կոչում էր «Ակրփու քար», մյուսը՝ Անձևացյաց գավառում, որտեղ հետագայում հայտնի էր Հոգվոց վանքը։ Անանիա Շիրակացին բերում է հունական մի ավանդություն, որ որոշ լույս է սփռում մեզ հետաքրքրող հարցին։ Նա ասում է՝ «Յառաջագոյն հեթանոսաց՝ երբեմն սիրելի Ապողոնի վասն սպիտակն գոլոյ, այլ յետոյ փոխեալ ի սևութիւն. և վասըն յամելոյն ի բերել ջուր՝ փոխադրեալ յաստեղս ի ներքոյ աստեղատան Առիւծուն և Կուսին՝ դէպ յԸմպանակն, առ տտամբ Վիշապին» (ՆՀԲ, I, էջ 3, «Ագռաւ» բառի տակ)։

Մեր խնդիրը պարզաբանելու համար կարևոր է հիշել, որ կատակ բառից են առաջացել կատակ, կատակերգութիւն, կատակերգակ, կատակագուսան, կատակութիւն բառերը, ճիշտ այնպես, ինչպես մի այլ թռչունից՝ կաքաւից առաջացել են՝ կաքաւ, կաքաւանք, կաքաւերգութիւն, կաքաւիչ և այլն։ Ըստ Փաւստոսի (Գ, 19) «ըմպէին անդ գինի բոզօք և վարձակօք և գուսանօք և կատակօք»։ Մի այլ տեղ՝ «ի կատակացն, ի գուսանացն ձայնս։ Կատակաց և կաքաւչաց սնուցիչք» (Ն. Լամբրոնացի, Ժող. և իմ.)։ Ըստ ՆՀԲ (I, 1060) կատակերգակ նշանակել է՝ Κωμῳδός, Comoedus, «Երգով կատակող ի թատրոնի, քերթող քատակացոյց և ծաղրածու, միմոս, որ և յուն. ձայնին կոմիկեան», ապա բերում է վերին աստիճանի հետաքրքիր և կարևոր մատենագրական վկայություններ. «Եւրիպիդէս ողբերգակ... Արիստոփանէս կատակերգակ երևէին», Շիր. Քրոն... «ԶՄենանդրոս ասեմ զգլուխ կատակերգակացն։ Ըղլոյժ հըռչակելոյ կատակերգակիս Մենանդրի», Գիրք Պիտոյից։ Ինչպես գոյություն ուներ ողբերգութիւն, ողբերգության՝ տրագեդիայի իմաստով, այնպես էլ գոյություն ուներ կատակերգութիւն՝ կոմեդիայի իմաստով։ Ըստ ՆՀԲ (I, 1060), կատակերգութիւն է՝ «Κωμῳδία, Comoedia, fabula, satira. Նուագ և խաղ ծաղրաշարժ կամ միմոսական. գործ կոմիկեանց ի թատրոնի, ծաղրածութիւն»...։ «Ողբերգութեան արտօսր հետևի, իսկ կատակերգութեան ծաղր», Նոննոս։ Մի այլ տեղ՝ «Հագներգութիւն, փանդեռներգութիւն և կատակերգութիւն։ Կատակերգութեանցն գեղեցկագոյնք առանց ծիծաղանաց են», Պղատ. օրին. Բ, Է, Ժա, կամ՝ «Երգս կատակերգութեան չնարահար պոռնկի», Նար. Լթ.։

Վերև բերված վկայություններից կարելի է կռահել, որ կատակ թռչունը կաչաղակի կամ ագռավի տեսակին պատկանող թռչուն է եղել և համարվել է սրբազան։ Կատակ-ագռաւը կապվում է Միհրի պաշտամունքի արարողությունների հետ, որոնք կատարվում էին այդ աստծուն նվիրված քարանձավներում։ Միհրական միստերիաները ունեին օրգիաստիկ բնույթ և «կատակ» կամ (քատակ), «կատականք» նշանակել են Միհրին նվիրված սրբազան պարերը։ Այս կապակցությամբ հետաքրքիր է բերել Յակոբ Մծբնացուն վերագրվող կոնտեքստը. «Ապականեսցին բագինք կատակութեամբ» (ՆՀԲ, I, 1060)։ Ըստ երևույթին, այս սրբազան պարերը կատարվում էին հատուկ զգեստներով և կատակ թռչունի դիմակով։ Կատակ կամ քատակ բառի հետ պիտի կապել վրացերեն ქადაგი քադագի[1], որ նշանակել է նաև ուխտագնաց, ընկնավոր, որը էքստազի մեջ գուշակություններ էր անում։ Պիտի ենթադրել, որ Ստրաբոնը (XI, 4, 7) այս «կատակները» նկատի ունի, երբ խոսում է Աղվանից երկրում ընդունված մարդկային զոհերի մասին, ուստի պատահական չպետք է համարել, որ «Աշխարհացոյց»-ում կատակ թռչունը նշվում է Ուտիք աշխարհում։ Մենք կատակ թռչունը տեղադրում ենք Ուտիք Առանձնակ գավառում։

Կաքաւ—Բ4—Դ5—ասոր. qaqqawa, Πέρδιξ, Perdix, վրաց. კაკაბი կակաբի՝ рябчик, Tetrao bonasia. ըստ ՆՀԲ (I, 1080) «Թռչուն ոստոստող՝ մոխրագույն ճանճկէն՝ կարմրակտուց, և կարմիր ոտիւք, փափկամիս, ի չափ պարարտ աղաւնոյ, և նման լորամարգի»[2]։ «Աշխարհացոյց»-ում կաքաւ թռչունը հիշվում է Բարձր Հայքում, որտեղ և նշել ենք։

Կըկիթ, տե՛ս Վիթ։

Հաճառածառ—Բ6—Հաճարի, հաճարկի, հաճարուկ, աճարի, հաճարենի, աճարենի, бук, Fagus sylvatica կամ Fagus orientalis, «բաժակաբերների կարգին պատկանող մեծ գեղեցիկ ծառ, ողորկ մաքրագույն կեղևով, հավկըթաձև կաշեկերպ լերկ տերևներով, կակղափուշ չորեքանկյունի փոճոկի մեջ գործ յուղալի եռանկյունի կաղիններով, կարծր կարմիր փայտով, որ ընտիր վառելիք է, փեկոն։ ...Հաճառի պտուղներից ստացվում է համեղ ձեթ, նման նշի ձեթին»։ Հաճարի պտուղը կոչվում է նաև Աճառի, Պիստակ աճառի (Ստ. Մալխ., III, 19)։ Бук белый—Carpinus betulus, граб, грабина, бук черный в южной Европе. У Кавказских арб буковые оси (Даль, I, 139)։ Ըստ ՆՀԲ (II, 10), «հաճարի, հաճարուկ, անուն ծառոյ. «Զհաճարի և զփիճի, զի ոչ են բազմոստք, և ոչ ընդդիմանալ հողմոց կարեն՝ ի խոր արմատս ոչ ունելով»։ Մխ. առակ. ԻԲ։ «Մուրտն և ընկոյզն և նուշն,

[1] Նշանակում է քարոզող, ուսուցիչ, վարդապետ։

[2] Այս բառից են առաջացել ա) «կ ա ք ա ւ ք կամ կ ա ք ա ւ, Ὄρχησις, χορός, saltatio, chorea, tripudium, խաղ ոստոստելոյ, կայթ, պար, որ է կաքաւանք, կաքաւումն»։ բ) «կ ա ք ա ւ ա ր ա ն, Ὀρχήστρα, ὀρχήστριον, Orchestra; pars theatri, in qua chorus saltabat: Տեղի կաքաւելոյ և պարուց և թատրոնի»։ գ) «կաքաւիչ», Ὀρχούμενος, ὀρχηστής, Saltater. Այր կամ կին՝ որ կաքաւէ» (ՆՀԲ, I, 1080) են։

և քնարուկն, և հաճարուկն» Ագաթ.: «Աշխարհացոյց»-ը ցույց է տալիս Գուգարքում, որ հատկապես հարուստ էր աճարկուտներով հատկապես այժմյան Լոռիում: «Քեօթուկ Սանահնի» (Մատենադարանի ձեռ. № 3031, էջ 70բ—77բ) մատյանում, իբրև Սանահնի թեմի սահման, հիշատակվում են «Ջանդարաձոր» և «Աճարաձոր»: Առաջինը կապվում է «Ճանդար» բառի հետ, որ նշանակում է բարտի ծառ և տեղադրվում է Ալգետ գետի ներքին հոսանքում, որտեղ այժմ էլ գոյություն ունի Ջանդար գյուղը, Մառնեուլի շրջանային կենտրոնի մոտ: Ջանդարաձորից ոչ հեռու պետք է գտնվեր Աճարաձորը: Այս վերջին տեղումն ենք զետեղում «Աշխարհացոյց»-ի «հաճառածառ»-ը:

Հաւք—Գ3—''Ορνεον, ὀρνίθιον, Avis, avicula, птица, ընդհանրապես թռչուն և մասնավորապես հավազգիների պատկանող թռչուն. հաւ նեղ իմաստով նշանակում է որձ հաւ՝ աքաղաղ, աքլոր, իսկ հաւի էգը կոչվում էր մարի («էգ հավ կամ թռչուն, մայր ձագուց»): «Ցաղթամարմինք հաւքն՝ փորն և թանձրն և սագն, Ղ, Փարպ.: Այսպիսի «հաւք» անորոշ ձևով «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Ծոփաց կողմը, որտեղ և զետեղում ենք:

Հաւք ճարակաւորք—Բ4—Ճարակող՝ արածող, արոտական թռչուն, «հաւ, որ ճարակին ի դաշտս», «Անբաւութիւն ձկանց, և զանազան հաւուց ճարակաւորաց» Ոսկ. (տես ՆՀԲ, II, 174)): «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Բարձր Հայքում՝ «և ի հաւուց ճարակաւորս, զորս կաքաւ, զարաւշ, զանիդ և զայլըս»: Քարտեզի վրա ցույց է տրված Կարին գավառում:

Ձիթենի—Բ7—'Ελαία. ἐλαιών, Olea, oliva, olietum, olivetum, олива. Ձիթաբերների կարգին պատկանող ծառ, որի պտուղից՝ ձիթապտուղից լավագույն ձեթն է ստացվում: «Աշխարհացոյց»-ում ձիթենին հիշատակվում է Ուտիք նահանգում, մենք ցույց ենք տալիս Ուտիք Առանձնակ գավառում:

Ձիղկ—Գ4—անորոշ տեսակի հանքային նյութ, որ հիշատակվում է միայն «Աշխարհացոյց»-ում և, այլ տվյալներ չունենալով, դժվար է որոշել: Հիշատակվում է Տավրուբերան նահանգում Մեղեդուղխ և Այծպտկունք լեռներում՝ «գտանի սալակ և ձիղկ և նաւթ սև և սպիտակ». մենք զետեղում ենք Մեղեդուղխ լեռներում հարցական նշանով:

Ձուկն—Ա6, Բ5, Բ3—«Աշխարհացույց»-ում հիշատակվում է չորս տեղ:

Ա6—Վրաց աշխարհում, որի մասին ասված է՝ «ունի գետս լի ձկամբք». մենք ցույց ենք տալիս Արագւ գետի մոտ, որտեղ մինչև հիմա էլ որսում են «օրագուլի» կոչված ձուկը:

Բ5—Ջաւախք Վերին գաւառում, որի համար ասված է՝ «լեառնադաշտքն Ջաւախաց բազում լճօք լի զանազան ձկամբք»: Մենք նշել ենք Փարվանա լճում, որը հայտնի է իր կարմրախայտների ցեղին պատկանող ձըկներով:

Գ8—Ծոփաց աշխարհում. մենք ցույց ենք տալիս Արածանի գետում:

Գ5—ձուկն [տառեխ], տե՛ս [տառեխ] ձուկն:

Մանրագոր—Գ5—Μανδραγόρας, Mandragoras Mandragora officinarum, мандрагора. Ըստ ՆՀԲ (II, 207). «Բոյս կամ թուփ, որ բերէ պտուղ իբր մանր խնձոր ի չափ սխտոան կամ ողկուզակս. որոց հատքն են իբրև արքակաղնոյ, և ծաղիկն անուշահոտ. զորմէ բազում են կարծիք առ զանազանս. այլ առավել կարծի բանջար ինչ, որոյ արմատն իցէ որպէս բողկ՝ ուրուական նմանութեամբ մարմընոյ մարդոյ, և լինիցի դեղ թմրեցուցիչ և քնաբեր, վասն որոյ ասացեալ ի լատ. Նաև Circaeum, իբր գործի Կիրկեայ դեղատու վհկի, և Semihomo, կիսամարդ, և Vesanum gramen, բոյս՝ որ յայլոյ խելս առնէ զմարդ ի սիրոյ»... «Երփն երփն ծաղկանցն, որպէս մանրագորն, և վարդն, և շուշանն». Ագաթ.: Այս բույսը այժմ էլ ժողովուրդը գիտե և կոչում է լոշտակ կամ մարդ-արմատ: «Աշխարհացոյց»-ում մանրագորը հիշատակվում է Մոկաց աշխարհում, որտեղ և նշում ենք:

Մաշ կարմիր և սպիտակ—Գ4—Մաշ, սանս. maša—լոբի, քրդ. maš—ոսպ, բակլա, Pisum sativum: Ըստ ՆՀԲ (II, 208): «Ոլոռն մանր, կամ ոլոռնաձև ընդեղէն», «կազմեալ կայր մաշ ի դարմանն հիւանդաց, և սնափառէր, և այլոց սերմանեաց և հընդոց ոչ տարեալ՝ այպանեն զնովաւ, և դու (ասեն) ծանծաղամիտ գոլով, ըստ որում մաշ կոչիս, փքաս»: Մխ. առակ. ԽՋ: «Մաշ կարմիր և սպիտակ» «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Տաւրուբերան նահանգում, որտեղ և նշում ենք:

Մուրտ—Գ7—Μύρτος, Myrtus communis; мирт, мирсина—растение, кустик, похожий на вереск и на букс или самшит. Ըստ ՆՀԲ (II, 301), «Ծառ, որ կոչի նաև մրտենի, մրտի. և պտուղ նորա. μύρτον, bacca, sive fructus myrti. Տունկ կամ թուփ մանրատերև մըշտականաչ անուշահոտ, որոյ պտուղն է իբրև համեմ կծու՝ ախորժելի ստէպ ճաշակողացն, այլ անախորժ անսովորից: «Տերևս մրտոց խնկենեաց: Զտոսախն, զմուրտն, և զնոճն», Նեեմ. Ը, 15: Ես, խա, 19, Ծէ, 13: «Մուրտ և տոսախ, գիք և դաքնիք»: Վեցօր. Ե.»: «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Սյունիքում. մենք նշում ենք Երասխի հովտում, որտեղ (այս մասում) աճում են մերձարևադարձային բույսեր:

Նաւթ—Դ4—Νάφθη, Naphtha, ըստ ՆՀԲ (II, 409), «Ազգ կպրոյ՝ լոյծ և դիւրավառ և դժուարաշէջ, որ և անշէջ ասի առ յոյնս. „Ἄσφαλτος, Bitumen“. «Աշխարհացոյց»-ը նավթը հիշատակում է Աղձնիքում. քարտեզի վրա նշում ենք մոտավորապես:

Նաւթ սև և սպիտակ—Գ4—հիշատակվում է Տավրուբերան նահանգում՝ Մեղեդուղխ և Այծպըտկունք լեռներում, որտեղ և զետեղում ենք:

Նաւթ սպիտակ—Գ4—հիշատակվում է Տավրուբերան նահանգում. մենք նշում ենք Տարոն գավառում, այժմյան Նորշեն գյուղի շրջակայքում, որտեղ այժմ էլ հայտնի են նավթի աղբյուրներ:

Նհանգ—Դ3—Ἱπποπόταμος, Hippopotamus, equus fluvialis, crocodilus, draco acuatilis: Ըստ ՆՀԲ (II, 430). «Ջրագետի, գազան ջրային, որպէս կոկորդիլոս, վիշապ ձուկն, փոկ, և այլն»: «Աշխարհացոյց»-ը բերում է ավանդություն, «Ասեն թէ նհանգ կայ յԱրածանի, որպէս յԵփրատ», որ, անշուշտ, սխալ է: Արածանի գետում կոկորդիլոս չէր կարող ապրել, այն կարող էր բարձրանալ մինչև Եփրատ գետի միջին հոսանքը, որտեղ և նշում ենք:

Նուշ—Բ4—'Αμύγδαλον, Amygdalum: Ըստ ՆՀԲ (II, 452), «Ազնիւ և իւղային պտուղ անոյշ՝ մատնաձև կամ կաղնաձև տափարակ երկայն, ընտիր քան զամենայն չոր միրգս փեճեկաւորս: Ծառն ևս կոչի Նշենի կամ Նշի, ևս և Նուշ»: «Աշխարհացոյց»-ում հիշատակվում է Տայքում, որտեղ և զետեղում ենք:

Նուռն ազնիւ—Գ7—ըստ ՆՀԲ (II, 452), «Նուռն, նռան, նռունք, կամ նըռնունք, նռանց: 'Ροά, ῥοιά, Malum punicum. malagranatum... Պտուղ գնդաձև՝ թագ ի գլուխ, կարմրակեղև և կարմրահատ՝ կուռն մարգարտաշար հատիւք, անոյշ, կամ թթուաշ, օգտակար որպէս ըզդեղ զովարար»: «Աշխարհացոյց»-ը հիշատակում է Սյունիքում. մենք նշում ենք Արևիք գավառում, որը այժմ էլ հայտնի է իր ընտիր նռով:

Նուռն թթու—Բ4—«Աշխարհացոյց»-ը հիշատակում է Տայքում, որտեղ և նշում ենք:

Շահդանակ—Դ5—կամ շահնդակ, կանեփի սերմ, կանեփի հատիկ (Մալխ., III, 494): «Աշխարհացոյց»-ը նշում է, որ Կորճայք նահանգում աճում են «ի պտղոց շահդանակ, այսինքն զանգար փշոյ սերմն»: Զետեղում ենք Մեծ Զաբ գետի հովտում:

Որդան կարմիր—Բ6—Coccus cacti, кошениль (Որդան կարմիր խոտ—Aeluropus villosus) (Ստ. Մալխ., III, 581): Ըստ ՆՀԲ (II, 528)«... (առեալ ի սեռականէ բառիս Որդն) Κόκκινον, Coccinum. Ընտիրն ի մէջ կարմիր ներկոց, այն է փոքրիկ և կարմրիկ որդն գտեալ ի տերևս վայրի կաղնոյ, այսինքն բալամուտի, որպէս և նիւթն ներկեալ նովին, որ պարզապէս կարմիր կոչի յոլովակի. զըրմըզ»: Հայաստանի որդան կարմիրը մեծ համբավ ուներ ամբողջ Հին Աշխարհում: «Աշխարհացոյց»-ում որդան կարմիրը հիշատակվում է Այրարատում. «որդն յարմատոյ սիզոյ առ ի զարդ կարմրութեան գունոյ»: Որդան կարմիրը մինչև վերջերս հայտնի էր Արարատյան դաշտում Վաղարշապատի և Արտաշատի միջև ընկած դաշտավայրում, որտեղ և նշում ենք: Որդան կարմիր ներկով զբաղվող ներկարարները հատկապես կենտրոնացած էին Արտաշատում: Միջին դարերում Արտաշատը կորցրել էր իր նախկին փայլը և համարվում էր Դվին մայրաքաղաքի արվարձաններից մեկը: Արաբական հեղինակները այս ժամանակվա Արտաշատը կոչում են «Ալ-կըրմըզ» — «ներկարարների քաղաք»:

Պիստակ—Գ4—Πιστάκιον, Pistacium. Ըստ ՆՀԲ (II, 649) «Կրկին ազգ պտղոյ, մին կոնոնաձև բերք ծառոյ, որ նման է մայրեաց, և միւսն ողկուզաձև, բերք այլոյ տնկոյ»: «Աշխարհացոյց»-ում պիստակը հիշատակվում է Տավրուբերան նահանգում. մենք զետեղում ենք Հայկական Տավրոսի հարավային—արեգունի փեշերին:

Պտղախունկ—Բ5—Древесный ладан. Ըստ ՆՀԲ (II, 664) «Անուն անուշահոտ պտղոյ և ծառոյ նորա» ըստ Ստ. Մալխ. (IV, 124) «Անորոշ տեսակի ծառ, որ տալիս է խնկի նման անուշահոտ պտուղներ(?)»: Այլ վկայություններ չունենալով, բառիս իմաստը տակավին մնում է մութ: «Աշխարհացոյց»-ում

հիշատակվում է Տայքում, որտեղ և նշում ենք քարտեզի վրա։

Ջերմուկ—Գ4—Θερμαί, Thermae, теплые воды. Հայկական լեռնաշխարհը հարուստ է իր ջերմուկներով, որոնցից մի քանիսը հայտնի էին իրենց բուժիչ հատկություններով։ Հին Հայաստանում առանձնապես մեծ հռչակ էր վայելում Կարնոյ գավառի ջերմուկը, անտիկ հեղինակների Elegeia վայրում (այժմ Իլիջա), որը և աչքի առաջ ունի «Աշխարհացույց»-ը, երբ հիշատակում է ջերմուկներ Բարձր Հայքում, որ և ցույց ենք տալիս քարտեզի վրա։

Սալակ—Գ4—միակ վկայությունը գտնվում է «Աշխարհացույց»-ում, ուստի մնում է անբացատրելի. անհայտ տեսակի հանքային նյութ։ Վերջերս պարզվեց, որ պահլավերեն դատաստանագրքում՝ «Մատիկան հազարի Դատաստան»-ում «սալակ» նշանակում է ձույլ արծաթ։ «Աշխարհացույց»-ում սալակը հիշատակվում է Տավրուբերան նահանգում Մեղեդուղի և Այծպըտկունք լեռներում՝ «...Մարդաղի (գաւառ)՝ առ Մեղեդու[ղ]ի լերամբ, մինչև ցնոյն Այծպըտկունս որ բաժանէ ընդ Կարին և նա (այսինքն՝ Մարդաղի գավառը—Ս. Ե), յորում գտանի սալակ եւ ձիղկ և նաւթ սեւ և սպիտակ» (Soukry, էջ 31)։ Քարտեզի վրա Մեղեդուղի լեռներում նշված է՝ «Սալակ [արծաթ]?»։

Սերկեւիլ—Բ5, Բ6—Սերկեւլի, Κιδώνιον μῆλον, Cydonium malum, cotoneum, malum sydonia, cotoneus, Cydonia vulgaris, айва. Ըստ ՆՀԲ (II, 708) «Պտուղ դեղին՝ մեծ քան զխնձոր, ախորժ թթուախառն, և ծառ այնր պըտղոյ... յուն. գիտօնիօն, որպէս բերք Կիտոն քաղաքին Կրետայ»։ «Աշխարհացույց»-ում սերկևլին հիշատակվում է Տայքում (Բ5) և Գուգարքում (Բ6), որ տեղերում և նշված են քարտեզի վրա։

Վարընկենի—Բ7—померанцевое дерево. Ըստ Ստ. Մալխ. (IV, 314) «Վարընկենի»—«Խիար», բառը գործ է ածվում նաև այլ պըտուղների համար, ինչպես կիտրոն, խնձոր են։ Ըստ ՆՀԲ (II, 797) «Վարունկ. ըստ նմանութեան ձևոյն՝ նոյն է ընդ և կիտրոն, հուն. κίτριον, malum citrinum, և ընդ այլ նմանաձև պտուղս»։ Ուրեմն «վարընկենի» բառը պիտի նշանակե citrus vulgaris, цитрус, և հետաքրքիր է, որ «Աշխարհացույց»-ը նշում է Ուտիք նահանգում։ Քարտեզի վրա «Վարընկենի (կիտրոն)» նշված է Ղարաբաղի դաշտավայրի Կուր գետի ափերի մոտ, որտեղ կարող են աճել մերձարևադարձային կուլտուրաներ։

Վիթ և կըկիթ—Գ3—Δόρκας, Caprea, Antilope dorcas, газель, сайга. Газель—название родовое: африканское животное из рода саег или серн; рога козьи, стан олений (Даль). «Աշխարհացույց»-ում հիշատակվում է Բարձր Հայքում «վիթ և կըկիթ»։ Վիթը բացատրվում է, իբրև «այծեամն, յամոյր, և որթ նոցա» (ՆՀԲ, II, 820), իսկ «կըկիթ»-ը բառարաններում բացատրվում է իբրև «Անորոշ ցեղի կենդանի» (Ստ. Մալխ., II, 446)։ Բանասերները ուշադրություն չեն դարձրել, որ «Աշխարհացույց»-ում որսի կենդանիները հիշատակվում են զույգ-զույգ արու և էգ—«այծ և քաղ», «առն և արտի», «վիթ և կըկիթ»։ Այս օրինակները մեզ իրավունք են տալիս ենթադրելու, որ տվյալ դեպքում, եթե վիթը արուն է, ապա վիթի էգը պիտի նըշվեր մեզ հետաքրքրող «կըկիթ» բառով։ Վիթը և կըկիթը հիշատակվում են Բարձր Հայքում, որտեղ և զետեղել ենք։

[Տառեխ] ձուկն—Դ5—Ταριχος—աղած ձուկ։ Տառեխ է, ըստ ՆՀԲ (II, 848), «Ազգ ձկան՝ առաւել ի ծովն Վանայ, թըզաչափ, սպիտակագոյն, և ձևով նման Քէֆալի, որ և ապխտեալ վաճառի»։ «Յաւուրս բարեկենդանին եկեալ կարաւան ի յարևելից ի քաղաքն Անտիոքայ՝ բարձեալ բերէին տառեխ ձուկն», Մ. Ուռհ.։ Ըստ Ստ. Մալխ. (IV, 377), «1) կակղաթև ձկների մի առանձին ցեղ, մի հատ կռնակի լողաթևով, մեծ և դյուրաթափ թեփերով, որոնց թվին պատկանում են ծովային տառեխը կամ հարինգը (Clupea Harengus), անձրուկը (Engraulis encrasicholus), աղկերը (сардин)։ 2) Մասնավորապես Վանա լճում մեծ քանակությամբ բռնվող մանր հարինգը, որ թե թարմ են ուտում և թե աղում են ու չորացնում՝ իբրև ձմեռվան պաշար և առևտրի առարկա։ Տառեխը որսում են գարնան վերջերին, գլխավորապես Բենդիմահի (=ձկնակալանք) գետի բերանում, ուր դիմում են ձկները ձկնկիթ թափելու»։ Բենդիմահի գետը հնում կոչվում էր Առեստ գետ, որի գետաբերանի մոտ էր գտնվում Առեստավանը։ Վերջինումն էր ըստ Փավստոս Բուզանդի (III, Ը), արքունի ձկնորսարանը՝ «ձկնատեանք արքունի»։ «Աշխարհացույց»-ում տառեխ ձուկը չի հիշատակվում, այլ ասված է «Առեստաւան, ուստի ելանէ ձուկն», որ մեզ իրավունք է տալիս հիշյալ գետի մոտ նշելու փակագծերում՝ «[Տառեխ] ձուկն»։

Տաւսախ կամ Տօսախ—Բ5—Πύξος, Buxus, Buxus sempervirens, ბზა Բզա, Taxus baccata, Тис, красное дерево. «Տունկ մշտադալար մանրատերև ծանրահոտ. և փայտ նորա խիտ և ծանր, մինչև ընկղմիլ ի ջուր» (ՆՀԲ, II, 902)։ Ըստ Ստ. Մալխ. (IV, 452), «կաղանչանազգիների կարգին պատկանող թուփ՝ մշտադալար հավկըթաձև՝ պիրկ ու փայլուն տերևներով, մանր՝ դեղնագույն—ճերմակ ծաղիկներով, սաստիկ կարծր՝ դեղին փայտով, որ շատ հարգի է ճախարակագործության, քանդակների և երաժըշտության սրինգներ շինելու համար, շիմշիր»։ Այս ծառի անտառները՝ «տօսախուտ»-ները այժմ սաստիկ նոսրացել են։ «Աշխարհացույց»-ում տոսախը հիշատակվում է Գուգարքում, որ պետք է ենթադրել վերջինիս արևմտյան ծայրամասում, հատկապես բուսականությամբ հարուստ Ճորոխ գետի ավազանում, որտեղ և նշված է քարտեզի վրա։

Ցիռ—Դ6—Ὄναγρος, Onager, Equus Asinus ferus, онагр, дикий осел. Ըստ ՆՀԲ (II, 913), «Իշավայրի, էշ վայրենի ի ձև ջորւոյ, գորշախայտ բազմագունի մանուածով. շրջի յանապատս և ի բարձր լերինս և ի քարաժայռս. և նեղի յոյժ ի ծարաւոյ, խանչէ յորոշեալ պահու»։ «Աշխարհացույց»-ում ցիռը հիշատակվում է Պարսկահայքում, որտեղ և ցույց ենք տալիս՝ Կոհ-ի- Նիհորական լեռների արևմտյան փեշերի լերկ ապառաժների վրա։

Քաղ և այծ—Գ4—Քաղ, Τραγον, Hircus, որձ այծ, քօշ, նոխազ։ Այծ, 'Αἴξ, Capra, «Ազգ խաշին՝ նման ոչխարի, այլ անհանդարտ, յանդուգն, և ճարտար, մօրուանի, և երկայն գիսովք կամ մազովք մարմնոյ ողջոյն, արականն կոչի Քաղ, իսկ Այծ՝ է առաւել էգն քան արուն» (ՆՀԲ, I, 90)։ «Աշխարհացույց»-ում հիշատակվում են՝ «այծ և քաղս», որը և ցույց ենք տալիս՝ «Քաղ, այծ» Պախր կամ Գայլախազուտ լեռների հյուսիսային փեշերին։

Քարախունկ—Բ7—այս բառը բացատրվում է իբրև՝ Βδέλλιον, Bdellium, «Խունկ պնդացեալ իբրև քար»... «Քարախունկ, Թեղօշ ծառոյն խիժ պասուական» (ՆՀԲ, II, 995), «Քարի նման կարծր ռետին, ծառի խեժ, անթափանց, փայլուն, մթնագույն կարմիր, որ այրվելիս անուշ հոտ է արձակում և գործ էր ածվում երբեմն իբրև բժշկական միջոց (Bdellium), (Ստ. Մալխ., IV, 559)։

Այս բոլորը, անշուշտ, ճիշտ է, սակայն, ինչպես երևում է. «Աշխարհացույց»-ը Քարախունկ բառի տակ հասկանում է շիբը—պաղլեղը (квасцы, Alumen), պաղլեղաքարը—«բյուրեղային քարեղեն նյութ սպիտակ կամ գորշ գույնով, որից ստանում են պաղլեղ» (Ստ. Մալխ., IV, 42)։ Բնորոշ է, որ «Աշխարհացույց»-ը «Քարախունկը» հիշատակում է Արցախ նահանգի Կողթ գավառում՝ «զԿողթ, յորում լինի քարախունկ»։ Քուստի և Փառնես գավառներից հետո հիշվող Կողթ գավառը կարող է տեղադրվել միայն այժմյան Դաշքեսանի հանքերով հարուստ շրջանում, որտեղ հիրավի գտնվում են պաղլեղի հանքերը, այժմյան Զագլիկ (Փիփ) գյուղի մոտ, որտեղ և ցույց է տրված քարտեզի վրա։

Քուռամղիղ—Դ6—այս բառը հայ մատենագրության մեջ հիշատակվում է մեկ անգամ միայն «Աշխարհացույց»-ում. այլ վկայություններ չունենալով՝ հնարավոր չէ պարզել բառի իմաստը։ Բառս հիշվում է Պարսկահայքում, որտեղ և տեղադրում ենք հարցականով, Կապուտան լճի հարավ-արևմտյան մասում։

ՀԱՎԵԼՎԱԾ Ա.

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ՄԵԾ ՀԱՅՔԻ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԸՆԴԱՐՁԱԿ ԲՆԱԳՐԻ ԳԼՈՒԽՆԵՐԸ (ՓՈՐՁ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ): ԲՆԱԳԻՐԸ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Յաղագս Երկրորդ Հայոց

Աշխարհ Երկրորդ Հայք, որ արդ կոչին Երրորդ Հայք, յելից կալով Կիլիկիոյ առ Տաւրոս լերամբ յերի Ամանոս լերին, որ բաժանէ ընդ նա եւ ընդ Կոմագենի Ասորւոց մինչև ցԵփրատ։

Ունի և այլ լերինս. Ջիգոն-Բասիլիկոն և զՈրոմանդոն. եւ գետ զնոյն[անուն Որոմանդոն և] զՊի[ւ]ռամիս և զՊառատիս եւ [զՄելաս], զԿիակկաս եւ զԿառոմոսոս, և դրունս երկու ելանելոյ յԱսորւոց։

Երկրորդ Հայքի մասին

Երկրորդ Հայք աշխարհը, որն այժմ կոչվում է Երրորդ Հայք, սկսվում է Կիլիկիայից արևելք Տավրոս լեռներով, մինչև Ամանոս լեռները, որոնք այս աշխարհը բաժանում են Ասորիքի Կոմագեններից, և [տարածվում է] մինչև Եփրատ գետը։

[Երկրորդ Հայքը] ունի և այլ լեռներ. Ջիգոն-Բասիլիկոն և Որոմանդոն և գետեր՝ նույն [անուն Որոմանդոնը և] Պյուռամիսը, Պառատիսը, [Մելասը], Կիակկասը և Կառոմոսոսը, և երկու դռներ, որոնք պահպանում են հաղորդակցությունը Ասորիքի հետ։

Յաղագս Առաջին Հայոց[1]

[Աշխարհ Առաջին Հայք՝ որ արդ կոչին] Երկրորդ Հայք, որ կայ յելից Կապադովկիոյ. եւ երկայն տարածի մինչև յԵփրատ։ Եւ ունի [Ալիս գետ եւ] այլ գետս երկուս՝ [Իռիս եւ Գայլ-գետ], եւ լերինս բազումս եւ մեծամեծս։

Առաջին Հայքի մասին

[Առաջին Հայք աշխարհը, որն այժմ կոչվում է] Երկրորդ Հայք, որը գտնվում է Կապադովկիայից արևելք և երկայնությամբ տարածվում է մինչև Եփրատ գետը։

Ունի [Ալիս գետ և] այլ երկու գետ՝ [Իռիս և Գայլ-գետ], և բազմաթիվ բարձրաբերձ լեռներ։

Յաղագս Պոնտոս Կապադովկիոյ

Աշխարհ Պոնտոս Կապադովկիոյ՝ յելից կալով Պողեմոնական Պոնտոսի, առ ի ծովուն ցՄոսքական լերունս, որ բաժանեն ընդ նա և ընդ Մեծ Հայս։ Ունի լերինս երեք եւ գետս չորս։

Ահա կատարեցան Միջերկրեայք կոչեցեալք։

Կապադովկյան Պոնտոսի մասին

Պոնտոս Կապադովկիո աշխարհը սկսվում է Պողեմոնական Պոնտոսի արևելյան սահմաններից, ծովեզերքի մոտ, մինչև Մոսխական լեռները, որոնք բաժանում են այս աշխարհը Մեծ Հայքից։ Ունի երեք լեռնագագաթ և չորս գետ։

Վերջացավ Միջերկրեայք կոչված երկրների նկարագրությունը։

[1] *Առաջին Հայքին և Կապադովկիայի Պոնտոսին վերաբերվող գլուխները բացակայում են «Աշխարհացոյց»-ի ընդարձակ բնագրում, և բերել ենք համառոտ խմբագրությունից։ Տես՝ Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը։ Երևան, 1944, էջ 347։*

Յաղագս Ասիոյ Սարմատացւոց

Աշխարհ Ասիոյ Սարմատացւոց հասարակն է. որ բաժանի արեւելեան ծայրիւ Ռիպեայ լերամբ եւ Տանայիս գետով եւ Մեոտիս ծովակաւ՝ մտիւքն յԵւքսինոս Պոնտոս ծով. եւ անտի նոյն ծովեզերբըն յելս կոյս, մինչեւ ցմուտ Կռաք[ս]ի գետոյ՝ որ կոչի Ագռաւ, եւ անտի առ Կաւկասին լերինն՝ առ Վրօք եւ Աղուանիւք, մինչեւ ցԿասբից ծովն, ի մուտս Սուանաս գետոյ (Սըւանաս գետ չկսի ուրեք)։

Եւ ունի [Սարմատիա] լերինս զՇանթայինն եւ զՋիականն, որ արձակէ գետս հինգ ի Միովիտ ծով. եւ Կաւկաս [լեառն ձգի] մինչեւ ցԿ[ո]ռաքս լեառն։ [Եւ Կաւկաս] արձակէ գետս երկու՝ զՎարդանէս, որ սկսանի հանդէպ Կաւկասայ, եւ ձգէ զերկայնութիւն իւր ի մուտս կոյս զհիւսիսեաւ, մինչեւ ի մէջ մտանէ ընդ Մէովտիս [եւ] ընդ Պոնտոս ծով. եւ արձակէ գետ մի Փսեւքռոս անուն, որ մեկնէ ընդ Փոսփորոնն եւ Ջիքուն սահմանն, յորում քաղաքին Նիկոփս։

Որ]ոց[ըստ հիւսիսոյ են ազգ Թուրքաց եւ Բուլղարաց, ըստ անուանց գետոցդ կոչեցեալ. Կուփի Բուլղար, Քուչի Բուլկար, Ո[նո]ղխոնտոր Բ[ու]լկար եկն, Չդար Բուլկար. օտար այժմ ի Պտղոմէականէն են այս անուանք։ Եւ ի Ջիական լեառնէն փախեաւ որդին Խուդբադայ[1]։

Եւ ընդ մէջ Բուլղարաց եւ ծովուն Պոնտոսի բնակեն ազգք Գաշք եւ Քու[ր]թք եւ Ս[ո]ւանք մինչեւ ցՊիտիունտ [քաղաք] ծովեզերային Աւազով աշխարհի, որ են Ափշիլք եւ Ափխազք, մինչեւ ցքաղաքն իւրեանց ծովեզերային Սեւաստուպուլիք, եւ անդր եւս մինչև ցգետն, որ կոչի Դռակոն՝ որ է Վիշապ, որ հոսի յԱլանաց, եւ բաժանի ընդ Ափխազս եւ ընդ Եգեր աշխարհ։

Եւ ունի [Ասիա Սարմատացւոց] ազգազաւառս քառասուն և վեց։ Եւ ի հիւսիսոյ՝ առ Անծանօթ երկրաւ, բնակեն Թագաւորական Սարմատք եւ [Սարմատք] Ջիակերք։ Իսկ առ մտիւքն Տանայիս գետոյ՝ բնակին Նախճամատեանք, եւ ազգ մի այլ, որ են Կղարջք. եւ ապա Սիւռակացիք, ապա Միթրիդատենէ գաւառ[2], եւ ապա յարեւելից կուսէ Շանթային լերանցն բնակեալ են Ամազոնք, որք են կանայք պատերազմողք, մինչեւ ցգետն որ կոչի Ռա, որ երկակի բղխէ ի հիւսիսոյ Անծանոթ երկրի, եւ միանան, եւ հասեալ մերձ Ջիական լերանցն, արձակէ վտակ մի ի Տանայիս գետոյ որ ի Միովիտ ծովակ իջանէ. եւ այլն դառնայ արեւելս կոյս մինչեւ հանդէպ Շանթային լերանցն. եւ ապա գան

Ասիական Սարմատիայի մասին

Ասիական Սարմատիան բաժանվում է Ռիպիա լեռների արևելյան ծայրով և Տանայիս գետով, և արևմուտքում տարածվում է մինչև Մեովտիս ծովակը և Եվքսինոս Պոնտոս ծովը։ Այնտեղից (Սարմատիան տարածվում է) նույն ծովեզերքի արևելյան կողմից, մինչև Կռաքսի, որ նշանակում է Ագռավ, գետաբերանը, և այնտեղից Կովկասյան լեռներով՝ Վրաց և Աղվանից երկրների սահմանագծով, մինչև Կասպից ծովը և Սուանասի գետաբերանը (այժմ Սուանաս գետը հայտնի չի)։

Սարմատիա աշխարհը ունի Շանթային և Ջիական կոչվող լեռները, որոնք Մեովտիս ծովն են արձակում հինգ գետ, և Կովկասյան լեռները, որոնք ձգվում են մինչև Կռաքսի լեռները։ Իսկ Կովկաս (լեռնաշղթան) արձակում է երկու գետ՝ Վարդանես՝ որը սկսվում է Կովկասի դիմաց և իր երկարությամբ ձգվում է դեպի արևմուտք և հյուսիս մինչև թափվում է Մեովտիս (ծովակը) և Պոնտոսի ծովը, ապա արձակում է Փսեվքռոս անունով գետը, որը հոսում է դեպի Փոսփորոն և Ջիխոն (երկրի) սահմանը, որտեղ գտնվում է Նիկոփս քաղաքիկը։

Սրանցից հյուսիս են բնակվում՝ թուրքերի և բուլղարների ցեղերը, որոնք ըստ գետերի անունների կոչվում են՝ Կուփի բուլղար, Քուչի բուլղար, Ո[նո]ղխոնտոր բուլղար, Չդար բուլղար. սրանք այժմեական անուններ են և օտար են Պտղոմեոսին։ Ջիական լեռներից փախավ Խուդբադի որդին։

Բուլղարների և Պոնտոսի ծովի միջև բնակվում են Գաշք և Քու[ր]թք ցեղերը, ապա Սուանք, մինչև Ավազով աշխարհի ծովեզրյա Պիտիունտ քաղաքը։ Այստեղ ապրում են Ափշիլք և Ափխազք, մինչև իրենց ծովեզրյա Սևաստուպոլիս քաղաքը և այնտեղից մինչև Դռակոն կոչվող գետը, որ նշանակում է Վիշապ, և, որը հոսում է Ալանաց աշխարհից, և բաժանում է Ափխազներին Եգերաց աշխարհից։

Ասիական Սարմատիան ունի քառասունվեց ազգագավառ։ Հյուսիսում, Անծանոթ երկրին հարևան, բնակվում են Թագավորական Սարմատք և Ջիակեր [Սարմատները]։ Իսկ Տանայիս գետի գետաբերանի մոտ բնակվում են Նախճամատեանք, ապա Կղարջք ցեղը, ապա Սյուռակացիք, ապա Միթրիդատենե գավառը (կամ՝ Միթրիկացիք)։

Շանթային լեռներից դեպի արևելք ապրում

[1] *Նկատի ունի օնողխոնտոր բուլղարական ցեղի ցեղապետներից մեկի՝ *Խուդրբադ=Կուբրատի որդի Ասպարուքին, որը մինչև 660 թ. չդիմանալով խազարների հարձակումներին, իր ցեղի հետ միասին փոխադրվեցին և բնակություն հաստատեցին Դանուբի ափերին։ Այս մասը պիտի լինի VII դարի վերջին կատարված ընդմիջարկում։*

[2] *«Աշխարհացոյց»-ի համառոտ բնագրում այս անվան փոխարեն հիշվում է «Միթրիկացիք»։*

ՀԱՎԵԼՎԱԾ Ա.

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ՄԵԾ ՀԱՅՔԻ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԸՆԴԱՐՁԱԿ ԲՆԱԳՐԻ ԳԼՈՒԽՆԵՐԸ (ՓՈՐՁ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ)։ ԲՆԱԳԻՐԸ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Յաղագս Երկրորդ Հայոց

Աշխարհ Երկրորդ Հայք, որ արդ կոչին Երրորդ Հայք, յելից կալով Կիլիկիոյ առ Տաւրոս լերամբ յերի Ամանոս լերին, որ բաժանէ ընդ նա եւ ընդ Կոմագենի Ասորւոց մինչև ցԵփրատ։

Ունի և այլ լերինս. Զիգոն-Բասիլիկոն և զՈրոմանդոն. եւ գետ զնոյն[անուն Որոմանդոն և] զՊի[ւ]ռամիս և զՊառատիս եւ [զՄելաս], զԿիակկաս եւ զԿառոմոսոս, և դրունս երկու ելանելոյ յԱսորւոց։

Երկրորդ Հայքի մասին

Երկրորդ Հայք աշխարհը, որն այժմ կոչվում է Երրորդ Հայք, սկսվում է Կիլիկիայից արևելք Տավրոս լեռներով, մինչև Ամանոս լեռները, որոնք այս աշխարհը բաժանում են Ասորիքի Կոմագենեից, և [տարածվում է] մինչև Եփրատ գետը։

[Երկրորդ Հայքը] ունի և այլ լեռներ. Զիգոն-Բասիլիկոն և Որոմանդոն և գետեր՝ նույն [անուն Որոմանդոնը և] Պյուռամիսը, Պառատիսը, [Մելասը], Կիակկասը և Կառոմոսոսը, և երկու դռներ, որոնք պահպանում են հաղորդակցությունը Ասորիքի հետ։

Յաղագս Առաջին Հայոց[1]

[Աշխարհ Առաջին Հայք՝ որ արդ կոչին] Երկրորդ Հայք, որ կայ յելից Կապադովկիոյ. եւ երկայն տարածի մինչև յԵփրատ։ Եւ ունի [Ալիս գետ եւ] այլ գետս երկուս՝ [Իրիս եւ Գայլ-գետ], եւ լերինս բազումս եւ մեծամեծս։

Առաջին Հայքի մասին

[Առաջին Հայք աշխարհը, որն այժմ կոչվում է] Երկրորդ Հայք, որը գտնվում է Կապադովկիայից արևելք և երկայնությամբ տարածվում է մինչև Եփրատ գետը։

Ունի [Ալիս գետ և] այլ երկու գետ՝ [Իրիս և Գայլ-գետ], և բազմաթիվ բարձրաբերձ լեռներ։

Յաղագս Պոնտոս Կապադովկիոյ

Աշխարհ Պոնտոս Կապադովկիոյ՝ յելից կալով Պողեմոնական Պոնտոսի, առ ի ծովուն ցՄոսքական լերունս, որ բաժանեն ընդ նա և ընդ Մեծ Հայս։ Ունի լերինս երեք եւ գետս չորս։

Անա կատարեցան Միջերկրեայք կոչեցեալք։

Կապադովկյան Պոնտոսի մասին

Պոնտոս Կապադովկիո աշխարհը սկսվում է Պողեմոնական Պոնտոսի արևելյան սահմաններից, ծովեզերքի մոտ, մինչև Մոսխական լեռները, որոնք բաժանում են այս աշխարհը Մեծ Հայքից։ Ունի երեք լեռնագագաթ և չորս գետ։

Վերջացավ Միջերկրեայք կոչված երկրների նկարագրությունը։

[1] *Առաջին Հայքին և Կապադովկիայի Պոնտոսին վերաբերվող գլուխները բացակայում են «Աշխարհացոյց»-ի ընդարձակ բնագրում, և բերել ենք համառոտ խմբագրությունից։ Տես՝ Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը։ Երևան, 1944, էջ 347։*

Յաղագս Ասիոյ Սարմատացւոց

Աշխարհ Ասիոյ Սարմատացւոց հասարակն է. որ բաժանի արեւելեան ծայրիւ Ռիպեայ լերամբ եւ Տանայիս գետով եւ Մեոտիս ծովակաւ՝ մտիւքն յԵւքսինոս Պոնտոս ծով. եւ անտի նոյն ծովեզերբըն յելս կոյս, մինչեւ ցմուտ Կուռաք[ս]ի գետոյ՝ որ կոչի Ագռաւ, եւ անտի առ Կաւկասին լերինսն՝ առ Վրօք եւ Աղուանիւք, մինչեւ ցԿասբից ծովն, ի մուտս Սուանաս գետոյ (Սըւանաս գետ չյսի ուրեք)։

Եւ ունի [Սարմատիա] լերինս զՇանթայինն եւ զՁիականն, որ արձակէ գետս հինգ ի Միովիտ ծով. եւ Կաւկաս [լեառն ձգի] մինչեւ ցԿ[ո]ռաքս լեառն։ [Եւ Կաւկաս] արձակէ գետս երկու՝ զՎարդանէս, որ սկսանի հանդէպ Կաւկասայ, եւ ձգէ զերկայնութիւն իւր ի մուտս կոյս զհիւսիսեաւ, մինչեւ ի մէջ մտանէ ընդ Մէովտիս [եւ] ընդ Պոնտոս ծով. եւ արձակէ գետ մի Փսեւքռոս անուն, որ մեկնէ ընդ Փոսփորոնն եւ Ջիքուն սահմանն, յորում քաղաքին Նիկոփս։

Որ]ոց[ըստ հիւսիսոյ են ազգ Թուրքաց եւ Բուլղարաց, ըստ անուանց գետոցդ կոչեցեալ. Կուփի Բուլղար, Քուչի Բուլկար, Ո[նո]ղխոնտոր Բ[ու]լկար եկն, Ձդար Բուլկար. օտար այժմ ի Պտղոմէականէն են այս անուանք։ Եւ ի Ջիական լեառնէն փախեաւ որդին Խուդբադայ[1]։

Եւ ընդ մէջ Բուլղարաց եւ ծովուն Պոնտոսի բնակեն ազգք Գաշք եւ Քու[ր]թք եւ Ս[ո]ւանք մինչեւ ցՊիտիունտ [քաղաք] ծովեզերային Աւազով աշխարհի, որ են Ափշիլք եւ Ափխազք, մինչեւ ցքաղաքն իւրեանց ծովեզերային Սեւաստուպաւլիք, եւ անդր եւս մինչև ցգետն, որ կոչի Դռակոն՝ որ է Վիշապ, որ հոսի յԱլանաց, եւ բաժանի ընդ Ափխազս եւ ընդ Եգեր աշխարհ։

Եւ ունի [Ասիա Սարմատացւոց] ազգազաւառս քառասուն և վեց։ Եւ ի հիւսիսոյ՝ առ Անծանօթ երկրաւ, բնակեն Թագաւորական Սարմատք եւ [Սարմատք] Ջիակերք։ Իսկ առ մտիւքն Տանայիս գետոյ՝ բնակին Նախճամատեանք, եւ ազգ մի այլ, որ են Կղարջք. եւ ապա Սիւռակացիք, ապա Միթռիդատենէ գաւառ[2], եւ ապա յարեւելից կուսէ Շանթային լերանցն բնակեալ են Ամազոնք, որք են կանայք պատերազմողք, մինչեւ ցգետն որ կոչի Ռա, որ երկակի բղխէ ի հիւսիսոյ Անծանօթ երկրի, եւ միանան, եւ հասեալ մերձ Ջիական լերանցն, արձակէ վտակ մի ի Տանայիս գետոյ որ ի Միովիտ ծովակ իջանէ. եւ այլն դառնայ արեւելս կոյս մինչեւ հանդէպ Շանթային լերանցն. եւ ապա գան

Ասիական Սարմատիայի մասին

Ասիական Սարմատիան բաժանվում է Ռիպիա լեռների արևելյան ծայրով և Տանայիս գետով, և արևմուտքում տարածվում է մինչև Մեովտիս ծովակը և Եվքսինոս Պոնտոս ծովը։ Այնտեղից (Սարմատիան տարածվում է) նույն ծովեզերքի արևելյան կողմից, մինչև Կոռաքսի, որ նշանակում է Ագռավ, գետաբերանը, և այնտեղից Կովկասյան լեռներով՝ Վրաց և Աղվանից երկրների սահմանագծով, մինչև Կասպից ծովը և Սուանասի գետաբերանը (այժմ Սուանաս գետը հայտնի չէ)։

Սարմատիա աշխարհը ունի Շանթային և Ջիական կոչվող լեռները, որոնք Մեովտիս ծովն են արձակում հինգ գետ, և Կովկասյան լեռները, որոնք ձգվում են մինչև Կոռաքսի լեռները։ Իսկ Կովկաս (լեռնաշղթան) արձակում է երկու գետ՝ Վարդանես՝ որը սկսվում է Կովկասի դիմաց և իր երկարությամբ ձգվում է դեպի արևմուտք և հյուսիս մինչև թափվում է Մեովտիս (ծովակը) և Պոնտոսի ծովը, ապա արձակում է Փսեվքռոս անունով գետը, որը հոսում է դեպի Փոսփորոն և Ջիխոն (երկրի) սահմանը, որտեղ գտնվում է Նիկոփս քաղաքիկը։

Սրանցից հյուսիս են բնակվում՝ Թուրքերի և բուլղարների ցեղերը, որոնք ըստ գետերի անունների կոչվում են՝ Կուփի բուլղար, Քուչի բուլղար, Ո[նո]ղխոնտոր բուլղար, Ձդար բուլղար. սրանք այժմեական անուններ են և օտար են Պտղոմեոսին։ Ջիական լեռներից փախավ Խուդբադի որդին։

Բուլղարների և Պոնտոսի ծովի միջև բնակվում են Գաշք և Քու[ր]թք ցեղերը, ապա Սուանք, մինչև Ավազով աշխարհի ծովեզրյա Պիտիունտ քաղաքը։ Այստեղ ապրում են Ափշիլք և Ափխազք, մինչև իրենց ծովեզրյա Սևաստուպոլիս քաղաքը և այնտեղից մինչև Դռակոն կոչվող գետը, որ նշանակում է Վիշապ, և, որը հոսում է Ալանաց աշխարհից, և բաժանում է Ափխազներին Եգերաց աշխարհից։

Ասիական Սարմատիան ունի քառասունվեց ազգագավառ։ Հյուսիսում, Անծանոթ երկրին հարևան, բնակվում են Թագավորական Սարմատք և Ջիակեր [Սարմատները]։ Իսկ Տանայիս գետի գետաբերանի մոտ բնակվում են Նախճամատեանք, ապա Կղարջք ցեղը, ապա Սյուռակացիք, ապա Միթռիդատենե գավառը (կամ՝ Միթռիկացիք)։

Շանթային լեռներից դեպի արևելք ապրում

[1] *Նկատի ունի Ոնողխոնտոր բուլղարական ցեղի ցեղապետներից մեկի՝ *Խուդբրադ=Կուբրատի որդի Ասպարուքին, որը մինչև 660 թ. չդիմանալով խազարների հարձակումներին, իր ցեղի հետ միասին փոխադրվեցին և բնակություն հաստատեցին Դանուբի ափերին։ Այս մասը պետք լինի VII դարի վերջին կատարված ընդմիջարկում։*

[2] *«Աշխարհացոյց»-ի համառոտ բնագրում այս անվան փոխարեն հիշվում է «Միթռիկացիք»։*

այլ երկու գետք յարեւելից կուսէ ի հիւսիսոյ, [ի] լեռնէն որ կոչի Ռիմիկա, եւ առեն զնա Եօթանասնավտակեան, զոր կոչեն Թուրքք Աթլ գետ. որոյ մէջն է կղզի, յոր մտեալ ամրանայ, Բասլաց ազգն ի հզօր ազգէն Խազրաց եւ Բ[ո]ւշխաց, ճարակելոց յելից եւ ի մտից, եկելոց անդ ի ձմերոց, եւ կոչեն Սեւ կղզի. զի յաղագս բազմութեանն ազգին Բասլաց՝ մարդոյ եւ անասնոյ անդ մտելոցն՝ սեւ երեւի, զոր Պտղոմէոս Գռաւ կղզի կոչէ։

Եւ վտակքն Աթլ գետոյ անցեալ [ընդ] կղզին դարձեալ միանան եւ մտանեն ի Կասբից ծովն, բաժանելով ընդ Սարմատիա եւ ընդ Սկիւթիոյ աշխարհն։

Որոյ (Կասպից ծովի) ըստ մտից, ասէ Պտղոմէոս, զԱ[ր]դոն եւ զԱղանդոն եւ զՍոնդաս եւ Գեռուա ազգ[ս] հոմանուն գետօք որ ի Կաւկասայ հոսի ի ծով, մինչեւ ցԱղուանից սահմանն։

Եւ են ի Սարմատիոյ համարեալ, այսպէս, սկսեալ ի մտից յելս կոյս. նախ ազգ Ալանաց Աշ-Դիգոր եւ ըստ հարաւոյ՝ համաբնակ նոցա Խեբուրք եւ Քուդէտք, եւ Արգուէլ, որ է Մարգուէլ, եւ Սկիւմիք [որ են] Թակոյր։ Եւ Ալանք են յետ Դիգորին, յԱրդոզ աշխարհին Կաւկասին լերանցն. ուստի հոսի գետն Արմնայ, եւ գնալով ընդ հիւսիսի՝ ընդ դաշտս անբաւս, խառնի յԱթլ։

Եւ ի նոյն լերինն՝ յետ Արդոզեան ազգին բնակեն՝ Ռաճանք, [Փինճք], Դուալք, [Հոնք]. Ցխոյմք, Աւսուրք, Ծանարք, յորում Ալանաց դուռըն. եւ միւս դուռն որ ասի Ծելքան, հոմանուն ազգի, եւ ապա Թուշք և Խունձք, եւ Քուստք մարդակերք. ապա Ցխաւատք, ապա Գուդամակարք, ապա Դուրծ[ու]կք, ապա Դիդոյք, ապա Լեկք, ապա Տապասարանք[1], ապա Աղուտականք, ապա Խենաւք, ապա Շիղպք, ապա Ճիղբք, ապա [Լ]փնիք, [Խեղայք, Կազբք, Փուխք]։

Եւ ապա Կաւկաս բաժանի յերկուս բազուկս, մինն գնայ դէպ ուղիղ կոյս, յորում Շրուան եւ Խսրուան ազգ՝ մինչեւ ցԽորսվէմ։ Եւ միւս բազուկն արձակէ նախ վտակ մի զԱրմ գետ, որ [գնայ] դէպ ուղիղ ի հիւսիսի՝ յԱթլ գետ։ Եւ ապա նոյն բազուկն գնայ զելիւք հիւսիսոյ, յորում բնակեալ են Թաւասպարք, Հեճմատակք, Իժմախք, Փասխք, Փուսխք, Փիւքանակք, Բազկան, ուստի առնու պարիսպն երկայն՝ որ կոչի Ապզուտ-Կաւատ, [եւ ձգի] մինչև ցԱլղմինոն մաւրս եւ ցծով։ Որոյ ըստ հիւսիսոյ՝ Մասքութան ազգն բնակեալ են, ի Վարդանեան դաշտին, մինչեւ ցԿասպից ծովն, լոր բազուկն Կաւկասայ հպի, յորմէ ածեալ է պարիսպն Դարբանդայ, այսինքն Կապ եւ դուռն՝

են Ամազոնք, որոնք պատերազմող կանայք են։ [Սրանք բնակվում են] մինչև Ռա կոչվող գետը, որը զուգորդված հոսում է Անծանոթ երկրի հյուսիսից, և ապա միանում են իրար։ Որից հետո հասնելով Ջիական լեռներին, (այս գետը) արձակում է Տանայիս գետի վտակներից մեկը, որը հոսում է դեպի Միովիտ ծովակը։

Եվ մյուս գետը հոսում է դեպի արևելք, մինչև Շանթային լեռների դիմաց։ Ապա մի այլ երկու գետ արևելյան կողմից հոսում է դեպի հյուսիս, Ռիմիկա կոչվող լեռներից, և անվանում են վերջինիս Յոթանասնավտակյան. այս գետը թուրքերը կոչում են Աթլ։ (Այս գետումն) է գտնվում մի կղզի, որտեղ, մտնելով, ամրացել է Բասլաց ազգը, (պաշտպանվելով) այնտեղ Խազիրների հզոր ժողովրդից և Բուշխերից արևելքից և արևմուտքից այնտեղ ձմեռելու եկող փախստական [բասիլների ցեղից]։ Եվ կղզին կոչում են Սև կղզի, որովհետև սև է երևում կղզին այնտեղ մտնող Բասիլների բազմամարդության և նրանց անասունների բազմաքանակության պատճառով։ Այս կղզին Պտղոմեոսը կոչում է Գռավ կղզի։

Աթլ գետի վտակները շրջանցելով (հիշյալ) կղզին, դարձյալ միանում են և թափվում են Կասպից ծովը, բաժանելով միմյանցից Սարմատիան և Սկյութիա աշխարհը։

[Կասպից ծովից] արևմուտք, ըստ Պտղոմեոսի, բնակվում են՝ Ա[ր]դոն, Ալան-դոն, Սոնդաս (Տոնդաս) և Գեռուա ցեղերը համանուն գետերով, որոնք Կովկասից հոսում են ծով, մինչև Աղվանքի սահմանը։

Սարմատիայում բնակվող ցեղերից են համարվում, սկսած արևմուտքից, մինչև արևելք, նախ Աշ-Դիգոր Ալանաց ցեղը, որոնցից հարավ են նրանց հետ բնակվող Խեբուրք, Քուդետք, Արգուելք կամ Մարգուելք, Սկյումիք կամ Թակոյրք ցեղերը։ Իսկ Ալանք ապրում են Դիգորից հետո, Կովկասյան լեռների Արդոզ աշխարհում, որտեղից հոսում է Արմն գետը, որը, գնալով դեպի հյուսիս, լայնատարած դաշտերով, թափվում է Աթլ գետը։

Նույն լեռներում Արդոզյան ցեղից հետո բընակվում են՝ Ռաճանք, [Փինճք], Դուալք, [Հոնք], Ցխոյմք, Ավսուրք, Ծանարք, որտեղ գտնվում է Ալանաց դուռն և մյուս դուռը, որը կոչվում է Ծելքան դուռն համանուն [Ծելքանք] ցեղի։ Ապա՝ Թուշք, Խունձք և Քուստք մարդակերք։ Ապա՝ Ցխավատք, Գուդամակարք, Դուրծուկք, Դիդոյք, Լեկք, Տապասարանք (կամ՝ Կատապաստիանք), Աղուտականք, Խենավք, Շիղբք, Ճիղբք, [Լ]փնիք, [Խեղայք, Կազբք, Փուխք] ցեղերը։

[1] «Աշխարհացոյց»-ի համառոտ բնագրում հիշվում է «Կատապաստիանք» ձևով։

քաղաք պահակին Ճորայ, աշտարակ ահագին ի ներքս ի ծովուն կառուցեալ։

Իսկ ի հիւսիսոյ նորա Թագաւորութիւն Հոնաց հուպ ի ծով. եւ ի մտից նորա առ Կաւկասով Վառաչան քաղաք նոցին Հոնաց եւ Ջունդարս եւ Սմընդըռ։

Եւ յարեւելից բնակեն Սաւիրք ցԱթլ գետ, որ մեկնէ ընդ Ասիական Սարմատք եւ ընդ Սկիւթիա աշխարհ, որ են Ապախթարք, այսինքն Թուրքաստանք։ Եւ Խաքանն թագաւոր նոցա [որ է տէր Խազրաց], եւ Խաթունն Դշխոյ՝ նոցա [թագուհի], կին Խաքանայ [ի Բասլաց ազգէն]։

Յաղագս Կողքիսոյ

Աշխարհ Ասիոյ Կողքիս է, որ է Եգ[ե]ր. յելից կալով Պոնտոս ծովուն առ երի Սարմատիոյ, ի մտիցն Դոակոն գետոյ մինչեւ ցԿաւկաս լեառն եւ ցնորին բազուկ, որ բաժանէ ընդ նա եւ ընդ Վիրս։ Եւ անտի սահմանի մասամբ ինչ Մեծ Հայոց մինչև ցԿապպադ[ովկի]ական Պոնտոս։ Եւ բաժանեալ է յինքեան չորս աշխարհս փոքունս. ի Մանռիլ, ի յԵգրեւիկէ, որ է Առանձնակ Եգերայ, [եւ] ի խաղ իւրում Փասիս գետ, առ հոմանուն քաղաքաւ, [եւ Ղազիւիկէ] եւ Ճանիւս որ են Խաղտիք, յորում գետ Մեգաղոս-պոտամոս։ Ունի եւ այլ գետս՝ զԱկամսիս որ է Յոհ, որ գայ ի Մեծ Հայոց։

Ունի հինգ քաղաքս, [Զ]ի[գ]ան[էոն], Կոտա, Ռոդիւպաւլիս, Աթինա, Ռիզոն. եւ այլ բազում եմպորիոնս այսինքն գեղաքաղաքս ծովեզերեայս, յորոց է Տրապիզոն։

Ապա Կովկաս (լեռնազանգվածը) բաժանվում է երկու բազուկների, մեկը գնում է այն ուղղությամբ, որտեղ գտնվում են Շրուան և Խսրուան (ազգագավառները) մինչև Խորսվեմ։ Իսկ մյուս բազուկը նախ արձակում է մի վտակ Արմ անունով, որը հոսում է ուղիղ դեպի հյուսիս (և թափվում) Աթլ գետի մեջ։ Իսկ վերոհիշյալ (երկրորդ) բազուկը ձգվում է դեպի հյուսիս-արևելք, որտեղ բնակվում են՝ Թավասպարք, Հեճմատակք, Իժմախք, Փասխք, Փուսխք, Փյուքոնակք, Բազկանք, որտեղից սկիզբ է առնում երկար պարիսպը, որը կոչվում է Ապզուտ-Կավատ, (և ձգվում է) մինչև Ալղմինոն մորը և ծովը։ Այս պարսպից հյուսիս, Վարդանյան դաշտում, բնակվում է Մասքութան ազգը, մինչև Կասպից ծովը, որտեղ վերջանում է Կովկասից եկող լեռնաբազուկը և որտեղ կառուցված է Պարիսպն Դարբանդայ, այսինքն Կապ և դուռն քաղաք Պահակին Ճորայ, որ (իրենից ներկայացնում) է ծովի մեջ կառուցված հսկայական աշտարակ։

Նրանից (Դարբանդի պարիսպներից) հյուսիս ծովափին գտնվում է Հոների թագավորությունը, իսկ նրանից արևմուտք, Կովկասյան լեռներում, գտնվում է հոների Վառաչան քաղաքը, և Ջունդար ու Սմընդըռ քաղաքները։

(Այս քաղաքներից) արևելք մինչև Աթլ գետը բնակվում են Սավիրները։ (Աթլ գետը) հոսում է Ասիական Սարմատք (երկրով) և Սկյութիա աշխարհով, որը Ապախթարքէ կամ Թուրքաստանք։ Եվ հյուսիսի թագավորն է Խաքանը, որը Խազիրների ինքնակալն է, և խաթունը՝ նրանց թագուհին, բասիլների ցեղից, Խաքանի կինն է։

Կողքիսի մասին

Ասիայի աշխարհ Կողքիսը, այսինքն՝ Եգերը, տարածվում է Պոնտոս ծովից արևելք մինչև Սարմատիա, և արևմուտքից՝ Դոակոն գետից, մինչև Կովկաս լեռը և նրա լեռնաբազուկը, որը բաժանում է Կողքիսը Վիրքից։ Այնտեղից Կողքիսը մասամբ սահմանակից է Մեծ Հայքին մինչև Կապադովկիական Պոնտոսը։

(Կողքիսը) բաժանվում է չորս փոքր աշխարհների. Մանռիլի, Եգրեվիկեի, որ Առանձնակ Եգերն է, որով ոլորվում է Փասիս գետը համանուն քաղաքի մոտ, (ապա) Ղազիվիկեի և Ճանիվի, որ Խաղտիքն է, որտեղ Մեգաղոս-Պոտամոս գետն է։ Կողքիսը ունի նաև այլ գետ՝ Ակամսիսը կամ Հոհը, որը հոսում է Մեծ Հայքից։

(Կողքիսը) ունի հինգ քաղաք՝ Զիգանեոն, Կոտա, Ռոդյուպոլիս, Աթինա և Ռիզոն և այլ բազում եմպորիոններ, այսինքն՝ ծովեզրյա գյուղաքաղաքներ. որոնցից է Տրապիզոնը։

Յաղագս Վրաց

Աշխարհ Վիրք, յելից կալով Եգերայ, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչեւ ցԱղուանից սահման, եւ մինչեւ ցՀայոց սահմանն՝ առ Կուր գետովն։

Եւ գաւառք են այս, սկսեալ ի Վոհ գետոյ եւ ի հիւսիսոյ Տայոց, Կղարջք, զոր ի Հայոց հանեալ է, եւ Շաւշէթ, Արտահան գաւառ, զոր առեալ է ի Հայոց. ընդ որ անցանէ գետն հզօր Կուր, որ ի Տայոց գալով, ի Կող գաւառէ ընդ ստորոտս Ջաւախաց, իջանէ ի Սամցխէ [յորմէ մտից կուսէ՝ Աճարա]։ Եւ դառնայ [Կուր] յարեւելս՝ անցանելով ընդ Վերին աշխարհ Վրաց, բաժանելով զգաւառսն. զԹոր, զԳոռաթիսխեւ, զՏանիսխեւ, որոյ ի գլուխն Դեկից[ի]խէ բերդ, եւ զՄանգլեացփոր, եւ [զԲուիշափոր] եւ զԲողնոփոր՝ մինչեւ ցՊարուար գաւառ, որ պատէ զՏփղիս քաղաքաւ. բայց երեք փորակդ ի Հայոց հանեալ է։

Իսկ ըստ հիւսիսոյ գետոյն մեծին Կուրայ, հանդէպ Թա[ւ]ր գաւառի՝ Արգուէթու լերինք [համանուն գաւառաւ], եւ ի նոյն կողմանէ Դաշտն Դուան, եւ Աչարէթիս-խեւ եւ [Ռեխա], Գուերդիսձիրի, Կոսխ, եւ մինչեւ ցՍացխումէթ, որ ի ստորոտս Կովկասու. յորմէ հոսի Լէխ գետ, եւ անցեալ ի հարաւ կոյս իջանէ ի Կուր, եւ առ նովաւ՝ Կսնիս-խեւ, եւ Ցխրազմայ, [եւ Բազալէթ], [եւ [Մտ]Կուրիս-խեւ], մինչեւ յԱրագւ գետ, որ հոսի ի Կաւկասայ, եւ գնալով ընդ հարաւ, ընդ Ախալցիխէ բերդ, եւ անցանէ ընդ մէջ Մցխիթայ քաղաքի եւ բլրոյ Սուրբ Խաչին, իջանէ ի Կուր, եւ բովանդակի Վերին աշխարհ Վրաց, յորմէ յառաջ խաղացեալ Կուր՝ գայ ի Տփղիս մայրաքաղաք Վրաց. գնա թողլով Պարուարաւ, եւ զԾոբոփոր եւ զԿողբոփոր եւ զՁորոփոր համանուն գետօք[1], մինչեւ ցՀունարակերտ քաղաք[2] զորս ի Հայոց հանեալ է. որոց ըստ հարաւոյ լեռնադաշտքն Ջաւախաց բազում լճօք, լի զանազան ձկամբք, եւ Թռեղք եւ Տաշիր. որոց ի հարաւ՝ Կանգարք, զամէնդ ի Հայոց հանեալ է։

Իսկ հանդէպ դոցա ըստ հիւսիսոյ կողմանէ Կուրայ՝ գաւառք՝ Կխուէթ, Խերկ, Էրծոյ, Թիանէթ, Ծոբէնոր, Ծուքէթ, Ձել[է]թ, Վելխաց[ի]խէ, Բուեղգա[րա], Շուչք։

Վիրքի մասին

Վրաց աշխարհը սկսվում է Եգերից արևելք մինչև Սարմատիան՝ Կովկասյան լեռներում, մինչև Աղվանքի սահմանը և մինչև Հայաստանի սահմանը Կուր գետով։

Եվ այս են (Վիրքի) գավառները. սկսած Վոհ գետից և Տայքի հյուսիսային սահմաններից՝ Կղարջք, որը վերցված է Հայաստանից, Շավշեթ, Արտահան գավառ, որը վերցված է Հայաստանից։ (Արտահանի) միջով անցնում է հզոր Կուր գետը, որը, հոսելով Տայքի Կող գավառից, Ջավախքի ստորոտով իջնում է Սամցխե, [որից արևմուտք. Աճարա]։ Ապա [Կուր գետը] դառնում է արևելք, անցնելով Վերին աշխարհ Վրաց երկրամասով, բաժանելով (միմյանցից) ներքոհիշյալ (գավառները)՝ Թոր, Գոռաթիս-խև, Տանիս-խև, որի գլխին է գտնվում Դեկիցիխե բերդը, (ապա) Մանգլեացփոր, [Բուիշափոր] և Բողնոփոր մինչև Պարուար գավառը, որը պատում է Տփղիս քաղաքը, իսկ (վերջին) երեք փորակը հանվել է Հայաստանից։

Իսկ մեծ գետ Կուրի հյուսիսում, Թավր գավառի հանդեպ, (գտնվում են) Արգուեթի լեռները [համանուն գավառով]։ Նույն կողմերն են գտնըվում՝ Դաշտն Դուան, Աչաբեթիս-խեւ, [Ռեխա], Գուերդիսձիրի և Կոսխ (գավառները), մինչև Սացխումեթ գավառը, որ գտնվում է Կովկասի ստորոտում։ Այստեղից է հոսում Լեխ գետը, որը, անցնելով հարավ, իջնում է Կուր գետը։ Նրա մոտ են գտնվում Կսնիսխև, Ցխրազմա, Բազալեթ և [Մտ]կվրիսխև գավառները, մինչև Արագվ գետը, որը, հոսելով Կովկասից, և գնալով հարավ, Ախալցիխե բերդի մոտով անցնելով, Մցխեթա քաղաքի և Սուրբ Խաչ բլրի միջև թափվում է Կուր գետը, բովանդակելով Վերին աշխարհ Վրաց երկրամասը։

Այնտեղից Կուրը, շարժվելով առաջ, անցնում է Վրաց աշխարհի Տփղիս մայրաքաղաքով, թողնելով այն Պարուար գավառով, ապա Ծոբոփոր, Կողբոփոր, Ձորոփոր [և Խանցիխե] գավառները համանուն գետերով, մինչև Հունարակերտ քաղաքը, որոնք հանված են Հայաստանից։

Սրանցից հարավ են գտնվում Ջավախքի լեռնադաշտերը, բազմաթիվ լճերով, որոնք լի են զանազան ձկներով, ապա Թռեղք և Տաշիր գավառները, որոնցից հարավ գտնվում է Կանգարք գավառը, բոլորն էլ հանված Հայաստանից։ Իսկ այս գավառների հանդեպ Կուր գետի հյուսիսային կողմում, գտնվում են՝ Կխուեթ, Խերկ, Էրծո, Թիանեթ, Ծոբենոր, Ծուքեթ, Ձել[ե]թ, Վելխաց[ի]խե, Բուեղգա[րա] և Շուչք գավառները։

[1] Նկատի ունի՝ Ծոփայ գետը, Կողբայ գետը և Ձորագետը։

[2] «Աշխարհացույց»-ի համառոտ խմբագրության մեջ Հունարակերտ քաղաքի փոխարեն հիշատակվում է Խանցիխէ (աղճատված՝ «Խանիցխ»), որ նույն տեղի վրացական անունն է, հետագայում «Խունան» և «Քունանակերտ» ձևերով հայանի։

Յաղագս Աղուանից

Աշխարհ Աղբանիա, այսինքն՝ Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչեւ [ի Կասբից ծովն եւ] ցՀայոց սահմանն, առ Կուր գետով, թէպէտ եւ աստի ցԿուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց։ Բայց մեք ասասցուք զբուն աշխարհն Աղուանից որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն։

Նախ առ Վրօք՝ Եղնի (Խենի) գաւառ առ Աղուան գետովն, եւ Կամբեճան առ Իւրաւ. եւ ըստ հիւսիսոյ նորա բերդն Վարազմանավառ, հանդերձ Կուդրաթ գեղաքաղաքաւ, եւ վայրքն անապատ մինչեւ ցԿուր գետ. յորոյ յելից կողմանէ Գըլգաւ քաղաք, առ Աղուան գետով, եւ Բեղ գաւառ առ Կաւկասաւ, եւ յելից նորա՝ Շաքէ եւ Գետառու գետ. առ որով համանուն գաւառ՝ առ Սանի գետով։ Այս ամենայն հոսին ի Կովկասայ, եւ խառնեալ ի յԱղուան գետ՝ անկանին ի Կուր գետ. իսկ ի յելից կուսէ՝ Հողմազ, Գեղաւու, Համբասի(=Հաբանդ?), [Ոստան-ի-մարզպան գաւառ] եւ Կապաղակ [մայրա]քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սէբոջ, [եւ] դէպ ի հարաւոյ, [ցԿուր գետ] ըստ [որում՝] Քաղադաշտ, Դաշտ ի Բազկան [որ է Հէջէրի], եւ այլ քսան գաւառս զորս ի Հայոց հանեալ է՝ [Շակաշէն, Գարդման, Քուստի-Փառնէս, Կողթ, Աղուէ, Տուս-Քուստակ, Ուտ-Ռոստակ, Ռոտ-Պարսեան, Մեծ-Կուենք, Մեծ-Իրանք, Պիանք, Հարճլանք, Պարսականք, Մուխանք, Վայկունիք, Փոքր Հաբանդ, [որ է] Սիսական [ի Կոտակ], Ռոտըստակ, Բերդաձոր, Տրի, Առան-ռոտ, մինչեւ ի խառնումն Երասխայ ի Կուր գետ]։

Աղուանքի մասին

Աղբանիան, այսինքն Աղուանից աշխարհը սկսվում է Վրաց աշխարհից արևելք և Սարմատիային սահմանակից Կովկասյան լեռներով, մինչև Կասպից ծովն ու Հայաստանի սահմանը Կուր գետով։ Թեպետ և այստեղից մինչև Կուր գետը ընկած ամբողջ տարածությունը Հայաստանից է հանված, բայց մենք խոսելու ենք Աղուանքի բուն աշխարհի մասին, որը գտնվում է մեծ գետ Կուրի և Կովկասյան լեռների միջև։

Նախ (թվենք) Վրաց աշխարհին կից (գավառները)՝ Եղնի (Խենի) գավառ՝ Աղուան գետի վրա, և Կամբեճան (գավառ)՝ Իորա գետի վրա։ Իսկ նրանից (Կամբեճանից) հյուսիս (գտնվում է)՝ Վարազմանավառ բերդը Կուդրաթ գյուղաքաղաքով և անապատ վայրերը մինչև Կուր գետը, որից դեպի արևելք գտնվում է Գըլգավ քաղաքը՝ Աղուան գետի վրա։ Ապա Բեղ գավառը Կովկասյան լեռների ստորոտում, և նրանից դեպի արևելք՝ Շաքե (գավառը) և Գետառու գետը, որի վրա է համանուն գավառը, մինչև Սանի գետը։ Այս բոլոր գետերը հոսում են Կովկասից և, խառնվելով Աղուան գետի հետ, թափվում են Կուր գետը։

(Այս գավառներից) դեպի արևելք գտնվում են՝ Հողմազ, Գեղավու, Համբասի (=Հաբանդ?) (գավառները), ապա Ոստան-ի-Մարզպան գավառը և Կովկասյան լեռների մոտ Աղուանից աշխարհի մայրաքաղաք Կապաղակը, որի միջով հոսում է Սեբոջ գետը դեպի հարավ [մինչև Կուր, որտեղ] (գտնվում է)՝ Քաղադաշտ (գավառը), մինչև Դաշտ-ի-Բազկանը (կամ Հեջերի)։ (Աղուանքի կազմումն են) նաև այլ քսան գավառներ, որոնք հանված են Հայաստանից՝ Շակաշեն, Գարդման, Քուստի-Փառնես, Կողթ, Աղուե, Տուս-Քուստակ, Ուտ-Ռոստակ, Ռոտ-Պարսյան, Մեծ-Կուենք, Մեծ-Իրանք, Պիանք, Հարճլանք, Պարսականք, Մուխանք, Վայկունիք, Փոքր Հաբանդ (կամ) Սիսական-ի-Կոտակ, Ռոտըստակ, Բերդաձոր, Տրի և Առան-ռոտ, մինչև Երասխի խառնվելը Կուր գետում։

Յաղագս Մեծին Հայոց

Մեծ Հայք են, յելից կալով [Պոնտոս] Կապադովկիոյ եւ Փոքր Հայոց, առ Եփրատ գետով, մերձ ի Տաւրոս լեառն, որ բաժանէ զնա ի Միջագետաց, և ի հարաւոյ սահմանի Ասորեստանիւ, և դառնայ առ Ատրպատականաւ ընդ Մարս մինչև ի մուտս Երասխայ ի Կասբից ծով. իսկ ըստ հիւսիսոյ առ երի կալով Աղուանից եւ Վրաց եւ Եգերաց, մինչև ցնոյն դարձուածքն Եփրատայ ի հարաւակոյս։

Մեծ Հայքի մասին

Մեծ Հայք երկիրը սկսվում է Կապադովկիական [Պոնտոսից] ու Փոքր Հայքից արևելք, Եփրատ գետով մինչև Տավրոս լեռները, որ բաժանում է Մեծ Հայքը Միջագետքից։ Հարավային կողմից [Մեծ Հայքը] սահմանակից է Ասորեստանին, ապա սահմանը ուղղվում է դեպի [արևելք]՝ Ատրպատական և Մարաց աշխարհը, մինչև Երասխի թափվելը Կասպից ծով։ Իսկ հյուսիսային կողմից

Եւ ունի [Մեծ] Հայք լերինս անուանիս, և գետս մեծամեծս և մանունս, և ծովակս վեց[1]։

Եւ ունի Մեծ Հայք փոքր աշխարհս հնգետասան՝ որք են այսոքիկ։

Առաջին աշխարհ Բարձր Հայք, այսինքն՝ Կարնոյ կողմն, երկրորդ աշխարհ՝ Չորրորդ Հայք, այսինքն [Ծոփաց կողմն], երրորդ՝ Աղձնիք առ Տիգրիս գետով. չորրորդ՝ Տա[ւ]րուբերան որ է Տարաւն. հինգերորդ՝ Մոկք. վեցերորդ աշխարհ՝ Կորճայք, որ առ Ասորեստանեաւ. եաւթներորդ աշխարհ՝ Պարսկահայք, որ առ Ատրպատականիւք. ութերորդ աշխարհ՝ Վասպուրական, որ ըստ մտից հիւսիսոյ նորա է. իններորդ աշխարհ Սիւնիք՝ որ առ Երասխաւ, տասներորդ [աշխարհ]՝ Արցախ, որ յերի նորա կայ. մետասաներորդ աշխարհ՝ Փայտակարան [համանուն] քաղաքով, որ առ եզերբն Կասբից ծովուն, ի մուտս Երասխայ, երկոտասաներորդ աշխարհ՝ Ուտէացւոց, որ առ Աղուանիւք եւ Կուր գետով. երեքտասաներորդ աշխարհ՝ Գուգարք՝ որ առ Վրօք. չորեքտասաներորդ աշխարհ՝ Տայք, որ առ Եգերբ[2]. հնգետասաներորդ աշխարհ՝ Այրարատ, ի մէջ նոցա։ Արդ կամիմ զդոսա մանրամասնաբար պատմել, թէ և սակաւ ինչ աշխատեցիմ ի գիր և ի քարտէս։

Արդ ունի առաջին աշխարհ Բարձր Հայք գաւառս ինն. Դարանաղի, Աղիւն, Մըզուր, Եկեղեաց, Մանանաղի, Դերջան, Սպեր, Շաղագոմ, Կարին։ Եւ ըստ անուանդ արդարեւ բարձր է ոչ միայն քան [զմնացեալ] Հայք, այլ քան զամենայն Երկիր, վասն որոյ Կատար Երկրի կոչեցին զնա, զի ի չորս կողմ աշխարհի ջուր արձակէ. զի բղխէ չորս գետս զօրեղս, զԵփրատ՝ յարեւմուտս, եւ զԵրասխ՝ յարեւելս, զԳայլ՝ ի հարաւ, զԱկամսիս որ է Ճոհ՝ ի հիւսիս։ Ունի լերինս մեծս երիս[3]. ունի երէս, եղջերու, այծ եւ քաղս, առն եւ արտի, վիթ եւ կըկիթ եւ խոզ. եւ ի հաւուց ճարակաւորս յորս կաքաւ, զարաւշ, զանիդ և զայլս, ունի եւ ջերմուկս եւ աղտս եւ զամենայն պարարտութիւնս երկրի, եւ քաղաք զԹէոդուպաւլիս։

Երկրորդ աշխարհ [Մեծին] Հայոց. Չորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն, յերի կայ Բարձր Հայոց Մելիտինէ քաղաքաւ սահմանի ըստ մտից, և ըստ հարաւոյ՝ Միջագետովք, եւ ըստ ելից՝ Տարաւնով։ Ունի գաւառս ութ. Խորձեան՝ յելից հիւ-

(Մեծ Հայքը) սահմանակից է Աղվանքին և Վիրքին և Եգեր աշխարհին, Մինչև Եփրատ գետի դառնալը դեպի հարավ։

Մեծ Հայքը ունի հայտնի լեռներ և մեծ ու փոքր գետեր, և վեց ծովակ։

Մեծ Հայքն ունի տասնհինգ փոքր աշխարհներ, որոնք են.

Առաջին աշխարհ՝ Բարձր Հայք, այսինքն Կարնոյ երկիրը, երկրորդ աշխարհ՝ Չորրորդ Հայք, այսինքն Ծոփքի երկիրը, երրորդ աշխարհ՝ Աղձնիք, Տիգրիս գետի վրա, չորրորդ աշխարհ՝ Տավրուբերանը կամ Տարոնի երկիրը, հինգերորդ աշխարհ՝ Մոկք, վեցերորդ աշխարհ՝ Կորճայք, որ սահմանակից է Ասորեստանին, յոթներորդ աշխարհ՝ Պարսկահայք, որ սահմանակից է Ատրպատականին, ութերորդ աշխարհ՝ Վասպուրական, որ նրանից (Պարսկահայքից) հյուսիս-արևմուտք է (գտնվում), իններորդ անխարհ՝ Սյունիք, որ սահմանակից է Երասխին, տասներորդ աշխարհ՝ Արցախ, որ. նրան (Սյունիքի) մոտ է գտնվում, տասնմեկերորդ աշխարհ՝ Փայտակարան (համանուն) քաղաքով, գտնվում է Կասպից ծովի եզերքին, Երասխի գետաբերանին։ Տասներկուերորդը Ուտիացվոց աշխարհն է, որ սահմանակից է Աղվանքին Կուր գետով։ Տասներեքերորդ աշխարհն է Գուգարքը, որ սահմանակից է Վիրքին։ Տասնչորսերորդ աշխարհն է՝ Տայքը, որ սահմանակից է Եգր աշխարհին։ Տասնհինգերորդ աշխարհն է Այրարատը, նրանց միջև։ Այժմ ուզում եմ այս աշխարհների մասին մանրամասնաբար պատմել, թեև մի քիչ պիտի աշխատեմ գրքերի և քարտեզների վրա։

Առաջին աշխարհ Բարձր Հայքը ունի ինը գավառ. Դարանաղի, Աղիվն, Մըզուր, Եկեղյաց, Մանանաղի, Դերջան, Սպեր, Շաղագոմ, Կարին։ Հիրավի, ինչպես ցույց է տալիս անունը, Բարձր Հայքը արդարև բարձր է, ոչ միայն Հայաստանի [մնացյալ] մասերից, այլև ամբողջ Երկրից, որի համար էլ այս աշխարհը կոչեցին Կատար Երկրի։ Աշխարհի չորս կողմերը ջուր է արձակում և այնտեղից բխում են չորս հզոր գետեր. Եփրատը՝ դեպի արևմուտք և Երասխը՝ դեպի արևելք, Գայլը՝ դեպի հարավ և Ակամսիս կամ Ճոհ գետը՝ դեպի հյուսիս։ Ունի երեք մեծ լեռնագագաթ, ունի որսի կենդա-

[1] Բոլոր այս ծովակները—լճերը հիշատակվում են համապատասխան տեղերում՝ Կապուտան ծով, Բզնունեաց ծով, Գեղաքունեաց ծով, Ծովք լիճ, Գայլատու լիճ, բացի վեցերորդից, որ պետք է Մովսես Խորենացու «Ծովակ Հիւսիսոյ»-ն լինի և վրաց աղբյուրների «Ցելի լիճ»-ն է, այժմյան Չըլդըր լիճը։ «Աշխարհացոյց»-ում այս լճի մասին հիշատակություն պիտի լիներ Այրարատը նկարագրող հատվածում, սակայն այդ մասը մեզ հասել է ոչ լրիվ ձևով և բացակայում են ամբողջ նախադասություններ, որոնց վերականգնման փորձը մենք տալիս ենք, որ դեռ հեռու աղերսակցություն պիտի ունենա մեզ չհասած ընդարձակ սկզբնագրին

[2] Նկատի ունի Տայքին հյուսիսից սահմանակից Եղր «փոքր աշխարհ»-ը իր երեք գավառներով Ճորոխի ստորին հոսանքում։

[3] Նկատի ունի Վերջնբակ, Այծպտկունք և Պախր կամ Գայլախազուտ լեռնագագաթները։

սիսոյ, ընդ որ իջանէ Մեւս Գայլ գետ առ Կողոբերդովն, զՀաշտեան, յորմէ բղխեն աղբեւրք Տիգրիս գետոյ. իսկ ի մտից Խորձէնոյ՝ է Պաղնատուն գաւառ հանդերձ համանուն բերդով, եւ հանդէպ նորա ի հարաւ՝ Բալահովիտ գաւառ. եւ ի մտից նոցա Ծոփք, եւ Անձիտ գաւառ՝ ի հարաւ, յորում Ծովք [լիճ] եւ Հոռէ բերդ, եւ ի մտից նոցա Դէգիք գաւառ, յորում բերդք Կանի եւ Քրւիկ եւ Սոկ, որոց հանդէպ ի հարաւ է Գաւրէք գաւառ, ընդ որս եկեալ Արածանի խառնի յԵփրատ ի քաղաքն Լուսաթառիճ, եւ երթալով զմտիւք՝ ելանէ ի սահմանս Փոքըր Հայոց, յելից Մելիտինէ. եւ ապա խառնի ի նա Կիակկաս [գետ], գալով ի մտից կուսէ, ի լեռնէն որ կոչի Ջիգոն Բասիլիկոն, եւ նախ քան զանգանել նորա յԵփրատ՝ խառնի ի նա գետն Կառամինոն, որ գայ ի Տաւրոս լեռնէ եւ ընկալեալ յԵփրատ գնայ ընդ հարաւ, հատանէ զլեառն Տաւրոս, յորում տեղւոջ գտանի ակն բիւրեղ. եւ ունի Չորրորդ Հայք երէս եւ հաւս, եւ ի գազանաց զառեւծ։

Երրորդ աշխարհ Աղձնիք յելից կայ Միջագետաց, եւ հիւսիսեաւ առ Դկղաթով, ունի գաւառս մետասան՝ [զԱնգեղ-տուն], զՆփռետ, զԱղձն, ընդ որոց մէջն իջանէ գետն Քաղիրթ, զոր Շիթիթմա կոչեն Տաճիկք, այսինքն՝ արիւնարբու, յետ որոյ Քաղ գաւառ, եւ ի լերինն ունի [գաւառս]՝ զԿէթիկ, զՏատիկ, զԱզնուաձոր, զԵրխեթս, զԳզեղ[խ], զՍալնաձոր՝ զՍանասուն։ Ունի նաւթ, եւ երկաթ քաջ, եւ գղթոր եւ ի հաւուց՝ դեգհուկ։

Չորրորդ աշխարհ՝ Տաւրուբերան [որ է կողմն Տարաւնոյ], յելից Չորրորդ Հայոց. ունի գաւառս վեշտասան. զԽոյթ, Ասպակունեաց ձոր (կամ Ասպականունեաց ձոր), զՏարաւն, յորում գայ գետն Մեղ եւ անկանի յԵփրատ, որ ըստ հիւսիսոյ՝ Արշամունիք՝ առ Սրմանց լերամբ, որ կոչի Կատար Երկրի, յորմէ յոյժ բղխեն աղբիւրք, որոց ըստ հիւսիսի՝ Մարդաղի՝ առ Մեղեդու[ղ]խ լերամբ, մինչեւ ցնոյն Այծպտկունս որ բաժանէ ընդ Կարին եւ ընդ նա. յորում գտանի սալակ եւ ձիղկ եւ նաւթ սեւ եւ սպիտակ. յորոց յելից բղխէ Մուրց գետ, գնալով ընդ հիւսիսի՝ իջանէ ի Բասեն գաւառ, և խառնի յԵրասխ, եւ գետացուցանէ զնա։ Յելից Մարդաղոյ է Դասնաւորք գաւառ. եւ նորա յելից Տուարածատափ. նորա յելից Դալառ, եւ ի հարաւոյ նոցա Հարք և Վարաժնունիք, մինչև ցԱրածանի, որ իջանէ յԱպահունեաց, որոց ի հարաւոյ՝ Բզնունեաց գաւառ, սկըսանելով ի Սարակնէ եւ ի Նեխ Մասեաց՝ պատէ զարեւմտեայ եզր համանուն ծովուն, մինչև ցբերդն Բաղ[աղ]էշ, եւ անդր եւս ի հարաւ կոյս ցԵրեվարք գաւառի սահման։ Եւ Բըզնունիք ունի յիւր համանուն ծովէն կղզիս երեք. զԱրծկէոյն, զԾիպանին եւ զՏոքեանն, որոյ ըստ հարաւոյ ի մէջ լերինն Տաւրոսի եւ ծովու՝ գա-

նիներ՝ եղջերու, այծ և քաղ, առն և արտի, վիթ և կըկիթ և խոզ (վայրի), իսկ թռչուններից՝ ճարակավորներին, որոնցից են՝ կաքավ, արոս, անիդ և այլք։ (Բարձր Հայքը) ունի ջերմուկներ և աղահանքեր և երկրի բոլոր բարիքները ու Թեոդուպոլիս քաղաքը։

(Մեծ) Հայքի երկրորդ աշխարհն է Չորրորդ Հայքը, կամ Ծոփաց աշխարհը։ Հյուսիսից սահմանակից է Բարձր Հայքին, արևմուտքից սահմանակից է Մելիտինե քաղաքին, հարավից՝ Միջագետքին, իսկ արևելքից՝ Տարոնին։ (Չորրորդ Հայքը) ունի ութ գավառ. հյուսիս-արևելքից՝ Խորձյան, որի միջով, Կողոբերդի մոտով, հոսում է Մյուս Գայլ գետը, Հաշտյանք, որտեղից բխում են Տիգրիս գետի ակունքի աղբյուրները։ Խորձյանից դեպի արևմուտք գտնվում է Պաղնատուն գավառը համանուն բերդով, իսկ նրա դիմաց, դեպի հարավ (գտնվում է)՝ Բալահովիտ գավառը։ Նրանցից (այսինքն՝ Պաղնատուն և Բալահովիտ գավառներից) արևմուտք (գտնվում է)՝ Ծոփք (գավառը) և սրանից հարավ՝ Անձիտ գավառը, որտեղ (գտնվում են) Ծովք (լիճը) և Հոռե բերդը։ Եվ նրանցից (այսինքն՝ Ծոփք և Անձիտ գավառներից) արևմուտք, (գտնվում է)՝ Դեգիք գավառը՝ Կանի, Քրվիկ և Սոկ բերդերով, որոնց դիմաց հարավում (գտնվում է) Գավրեք գավառը, որոնց միջև հոսող Արածանին խառնվում է Եփրատ գետը Լուսաթառիճ քաղաքի մոտ, և գնալով դեպի արևմուտք, անցնում է Մելիտինեից արևելք գտնվող Փոքր Հայքի սահմաններով։ Ապա Եփրատումն է թափվում Կիակկաս գետը, որ հոսում է արևմուտքից, Ջիգոն-Բասիլիկոն կոչվող լեռներից։ Եվ նախքան նրա (Կիակկաս գետի) թափվելը Եփրատ գետում, նրա մեջ է խառնվում Կառամինոն գետը, որը գալիս է Տավրոս լեռներից, և ընդունելով (այս գետերը), Եփրատը հոսում է դեպի հարավ, ճեղքում է Տավրոսյան լեռները, որտեղ գտնվում են բյուրեղի ակների [հանքերը]։ Չորրորդ Հայքը ունի որսի կենդանիներ և թռչուններ, իսկ գազաններից՝ առյուծ (sic!).

Երրորդ աշխարհն է Աղձնիքը, Միջագետքից արևելք և Դկղաթ (գետից) հյուսիս, ունի տասնմեկ գավառ՝ [Անգեղ-տուն], Նփռետ (կամ Նփըրկերտ), Աղձն, որոնց միջև հոսում է Քաղիրթ գետը, որին արաբները կոչում են Շիթիթմա, որ նշանակում է «արյունարբու», որից հետո՝ Քաղ գավառն է։ Իսկ լեռներում (Աղձնիքը) ունի՝ Կեթիկ, Տատիկ, Ազնուաձոր, Երխեթք, Գզեղխ, Սալնաձոր և Սանասուն գավառները։

(Աղձնիքը) ունի նավթ և երկաթ ընտիր, և գղթոր, իսկ թռչուններից՝ դեգհուկ։

Չորրորդ աշխարհն է Տավրուբերանը [կամ

ւառ Երեւարք, յորում լիճ ինչ՝ որ կոչի Եղիգի, յուղխից. զի ի վարելն յակօսն ջուր ըմպէ եզն, եւ սերմանեալն քառասուն աւուրն հասանէ եւ բերէ ընդ միոյ՝ յիսուն: Եւ ծովն Բզնունեաց յերկայնն հարիւր մղոն է, եւ լայնն վաթսուն: Որոյ ըստ հիւսիսոյ Աղիովիտ գաւառ, եւ զմտիւք նորա Ապահունիք. ընդ որոյ մէջն անցանէ Արածանի [եւ ի հարաւոյ նորա՝ Կորի]: [Եւ] յեզրն [ծովին] Բզնունեաց [է Խոռխոռունիք գաւառ]: Գտանի պստակ և կաստաննոն որ է մաշկամիրգ: Ունի եւ գազպէն եւ մեղր անոյշ քան զամենայն երկրի եւ սպիտակ նաւթ, եւ երկաթ: [Ասեն թէ նհանգ կայ յԱրածանի, որպէս յԵփրատ, զոր հաւաստի [ոչ] գիտեմք, կենդանի քարքաշամ զուգեալ, զարիւնն ծծեալ եւ թողեալ, զոր ոմանք ասեն թէ գազան է եւ չէ դեւ, այլ գազան զոր Յոհան վասն դստերն Հերովդիադայ ասէ թէ քան զնհանգսն ծովայինս արիւնարբու էր][1]:

Հինգերորդ աշխարհ Մոկք, յելից կան Աղձնեաց, ի լերինն Տաւրոս: Ունի գաւառս ութ, զԻշայր, զՄեւս Իշայր, զԻշուց գաւառն, զԱռուենից ձոր, զՄիջա, զԱռանձնական Մոկաց գաւառն, [որ է] Արքայից գաւառ, յորում գետն Որբ, զԱրգաստովիտ, Ջերմաձոր, յորում գետն Ջերմ: Ունի ի մրգաց զահրշակ եւ մանրագոր. եւ ի գազանաց՝ ինձ գեղեցկախայտ, եւ [ի] հաւուց զկաքաւ:

Վեցերորդ [աշխարհ] Կորճայք յելից կայ Մոկաց, առ Ասորեստանիւ: Ունի գաւառս մետասան. զԿորդուս, յորում Թման՝ առ Ասորեստանեաւ, զԿորդրիս Վերին, զԿորդրիս Միջին, զԿորդրիս Ներքին, զԱյրտրուանս, զԱյգառս, զՄոթողանս, զՈրսիրանս, զԿարթունիս, զՃահուկ, զՓոքր Աղբակ: Ունի զառիկ եւ ի պտղոց շահգանակ, այսինքն գանգար փշոյ սերմն:

Եւթներորդ [աշխարհ] Պարսկահայք յելից Կորճէից, եւ սագիտայաբար[2] մտանէ ընդ մէջ Ատրպատականի, եւ լերինն Տաւրոսի այն կողման որ կոչի Կոհ-ի-Նիհորական, մինչեւ ցԱրասխ գետ: Ունի գաւառս ինն՝ զԱյլի, որ կոչի Կուռիճան, զՄարի գաւառ, զԹրաբի գաւառ, զԱրասխ, որ է Ովէա, զԱւնա, Տամբեր, Զարէհաւան, զԶարաւանդ, զՀէր: Ունի յերէոց զցիռ եւ զայծեամն:

Ութերորդ [աշխարհ] Վասպուրական ի մտից Պարսկահայոց, եւ առ երի Կորճէից: Ունի գաւառս երեսունեւհինգ, եւ այսոքիկ են. զՌշտունիս՝ որ է ընդ Մոկաց եւ ծովուն Բզնունեաց, յորում կղզիք երկու, Աղթամար եւ Արտէ եւ ցամաքակղզին Մանակերտ, եւ Տոսպ՝ յելից [ծովուն] Բզնունեաց,

Տարոնոյ աշխարհը], գտնվում է Չորրորդ Հայքից դեպի արևելք և ունի տասնվեց գավառ. Խոյթ, Ասպակունյաց ձոր, (կամ Ասպականունյաց ձոր), Տարոն, որով հոսում է Մեղ գետը և թափվում է Եփրատ: Սրանից հյուսիս (գտնվում է)՝ Արշամունիք (գավառը) Սրմանց լեռնագագաթով, որը կոչվում է Կատար Երկրի, և որից բխում են բազմաթիվ աղբյուրներ: Սրանցից հյուսիս (գտնվում է)՝ Մարդաղի (գավառը) Մեղեղուղխ լեռների ուղղությամբ, մինչև Այծպտկունք լեռնագագաթը, որը բաժանում է Կարին (գավառը) նրանից (Մարդաղի գավառից): (Մեղեղուղխ լեռներում) գտնվում են սալակ և ձիղկ և նավթ սպիտակ ու սև: (Այծպտկունք լեռնագագաթից) արևելք բխում է Մուրց գետը, որը հոսելով դեպի հյուսիս, իջնում է Բասեն գավառը և թափվում է Երասխ, գետացնելով վերջինս:

Մարդաղից արևելք (գտնվում) է՝ Դասնավորք գավառը, նրանից արևելք՝ Տուարածատափ (գավառը) և նրանից արևելք՝ Դալառ (գավառը): Իսկ նրանցից (հիշյալ գավառներից) հարավ (գտնվում են)՝ Հարք և Վարաժնունիք գավառները, մինչև Արածանի (գետը), որը իջնում է Ապահունիք գավառից: Սրանցից հարավ է Բզնունյաց գավառը, որը սկսվելով Սարակն և Նեխ-Մասիք (լեռնագագաթներից), պատում է հոմանուն (Բզնունյաց) ծովի արևմտյան եզերքը, և տարածվում է մինչև Բաղ[աղ]եշ բերդը և այնտեղից մինչև հարավակողմում գտնվող Երեվարք գավառի սահմանները: Բզնունիք գավառը իր համանուն ծովում ունի երեք կղզի՝ Արծկե, Ծիպան և Տոքյան, որից հարավ. Տավրոս լեռների և ծովի միջև, գտնվում է Երեվարք (գավառ), որտեղ գտնվում է մի լիճ, որ կոչվում է Եղեգի, գոյացած ուղխից, և վարելու ժամանակ եզը ջուր է խմում ակոսից, և ցանածը հասունանում է քառասուն օրվա ընթացքում և տալիս է բերք մեկին հիսուն:

Բզնունեաց ծովի երկայնությունն է հարյուր մղոն, իսկ լայնությունը՝ վաթսուն: Բզնունյաց ծովից հյուսիս (գտնվում է) Աղիովիտ գավառը, և նրանից արևմուտք՝ Ապահունիք (գավառը), որի միջով անցնում է Արածանի գետը [և նրանից հարավ գտնվում է Կորի գավառը]: Բզնունյաց (ծովի) ափին է (գտնվում) [Խոռխոռունիք գավառը]:

(Տավրուբերանում) գտնվում է՝ պստակ և շագանակ: Ունի և գազպե և անուշ մեղր, քաղցր քան ամբողջ աշխարհում, նավթ և երկաթ...:

[1] Փակագծերում բերված հատվածը հետագա ընդմիջարկում է, որ առաջ է եկել Միջնադարում գոյություն ունեցող համանուն Արածանի գետի անվան շփոթության հետևանքով, ուստի չենք տալիս աշխարհաբար թարգմանությամբ:

[2] Բնագրում աղճատված «ցագիտատաբար» ձևով, մենք ուղղում ենք համաձայն Գ. Վ. Աբգարյանի: Նրա կարծիքով, պիտի նշանակեր՝ աղեղնաձև, աղեղնակերպ, սեպաձև (լատ. sagitta «աղեղ» բառից): Տե՛ս Հ. Մարկվարտ, Պարսկահայք նահանգ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1961, № 1, էջ 185, ծանոթ.**:

զԲոգունիս, զԱրճիշակովիտ, զԿուղանովիտ. [եւ ի հիւսիսոյ ծովին Բզնունեաց են՝ Աղիովիտ եւ] զԳառնի մինչեւ ցգաւառն Կոգովիտ, որ յոտինն Ազատ Մասեաց. զԱռբերանի՝ յելից ծովուն Բզնունեաց, յորում կղզիք Ջքաւան եւ Լիմն, ցամաքակղզին Ամիւկ, եւ Առեստաւան, ուստի ելանէ [տառեխ] ձուկն: Եւ յելից դոցա Բուժունիք, զԱռնոյ-ոտն, զԱնձեւացիս, զՏրպատունիս, զԵրուանդունիս, [զԲուն-Մարդաստան], զՄարդաստան, զԱրտազ մինչ ի Կոգովիտ: Եւ յելից դոցա զԱկէ, զԱղբակ Մեծ, զԱնձախիձոր, զԹոռնաւան, զՃուաշ-ռոտ մինչեւ ցԵրասխ, զԿըրճունիս, զՄեծնունիս, զՊալունիս, զԳուկան, զԱղանդ-ռոտ, զՊարսպատունիս, զԱրտաշիսեան, [որ է] Արտաւանեան, զԲաք[ր]ան, [որ է] Մարանդ, զԳաբիթեան, զԳազրիկեանս, զՏայգրեանս, զՎարաժնունիս, զԳողթն գինեւէտ, զՆախճաւան, յորում հոմանուն քաղաք:

Իններորդ աշխարհ Սիւնիք, ընդ մէջ կալով Երասխայ, եւ Արձախայ, յելից Այրարատոյ, ունի գաւառս երկոտասան. զԵրնջակ, զՃահուկ, զՎայոց ձոր, զԳեղաքունի՝ հոմանուն ծովովն, զՍոթս, զԱղահէճ, զԾղուկն, զՀաբանդ, զԲաղս, զՁորս, զԱրեւիս, զԿովսական, հոմանուն գետովք մինչեւ ցՆակորզեան քաղաք և անցսն իւր, եւ Աղուան գետ: Լինի ի նմա մուրտ եւ գերբերի եւ նուռն ազնիւ, եւ ամուր տեղիք:

Տասներորդ [աշխարհ] Արցախ յերի կալով Սիւնեաց. ունի գաւառս երկոտասան. զՄեւսն Հաբանդ [, որ է Սիսական ի Կոտակ կամ Սիսական ի Ոստոն], զՎայկունիս, զԲերդաձոր, զՄեծ-Առանս, զՄեծ-Կուանս, զՀարճլանս, զՄուխանս, զՊիանըս, զՊարսականս, զՔուստի, զՓառնէս, զԿողթ, յորում լինի քարախունկ. զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի Հայոց:

Մետասաներորդ [աշխարհ] Փայտակարան յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ. գաւառս ունի երկոտասան, զոր այժմ Ատրպատական ունի. Հրաքոտ-պերոժ, Վարդանակերտ, Եւթնփորակեան բագինք, Ռոտ-ի-Բաղա [, որ է] Բաղան-ռոտ, Առոս-Պիճան, Հանի, Աթշի-Բագաւան, Սպանդարան-պերոժ, Որմիզդ-պերոժ, Ալեւան: Լինի ի նմա բամբակ անբաւ եւ գարի ինքնաբոյս:

Երկոտասաներորդ [աշխարհ] Ուտիք է, առ մտից կալ Երասխայ ընդ մէջ Արցախայ եւ Կուր գետոյ. ունի գաւառս զոր [այժմ] Աղուանք ունին, եւթն՝ Առան-ռոտ, Տռի, Ռոտ-Պարսեան, Աղուէ, Տուս Քստակ, Գարդման, Շակաշէն, Ուտի Առանձնակ՝ յորում Պարտաւ քաղաք: Լինի ի նմա ձիթենի, վարընկենի, եւ յասմիկ, եւ ի հաւուց կատակ:

Երեքտասաներորդ աշխարհ է Գուգարք ի մը-

Հինգերորդ աշխարհն է Մոկքը, Աղձնիքից արևելք Տավրոս լեռներում: Ունի ութ գավառ. Իշայր, Մեվս(մյուս) Իշայր, Իշոց գավառ, Առուենից ձոր, Միջա, Մոկք Առանձնակ կամ Արքայից գավառ, որտեղ հոսում է Որբ գետը, Արգաստովիտ գավառ, Ջերմաձոր, որտեղով հոսում է Ջերմ գետը: Մրգերից ունի գահրշատ և մանրագոր, իսկ գազաններից՝ ինձ գեղեցկախայտ, և թռչուններից՝ կաքավ:

Վեցերորդ աշխարհն է Կորճայքը, որ գտնըվում է Մոկքից արևելք և սահմանակից է Ասորեստանին: Ունի տասնմեկ գավառ. Կորդուք, որտեղ գտնվում է Թմանը՝ Ասորեստանի սահմանների մոտ, Կորդրիք Վերին, Կորդրիք Միջին, Կորդրիք Ներքին, Այրտրուանք, Այգառք, Մոթողանք, Որսիրանք, Կարթունիք, Ճահուկ, Փոքր Աղբակ: (Կորճայքը) ունի զառիկ և պտուղներից՝ շահդանակ, այսինքն գանգար փշի սերմը:

Յոթներորդ [աշխարհն] է Պարսկահայքը, Կորճայքից արևելք, և սեպաձև մտնում է Ատրպատականի մեջ ու Տավրոս լեռների այն կողմերը, որոնք կոչվում են Կոհ-ի-Նիհորական, մինչև Արասխ գետը: (Պարսկահայքը) ունի ինն գավառ. Այլի, որը նաև Կուռիճան է կոչվում, Մարի-գավառ, Թրաբի-գավառ, Արասխ կամ Ովեա, Աւնա, Տամբեր, Զարեհավան, Զարավանդ և Հեր: Որսի կենդանիներից ունի ցիռ և այծյամ:

Ութերորդ [աշխարհն] է Վասպուրականը, Պարսկահայքից արևմուտք և սահմանակից Կորճայքին: Ունի երեսունհինգ գավառ և սրանք են. Ռշտունիք, որը գտնվում է Մոկքի և Բզնունյաց ծովի միջև, որի մեջ ունի երկու կղզի, Աղթամար և Արտի, և Մանակերտ ցամաքակղզին: Տոսպ (գավառ) Բզնունեաց ծովից արևելք, ապա՝ Բոգունիք, Արճիշակովիտ, Կուղանովիտ (գավառները): [Բզնունյաց ծովից հյուսիս են գտնվում]՝ Աղիովիտ և Գառնի (գավառները) մինչև Կոգովիտ գավառը, որը գտնվում է Ազատ-Մասիս (լեռնագագաթի) ստորոտին: Առբերանի (գավառը) Բզնունյաց ծովից արևելք է, որտեղ գտնվում են՝ Ջքաւան և Լիմ կղզիները, Ամյուկ ցամաքակղզին և Առեստավանը, որտեղից դուրս է գալիս [տառեխ] ձուկը:

(Վերոհիշյալ գավառներից) արևելք են գտնըվում՝ Բուժունիք, Առնո-ոտն, Անձևացիք, Տրպատունիք, Երվանդունիք, [Բուն-Մարդաստան], Մարդաստան և Արտազ (գավառը) մինչև Կոգովիտ (գավառը): Սրանցից դեպի արևելք են գտնվում՝ Ակե, Աղբակ Մեծը, Անձախի ձորը, Թոռնավանը և Ճուաշ-ռոտ (գավառը) մինչև Երասխ (գետը): [Ապա]՝ Կըրճունիք, Մեծնունիք, Պալունիք, Գուկան, Աղանդ-ռոտ, Պարսպատունիք, Արտաշիսյան կամ Արտավանյան Բա[ք]րան կամ Մարանդ, Գաբիթյան, Գազրիկյան, Տայգրյան, Վարաժնունիք, գինեւետ Գողթնը և Նախճավան

տից Ուտիացւոց, ունի գաւառս ինն. զՁորոփոր, զԿողբոփոր, զԾոբոփոր, զՏաշիր, զԹռեղս, զԿանգարս, զՋաւախս Վերին, զԱրտահան, զԿղարջս։ Լինի [ի նմա] անալուծ, եւ հաճարածառ, եւ սերկեւիլ եւ տաւսախ։ Ունին արդ Վիրք հանեալ ի Հայոց։

Չորեքտասաներորդ [աշխարհ] Տայք առ երի կայ Գուգարաց, ամրոցօք եւ բերդօք կառուցեալ, եւ ունի գաւառս ութ. զԿող յելից կուսէ, յորմէ բղխեն աղբիւրք գետոյն Կուրայ, ի գեղջէն որ ասի Կրի ակունք. եւ ի մուտս կոյս, ընդ Արտահան, երկայնանիստ գաւառին, գնայ եւ դառնայ առ հիւսիսի, իջանէ ընդ Սամցխէ, եւ ապա դառնայ յելս՝ մինչ ի Կազբից ծովն. իսկ ըստ մտից Կողայ՝ Բերդացփոր, Պարտիզացփոր, զՃակս, յելս, եւ ըստ հարաւոյ՝ զԲուղխա, զՈքաղէ, զԱզորդացփոր իւրեանց [հոմանուն] գետակօք, որք յիրար անկեալ իջանեն ի Ճոհ[1]. որոց ըստ մտից Արսեացփոր առ Պարխար լերամբն, ընդ որ իջանէ Ճոհ, գալով ի Սպերայ, անցանէ առ Թուխարս բերդով ի Կլարջս, եւ անտի յԵգր. ընդ Նիգալ, ընդ Մրուղ և ընդ Մրիտ գաւառս՝ ի Պոնտոս ծով, զոր Եգերացիք կոչեն Ակամսիս, եւ Խաղտիք Կակամար։ Եւ լինի ի Տայս Թուզ, Նուռն Թթու, աղտոր, սերկեւիլ, պտղախունկ եւ Նուշ։

Հինգետասաներորդ աշխարհ Այրարատ ի մէջ կայ Նախասացեալ աշխարհացդ, ունի գաւառս քսանեւերկու, ըստ Բարձր Հայոց. զԲասեան, ընդ որ անցանէ Երասխ՝ գետացեալ ի Մուրցամաւր գետոյ։ Եւ [Երասխ] բաժանէ զՀաւնունիս եւ Գաբեղեանս ի հարաւ, եւ զԱբեղեանս ի հիւսիսի, գնալով ընդ մէջ Արշարունեաց, որոց Բագրեւանդ եւ Ծաղկոտն ի հարաւոյ, եւ Վանանդ եւ Շիրակ՝ ի հիւսիսի, յորոց եկեալ գետն Ախուրեան՝ հանդերձ Մեծագետովն [, որ գայ ի Ծովակէն Հիւսիսոյ], անցանելով յելից կուսէ Մաւրիկապաւլսի, այսինքն Շիրակաշատ աւանի, եւ Մրենոյ եւ Երուանդաշատ քաղաքի, իջանէ յԵրասխ։ Եւ Երասխ, Թողլով զԱրմաւիր քաղաք ի հիւսիսի եւ զԱրագածոտն, եւ զինքն [լեառն] Արագած, յորմէ բղխեն աղբեւրք Մեծամաւր գետոյ, [եւ լեառն Արայի]։

[Եւ անցանէ Երասխ յելս, Թողլով ի հարաւ գաւառս՝ Ճակատք եւ Մասեաց ոտն, եւ] զինքն իսկ լեռնագագաթն [Ազատ-Մասիս։ Եւ] Մասիս՝ ի հարաւ Թողու Երասխ, յորոյ Թիկանց տարածեալ Կոգովիտ գաւառն։ Եւ Արածանի զսկիզբն ունի ի Ծաղկոտնէ, ի տեղւոջէն որ կոչի Ոսկիք, եւ գնալով ընդ հիւսիսի պատելով զՆպատական լերամբըն՝ առ Բագուան գեղւոջն, խառնի ի Բագրեւանդ գետ։

[Եւ ի հիւսիսոյ Թիկանց Արագածու է Տաշիր

գավառը, որտեղ գտնվում է համանուն քաղաքը։

Իններորդ աշխարհն է Սյունիքը, գտնվում է Երասխի և Արցախի միջև և Այրարատից արևելք, ունի տասներկու գավառ. Երնջակ, Ճահուկ, Վայոց ձոր, Գեղաքունի համանան ծովով, Սոթք. Աղահեճք, Ծղուկ, Հաբանդ, Բաղք, Ձորք, Արեվիք, Կովսական համանուն գետերով, մինչև Նակորզան քաղաքը իր գետանցքով, և Աղուան գետը։ Սյունիքում կա մուրտ և գերերի և ազնիվ նուռ և ամրացված տեղեր։

Տասներորդ [աշխարհն] է Արցախը, սահմանակից Սյունիքին, ունի տասներկու գավառ. Մեվս (Մյուս) Հաբանդ [կամ Սիսական ի Կոտակ կամ Սիսական ի Ոստան], Վայկունիք, Բերդաձոր, Մեծ Առանք, Մեծ Կուանք, Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պարսականք, Քուստի, Փառնես, Կողթ որտեղ կա քարախունկ։ Այս բոլորը ունի Աղվանքը, հանելով Հայաստանից։

Տասնմեկերորդ [աշխարհն] է Փայտակարանը, Ուտիքից արևելք, Երասխ գետի վրա։ Ունի տասներկու գավառ, որոնք այժմ Ատրպատականի կազմումն են. Հրաքոտ-պերոժ, Վարդանակերտ, Յոթնփորակյան բագինք, Ռոտ-ի-Բաղա կամ Բաղան-ռոտ, Առոս-պիճան, Հանի, Աթշի-Բագուան, Սպանդարան-պերոժ, Որմիզդ-պերոժ, Ալեվան։ Այնտեղ կա բամբակ անբավ և գարի ինքնաբույս։

Տասներկուերորդ [աշխարհն է] Ուտիքը, Երասխ գետից արևմուտք, Արցախի և Կուր գետի միջև։ Ունի յոթը գավառ, որոնք այժմ Աղվանքի կազմում են. Առան-ռոտ, Տռի, Ռոտ-Պարսեան, Աղուե, Տուս-Քստակ, Գարդման, Շակաշեն, Ուտի Առանձնակ՝ որտեղ Պարտավ քաղաքն է։ Կա այնտեղ (Ուտիքում) ձիթենի, վարնկենի, հասմիկ, իսկ Թռչուններից՝ կատակ։

Տասներեքերորդ աշխարհն է Գուգարքը, Ուտիքից արևմուտք, ունի ինը գավառ. Ձորոփոր, Կողբոփոր, Ծոբոփոր, Տաշիր, Թռեղք, Կանգարք, Ջավախք Վերին, Արտահան, Կղարջք։ Կա այնտեղ անալութ, հաճարածառ, սերկևիլ և տոսախ։ Այժմ Վիրքի կազմումն է, վերցված՝ Հայաստանից։

Տասնչորսերորդ [աշխարհն է] Տայքը, Գուգարքին հարևան, ամրոցներով ու բերդերով հարուստ, ունի ութը գավառ. Կող (գաւառ) արևելյան մասում, որտեղից բխում են Կուր գետի աղբյուրները Կրիակունք կոչված գյուղից։ Եվ Կուր գետը (այստեղից) հոսում է դեպի արևմուտք Արտահան երկայնանիստ գավառով, ապա դառնում է դեպի հյուսիս և իջնում է Սամցխե (գավառը), որից հետո դառնում է դեպի արևելք մինչև Կասպից ծովը։

Իսկ Կող գաւառից արևմուտք գտնվում են Բերդացփոր, Պարտիզացփոր, Ճակք, որից արևելք

[1] Նկատի ունի՝ Բերդիկ, Պարտեզ, Բողխա և Ազորդ գետերը։

Վերին(?) և Աշոցք գաւառ]։ Եւ է ըստ ելից Ա[րագածու] Նիգ, յորմէ բղխեն աղբեւրք Քասաղ գետոյ, [եւ յելից նորա՝ գաւառքն Կոտայք եւ Մազազ։ Եւ ի հիւսիսոյ Նոցա՝ Վարաժնունիք], ընդ որ անցանէ գետն [Հրազդան]։

Եւ անցանէ [Հրազդան] յելից կուսէ Վաղարշապատ քաղաքի, յորում մայր եկեղեցեաց Կաթողիկէ[1], եւ մարտիրոսուհեացն մատրունքն[2], յորոց յելից բղխեն աղբեւրք Ասպահեն գետոյ, որ է Խոզմաւր, եւ խառնի ի Մեծամաւր. եւ ապա յելից նորա գետն Ազատ, եւ արդարեւ ազատ. որոյ ակունքն բղխեն ի Գեղ լեառնէ, ի Սախուրակ տեղւոյ, որ իջանելով ընդ Դուին, արբուցանէ զամենայն Ոստանն Հայոց, եւ անցեալ ընդ հարաւ անկանի յԵրասխ. յորոց ի մէջ շինեալ է Արտաշատ քաղաք, ուր յառաջին ժամանակն խառնուրդք Մեծամաւրի, իսկ այժմն փոխեալ ըզգնացսն Մեծամաւրայ՝ խառնի ի մտից կուսէ [Արտաշատու]։

Իսկ յելից կուսէ [Ոստանին] Դունայ են գաւառք. Ուրծաձոր եւ Արածոյ կողմն, ընդ մէջ կալով Վայոցձորոյ, եւ Շարուր դաշտն, ընդ որ հոսի գետն Արփանեալն, առ Մարաւանայ քաղաքով, անցանելով ի հարաւ՝ խառնի յԵրասխ։

Եւ ունի Այրարատ լերինս եւ գետս, եւ դաշտըս պիտանիս, երէս եւ հաւս, եւ զամենայն պաբարտութիւն եւ ծովակն Գայլատու, եւ [ունի] որդն սիզաբերեայ յարմատոյ առ ի զարդ կարմըրութեան գունոյ։

Անա կատարեցան զամենայն Հայք։

և հարավ (գտնվում են) Բուղխա, Ոքաղե և Ազորդացփոր գավառները իրենց [համանուն] գետակներով, որոնք խառնվելով իրար՝ Թափվում են Վոհ գետը։ Այս գավառներից արևմուտք է Արսյաց փոր (գավառը)՝ Պարխար լեռների փեշերին, որտեղից հոսում է Վոհ գետը, որը, գալով Սպեր (գավառից), անցնում է Թուխարք բերդով Կղարջք (գավառը), այստեղից էլ՝ Եգր (աշխարհ)՝ Նիգալ, Մրուղ և Մրիտ գավառներով հոսելով, Թափվում է Պոնտոսի ծովը, որը եգերացիները կոչում են Ակամսիս, իսկ Խաղտիք՝ Կակամար։ Տայքում կա Թուզ, Թթու նուռ, աղտոր, սերկևիլ, պտղախունկ և նուշ։

Տասնհինգերորդ աշխարհն է Այրարատը, վերոհիշյալ աշխարհների մեջտեղը և ունի քսաներկու գավառ։ Բարձր Հայքի կողմն է Բասյան (գավառը), որի միջով անցնում է Երասխը, որը գետանում է Մուրցամոր գետից։ Երասխ գետը բաժանում է, Թողնելով հարավ Հավնունիք և Գաբեղյանք (գավառները), իսկ հյուսիսում՝ Աբեղյանք (գավառը)։ Այնուհետև Երասխը հոսում է Արշարունիք գավառով, որից հարավ են գտնվում Բագրևանդ և Ծաղկոտն գավառները, իսկ դեպի հյուսիս՝ Վանանդ և Շիրակ (գավառները)։ Այս գավառներից է հոսում Ախուրյան գետը Մեծագետ վտակով [, որ գալիս է Ծովակ Հյուսիսո լճից] և, անցնելով Մավրիկապոլիս, այսինքն՝ Շիրակաշատ ավանը, և Մրենն ու Երուանդաշատ քաղաքը, Թափվում է Երասխ։

Եվ Երասխը, Արմավիր քաղաքը Արագածոտն (գավառով) և Արագած լեռնագագաթը, որտեղից բխում են Մեծամոր գետի աղբյուրները, [և Արայի լեռը] Թողնում է հյուսիսային կողմը։ [Ապա, Երասխը հոսելով դեպի արևելք, հարավում Թողնում է Ճակատք և Մասյացոտն գավառները և] լեռնագագաթ [Ազատ-Մասիսը]։ Եվ Մասիս սարը, որի ստորոտին տարածվում է Կոգովիտ գավառը, դեպի հարավ է Թողնում Երասխ գետը։ Իսկ Արածանի գետը սկիզբ է առնում Ծաղկոտն (գավառից), Ոսկիք կոչվող տեղից և, գնալով դեպի հյուսիս, պատելով Նպատական լեռնագագաթը Բագաւան գյուղի մոտ, խառնվում է Բագրեվանդ գետին։

[Արագածի փեշերից հյուսիս (գտնվում) է Վերին Տաշիրը(?) և Աշոցք գավառը]։ Իսկ [Արագածից] արևելք (գտնվում) է Նիգ (գավառը), որտեղից բխում են Քասաղ գետի աղբյուրները, [և Նրանից (Նիգ գավառից) արևելք գտնվում են Կոտայք և Մազազ գավառները, իսկ Նրանցից հյուսիս՝ Վարաժնունիք գավառը, որի միջով անցնում է Հրազդան գետը]։

[1] Խոսքը վերաբերվում է Էջմիածնի տաճարին։

[2] Նկատի ունի Հռիփսիմեի և Գայանեի մատուռները, որոնց տեղերում՝ 618 Թ. կառուցվեց Հռիփսիմեի տաճարը, իսկ 630 Թ.՝ Գայանեի տաճարը։ Այստեղից ևս երևումէ, որ «Աշխարհացոյց»-ը կազմվել է 618 Թվից ավելի շուտ։

[Հրազդան գետը] անցնում է Վաղարշապատ քաղաքից դեպի արևելք, որտեղ գտնվում է մայր եկեղեցին՝ Կաթողիկեն, և մարտիրոսուհիների մատուռները, որից (Վաղարշապատից) դեպի արևելք բխում են Ասպահեն գետի աղբյուրները, այսինքն Խոզմորը, որը խառնվում է Մեծամոր գետին: Ապա նրանցից արևելք է Ազատ գետը, և հիրավի ազատ, որի ակունքները բխում են Գեղ լեռնագագաթից, Սախուրակ տեղում, և, իջնելով դեպի Դվին (քաղաքը), ոռոգում է ամբողջ Հայոց Ոստանը: Անցնելով հարավ, [Ազատ գետը] թափվում է Երասխ, որոնց միջև կառուցված է Արտաշատ քաղաքը, որտեղ հին ժամանակները գտնվում էր Մեծամորի գետախառնուրդը, իսկ այժմ, փոխվելով Մեծամորի հունը (այն) խառնվում է (Երասխին) [Արտաշատ քաղաքի] արևմտյան կողմը:

Դվին [Ոստանից] դեպի արևելք գտնվում են Ուրծաձոր և Արածո կողմն գավառները, մտնելով Վայոցձոր գավառի թիկունքը, և Շարուր դաշտը, որի միջով հոսում է Արփանյալ գետը և անցնելով Մարավան քաղաքը, դեպի հարավ, թափվում է Երասխ գետը:

Եվ Այրարատ (աշխարհը) ունի լեռներ, գետեր և պիտանի դաշտավայրեր, որսի կենդանիներ և թռչուններ, և ամենայն պարարտություն և Գայլատու ծովակը: Ունի և սիզաբերյալ արմատի որդը (որը օգտագործում են) իբրև զարդ կարմիր գույնի:

Սրանով վերջանում է ամբողջ Հայաստանի նկարագրությունը:

Յաղագս Ասորւոց

Աշխարհ ընդհանուր Ասիոյ՝ Ասորիք, յելից կալով իւրեանց ծովուն հոմանուն պելագոսին, առեալ ի Սիսոնէ քաղաքէ եւ Կիլիկեայ դրանցն՝ մինչև ցԹոասիս գետամտունս, զոր կոչեն Քոոսէաս, եւ անտի ցԻպպոս լեառն ըստ հարաւոյ. եւ սահմանի Հրեաստանիւ եւ մասամբ ինչ առ Ապառաժ Արաբիա մինչեւ ցԱնապատն Արաբիա, մինչև ցըկրկնուածն Եփրատայ՝ յարեւելս կոյս, հանդէպ Թափսակ քաղաքի. եւ [այս] գետովն ի վեր մինչև զԱմանոս լեառն, որ բաժանէ ըստ հիւսիսոյ զԿիլիկիա եւ զԿապադովկիա, այսինքն, զՓոքր Հայս յԱսորւոց, ի Կոմագենէ աշխարհէ փոքուէ:

Քանզի ունին Ասորիք փոքր աշխարհս ինն. զ[վերո]գրեալդ [Կոմագենէ], յորում քաղաք Շամուշատ, եւ զԿիւռեստիկէ, յորում քաղաք Հերապաւլիս՝ որ է Մաբուկ, եւ Բեռիա՝ որ է Խա[լիւբոն եւ Ա]զազ, [Քա]ղկիդիկէ, յորում քաղաք Քալկիսա, որ է Նիկորիա, եւ Աւագն Անտիոք իւր զատուցեալ աշխարհաւն, որ կոչի Սելեկիա, զԱպամիս, յորում քաղաք Ապամիա, եւ Եպիփանիա, որ է Հեմաթ, եւ Եմածա (Հոմս), եւ այլք, զԿասիոտի[ս]՝ յորում Առատող կղզի, զԿիւլիսիւրիա՝ յորում Դամասկոս քաղաք, զԲադանա ըստ անապատի եւ զՊալմիրենէ, յորում է Հաւարին քաղաք ըստ Անապատ Արաբիոյ, եւ զԲարբալիտիս ըստ Եփրատայ:

Ունին [Ասորիք] լերինս զՊիեռ[ի]ա, զԿասիոս, զԼիբանանոս, զԱնտիլիբանանոս՝ որ է Սանիր, զԱ[լ]սա[դա]մոս, զԿարմեղոս. եւ գետս անուանիս. զՈռոնտէս, որ բղխէ ի Լիբանանէ, անցանելով առ Եպիփան[իայ]ով՝ մտանէ ի ծով՝ հուպ յԱւագն Անտիոք. եւ Ելեւթ[ե]ռոս, որ ասի Ազատ գետ. եւ նա ելանէ ի Լիբանանէ, եւ մտանէ ի ծով մերձ յԱնդա[ռա]դոն քաղաք. եւ Ադոնիս, որ եւ նա ելանէ ի Լիբանանէ, եւ բաժանէ ընդ մէջ Բիբղոս եւ Բիւռիտոս քաղաքաց, եւ իջանէ ի ծով. եւ Յորդանան որ ելեալ ի Պանիադայ՝ մտանէ ի Գալիլիացւոց ծովն. եւ [անտի] եւս ելեալ երթայ մտանէ յԱսփաղտիտէս ծով: Ունի եւ այլ գետս եւ լերինս, որպէս զԴամասկոսին, որ զ[Ա]բանաս գետ՝ որ անցանէ ընդ մէջ քաղաքին, եւ զԲառադա՝ որ յարեւելից կուսէ անցանէ, զոր Աստուածային Գիրն Բանա եւ Փարփարա կոչէ. եւ որպէս գետակն, որ բղխէ ի Դափնոս Անտիոքացւոց. զորմէ Կաստաղայ առասպելքն յօդեն:

Ասորիքի մասին

Ասիայի մայր ցամաքի երկրներից է Ասորիքը, որը սկսվում է համանուն ծովի արևելյան եզերքից, սկսած Սիսոն քաղաքից և Կիլիկիայի դռներից մինչև Թրասիսի գետաբերանը, որը կոչում են Քոոսեաս, և հարավում՝ մինչև Իպպոս լեռը: Ասորիքը սահմանակից է Հրեաստանին և մասամբ էլ Ապառաժ Արաբիային, մինչև Անապատային Արաբիան և այնտեղից (սահմանագիծը) հասնում է մինչև Եփրատի շրջադարձը դեպի արևելք Թափսակ քաղաքի դիմաց, և [այս] գետով վերև (հյուսիս) մինչև Ամանոս լեռը, որը բաժանում է հյուսիսում գտնվող Կիլիկիան և Կապադովկիան, այսինքն Փոքր Հայքը, Ասորիքի Կոմագենե փոքր աշխարհից:

Ասորիքն ունի ինը փոքր աշխարհ՝ [վերո]հիշյալ [Կոմագենեն], որտեղ Շամուշատ քաղաքն է, Կյուռեստիկե, որտեղ Հերապոլիս քաղաքն է, որ Մաբուկն է, և Բեռիա քաղաքը, որ Խա[լյուբոնն է, և Ա]զազ քաղաքը, [Քա]ղկիդիկե, որտեղ Քալկիս քաղաքն է, որ Նիկորիան է, Ավագն Անտիոքն իր առանձնացած աշխարհով, որը կոչվում է Սելևկիա, Ապամիս, որտեղ Ապամիա քաղաքն է, և Եպիփանիա, որ Համաթն է և Եմածա (Հոմս), և այլ (քաղաքները), Կասիոտի[ս], որտեղ Արադոս կղզին է, Կյուլիսյուրիա, որտեղ Դամասկոս քաղաքն է, Բադանա՝ անապատում, և Պալմիրենե, որտեղ Հավարին քաղաքն է՝ Անապատային Արաբիային կից, և Բարբալիտիսը՝ Եփրատ (գետին) կից:

[Ասորիքը] ունի (հետևյալ) լեռները՝ Պիեռ[ի]ա, Կասիոս, Լիբանանոս, Անտիլիբանանոս, որ Սանիրն է, Ա[լ]սա[դա]մոս, Կարմեղոս: (Ասորիքը) ունի և հայտնի գետեր. Որոնտես, որը բխում է Լիբանանից և, անցնելով Եպիփանիայով, թափվում է ծով Ավագն Անտիոք (քաղաքի) մոտ, Ելևթ[ե]ռոս (գետ), որ նշանակում է Ազատ գետ: Այս գետը դուրս է գալիս Լիբանանից և թափվում է ծով Անդա[ռա]դոն քաղաքի մոտ: Ապա Ադոնիս (գետ), որը նույնպես դուրս է գալիս Լիբանանից և բաժանում է իրարից Բիբղոս և Բյուռիտոս քաղաքները և թափվում է ծով:

Հորդանան (գետը), որը դուրս է գալիս Պանիադայից, մտնում է Գալիլիացվոց ծովը և [այնտեղից] ևս դուրս գալով՝ թափվում է Ասփաղտիտես ծովը: (Ասորիքը) ունի նաև այլ գետեր ու լեռներ, ինչպիսին է Դամասկոսինը, որ [Ա]բանաս գետն է և անցնում է քաղաքի միջով, և Բառադա, որն անցնում է (այս քաղաքի) արևելյան կողմը, որոնց Աստվածաշունչը կոչում է Բանա և Փարփարա, որոնցից է և Անտիոքյան Դափնոսից բխող գետակը, որը, ըստ առասպելների, Կաստաղա (գետն) է:

Յաղագս Միջագետաց

Աշխարհ Միջագետք՝ յելից Ասորւոց, յերի Մեծի Հայոց, սահմանի նովաւ ըստ հիւսիսոյ, զԲաբիլոնիւն եւ Անապատաւն Արաբեաւ:

Ունի լերինս երկու, ասէ Պտղոմէոս, զմինն կոչէ Սեգգարոս, զոր ոչ գիտեմ ով է: Եւ զմիւսն կոչէ Մասիոն, յորմէ ասէ երկու գետս բղխեալ, [զմինն Բալիքէս], զմիւսն կոչէ Քաբառոն, զոր կարծեմ Խաբոր լինել. բայց սա ոչ ի լեռնէ այլ ի դաշտէ բղխէ, հուպ յՌաշայինա քաղաք, որ անկանին յԵփրատ, եւ ի հոմանուն լեառնէ բղխէ Թրթար, եւ գնայ դէպ ուղիղ յարեւելս, եւ միանայ յԵփրատ: Զայս երկու գետս գիտեմ Միջագետաց Ասորոց, եւ լերինս երկու՝ զԿոհ ի-Շնգար, եւ զմիւս լեառն երկայն՝ [Մասիոն] յորում Մարդէ բերդ, եւ Տուռ-Աբդին գաւառ եւ Բզարդէ [քաղաք] եւ Ամիդ քաղաք, [եւ Արուաստան Մծբին քաղաքաւ], եւ երկու այլ փոքունք լերինք, մի որ կոչի

Միջագետքի մասին

Միջագետքը տարածվում է Ասորիքից արևելք մինչև Մեծ Հայք, որի հետ սահմանակից է հյուսիսային կողմից, ապա Բաբիլոնով և Անապատային Արաբիայով:

Պտղոմեոսն ասում է, որ Միջագետքը ունի երկու լեռ, մեկը կոչվում է Սեգարոս, որ չգիտեմ, թե որն է, իսկ մյուսը, Մասիոն, որտեղից, նրա ասելով, բխում է երկու գետ՝ [մեկը Բալիխե գետն է], իսկ մյուսը կոչում է Քաբառոն, որ, իմ կարծիքով Խաբոր գետը պիտի լինի: Սակայն այս գետը բխում է ոչ թե լեռներից, այլ դաշտից, Ռաշայինա քաղաքի մոտ: Երկու գետերն էլ թափվում են Եփրատ գետը: Իսկ հոմանուն լեռից բխում է Թրթար գետը, որը հոսում է ուղիղ դեպի արևելք և միանում է Եփրատ գետին: Ասորական Միջագետքում ես գիտեմ միայն այս երկու գետերը և երկու լեռ՝ Կոհ-ի-Շնգար, և մյուս լեռը երկայն, [Մասիոնը]

Ազիմուն. եւ միւս լեառն որ կոչի Բեմադա։ [Ունի] եւ քաղաքս բազումս, յորոց մի է Ուռհա՝ ուր անձեռագործ պատկերն է Փրկչին։

Եւ Եփրատ բաժանէ ի Միջագետաց զԱսորիս, եւ զԱնապատն Արաբիա եւ զԲաբիլացւոց աշխարհ։ Եւ Տիգրիս երթալով ընդ հարաւ՝ պատահէ լերինն, եւ ի հարաւոյ ի դառնալ յարեւելս կոյս՝ բաժանել [զՄեծ Հայս] ի Միջագետաց, թողու զհիւսիսեաւ զԱղձնիս Հայոց, որ է Արձն, յորում քաղաք Կուտեմռան, որ է Քղիմար, եւ Քիշ, եւ Շուկառաբա։ Եւ ամենայն քամ[1] ի լերանց Հայոց ի Դկլաթ իջանէ. Նախ Քաղիրթ, որ բղխէ ի լերանց Սալնայ եւ Սանասնոյ, եւ իջեալ կտրէ յերերաց զՆփրկերտ և զՔղիմար, որով բաժանեցան Հոռոմք եւ Պարսիկք, եւ կոչի այժմ Շիթիթմա, որ է արիւնարբու։

Եւ Դկլաթ երթայ ընդ [Ասորեստան եւ քաղաքն] Նինուէ. եւ պատահէ նախ քաղաքիկ մի՝ որ կոչի Բղաթ, որ կոչի Թուք, զի անդ ասեն թքանել զՅունան։ Եւ է երկու աշխարհ ընդ մէջ Դկլաթայ եւ Եփրատայ Նորաշէն ի Պարսից, Կաւատ եւ Կաշկար։ Եւ է Միջագետք ութ մասն երկայն, եւ երեք լայն։

որտեղ գտնվում են Մարդե-բերդ և Տուռ-Աբդին գավառը, ապա Բզաբդե [քաղաքը], Ամիդ քաղաքը և [Արուաստանը Մծբին քաղաքով]։ Կա և երկու այլ փոքրիկ լեռնագագաթներ՝ մեկը կոչվում է Ազիմուն, մյուսը՝ Բեմադա։

(Միջագետքը) [ունի] և բազմաթիվ քաղաքներ, որոնցից մեկն է Ուռհա քաղաքը, ուր պահվում է Փրկչի անձեռագործ պատկերը։

Եփրատ գետը բաժանում է Միջագետքից Ասորիքը, ապա Անապատային Արաբիան և Բաբելացվոց աշխարհը։ Տիգրիս գետը հոսելով հարավ, պատահում է լեռների, և հարավում, դեպի արևելյան կողմը թեքվելով, բաժանում [է Մեծ Հայքը] Միջագետքից, թողնելով հյուսիսում Հայոց Աղձնիքը, այսինքն՝ Արձնը, որտեղ գտնվում են՝ Կուտեմռան, այսինքն՝ Քղիմար քաղաքը, ապա Քիշ և Շուկառաբա քաղաքները։ Եվ ամենայն քամը Հայոց լեռներից իջնում է Դկլաթ գետը, Նախ և առաջ Քաղիրթ (գետը), որը բխում է Սալնա և Սանասնո լեռներից, և իջնելով, անջատում է միմյանցից Նփրկերտ և Քղիմար (քաղաքները)։ Այս գետով բաժանվեցին Հոռոմներն ու Պարսիկները և այժմ կոչվում է Շիթիթմա, որ նշանակում է արյունարբու։

Դկլաթ գետը հոսում է [Ասորեստանով և] Նինվե քաղաքով։ Ապա պատահում է մի քաղաքիկ, որ կոչվում է Բղաթ և անվանվում է Թուք, որովհետև, ասում են, որ այնտեղ են այպանել Հունան (մարգարեին)։ Իսկ Դկլաթի և Եփրատի միջև երկու պարսկական Նորաշեն աշխարհ կա՝ Կավատ և Կաշկար։ Միջագետքը տարածվում է երկարությամբ ութ մասն, և լայնությամբ երեք մասն։

Յաղագս Պարսից աշխարհին[2]

Պարսից աշխարհ ընդ չորս բաժանի այսպէս.

ա) Քուստակ-ի-Խորուարան, որ է Կողմ Արեւմտեայ, յորում աշխարհք ինն. Մայ, Մասպտան, Միհրան-Քուստակ, Կաշկար, Գարմական, Երան-

Պարսից աշխարհի մասին

Պարսից աշխարհը չորս մասի է բաժանվում այսպես.

ա) Քուստակ-ի-Խորուարան, որ Արևմտյան երկիրն է, որտեղ կա ինն աշխարհ. Մայ, Մաս-

[1] Քամ, որ անհայտ բառ է, պետք է նշանակի ձյունի հալոցքից գոյացող գետ կամ գետակ, առվակ։

[2] Այս գլուխը ցույց է տալիս, որ գոյություն է ունեցել առանձին քարտեզ Սասանյան Պարսկաստանի պետության, որի կազմում VI դարի վերջում և VII դարի սկզբում մտնում էին իբրև առանձին մարզպանություններ՝ Հայքը, Վիրքը և Աղվանքը, իսկ Սիսականն ու Բալասականը՝ իբրև առանձին իշխանություններ։ Ահա այս հանգամանքն էր անհասկանալի հետագա արտագրողների համար, երբ «Աշխարհացոյց»-ը կազմող քարտեզները այլևս գոյություն չունեին և նրանց նկարագրող բնագրերի ժողովածուն դարձել էր սոսկ իբրև աշխարհագրության տեղեկատու-ձեռնարկ։ Հետագա ընդօրինակողները այս մասի հետագա շարադրության մեջ շփոթություն են մտցրել, իսկ ընդարձակ բնագրի համառոտողները նախկինում գոյություն ունեցող քարտեզի մասին գաղափար չունենալով աշխատել են բնագրի բովանդակությունը մոտեցնել իրենց ժամանակի իրականության։ Նրանք Քուստակ-ի-Կապկոհ գլուխը վերախմբավորված ձևով են շարադրում, հանելով բնագրից Հայք, Վիրք, Աղուանք, Սիսական, Բալասական երկրանունները հետևյալ կերպ. «Մարք, որ կոչին Քուստակ-ի-Կապկոհ, յելից կալով Հայոց եւ առ երի Կասբից ծովուն. եւ ունի աշխարհս զայսոսիկ. զԱտրպատական, զՌէ, զԳելան, զՄուկան, զԴիլումն, Ահմադան, զԴմբաւանդ, զՏապարըստան, Ամաւղ, Ռուան։ Ունի լերինս եւ գետս, եւ զծովակն, որ կոչի Կապուտան՝ ուր զքուռամղիղն գործեն։ Ունի քաղաքս բազումս, յորոց մինն Գանձակ Շահաստան»։

տասն—Քարտ-Կաւատ, Նոտ-Արտաշիրական, Մարձին, զԱրզոն...

բ) Քուստակ-ի-Կապկոհ, որ է կողմն Կաւկասու լերանց, յորում են աշխարհք երեքտասան. Ատրպատական, Արմն՝ [որ է] Հայք, Վարջան՝ որ է Վիրք, Ռան՝ որ է Աղուանք, Բալասական, Սիսական, Առէ, Գեղան, Շանճան, Դլմունք, Դմբաւանդ, Տապարըստան, Ռւան, Ամոլ, զոր պատմել առաջի կայ մեզ[1]։

պըտան, Միհրան-Քուստակ, Կաշկար, Գարմական Երան-ասան-Քարտ-Կավատ, Նոտ-Արտաշիրական, Մարձին, Արզոն։

. . . .

դ) Քուստակ-ի-Կապկոհ, որ Կովկասյան լեռների երկիրն է և որտեղ կա տասներեք աշխարհ. Ատըրպատական, Արմն՝ որ Հայքն է, Վարջան՝ որ Վիրքն է, Ռան՝ որ Աղուանքն է, Բալասական, Սիսական, Առե, Գեղան, Շանճան, Դլմունք, Դմբավանդ, Տապարըստան, Ռուան, Ամոլ, որոնց մասին մենք պատմելու ենք ստորև։

Յաղագս Մարաց

Աշխարհ Ասիոյ է Մարք, զոր ասեն ի Մադեայ որդւոյ Կողքացւոց թագաւորին զաւակին սերեալ են, որոյ քոյր Մադա է, որ Յասովնի տըռփեալ զոսկեկիզն մորթին մատնեաց. բայց պատճառ գալոյն այսր՝ ոչ ասի։ Այլ ասի թէ Արտաշէս Ոքոզ մասն ինչ ի Հռոմայեցւոցն եւ ի Հրէից առեալ բնակեցոյց առ Վրկանաւք Կասբից, որ այժմ ոչ է յայտնի. բայց Պտղոմէոս զՄարս յելից [եւ ի հարաւոյ] Կասբից [ծովուն] ասէ բնակել. եւ զոր ասեն ընդ մի իշխանութեամբ, եւ ոչ ուրեք գտանին Մարք. բայց Պտղոմէոս ասէ զաշխարհս սոցա՝ Կասբ, Քադուշ, Գելք, Դիլումք. եւ Ռէ եւ Ահմատան քաղաքք են Մարաց։

Մարերի մասին

Ասիայի աշխարհն է Մարքը, որը, ըստ ավանդության սերված է Կողքիսի թագավորի որդի Մադեսի զավակից, որի քույրը Մեդեան է, որ սիրահարվելով Յասովնի հետ, մատնեց ոսկեկիզն մորթին, սակայն այստեղ գալու պատճառի մասին չի ասվում։ Այլ ասվում է, թե Արտա եռ Ոքոսը գերեվարած հռոմայեցիների (sic!) և հրեաների մի մասը բնակեցրեց վրկանների հետ [Կասպից ծովի ափերին], որոնք այժմ հայտնի չեն։ Իսկ Պտղոմեոսը հաղորդում է, որ մարերը բնակվում են Կասպից ծովից արևելք և հարավ, և ասում են, որ նրանք բնակվում են մի իշխանության ներքո և այլ տեղերում մարերը չկան։ Պտղոմեոսը թվարկում է նրանց կողմից բնակված երկրամասերը. Կասբ, Քադուշ, Գելք, Դիլումք. իսկ մարերի քաղաքներն են Ռեն և Ահմատանը։

[1] Մեզ հասած բնագրում այս գլուխը ընդհատվում է սույն նախադասությամբ և «Աշխարհացոյց»-ի բնագրի շարունակության մեջ գոյություն չունի այս խոստացված մասը։

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.

«ՓՈՔՐ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ» (ՆԱՀԱՆԳՆԵՐԻ) ԵՎ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ №№-ի

Ընդհանուր №-ը	№ ըստ նահանգների	Նահանգները և գավառները	Տարածությունը՝ քառակուսի կիլոմետրով
		Ա. ՄԵԾ ՀԱՅՔ	
		ԲԱՐՁՐ ՀԱՅՔ	23.860
1	1	Դարանաղի	3400
2	2	Աղիւն (Առիւծ)	950
3	3	Մուզուր (Մընձուր)	2775
4	4	Եկեղեաց	2250
5	5	Մանանաղի	2775
6	6	Դերջան	2575
7	7	Սպեր	6360
8	8	Շաղագոմ (*Շատալագոմ)	500
9	9	Կարին	2275
		II ԾՈՓԱՑ ԿՈՂՄՆ (ՉՈՐՐՈՐԴ ՀԱՅՔ)	18.890
10	1	Խորձեան	3450
11	2	Հաշտեանք	3750
12	3	Պաղնատուն	1740
13	4	Բալահովիտ (Արշամաշատ)	1750
14	5	Ծոփք [Շահունեաց]	2460
15	6	Անձիտ	3825
16	7	Դեգիք	700
17	8	Գաւրէք	1215
		III ԱՂՁՆԻՔ	17.532
18	1	[Անգեղ-տուն]	2430
19	2	Նփռետ, Նփրկերտ (Տիգրանակերտ)	5395
20	3	Աղձն (Արզան)	3575
21	4	Քաղ (Քեղ)	350
22	5	Կէթիկ	352
23	6	Տատիկ	350
24	7	Ազնուաձոր	202
25	8	Երխեթք	175
26	9	Գզեղխ	375
27	10	Սալնոյ ձոր	930
28	11	Սանասունք	2400
		IV ՏԱՒՐՈՒԲԵՐԱՆ (ԿՈՂՄՆ ՏԱՐԱՒՆՈՅ)	25.008
29	1	Խոյթ	1190
30	2	Ասպականեաց ձոր	655
31	3	Տարաւն	3195
	3 ա	[Պալունիք]	475
32	4	Արշամունիք	2180
33	5	Մարդաղի	2900
34	6	Դասնաւորք	725
35	7	Տուարածատափ	760
36	8	Դալառ	1850
37	9	Հարք	2245
38	10	Վարաժնունիք	2000
39	11	Բզնունիք	925
40	12	Երեւարք	400
41	13	Աղիովիտ	1575
42	14	Ապահունիք	2375
43	15	Կորի	548
44	16	Խորխորունիք	1000
		V ՄՈԿՔ	2962
45	1	Իշայր	175
46	2	Մեւս Իշայր	250
47	3	Իշոց գաւառ	302
48	4	Առուենից ձոր	200
49	5	Միջա	250
50	6	Մոկք Առանձնակ, որ է Արքայից գաւառ	450
51	7	Արգաստովիտ	500
52	8	Ջերմաձոր	835
		VI ԿՈՐՃԱՅՔ	14.707
53	1	Կորդուք	5825
54	2	Կորդրիք Վերին	1075
55	3	Կորդրիք Միջին	1025
56	4	Կորդրիք Ներքին	625
57	5	Ա[յր]տրուանք	325
58	6	Այգառք	302
59	7	Մոթողանք	875
60	8	Որսիրանք	1250
61	9	Կարթունիք	550
62	10	Ճահուկ	2450
63	11	Աղբակ փոքր	405
		VII ՊԱՐՍԿԱՀԱՅՔ	11.010
64	1	Այլի, որ է Կուրիճան	1380
65	2	Մարի գաւառ	1855
66	3	Թրաբի գաւառ	1200
67	4	Արասխ, որ է Ովէս	1120
68	5	Առնայ (Ըռնայ)	250
69	6	Տամբ եր	1870
70	7	Զարէհաւան	1100
71	8	Զարաւանդ	500
72	9	Հէր	1125
		VIII ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ	40.870
73	1	Ռշտունիք	875
74	2	Տոսպ	475
75	3	Բոգունիք	275
76	4	Արճիշակովիտ	1075
77	5	Կուղանովիտ	370
78	6	Աղիովիտ	600
79	7	Գառնի	1275
80	8	Առբերանի	1025
81	9	Բուժունիք	400
82	10	Առնոյոտն	275
83	11	Անձեւացիք	2525
84	12	Տրպատունիք	450
85	13	Երուանդունիք	675
86	14	[Բուն Մարդաստան]	1100
87	15	Մարդաստան (Մարդուցայք)	1265
88	16	Արտազ	2225
89	17	Ակէ	250
90	18	Աղբակ Մեծ	1655
91	19	Անձախի ձոր	825
92	20	Թոռնաւան	1300
93	21	Ճուարշ-ռոտ	3650
94	22	Կրճունիք	800
95	23	Մեծնունիք	475
96	24	Պալունիք	200
97	25	Գուկանք	225
98	26	Աղանդ-ռոտ	850
99	27	Պարսպատունիք	5550
100	28	Արտաշիսեան, որ է Արտաւանեան	150
101	29	Բաք[ր]ան, որ է Մարանդ	4105
102	30	Գաբիթեան	2270
103	31	Գազրիկեան	600
104	32	Տայգրեան (Տանկրիայն)	375
105	33	Վարաժնունիք	150
106	34	Գողթն	1375
107	35	Նախճաւան	1220
		IX ՍԻՒՆԻՔ	15.237
108	1	Երնջակ	600
109	2	Ճահուկ	1130
110	3	Վայոցձոր (Եղեգնաձոր)	2350
111	4	Գեղաքունի	1735
112	5	Սաւդք, որ է Ձաւ[դ]է[ք]	2045
113	6	Աղահէճք	1402
114	7	Ծղուկ	1950
115	8	Հաբանդ	1325
116	9	Բաղք	925
117	10	Ձորք	525
118	11	Արեւիք	625
119	12	Կովսական	625
		X ԱՐՑԱԽ	11.528
120	1	Մեւս Հաբանդ, որ է Սիսական ի Կոտակ կամ Սիսական ի Ոստան	2550
121	2	Վայկունիք	1070
122	3	Բերդաձոր	625
123	4	Մեծ Առանք	550
124	5	Մեծ Կուենք	975
125	6	Հարճլանք	325
126	7	Մուխանք	1250
127	8	Պիանք	148
128	9	Պարսականք	650
129	10	Քուստի	1505
130	11	Փառնէս	775
131	12	Կողթ	1100
		XI ՓԱՅՏԱԿԱՐԱՆ	21.000
132	1	Հրաքոտ-Պերոժ (Ռոտբստակ)	3650
133	2	Վարդանակերտ	
134	3	Եւթնփորակեան-բագինք	8900[1]
135	4	Բաղան-ռոտ, որ է Ռոտ-ի-Բաղա	
136	5	Առոս-Պիճան	675
137	6	Հանի	1620
138	7	Աթշի-Բագաւան	2480
139	8	Սպանդարան-Պերոժ	1275
140	9	Որմիզդ-Պերոժ	1100
141	10	Ալեւան	1300

[1] 8900 $կմ^2$ վերաբերվում է երեք գավառներին՝ Վարդանակերտ, Եւթնփորակեան-բագինք և Բաղան-ռոտ։

Ընդհանուր №-ը	№ ըստ նահանգների	Նահանգները և գավառները	Տարածությունը՝ քառակուսի կիլոմետրով
	XII	ՈՒՏԻՔ	11.315
142	1	Առան-ռոտ	225
143	2	Տռի	530
144	3	Ռոտ-Պարսեան	770
145	4	Աղուէ	520
146	5	Տուս-Քուստակ	700
147	6	Գարդման	800
148	7	Շակաշէն	2900
149	8	Ուտի Առանձնակ (Ուտ-Ռոստակ)	2800
	XIII	ԳՈՒԳԱՐՔ	16.765
150	1	Ձորոփոր	475
151	2	Կողբոփոր	250
152	3	Ծոբոփոր	450
153	4	Տաշիր	2050
154	5	Թռեղք	2195
155	6	Կանգարք	305
156	7	Ջաւախք Վերի[ն]	2675
157	8	Արտահան	2025
158	9	Կղարջք	1280
159	10	Շաւշէթ[1]	1045
160	11	[Ջաւախք Ներքին]	1400
161	12	Մանգլեացփոր	925
162	13	Քուիշափոր	495
163	14	Բողնոփոր	555
174	15	Պարուար	375
165	16	Խանցիխէ (հունարակերտ)	275
	XIV	ՏԱՅՔ	10.179
166	1	Կող	1175
167	2	Բերդացփոր	990
168	3	Պարտիզացփոր	662
169	4	Ճակք	1172
170	5	Բողխա	2080
171	6	Ոքաղէ	1450
172	7	Ազորդացփոր	500
173	8	Արսեացփոր	2250
	XV	ԱՅՐԱՐԱՏ	40.105
174	1	Բասեան	2625
175	2	Գաբեղեանք	1275
176	3	Աբեղեանք	1000
177	4	Հաւնունիք	1400
178	5	Արշարունիք	1225
179	6	Բագրեւանդ	5275
180	7	Ծաղկոտն	675
181	8	Վանանդ	4725
182	9	Շիրակ	3730
183	10	Արագածոտն	3050
184	11	Ճակատք	825
185	12	Մասեաց ոտն	2800

[1] Շաւշէթից մինչև Խանցիխէ թվարկվող գավառները 363 թվականից հետո Գուգարաց բդեշխությունից անջատված և Վրաց աշխարհին միացված տերիտորիաներն են։ Գուգարքի նահանգը, այդպիսով, մինչև 363 թվականը պարունակում էր՝ 16.765 կմ², իսկ մինչև 363—387 թթ. 11.695 կմ²։

Ընդհանուր №-ը	№ ըստ նահանգների	Նահանգները և գավառները	Տարածությունը՝ քառակուսի կիլոմետրով
186	13	Կոգովիտ	2460
187	14	Աշոցք	900
187	14 ա	[Տաշիր Վերին]	1075
188	15	Նիգ	1000
189	16	Կոտայք	860
190	17	Մազազ	680
191	18	Վարաժնունիք	1900
192	19	Ոստան հայոց	750
193	20	Ուրծաձոր	1175
194	21	Արածոյ կողմն	250
195	22	Շարուր դաշտ	450
		ՄԱՐԱՑ ԱՄՈՒՐ ԱՇԽԱՐՀ	7327
196	1	Նիխորական	4250
197	2	Դասն գաւառ	1075
198	3	Մահկերտ-տուն (Մարձին)	2002
		ՄԻՋԱԳԵՏՔ ՀԱՅՈՑ	27.600
199	1	Տուր-Աբդին (Ծաւդէք)	3975
200	2	Արուաստան	5850
201	3	Ծոփք մեծ (Միջագետք հայոց)	17775
		ՄԵԾ ՀԱՅՔԸ Մ. Թ. Ա. 66 Մ. Թ. 37 ԹԹ.	312.795
		ՄԵԾ ՀԱՅՔԸ 37—387 ԹԹ.	285.195
		ՄԵԾ ՀԱՅՔԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ 363—387 ԹԹ.	272.798
		ՄԻՋՆԱՇԽԱՐՀ (Բարձր Հայք, Ծոփաց կողմն, Տաւրուբերան, Մոկք, Վասպուրական, Սիւնիք, Տայք, Այրարատ)	174.011
		ԾԱՅՐԱՄԱՍԵՐ (Աղձնիք, Կորճայք, Պարսկահայք, Արցախ, Փայտակարան, Ուտիք, Գուգարք)	103,857
		ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	134,161
		(Այրարատ, Տայք, Տաւրուբերան, Մոկք, Վասպուրական, Սիւնիք)	
		ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	39.650
		(Բարձր Հայք, Ծոփաց կողմն)	

Ընդհանուր №-ը	№ ըստ նահանգների	Նահանգները և գավառները	Տարածությունը՝ քառակուսի կիլոմետրով
		Բ. ՎԻՐՔ	
	I	ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՍԽԻԿԱ[1]	8.425
1	1	Կղարջք	1280
2	2	Շաւշէթ	1045
3	3	Արտահան	2025
4	4	Ջաւախք Վերին[2]	2675
5	5	[Ջաւախք Ներքին (Էրուշնէթի)]	1400
	II	ՎՐԱՑԱԿԱՆ ՄՈՍԽԻԿԱ (ՄԵՍԽԷԹԻ)	4.832
6	1	Սամցխէ	2650
7	2	Աճարա	1450
8	3	Թաւր գաւառ	732
9	III	ԱՐԳՈՒԷԹ	1450
		ՎԵՐԻՆ ԱՇԽԱՐՀ ՎՐԱՑ	6.485
10	1	Գոռաթիս-խեւ	400
11	2	Տանիս-խեւ	1420
12	3	Դաշտն Դուան	820
13	4	Աչաբեթիս-խեւ	175
14	5	[Ռեխա]	250
15	6	Գուերդիս-ձիրի	225
16	7	Կոսխ (Կասպի)	575
17	8	Սացխումէթ	445
18	9	Կանիս-խեւ	300
19	10	Ցխրազմայ	550
20	11	Բազալէթ	525
21	12	[Մտ]կուրիս-խեւ	550
22	13	Ջել[է]թ	250
	IV	ԲԴԵՇԽԱԿԱՆ (ՍԱՊԻՏԻԱՇԽՈ)	2625
23	1	Մանգլեացփոր	925
24	2	Քուիշափոր	495
25	3	Բողնոփոր	555
26	4	Պարուար	375
27	5	Խանցիխէ (հունարակերտ)	275
	V	ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՏԱՇՐԱՑ	3.875
28	1	Ծոբոփոր	450
29	2	Կողբոփոր	250
30	3	Ձորոփոր	475
31	4	Տաշիր	2050
32	5	Կանգարք	305
33	6	Թռեղք	2195

[1] «Մոսխիկա»-ն գործ ենք ածում Ստրաբոնի (XI, 1. 18) բաժանման իմաստով։

[2] Վերին Ջավախքը Ստրաբոնի ժամանակ չէր մտնում Մոսխիկայի կազմում։

Ընդհանուր №-ը	№ ըստ նահանգների	Նահանգները և գավառները	Տարածությունը՝ քառակուսի կիլոմետրով
	VI	ԿԱԽԷԹ—ԿՈՒԽԷԹ	5.145
34	1	Կխոէթ	550
34 ա	1ա	[Ոստան Վրաց]	1550
35	2	Խերկ	175
36	3	Էրծոյ	345
37	4	Թիանէթ	200
38	5	Ծոբէնոր	400
39	6	Ծուքէթ	250
40	7	Վելիս-ց[ի]խէ	725
41	8	Քուէլ-դա[բա] (Դիդի կախէթի)	525
42	9	Շուջք (Սուջէթի)	425
	VII	ԵԳՐ (VII դարի վերջում միացավ Վիրքին)	1976
43	1	Նիգալ	950
44	2	Մրուղ	550
45	3	Մրիտ	476
	VIII	ԱԼԱՆԱՑ ԴՌՆԵՐԻ ԱՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԸ	2.325
		(Ծանարք, Ցխաւատք, Գուդա-Մակարք, Ծելկանք և Փոխք (Փուսխք)	
		ՎԻՐՔԸ ՄԻՆՉԵՎ 363 ԹՎԱԿԱՆԸ	17.912
		(Վերին աշխարհ Վրաց, Մեսխէթի, Կախէթ—Կուխէթ, Արգուէթ)	
		ՎԻՐՔԸ 363—387 ԹԹ.	22.987
		(Վերին աշխարհ Վրաց, Մեսխէթի, Կախէթ—Կուխէթ, Արգուէթ, Շաւշէթ, Ջաւախք Ներքին, Բդեշխական)	
		ՎԻՐՔԸ 387 ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ	34.682
		(Վերին աշխարհ Վրաց, Մեսխէթի, Կախէթ—Կուխէթ, Արգուէթ, և Գուգարքը ամբողջովին)	
		ՎՐԱՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ «ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԴԱՇՆԱԳՐԻՑ» ՀԵՏՈ (532 Թ.)	37.007
		(Վերին աշխարհ Վրաց, Մեսխէթի, Կախէթ—Կուխէթ, Արգուէթ, Գուգարք, Ալանաց դռների ամրությունների շրջանը)	

Ընդհա-նուր №-ը	№ ըստ նահանգ-ների	Նահանգները և գավառները	Տարածու-թյունը՝ քառակուսի կիլոմետրով
		ՎԻՐՔԸ VII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՑ	38.981
		(Վերին աշխարհ Վրաց, Մեսխէթի, Կախէթ—Կուխէթ, Արգուէթ, Գուգարք, Ալանաց դռների ամրությունների շրջան, Եգր)	

Գ. ԱՂՈՒԱՆՔ

Ընդհա-նուր №-ը	№ ըստ նահանգ-ների	Նահանգները և գավառները	Տարածու-թյունը՝ քառակուսի կիլոմետրով
	1	ԲՈՒՆ ԱՇԽԱՐՀ ԱՂՈՒԱՆԻՑ	23.002
1	1	Եղնի (Խենի)	1722
2	2	Կամբեճան	7510
3	3	Բեղ	1600
4	4	Շաքէ	870
5	5	Գետառու	1575
6	6	Խողմազ	1330
7	7	Գեղաւու	975
8	8	Համբասի	700
9	9	Ոստանի-ի-Մարզպան (Կապաղակ)	1550
10	10	Քաղաղաշտ	1270
11	11	Դաշտ-ի-Բազկան, որ է Հէջերի	4900
	11	ԳԱՒԱՌՔ, ՋՈՐ Ի ՀԱՅՈՑ ՀԱՆԵԱԼ ԵՆ՝	26.493
12	1	Շակաշէն	2.900
13	2	Գարդման	800
14	3	Քուստի-Փառնէս	2280
15	4	Կողթ	1100
16	5	Աղուէ	590
17	6	Տուս-Քուստակ	700
18	7	Ուտ-Ռոստակ	2800
19	8	Ռոտ-Պարսեան	770
20	9	Մեծ-Կուենք	975
21	10	Մեծ-Իրանք	550
22	11	Պիանք	148
23	12	Հարճլանք	325
24	13	Պարսականք	650
25	14	Մուխանք	1250
26	15	Վայկունիք	1070
27	16	Փոքր Հայքանդ, որ է Սիսական ի կոտակ	2250
28	17	Ռոտբստակ	3650
29	18	Բերդաձոր	625
30	19	Տրի	530
31	20	Աւպն-ոտոց	2225

ԱՂՈՒԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ VII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԵՐԻՆ 72.204

	Բուն Աղուանք	23002	
	Արցախ	11528	26493
	Ուտիք	11315	
	Ռոտբստակ	3650	
	Բազկան [Հէրան]	9980	
	Դարբանդ	651	
	Թաւասպարք	2105	
	Լեկք	2075	
	Ջողա	4578	
	Շրուան	1550	
	Խսրուան	1750	

ՑԱՆԿԵՐ